Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)

Անդամի ձեռնարկ

2027 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

Ձեր Առողջության և դեղերի ապահովագրական ծածկույթը Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի ներքո

Անդամի ձեռնարկի ներածություն

Այս *Անդամի ձեռնարկը*, այլ կերպ ասած՝ *Ապահովագրության ապացույցը*, տեղեկացնում է ձեզ ձեր պլանի շրջանակներում ձեր ապահովագրության մասին մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը: Այն նկարագրում է առողջապահական խնամքի ծառայությունները, վարքագծային առողջության (հոգեկան առողջություն և թմրանյութերի օգտագործման խանգարում) ծառայությունները, դեղատոմսային դեղերի ապահովագրությունը և երկարատև ծառայություններն ու աջակցությունը: Հիմնական եզրույթները և դրանց սահմանումներն այբբենական կարգով ներկայացված են **Գլուխ 12**-ում՝ այս *Անդամի ձեռնարկում*:

Սա կարևոր իրավական փաստաթուղթ է: Պահեք այն ապահով տեղում:

Երբ այս *Անդամի ձեռնարկում* ասվում է «Մենք», «Մեզ», «Մեր» կամ «Մեր պլանը», դա նշանակում է Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ը:

Այս փաստաթուղթը հասանելի է անվճար արաբերեն, հայերեն, կամբոջերեն (քմեր), չինարեն (ավանդական տառերով), պարսկերեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալոգ և վիետնամերեն:

Դուք կարող եք անվճար ստանալ այս փաստաթուղթն այլ ձևաչափերով, օրինակ՝ խոշոր տպագիր, բրայլ և/կամ աուդիո՝ զանգահարելով Անդամների սպասարկման կենտրոն այս էջի ներքևի համարով: Զանգն անվճար է:

- Մենք կարող ենք նյութերն ուղարկել անգլերենից բացի այլ լեզուներով կամ այլընտրանքային ձևաչափով, եթե հայցեք այն: Սա կոչվում է «մշտական հարցում»: Մենք կփաստաթղթավորենք ձեր ընտրությունը:

- Մշտական հարցում կատարելու, մշտական հարցումը փոխելու կամ մեկանգամյա հարցում կատարելու համար խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-800-431-9007 (TTY՝ 711) հեռախոսահամարով: Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից մինչև 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից մինչև 8 p.m.:

Notice of Availability of Language Assistance Services and Auxiliary Aids and Services

ATTENTION: If you need help in your language, call 1-800-431-9007 (TTY: 711). Aids and services for people with disabilities, like documents in braille and large print, are also available. Call 1-800-431-9007 (TTY: 711). These services are free of charge.

Arabic

انتباه: إذا كنت بحاجة إلى مساعدة بلغتك، فاتصل على 1-800-431-9007 (TTY: 711). تتوفر أيضًا مساعدات وخدمات للأشخاص ذوي الإعاقات مثل المستندات بطريقة برايل وبطباعة كبيرة. اتصل على 1-800-431-9007 (TTY: 711). هذه الخدمات مجانية.

Armenian

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եթե ցանկանում եք օգնություն ստանալ ձեր լեզվով, զանգահարեք 1-800-431-9007 (TTY՝ 711): Հասանելի են նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված օժանդակ միջոցներ և ծառայություններ, օրինակ՝ բրայլյան գրատեսակով և խոշոր տառաչափով փաստաթղթեր: Զանգահարեք 1-800-431-9007 (TTY՝ 711): Այս ծառայություններն անվճար են:

Chinese - Simplified

注意：如果您需要以您的语言提供的帮助，请致电 1-800-431-9007（TTY：711）。此外，还为残疾人提供辅助和相关服务，如盲文文件和大字体文件。请致电 1-800-431-9007（TTY：711）。这些服务均免费提供。

Chinese - Traditional
注意：如果您需要以您母語提供的協助，請致電 1-800-431-9007 (TTY：711)。我們也為殘疾人士提供輔助和服務，例如點字和大字體印刷的文件。請致電 1-800-431-9007 (TTY：711)。這些服務均為免費。

Punjabi
ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇ ਤੁਹਾਨੂੰ ਆਪਣੀ ਭਾਸ਼ਾ ਵਿੱਚ ਮਦਦ ਦੀ ਲੋੜ ਹੈ, ਤਾਂ 1-800-431-9007 (TTY: 711) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ। ਬਰੇਲ ਲਿਪੀ ਅਤੇ ਵੱਡੇ ਪ੍ਰਿੰਟ ਵਿੱਚ ਦਸਤਾਵੇਜ਼ਾਂ ਵਰਗੀਆਂ ਅਸਮਰੱਥਾ ਵਾਲੇ ਲੋਕਾਂ ਲਈ ਸਹਾਇਤਾ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ ਵੀ ਉਪਲਬਧ ਹਨ। 1-800-431-9007 (TTY: 711) 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ। ਇਹ ਮੁਫ਼ਤ ਸੇਵਾਵਾਂ ਹਨ।

Hindi
ध्यान दें: अगर आपको अपनी भाषा में सहायता की आवश्यकता है, तो 1-800-431-9007 (TTY: 711) पर कॉल करें. विकलांग लोगों के लिए ब्रेल और बड़े प्रिंट में दस्तावेज जैसी सहायताएं और सेवाएं भी उपलब्ध हैं. 1-800-431-9007 (TTY: 711) पर कॉल करें. ये सेवाएं निःशुल्क हैं.

Hmong
THOV MUAB SIAB RAU: Yog tias koj xav tau kev pab ua koj hom lus, ces hu rau 1-800-431-9007 (TTY: 711). Tsis tas i ntawd, peb tseem muaj cov neeg pab thiab cov kev pab cuam rau cov neeg uas muaj cov kev xiam oob qhab,

xws li cov ntaub ntawv ua ntawv su rau neeg dig muag thiab ntawv luam loj. Hu rau 1-800-431-9007 (TTY: 711). Cov kev pab cuam no pab dawb xwb.

Japanese
注意：言語のヘルプが必要な場合は 1-800-431-9007（TTY：711）までお電話ください。障害をお持ちの方には、点字や大判プリントなどの補助機能やサービスもご利用になれます。1-800-431-9007（TTY：711）にお電話ください。これらのサ ービスは無料です。

Korean
주의: 귀하의 구사 언어로 도움을 받으셔야 한다면 1-800-431-9007(TTY: 711) 번으로 연락해 주십시오. 점자 및 큰 활자 인쇄 형식으로 된 문서 등 장애인을 위한 도움 및 서비스도 제공됩니다. 1-800-431-9007 (TTY: 711)번으로 연락해 주십시오. 이러한 서비스는 무료입니다.

Laotian
ຂໍ້ຄວນເອົາໃຈໃສ່: ຫາກທ່ານຕ້ອງການຄວາມຊ່ວຍເຫຼືອເປັນພາສາຂອງທ່ານ, ໃຫ້ໂທຫາ 1-800-431-9007 (TTY: 711). ນອກຈາກນີ້ ຍັງມີຄວາມຊ່ວຍເຫຼືອສຳລັບຜູ້ພິການ ເຊັ່ນ: ເອກະສານເປັນອັກສອນນູນ ແລະ ຕົວພິມໃຫຍ່ອີກດ້ວຍ. ໃຫ້ໂທຫາ 1-800-431-9007 (TTY: 711). ບລິການເຫຼົ່ານີ້ຟຣີ.

Mien

LIOUH EIX: Oix se nongc zuqc meih nyei wac jouh mienh bong zouc, cingv mboqv 1-800-431-9007 (TTY: 711). Hac haih weic waic fangx mienh zoux sic taengx qaqv, hnangv mangh wenh souh nzangc caux domh nzangc yenx benx nyei souh nzangc. Mboqv 1-800-431-9007 (TTY: 711). Wangv henh tengx naaiv deix gong mv zuqc ndortv nyaanh cingv oc.

Cambodian

ចំណាំ៖ ប្រសិនបើអ្នកត្រូវការជំនួយជាភាសារបស់អ្នក សូមទូរសព្ទ ទៅលេខ 1-800-431-9007 (TTY: 711) ជំនួយនិងសេវាកម្ម សម្រាប់ជនពិការ ដូចជាឯកសារជាអក្សរស្ទាបសម្រាប់ជនពិការ ភ្នែក និងពុម្ពអក្សរធំ ក៏មានផងដែរ។ សូមទូរសព្ទទៅលេខ 1-800-431-9007 (TTY: 711)។ សេវាទាំងនេះមិនគិតថ្លៃនោះទេ។

Farsi

توجه: اگر به زبان خودتان نیاز به کمک دارید با شماره 1-800-431-9007 (TTY: 711) تماس بگیرید. پشتیبانی و خدمات برای افراد دارای معلولیت، مانند اسناد با خط بریل و چاپ درشت، نیز موجود است. با شماره 1-800-431-9007 (TTY: 711) تماس بگیرید. این خدمات رایگان است.

Russian
ВНИМАНИЕ: если вам требуется помощь на родном языке, позвоните по номеру 1-800-431-9007 (TTY: 711). Также доступны сопутствующая помощь и услуги для людей с ограниченными возможностями, такие как материалы, напечатанные крупным шрифтом и шрифтом Брайля. Позвоните по номеру 1-800-431-9007 (TTY: 711). Эти услуги предоставляются бесплатно.

Spanish
ATENCIÓN: Si necesita ayuda en su idioma llame al 1-800-431-9007 (TTY: 711). También están disponibles ayudas y servicios para personas con discapacidades, como documentos en Braille y letra grande. Llame al 1-800-431-9007 (TTY: 711). Estos servicios son gratuitos.

Tagalog
ATENSYON: Kung kailangan ninyo ng tulong sa inyong wika, tumawag sa 1-800-431-9007 (TTY: 711). Available din ang mga tulong at serbisyo para sa mga taong may kapansanan, gaya ng mga dokumento sa braille at malaking print. Tumawag sa 1-800-431-9007 (TTY: 711). Libre ang mga serbisyong ito.

Thai
โปรดทราบ: หากคุณต้องการความช่วยเหลือเป็นภาษาของคุณ โปรดโทร 1-800-431-9007 (TTY: 711) นอกจากนี้ ยังมีความช่วยเหลือและบริการสำหรับผู้พิการ เช่น เอกสารที่เป็นอักษรเบรลล์และเอกสารที่ใช้ตัวอักษรขนาดใหญ่ โปรดโทร 1-800-431-9007 (TTY: 711) **บริการเหล่านี้ไม่มีค่าใช้จ่าย**

Ukrainian
УВАГА! Якщо ви потребуєте підтримки своєю мовою, телефонуйте за номером 1-800-431-9007 (TTY: 711). Також доступні засоби та послуги для людей з обмеженими можливостями, як-от документи шрифтом Брайля та великим шрифтом. Телефонуйте за номером 1-800-431-9007 (TTY: 711). Ці послуги безкоштовні.

Vietnamese
CHÚ Ý: Nếu quý vị cần trợ giúp bằng ngôn ngữ của quý vị, hãy gọi số 1-800-431-9007 (TTY: 711). Các hỗ trợ và dịch vụ dành cho người khuyết tật, chẳng hạn như tài liệu bằng chữ nổi và bản in cỡ chữ lớn cũng được cung cấp. Gọi số 1-800-431-9007 (TTY: 711). Các dịch vụ này miễn phí.

Այլ լեզուներ

Դուք կարող եք ձեռք բերել այս *Անդամի ձեռնարկը* և պլանի այլ նյութեր այլ լեզուներով, որոնք ձեր համար կլինեն անվճար: Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ը տրամադրում է գրավոր թարգմանություններ՝ կատարված որակավորված թարգմանիչների կողմից: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն 1-800-431-9007 (TTY՝ 711) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարդացեք այս *Անդամի ձեռնարկը*՝ ավելին իմանալու համար առողջապահության լեզվական օգնության ծառայությունների մասին, ինչպիսիք են բանավոր և գրավոր թարգմանչական ծառայությունները:

Այլ ձևաչափեր

Դուք կարող եք ժամանակին ստանալ այս տեղեկությունն այլ ձևաչափերով, օրինակ՝ բրայլյան գրատիպով, 20 միավորանոց տառաչափով, ձայնային տարբերակով և այլ հասանելի էլեկտրոնային ձևաչափերով (տվյալների CD), որոնք ձեր համար կլինեն անվճար: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն 1-800-431-9007 (TTY՝ 711) հեռախոսահամարով: Զանգն անվճար է:

Լեզվական հասանելիության ծառայություններ

Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ը տրամադրում է որակավորված թարգմանչի կողմից բանավոր թարգմանչական ծառայություններ՝ ներառյալ ժեստերի լեզվով, օրական 24 ժամյա հիմունքներով, որոնք ձեր համար կլինեն անվճար: Ընտանիքի անդամին կամ ընկերոջը պետք չէ ներգրավել որպես թարգմանիչ: Մենք չենք խրախուսում ընտանիքի անդամին կամ ընկերոջը, հատկապես անչափահասներին որպես թարգմանիչ ներգրավելը, եթե դա արտակարգ իրավիճակ չէ: Լեզվական հասանելիության ծառայությունները, այդ թվում՝ թարգմանչական ծառայությունները, հասանելի են անվճար: Թարգմանչի ծառայությունը հասանելի է օրական 24 ժամ, շաբաթական 7 օր: Լեզվական օգնության կամ այս ձեռնարկն այլ լեզվով ստանալու համար զանգահարեք 1-800-431-9007 (TTY՝ 711) հեռախոսահամարով: Զանգն անվճար է:

Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) 2027 թ.

Անդամի ձեռնարկ

Բովանդակություն

Գլուխ 1. Ինչից սկսել որպես անդամ 12

Գլուխ 2. Կարևոր հեռախոսահամարներ և աղբյուրներ 27

Գլուխ 3. Ծրագրի ապահովագրության օգտագործումը ձեր առողջապահական խնամքի և այլ ապահովագրված ծառայությունների համար 51

Գլուխ 4. Նպաստների աղյուսակ 83

Գլուխ 5. Ինչպես ստանալ ձեր ամբուլատոր դեղերը 184

Գլուխ 6. Ինչ եք վճարում ձեր Medicare-ով և Medi-Cal-ով դուրս գրվող դեղերի համար 211

Գլուխ 7. Ինչպես մեզ դիմել՝ վճարելու ապահովագրական ծածկույթում ներառված ծառայությունների կամ դեղերի համար ձեր ստացած հաշվի մեր բաժինը: 225

Գլուխ 8. Ձեր իրավունքները և պարտականությունները 233

Գլուխ 9. Ինչ անել, եթե խնդիր կամ բողոք ունեք (ապահովագրության որոշումներ, բողոքարկումներ, բողոքներ) 259

Գլուխ 10. Մեր պլանին ձեր անդամակցության դադարեցումը 318

Գլուխ 11. Իրավական ծանուցումներ 331

Գլուխ 12. Կարևոր բառերի սահմանումներ 341

Հրաժարում պատասխանատվությունից

- Wellcare-ը Centene Corporation-ի Medicare ապրանքանիշն է, որը HMO, PPO, PDP պլան է, ունի Medicare-ի հետ կնքված պայմանագիր և հանդիսանում է Մաս D-ի հաստատված հովանավոր: Մեր D-SNP պլանները պայմանագիր ունեն պետական Medicaid ծրագրի հետ: Մեր պլաններում գրանցվելը կախված է պայմանագրի թարմացումից:

- Բուժսպասարկման մոդելի վերանայման հիման վրա Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ը հաստատվել է Որակի ապահովման ազգային կոմիտեի կողմից (NCQA)՝ մինչև 2027 թվականը գործարկելու Հատուկ կարիքներ ունեցող անձանց համար նախատեսված պլանը (SNP):

- Արտացանցային/պայմանագիր չունեցող մատակարարները չեն կրում պարտավորություն՝ բուժելու Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) անդամներին՝ բացառությամբ արտակարգ իրավիճակի դեպքերի: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոնի հեռախոսահամարով կամ ընթերցել ձեր *Անդամի ձեռնարկը*, ներառյալ ծախսերի բաշխումը, որը կիրառելի է արտացանցային ծառայությունների համար:

- Նշված նպաստները կազմում են "Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար" ծրագրի մասը: Ոչ բոլոր անդամներն են համապատասխանում չափանիշներին: Բարձր ռիսկային խմբում լինելուց բացի դուք պետք է ունենաք հետևյալ քրոնիկական հիվանդություններից մեկը կամ մի քանիսը. քաղցկեղ, սրտանոթային խանգարումներ, հոգեկան առողջության քրոնիկ և հաշմանդամություն պատճառող խնդիրներ, թոքերի քրոնիկ հիվանդություններ, շաքարախտ: Կան նաև համապատասխանության այլ պայմաններ, որոնք թվարկված չեն: Այս նպաստի համար իրավունակությունը չի կարող երաշխավորվել՝ հիմնվելով բացառապես ձեր առողջական խնդրից: Նախքան նպաստ տրամադրումը պետք է բավարարվեն իրավասության բոլոր կիրառելի պահանջները: Մանրամասների համար խնդրում ենք կապվել մեզ հետ կամ ծանոթանալ պլանի Անդամի ձեռնարկին:

- Նպաստները և/կամ համավճարները կարող են փոխվել 2028 թվականի հունվարի 1-ից:

- Մեր ապահովագրված դեղերը, դեղատների ցանցը և/կամ մատակարարների ցանցը կարող են փոխվել ցանկացած պահի: Դուք կստանաք ծանուցում ձեզ վերաբերող ցանկացած փոփոխությունների մասին առնվազն 30 օր առաջ:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Գլուխ 1. Ինչից սկսել որպես անդամ

Ներածություն

Այս գլուխը ներառում է տեղեկատվություն Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի մասին, առողջապահական պլան, որի ապահովագրական ծածկույթում ձեր բոլոր Medicare ծառայություններն են, ինչպես նաև պլանը համակարգում է ձեր բոլոր Medicare և Medi-Cal ծառայությունները և իր մեջ ընդգրկված ձեր անդամությունը:. Այն նաև ներկայացնում է ձեզ, թե ինչ ակնկալիք կունենաք և ինչ այլ տեղեկություններ եք ստանալու մեզանից: Հիմնական տերմինները և դրանց բացատրություններն այբբենական կարգով տեղակայված են այս *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

A. Բարի գալուստ մեր պլան 14

B. Տեղեկատվություն Medicare-ի և Medi-Cal-ի մասին 15

B1. Medicare 15

B2. Medi-Cal 15

C. Մեր պլանի առավելությունները 16

D. Մեր պլանի սպասարկման տարածքը 17

E. Ի՞նչն է ձեզ իրավասու դարձնում լինել պլանի անդամ 17

F. Ի՞նչ ակնկալել, երբ առաջին անգամ միանում եք մեր առողջպահական ապահովագրության պլանին 18

G. Ձեր խնամքի թիմը և խնամքի ծրագիրը 19

G1. Խնամքի թիմ 19

G2. Բուժսպասարկման պլան 20

H. Կարևոր ծախսերի ամփոփագիր 20

H1. Պլանի ապահովագինը 20

H2. Medicare դեղատոմսով դեղերի վճարման գումար 20

I. Այս *Անդամի ձեռնարկը* 21

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

J. Այլ կարևոր տեղեկություններ, որոնք դուք ստանում եք մեզանից 21
J1. Ձեր Անդամի ID քարտը 21
J2. *Մատակարարների և դեղատների տեղեկատու* 22
J3. *Ապահովագրված դեղերի ցանկ* 24
J4. *Նպաստների բացատրություն* 24
K. Ձեր անդամակցության գրառումը արդիական պահելը 25
K1. Անձնական առողջական տվյալների գաղտնիություն (PHI) 26

Բովանդակություն

A. Բարի գալուստ մեր պլան

Մեր պլանը տրամադրում է Medicare և Medi-Cal ծառայություններ այն անհատներին, ովքեր իրավասու են երկու ծրագրերի համար: Մեր պլանը ներառում է բժիշկներ, հիվանդանոցներ, դեղատներ, երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն տրամադրողներ, վարքագծային առողջության և այլ բուժաշխատողներ: Մենք նաև ունենք բուժսպասարկման համակարգողներ և խնամքի թիմեր՝ օգնելու ձեզ կառավարել ձեր բոլոր մատակարարներին և ծառայությունները: Նրանք աշխատում են բոլորը միասին՝ տրամադրելու ձեզ անհրաժեշտ խնամքը:

Փորձ, որին կարող եք վստահել

Դուք անդամագրվել եք վստահելի առողջապահական ապահովագրության պլանի:

Wellcare-ն օգնում է Medicare և Medi-Cal ունեցող կալիֆորնիացիներին ստանալ իրենց անհրաժեշտ ծառայությունները: Մենք անում ենք այս ամենը՝ առաջարկելով ավելի լավ մոտեցում ձեր Medicare և Medi-Cal նպաստներին ու ծառայություններին՝ ի հավելումն շատ ավելիի.

- Մենք հպարտ ենք մեր հաճախորդների գերազանց սպասարկմամբ. սա իրականացվում է ձեզ, որպես մեր անդամի, կենտրոնացված, դրական և անհատականացված ուշադրություն տրամադրելու միջոցով: Անդամների սպասարկման կենտրոնի մեր վերապատրաստված անձնակազմը ձեզ չի սպասեցնի և կարող է աջակցել մի քանի լեզուների՝ բանավոր թարգմանիչական ծառայությունների օգնությամբ: Մենք կօգնենք ձեզ կողմնորոշվել ձեր նպաստներում, ինչպես մեր սեփական ընտանիքի անդամներին կօգնեինք, և արագորեն կտրամադրենք ձեզ բուժսպասարկում ստանալու համար անհրաժեշտ պատասխանները:

- Մոտ 25 տարի մենք կառուցում ենք բժիշկների բարձրորակ ցանցեր: Մեր ցանցի բժիշկներն ու մասնագետները միասին աշխատում են բժշկական խմբերում, որպեսզի համոզված լինեն, որ դուք ստանում եք ձեզ անհրաժեշտ խնամքը, երբ դրա կարիքը ունեք:

- Ձեր համայնքը մեր համայնքն է. Մենք ազգային ընկերություն ենք տեղական ներկայությամբ: Մեր աշխատակիցներից շատերն ապրում են այնտեղ, որտեղ դուք ապրում եք:

B. Տեղեկատվություն Medicare-ի և Medi-Cal-ի մասին

B1. Medicare

Medicare-ը դաշնային առողջական ապահովագրության ծրագիր է՝

- 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար,
- Հաշմանդամություն ունեցող 65 տարեկանը չլրացած անձինք, **և**
- երիկամային հիվանդություն վերջին փուլում գտնվող (երիկամների անբավարարություն) ունեցող անձանց համար:

B2. Medi-Cal

Medi-Cal-ը California-ի Medicaid ծրագրի անվանումն է: Medi-Cal ղեկավարվում է նահանգի կողմից և վճարվում նահանգային ու դաշնային կառավարության կողմից: Medi-Cal-ն օգնում է սահմանափակ եկամուտ ու միջոցներ ունեցող մարդկանց վճարել Երկարաժամկետ ծառայությունների ու աջակցության (LTSS) և բժշկական ծախսերը: Այն ապահովագրում է լրացուցիչ ծառայություններ և դեղեր, որոնք ապահովագրված չեն Medicare-ի կողմից:

Յուրաքանչյուր նահանգ որոշում է՝

- ինչն է համարվում եկամուտ և միջոցներ,
- ով է իրավասու,
- որ ծառայություններն են ապահովագրվում, **և**
- ծառայությունների արժեքը:

Նահանգները կարող են նաև որոշել, թե ինչպես պետք է իրականացվեն իրենց ծրագրերը, քանի դեռ դրանք համապատասխանում են դաշնային կանոններին:

Medicare-ը և California նահանգը հաստատել են մեր ծրագիրը: Դուք կարող եք ստանալ Medicare և Medi-Cal ծառայություններ մեր պլանի միջոցով քանի դեռ

- մենք ընտրում ենք առաջարկել պլանը, **և**
- Medicare-ը և California նահանգը թույլ են տալիս մեզ շարունակել առաջարկել այս ծրագիրը:

Նույնիսկ եթե մեր պլանը դադարի գործել ապագայում, այն չի ազդի Medicare-ի և Medi-Cal-ի ծառայություններից օգտվելու ձեր իրավասության վրա:

C. Մեր պլանի առավելությունները

Դուք այժմ ստանալու եք Medicare-ի և Medi-Cal-ի ձեր բոլոր ապահովագրված ծառայությունները մեր ծրագրի կողմից, ներառյալ դեղերը: **Դուք չեք վճարի հավելյալ գումար՝ այս առողջապահական պլանին միանալու համար:**

Մենք օգնում ենք, որպեսզի ձեր Medicare-ի և Medi-Cal-ի նպաստները միասին ավելի լավ աշխատեն ձեզ համար: Առավելությունները ներառում են՝

- Դուք կարող եք աշխատել մեզ հետ ձեր առողջապահական կարիքների **մեծ մասի** համար:
- Դուք կունենաք խնամքի թիմ, որը կօգնեք կազմավորել: Ձեր խնամքի թիմում կարող եք լինել դուք, ձեր խնամատարը, բժիշկներ, բուժքույրեր, խորհրդատուներ կամ այլ առողջապահական մասնագետներ:
- Ձեզ հասանելի է բուժսպասարկման համակարգողը: Սա այն անձն է, որն աշխատում է ձեզ հետ, մեր ծրագրի հետ ու ձեր խնամքի թիմի հետ, որպեսզի օգնի բուժսպասարկման պլան մշակել:
- Դուք կարող եք կառավարել ձեր սեփական խնամքը՝ ձեր խնամքի թիմի ու բուժսպասարկման համակարգողի հետ միասին:
- Ձեր խնամքի թիմը և խնամքի համակարգողը աշխատում են ձեզ հետ՝ կազմելու խնամքի ծրագիր, որը նախատեսված է բավարարելու **ձեր** առողջական կարիքները: Խնամքի թիմն օգնում է համակարգել ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Օրինակ, սա նշանակում է, որ ձեր խնամքի թիմը համոզված է՝
  - Ձեր բժիշկները գիտեն ձեր ընդունած բոլոր դեղերի մասին, որպեսզի համոզվեն, որ ճիշտ դեղեր եք ընդունում, ու որպեսզի ձեր բժիշկները կարողանան նվազեցնել դեղերի հնարավոր կողմնակի ազդեցությունները:
  - Ձեր անալիզների արդյունքներն ուղարկվում են ձեր բոլոր բժիշկներին ու այլ մատակարարներին, ինչպես հարկն է:

Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի նոր անդամները. ընդհանուր առմամբ դուք կգրանցվեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ում ձեր Medicare-ի նպաստների համար՝ Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ում գրանցվելու դիմումին հաջորդող ամսվա 1-ին օրը: Դուք դեռ կարող եք ստանալ ձեր Medi-Cal ծառայությունները ձեր նախկին Medi-Cal առողջապահական պլանից ևս մեկ ամիս: Այնուհետև, դուք կստանաք ձեր Medi-Cal ծառայությունները Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի միջոցով: Ձեր Medi-Cal ապահովագրության մեջ բաց չի լինի: Ձանգահարեք այս էջի ներքևում նշված համարով, եթե որևէ հարց ունեք:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Ձանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

D. Մեր պլանի սպասարկման տարածքը

Մեր սպասարկման տարածքն ընդգրկում է California-ի հետևյալ վարչաշրջանը՝ Los Angeles:

Մեր ծրագրին կարող են միանալ միայն մեր սպասարկման տարածքում բնակվող մարդիկ:

Դուք չեք կարող մնալ մեր պլանում, եթե տեղափոխվեք մեր սպասարկման տարածքից դուրս: Մեր սպասարկման տարածքից դուրս գալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարդացեք **Գլուխ 8** -ը այս *Անդամի ձեռնարկում* :

E. Ի՞նչն է ձեզ իրավասու դարձնում լինել պլանի անդամ

Դուք իրավասու եք անդամակցելու մեր պլանին, քանի դեռ՝

- ապրում եք մեր սպասարկման տարածքում (բանտարկված անձինք չեն համարվում աշխարհագրական ծառայության տարածքում ապրող, նույնիսկ եթե ֆիզիկապես գտնվում են այնտեղ), **և**
- գրանցման պահին լինել 21 տարեկան և ավելի,**և**
- ունենալ և՛ Medicare Part A, և՛ Medicare Part B, **և**
- ԱՄՆ քաղաքացի կամ քաղաքացի, կամ իրավասու ոչ քաղաքացի, **և**
- տվյալ պահին իրավասու եք Medi-Cal-ի համար:
- Եթե դուք կորցնեք ձեր Medi-Cal-ի իրավասությունը, բայց կարող եք ակնկալել, որ այն կվերականգնեք երեք ամսվա ընթացքում, մենք կշարունակենք տրամադրել Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի կողմից ապահովագրվող բոլոր Medicare նպաստները: Երբ ձեր Medi-Cal-ի ծածկույթն ավարտվի, մենք չենք վճարի ձեր Medi-Cal-ի նպաստների համար: Մենք կվճարենք Medicare-ի ծախսերի բաշխման ցանկացած համավճար, որը Medi-Cal-ը կվճարեր, եթե կորցրած չլինեիք Medi-Cal-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարով:

  Մենք ձեզ կօգնենք վերականգնել Medi-Cal-ի ձեր իրավասությունը: Եթե ձեր Medi-Cal իրավասությունը վերականգնվում է, իսկ դուք դեռ գրանցված եք մեզ հետ ձեր Medicare ծածկույթի համար, մենք կվերսկսենք վճարել ձեր Medi-Cal նպաստների համար և ձեր գրանցումը մեզ հետ կշարունակվի: Եթե դուք չեք կարող վերականգնել Medi-Cal-ը ընթացքում երեք ամսվա ընթացքում, մենք պետք է ձեզ ապանդամագրենք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) պլանի գրանցումից: Եթե դուք վերականգնեք Medi-Cal-ի պահանջներին համապատասխանությունը գրանցումից հենվելուց հետո, ապա պետք է դիմեք մեզ, որպեսզի կրկին ձեզ գրանցենք պլանում:

Լրացուցիչ տեղեկության համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

F. Ի՞նչ ակնկալել, երբ առաջին անգամ միանում եք մեր առողջապահական ապահովագրության պլանին

Երբ առաջին անգամ միանում եք մեր ծրագրին, ստանում եք առողջության ռիսկի գնահատում (HRA) ձեր գրանցման օրվանից առաջ կամ դրանից հետո՝ 90 օրվա ընթացքում:

Մեզանից պահանջվում է ապահովել ձեր HRA-ը: Այս HRA-ն հիմք է հանդիսանում ձեր խնամքի ծրագրի մշակման համար: HRA-ը բաղկացած է հարցերից, որոնք որոշում են ձեր բժշկական, վարքագծային առողջության ու գործառնական կարիքները:

Մենք կապ կհաստատենք ձեզ հետ՝ HRA-ն անցկացնելու համար: Մենք կարող ենք լրացնել HRA-ն անձամբ այցելությամբ, հեռախոսազանգով կամ փոստով: Մենք ամեն տարի կապ կհաստատենք ձեզ հետ, որպեսզի տեսնենք, թե արդյոք ձեր կարիքներից որևէ մեկը փոխվել է:

Մենք ձեզ լրացուցիչ տեղեկություններ կուղարկենք այս HRA-ի մասին:

Եթե ձեր համար նոր է մեր պլանը, դուք կարող եք շարունակել դիմել այն բժիշկներին, ում այս պահին դիմում եք, եթե նույնիսկ նրանք մեր ցանցում չեն: Մենք դա անվանում ենք խնամքի շարունակականություն: Եթե նրանք մեր ցանցում չեն, դուք կարող եք պահպանել ձեր ներկա մատակարարներին և ծառայությունների լիազորումներն անդամագրումից հետո մինչև 12 ամիս, եթե համապատասխանում եք հետևյալ պայմաններին.

- Դուք, ձեր ներկայացուցիչը կամ ձեր մատակարարը խնդրում եք մեզ թույլ տալ շարունակել օգտվել ձեր ընթացիկ մատակարարից:
- Մենք կարող ենք հաստատել, որ դուք գոյություն ունեցող փոխհարաբերություն ունեիք առաջնային կամ մասնագիտական խնամքի մատակարարի հետ, որոշ բացառություններով: Երբ ասում ենք «գոյություն ունեցող փոխհարաբերություն», նշանակում է, որ դուք այցելել եք արտացանցային մատակարարին առնվազն մեկ անգամ ոչ արտակարգ իրավիճակի համար՝ մեր ծրագրին անդամագրվելուց առաջ 12 ամսվա ընթացքում:
    - Մենք որոշում ենք գոյություն ունեցող հարաբերությունները՝ վերանայելով ձեր առկա առողջական տեղեկությունները կամ ձեր տրամադրած տեղեկությունները:
    - Մենք կպատասխանենք ձեր խնդրանքին 30 օրվա ընթացքում: Դուք կարող եք նաև խնդրել մեզ ավելի արագ որոշում կայացնել, և մենք կպատասխանենք 15 օրվա ընթացքում: Այս հարցումը կարող եք անել՝ զանգահարելով 1-800-431-9007 (TTY: 711) հեռախոսահամարով: Եթե դուք վտանգի տակ եք, մենք պետք է պատասխանենք երեք օրվա ընթացքում:
    - Դուք կամ ձեր մատակարարը պետք է ներկայացնի գոյություն ունեցող փոխհարաբերությունն ապացուցող փաստաթղթեր, և համաձայնեք որոշակի պայմանների, երբ կատարում եք այս խնդրանքը:

Նշում. դուք կարող եք այս հարցումը ներկայացնել Երկարատև բժշկական սարքավորումների (DME) մատակարարներին առնվազն 90 օ րվա ընթացքում, մինչև մենք թույլ տանք նոր DME վարձույթը և ցանցի մատակարարը տրամադրի վարձույթը: Չնայած դուք չեք կարող այս հարցումը ներկայացնել փոխադրումների մատակարարների կամ այլ օժանդակ մատակարարների համար, դուք կարող եք հարցում կատարել տրանսպորտային ծառայությունների կամ մեր ծրագրում չներառված այլ օժանդակ ծառայությունների համար:

Շարունակական բուժսպասարկման ավարտից հետո դուք պետք է այցելություններ կատարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի ցանցային բժիշկների և այլ մատակարարների մոտ, որոնք կցված են ձեր առաջնային բուժօգնության մատակարարի բժշկական խմբին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մենք համաձայնագիր ենք կնքել ձեր արտացանցային բժշկի հետ: Ցանցային մատակարարն այն մատակարարն է, որն աշխատում է առողջապահական ապահովագրության պլանի հետ: Մեր պլանին գրանցվելուն պես ձեզ կնշանակվի մասնակից բժշկական խումբ Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) ցանցից: Դուք նաև կընտրեք PCP այդ մասնակից բժշկական խմբից: Ձեր PCP-ն ընտրելու համար այցելեք մեր կայք՝ go.wellcare.com/HealthNetCA և ընտրեք PCP մեր պլանի ցանցից: Անդամների սպասարկման կենտրոնը նույնպես կարող է օգնել ձեզ ընտրել PCP: Ձեր PCP-ն ընտրելուց հետո զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն և հայտնեք ձեր ընտրության մասին: Ձեր PCP-ն պետք է լինի մեր ցանցում: Բժշկական խնամք ստանալու մասին ավելին իմանալու համար կարդացեք **Գլուխ 3**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

G. Ձեր խնամքի թիմը և խնամքի ծրագիրը

G1. Խնամքի թիմ

Խնամքի թիմը կարող է օգնել ձեզ շարունակել ստանալ ձեզ անհրաժեշտ խնամքը: Խնամքի թիմը կարող է ներառել ձեր բժշկին, բժշկական խնամքի համակարգողին, թեր մասնագետներին կամ առողջապահական ոլորտի ձեր ընտրած այլ մասնագետների:

Բուժսպասարկման համակարգողն այն անձն է, ով հատուկ վերապատրաստում է անցել, որպեսզի օգնի կառավարել ձեզ անհրաժեշտ խնամքը: Դուք ստանում եք բուժսպասարկման համակարգող, երբ գրանցվեք մեր ծրագրին: Այս անձը նաև ձեզ ուղղորդում է համայնքի այլ ռեսուրսների, որոնք մեր ծրագիրը կարող է չտրամադրել և կաշխատի ձեր խնամքի թիմի հետ՝ օգնելու համակարգել ձեր խնամքը: Ձեր բուժսպասարկման համակարգողի և խնամքի թիմի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեզ էջի ներքևում գտնվող համարներով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

G2. Բուժսպասարկման պլան

Ձեր խնամքի թիմը կաշխատի ձեզ հետ՝ մշակելու բուժսպասարկման պլանը: Բուժսպասարկման պլանը տեղեկացնում է ձեզ և ձեր բժիշկներին, թե ինչ ծառայություններ են ձեզ անհրաժեշտ և ինչպես եք ստանում դրանք: Այն ներառում է ձեր բժշկական, վարքագծային առողջության և LTSS և այլ ծառայություններ:

Ձեր բուժսպասարկման պլանը ներառում է.

- Ձեր առողջապահական նպատակները **և**
- ձեզ անհրաժեշտ ծառայությունների ստացման ժամանակացույցը:

Ձեր խնամքի թիմը հանդիպում է ձեզ հետ ձեր HRA-ից հետո: Նրանք կզրուցեն ձեզ հետ անհրաժեշտ ծառայությունների մասին: Նրանք նաև պատմում են այն ծառայությունների մասին, որոնք, հնարավոր է, ցանկանաք ստանալ: Ձեր բուժսպասարկման պլանը հիմնված է ձեր կարիքների և նպատակների վրա: Առնվազն ամեն տարի ձեր խնամքի թիմն աշխատում է ձեզ հետ՝ թարմացնելու ձեր բուժսպասարկման պլանը:

H. Կարևոր ծախսերի ամփոփագիր

Ձեր ծախսերը կարող են ներառել հետևյալը.

- Պլանի ապահովագին (**Բաժին H1**)
- Medicare դեղատոմսով դեղերի վճարման պլանի գումարը (**Բաժին H2**)

Որոշ իրավիճակներում Ձեր պլանի ապահովագինը կարող է ավելի քիչ լինել:

H1. Պլանի ապահովագինը

Լրացուցիչ օգնություն (Extra Help) ծրագիրը ձեր անունից վճարում է Medicare Part D-ի ապահավագինը, երբ դուք գրանցվեք մեր պլանում:

H2. Medicare դեղատոմսով դեղերի վճարման գումար

Եթե դուք մասնակցում եք Medicare դեղատոմսով դեղերի վճարման պլանին, ապա դուք կստանաք հաշիվ ձեր պլանից՝ ձեր դեղերի համար (դեղատանը վճարելու փոխարեն): Ձեր ամսական հաշիվը հիմնված է այն բանի վրա, թե որքան եք վճարել ձեր ստացած ցանկացած դեղատոմսի համար, գումարած ձեր նախորդ ամսվա հաշվեկշիռը, որը բաժանված է տարվա մնացած ամիսների քանակի վրա:

Գլուխ 2-ը տալիս է լրացուցիչ տեղեկություններ Medicare դեղատոմսով դեղերի վճարման պլանի մասին: Եթե դուք համաձայն չեք այս վճարման տարբերակով գանձվող գումարի հետ, կարող եք հետևել **Գլուխ 9** -ում նշված քայլերին՝ բողոք կամ բողոքարկում ներկայացնելու համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

I. Այս *Անդամի ձեռնարկը*

Այս *Անդամի ձեռնարկը* ձեզ հետ ունեցած մեր պայմանագրի մի մասն է: Սա նշանակում է, որ մենք պետք է հետևենք այս փաստաթղթի բոլոր կանոններին: Եթե կարծում եք, որ մենք արել ենք ինչ-որ բան, որը հակասում է այս կանոններին, ապա կարող եք բողոքարկել մեր գործողությունը: Բողոքարկման մասին տեղեկության համար կարդացեք **Գլուխ 9**-ն այս *Անդամի ձեռնարկում* կամ զանգարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով:

Անդամի ձեռնարկ ստանալու համար կարող եք դիմել էջի ներքևում գտնվող հեռախոսահամարներով՝ զանգահարելով Անդամների սպասարկման կենտրոն: Կարող եք նաև ծանոթանալ *Անդամի ձեռնարկին* մեր կայքում՝ էջի ներքևում գտնվող վեբ հասցեում:

Պայմանագիրն ուժի մեջ է այն ամիսների համար, երբ դուք գրանցված եք մեր պլանում 2027 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:

J. Այլ կարևոր տեղեկություններ, որոնք դուք ստանում եք մեզանից

Այլ կարևոր տեղեկություններ, որոնք մենք տրամադրում ենք ձեզ, ներառում են Անդամի ID քարտը, *Մատակարարների ու դեղատների տեղեկատուն* և *Ապահովագրված դեղերի ցանկն*, որը նաև կոչվում է նաև *Դեղերի ցանկ* կամ *Տեղեկամատյան*:

J1. Ձեր Անդամի ID քարտը

Մեր պլանի շրջանակներում դուք կունենաք մեկ քարտ ձեր Medicare և Medi-Cal ծառայությունների համար, ներառյալ՝ Երկարաժամկետ ծառայությունների ու աջակցության (LTSS), որոշ վարքագծային առողջության ծառայությունների ու դեղատոմսերի համար: Դուք պետք է ցույց տաք այս քարտը ծառայություններ կամ դեղատոմսեր ստանալիս: Ահա Անդամի ID քարտի նմուշ.

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Եթե ձեր Անդամի ID քարտը վնասվել, կորել կամ գողացվել է, անմիջապես զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ էջի ներքևի համարով: Մենք ձեզ նոր քարտ կուղարկենք:

Քանի դեռ դուք հանդիսանում եք մեր պլանի անդամ, կարիք չկա օգտագործելու ձեր կարմիր, սպիտակ և կապույտ Medicare քարտը կամ ձեր Medi-Cal քարտը՝ ծառայություններ ստանալու համար: Պահեք այդ քարտերն ապահով տեղում, եթե հետագայում դրանք ձեզ պետք լինեն: Եթե ցույց տաք ձեր Medicare քարտը ձեր Անդամի ID քարտի փոխարեն, մատակարարը կարող է մեր ծրագրի փոխարեն հաշիվ ուղարկել Medicare-ին, և հնարավոր է դուք նույնպես հաշիվ ստանաք: Ձեզ կարող են խնդրել ցույց տալ ձեր Medicare քարտը, եթե ձեզ անհրաժեշտ են հիվանդանոցային ծառայություններ, անբուժելի հիվանդների խնամքի ծառայություններ կամ եթե մասնակցում եք Medicare-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտություններին (նաև կոչվում են կլինիկական փորձարկումներ): Որպեսզի պարզեք, թե ինչ է պետք անել, երբ մատակարարից հաշիվ եք ստանում, կարդացեք **Գլուխ 7**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

Հիշեք, որ ձեզ անհրաժեշտ է ձեր Medi-Cal քարտը կամ Նպաստների նույնականացման քարտը (BIC) հետևյալ ծառայություններից օգտվելու համար՝

- Տնային աջակցման ծառայություններ (IHSS)
- Վարչաշրջանի մասնագիտացված հոգեկան առողջության և նյութերի օգտագործման խանգարման (SUD) ծառայություններ
- Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագրի (MSSP) ծառայություններ
- Medi-Cal Covered Rx ծառայություններ կամ մատակարարներ «Medi-Cal Rx»
- Medi-Cal-ի ապահովագրած ատամնաբուժական ծառայություններ
- Տնային և համայնքային հրաժարման ծառայություններ (HCBS)
- Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS)
- Երկարաժամկետ խնամք (LTC), այդ թվում՝ ենթասուր և միջին սրության հիվանդությունների խնամքի հաստատություն

J2. *Մատակարարների և դեղատների տեղեկատու*

Մատակարարների և դեղատների տեղեկատու-ի մեջ թվարկված են մեր պլանի ցանցում ներառված մատակարարները և դեղատները: Քանի դեռ դուք մեր ծրագրի անդամ եք, ապահովագրված ծառայություններ ստանալու համար դուք պետք է օգտվեք ցանցի մատակարարներից:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Դուք կարող եք դիմել *Մատակարարների և դեղատների տեղեկատուն* (էլեկտրոնային կամ թղթային տարբերակ) ստանալու համար՝ էջի ներքևում գտնվող համարներով զանգահարելով Անդամների սպասարկման կենտրոն: Մատակարարների և դեղատների տեղեկատուների համար թղթային տարբերակի հարցումները կուղարկվեն ձեզ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Դուք կարող եք նաև կարդալ *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*՝ go.wellcare.com/2027providerdirectories հասցեով:

Մատակարարների և դեղատների տեղեկատուն տրամադրում է այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են հասցեները, հեռախոսահամարները և աշխատանքային ժամերը: Դրանում նշվում է, որ բնակարանները նախատեսված են հաշմանդամություն ունեցող անձանց համար: *Մատակարարների և դեղատների տեղեկատուն* նաև ասում է, թե արդյոք մատակարարներն ընդունում են նոր հիվանդներ և թե ինչ այլ լեզուներով են նրանք խոսում: Ե՛վ Անդամների սպասարկման կենտրոնը, և՛ կայքը կարող են տրամադրել ամենաթարմ տեղեկությունը մատակարարների և դեղատների մասին: Եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն ցանցային մատակարար կամ դեղատուն գտնելու հարցում, խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման ծառայություն: Եթե ցանկանում եք, որ ձես փոստով ուղարկվի *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*, կարող եք զանգահարել Անդամների սպասարկման ծառայություն այս էջի ներքևում նշված հեռախոսահամարով:

Ցանցային մատակարարների սահմանումը

- Մեր ցանցի մատակարարները ներառում են՝
    - բժիշկները, բուժքույրերը և այլ բուժսպասարկման մասնագետները, որոնց դուք այցելում եք որպես մեր պլանի անդամ,
    - կլինիկաներ, հիվանդանոցներ, բուժքույրական հաստատություններ և այլ վայրեր, որոնք ապահովում են առողջապահական ծառայություններ մեր ծրագրում **և**
    - LTSS, վարքագծային առողջության ծառայություններ, տնային առողջության գործակալություններ, երկարատև օգտագործման բժշկական սարքավորման (DME) մատակարարներ և այլոք, ովքեր տրամադրում են ապրանքներ ու ծառայություններ, որոնք ստանում եք Medicare-ի կամ Medi-Cal-ի միջոցով:

Ցանցի մատակարարները, որպես լրիվ վճարում, համաձայնվել են ապահովագրված ծառայությունների համար ընդունել վճարումներ մեր ծրագրից:

Ցանցի դեղատների սահմանումը

- Ցանցի դեղատներն այն դեղատներն են, որոնք համաձայնվել են դեղատոմսեր համալրել մեր ծրագրի անդամների համար: Օգտվեք *Մատակարարների և դեղատների տեղեկատուից* որպեսզի գտնեք այն ցանցի դեղատունը, որից ցանկանում եք օգտվել:

- Բացի արտակարգ իրավիճակներից, դուք պետք է ստանաք ձեր դեղատոմսերը մեր ցանցի դեղատներից մեկում, եթե ցանկանում եք, որ մեր ծրագիրն օգնի ձեզ վճարել դրանց համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար էջի ներքևում գտնվող համարներով զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն: Ե՛վ Անդամների սպասարկման կենտրոնը, և՛ մեր կայքը կարող են տրամադրել ամենաթարմ տեղեկությունը մեր ցանցի մատակարարների և դեղատների փոփոխությունների մասին:

J3. *Ապահովագրված դեղերի ցանկ*

Պլանն ունի *Ապահովագրված դեղերի ցանկ*: Մենք հակիրճ անվանում ենք այն *«Դեղերի ցանկ»*: Այն ներկայացնում է ձեզ, թե որ դեղերն է ընդգրկում մեր պլանը: Այս ցանկի դեղերն ընտրվում են մեր պլանի համաձայն՝ բժիշկների և դեղագործների օգնությամբ: *Դեղերի ցանկը* պետք է համապատասխանի Medicare-ի պահանջներին: Բանակցված գներով դեղերը, որոնք ներառված են Medicare-ի դեղերի գների բանակցությունների ծրագրում, կներառվեն ձեր *Դեղերի ցանկում*, եթե չհեռացվեն և փոխարինվեն, ինչպես նկարագրված է **Գլուխ 5, Բաժին E**-ում: Medicare-ը հաստատել է Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) պլանի *Դեղերի ցանկը*:

Դեղերի ցանկը նաև տեղեկացնում է ձեզ՝ արդյոք կան որևէ կանոններ կամ սահմանափակումներ որոշակի դեղերի համար, օրինակ՝ քանակի սահմանափակում: Կարդացեք **Գլուխ 5**-ը այս *Անդամի ձեռնարկում՝* լրացուցիչ տեղեկատվության համար:

Ամեն տարի մենք ձեզ ուղարկում ենք տեղեկություն այն մասին, թե ինչպես մուտք գործել *Դեղերի ցանկ*, սակայն տարվա ընթացքում կարող են տեղի ունենալ որոշ փոփոխություններ: Ամենաժամանակակից տեղեկատվություն ստանալու համար, թե որ դեղերն են ապահովագրված, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն կամ այցելեք մեր կայք էջի ներքևում գտնվող հասցեով:

J4. *Նպաստների բացատրություն*

Ձեր կողմից Medicare Part D դեղերի նպաստներն օգտագործելու դեպքում, մենք ձեզ կուղարկենք ամփոփ զեկույց, որպեսզի օգնենք ձեզ հասկանալ ու հետևել ձեր Medicare Part D դեղերի համար արված վճարումները: Այս ամփոփ զեկույցը կոչվում է *Նպաստների բացատրություն* (EOB):

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

EOB-ը ներկայացնում է ձեզ այն ընդհանուր գումարի մասին, որը դուք կամ ձեր անունից այլ մարդիկ ծախսել եք ձեր Medicare Part D դեղերի վրա և ընդհանուր գումարը, որը մենք վճարել ենք ձեր Medicare Part D դեղերի համար յուրաքանչյուր ամսվա ընթացքում: Այս EOB-ը հաշիվ չէ: EOB-ում ավելի շատ տեղեկություններ են պարունակվում ձեր կողմից ընդունվող դեղերի մասին, օրինակ՝ գների աճի և այլ դեղերի մասին, որոնք կարող են հասանելի լինել ավելի ցածր ծախսերի բաշխմամբ: Դուք կարող եք ձեր դեղատոմս դուրս գրողի հետ զրուցել այս ավելի էժան տարբերակների մասին: **Գլուխ 6**-ն այս *Անդամի ձեռնարկում* մանրամասն ներկայացնում է EOB-ն, և թե ինչպես այն կարող է օգնել ձեզ՝ հետևելու ձեր փոխհատուցվող դեղերին:

Դուք կարող եք նաև EOB հայցել: Պատճեն ստանալու համար դիմեք Անդամների սպասարկման կենտրոն էջի ներքևում գտնվող համարներով:

Փոստով Մաս D-ի «Նպաստների բացատրության» (Part D EOB) թղթային տարբերակը ստանալու փոխարեն՝ այժմ ունեք դրա էլեկտրոնային տարբերակը ստանալու ընտրության (հնարավորության) իրավունք: Կարող եք հայցել դա՝ այցելելով https://www.express-scripts.com/rx կայք: Եթե ընտրեք մասնակցությունը, ապա երբ ձեր Մաս D-ի էլեկտրոնային EOB-ն պատրաստ լինի դիտելու կստանաք նամակ այն տպելու կամ ներբեռնելու համար: Մաս D-ի էլեկտրոնային EOB-ները կոչվում են նաև Մաս D-ի անթուղթ EOB-ներ: Սրանք Մաս D EOB-ների ճշգրիտ պատճեններն են (պատկերները):

Պահեք այս EOB-ները: Դրանք ձեր դեղերի ծախսերի մասին կարևոր արձանագրություններ են:

K. Ձեր անդամակցության գրառումը արդիական պահելը

Դուք կարող եք թարմ պահել ձեր անդամակցության արձանագրությունը՝ տեղեկացնելով մեզ, երբ փոխվում են ձեր տվյալները:

Մեզ անհրաժեշտ է այս տեղեկատվությունը, որպեսզի համոզվենք, որ մենք ունենք ձեր ճիշտ տեղեկությունները մեր գրառումներում: Բժիշկները, հիվանդանոցները, դեղագործները և այլ մատակարարները մեր պլանի ցանցում օգտագործում են անդամի ձեր գրառումները՝ իմանալու, թե ինչ ծառայություններ և դեղեր են ապահովագրվում և ձեր ծախսերի բաշխման գումարները: Այս պատճառով շատ կարևոր է օգնել մեզ թարմացնել Ձեր տվյալները:

Անմիջապես պատմեք մեզ հետևյալի մասին՝

- փոփոխություններ ձեր անվան, ձեր հասցեի կամ ձեր հեռախոսահամարի մեջ,
- փոփոխություններ՝ կապված առողջության ապահովագրական որևէ այլ ծածկույթի հետ, ինչպիսիք են ձեր գործատուի, ձեր ամուսնու/կնոջ գործատուի ձեր ընտանեկան զուգընկերոջ գործատուի կամ աշխատակիցների փոխհատուցումը,

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- պատասխանատվության ցանկացած հայցեր, օրինակ՝ ավտոմեքենայի վթարի հայցեր,
- բուժքույրական հաստատություն կամ հիվանդանոց տեղափոխում,
- հիվանդանոցում կամ շտապ օգնության սենյակում ստացվող խնամք,
- փոփոխություններ ձեր խնամողի (կամ ձեզ համար պատասխանատու որևէ անձի). **և**,
- եթե դուք մասնակցում եք կլինիկական հետազոտությանը: (**Նշում.** Ձեզանից չի պահանջվում տեղեկացնել մեզ այն կլինիկական հետազոտության մասին, որում դուք մտադրված եք մասնակցել, բայց մենք ձեզ խրախուսում ենք այդպես վարվել:)

Եթե օգնության կարիք ունեք, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն էջի ներքևում գտնվող համարներով:

Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ նաև այցելելով մեր կայքը՝ go.wellcare.com/HealthNetCA: Սեղմեք «Login» («Մուտք գործել») կոճակը: Մուտք գործեք կամ ստեղծեք նոր հաշիվ: Ուղարկեք մեզ անվտանգ հաղորդագրություն: Զանգահարեք Անդամների սպասարկման ծառայություն, եթե ունեք հարցեր կամ օգնության կարիք:

K1. Անձնական առողջական տվյալների գաղտնիություն (PHI)

Ձեր անդամակցության արձանագրության տեղեկությունները կարող են պարունակել նաև անձնական առողջական տեղեկություններ (PHI): Դաշնային ու նահանգային օրենքները պահանջում են, որ մենք գաղտնի պահենք ձեր PHI-ը: Մենք պաշտպանում ենք ձեր PHI-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար առ այն, ինչպես ենք մենք պաշտպանում ձեր PHI տվյալ-ները այցելեք **Գլուխ 8**-ը ձեր *Անդամի ձեռնարկում*:

Գլուխ 2. Կարևոր հեռախոսահամարներ և աղբյուրներ

Ներածություն

Այս գլուխը ձեզ տրամադրում է կոնտակտային տվյալներ կարևոր աղբյուրների մասին, որոնք կարող են օգնել ձեզ գտնել ձեր հարցերի պատասխանները մեր ծրագրի և ձեր առողջապահական խնամքի նպաստների վերաբերյալ: Կարող եք նաև օգտագործել այս գլուխը՝ տեղեկանալու, թե ինչպես կապվեք ձեր բուժսպասարկման համակարգողին և այլ անձանց հանդես գալ որպես իրավապաշտպան ձեր անունից: Հիմնական տերմինները և դրանց բացատրություններն այբբենական կարգով տեղակայված են այս *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

A. Անդամների սպասարկման կենտրոն....29

B. Ձեր բուժսպասարկման համակարգողը....32

C. Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (HICAP)....35

D. Բուժքույրերի խորհրդատվական զանգի գիծ....36

E. Վարքագծային առողջության ճգնաժամային գիծ....36

F. Որակի բարելավման կազմակերպություն. (QIO)....37

G. Medicare....38

H. Medi-Cal....40

I. Medi-Cal Managed Care-ի և հոգեկան առողջության Օմբուդսմենի գրասենյակ....40

J. Վարչաշրջանի սոցիալական ծառայություններ....41

K. Վարչաշրջանի վարքագծային առողջության ծառայությունների գործակալություն....42

L. California-ի Կառավարվող առողջապահության վարչություն....43

M. Առողջապահության սպառողների դաշինք (HCA)....44

N. Ծրագրեր, որոնք կօգնեն մարդկանց վճարել դեղերի ծախսերը....44

N1. Լրացուցիչ օգնություն Medicare-ից....44

N2. AIDS-ի Դեղերի աջակցության ծրագիր (ADAP)....46

N3. Medicare դեղատոմսով դեղերի վճարման պլան....47

O. Սոցիալական ապահովություն....47

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

P. Երկաթուղու կենսաթոշակային խորհուրդ (RRB)....48
Q.Խմբային ապահովագրություն կամ այլ ապահովագրություն գործատուի կողմից....49
R. Medicare Medi-Cal-ի Օմբուդսմենի ծրագիր....49
S. Medi-Cal Ատամնաբուժական ծրագիր....50

Բովանդակություն

A. Անդամների սպասարկման կենտրոն

ԶԱՆԳԱՀԱՐԵՔ	1-800-431-9007 Այս զանգն անվճար է: Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը 8 a.m.-ից 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8 a.m.-ից 8 p.m.: Նկատի ունեցեք, որ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը աշխատանքային ժամերից հետո, հանգստյան և տոն օրերին ձեր զանգին կարող է պատասխանել մեր ավտոմատ հեռախոսային համակարգը: Եթե դուք թողնում եք ձայնային հաղորդագրություն, խնդրում ենք ներառել ձեր անունը և հեռախոսահամարը. թիմի անդամը հետ կզանգի ձեզ մեկ (1) աշխատանքային օրվա ընթացքում: Մենք ունենք անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ այն մարդկանց համար, որոնք չեն խոսում անգլերեն:
TTY	711: Այս զանգն անվճար է: Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից մինչև 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից մինչև 8 p.m.:
ԳՐԵՔ	Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) PO Box 10420 Van Nuys, CA 91410-0420
ԿԱՅՔ	go.wellcare.com/HealthNetCA

Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ հետևյալի հարցում օգնության համար՝

- հարցեր ծրագրի մասին
- հարցեր հայցերի կամ հաշիվների մասին
- ձեր առողջապահական խնամքի մասին ապահովագրության որոշումներ

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Ձեր առողջապահական խնամքի մասին ապահովագրության որոշումը, դա որոշում է՝
  - ձեր նպաստների և ապահովագրված ծառայությունների մասին, **կամ**
  - ձեր առողջապահական ծառայությունների համար մեր կողմից վճարվելիք գումարի մասին:
- Զանգահարեք մեզ, եթե հարցեր ունեք ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ ապահովագրության որոշման մասին:
- Փոխհատուցման որոշումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար այցելե՛ք՝ Ձեր *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 9**:

- ձեր առողջապահական խնամքի բողոքարկումներ
  - Բողոքարկումը պաշտոնական միջոց է, որով խնդրում եք վերանայել որոշումը, որը մենք կայացրել ենք ձեր ապահովագրության մասին, և խնդրում եք փոխել այն, եթե կարծում եք, որ սխալ ենք թույլ տվել կամ համաձայն չեք որոշման հետ:
  - Բողոքարկելու մասին ավելին իմանալու համար կարդացեք **Գլուխ 9** -ն այս *Անդամի ձեռնարկ* -ում կամ կապ հաստատեք Անդամների սպասարկման կենտրոնի հետ:

- ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ բողոքներ
  - Դուք կարող եք բողոք ներկայացնել մեր կամ ցանկացած մատակարարի մասին (ներառյալ՝ արտացանցային կամ ցանցային մատակարարը): Ցանցի մատակարարն այն մատակարարն է, ով աշխատում է մեր ծրագրի հետ: Դուք կարող եք նաև բողոք ներկայացնել մեզ կամ Որակի բարելավման կազմակերպությանը (QIO) ձեր ստացած խնամքի որակի վերաբերյալ (տե՛ս **Բաժին F**).
  - Կարող եք զանգահարել մեզ ու բացատրել ձեր բողոքը՝ 1-800-431-9007 (TTY՝ 711):
  - Եթե Ձեր բողոքը կապված է ձեր բուժսպասարկմանը վերաբերող փոխհատուցման որոշման հետ, ապա կարող եք բողոքարկել (տեսեք վերոնշյալ բաժինը):
  - Դուք կարող եք Medicare-ին բողոք ուղարկել մեր ծրագրի մասին: Դուք կարող եք օգտագործել առցանց ձևը՝ www.medicare.gov/my/medicare-complaint հղումով: Կամ կարող եք զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով օգնության համար:
  - Մեր պլանի մասին Medicare Medi-Cal Օմբուդսմենի ծառայությունների պլանին բողոք կարող եք ներկայացնել՝ զանգահարելով 1-855-501-3077 հեռախոսահամարով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Ձեր բուժսպասարկման վերաբերյալ բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար անցե՛ք Ձեր *Անդամի Ձեռնարկի* **Գլուխ 9-ը**:

- ձեր դեղերի ապահովագրության որոշումներ
  - Ձեր դեղերի ապահովագրության որոշումը, դա որոշում է՝
    - ձեր նպաստների և ապահովագրված դեղերի մասին, **կամ**
    - ձեր դեղերի համար մեր կողմից վճարվելիք գումարի մասին:
  - Medicare-ի կողմից չապահովագրված դեղամիջոցներ, ինչպիսիք են՝ առանց դեղատոմսի (OTC) դեղերը և որոշ վիտամիններ, կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Medi-Cal Rx կայք՝ (www.medi-calrx.dhcs.ca.gov): Կարող եք նաև զանգահարել Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 800-977-2273 հեռախոսահամարով:
  - Ձեր դեղերի ապահովագրական որոշումների մասին ավելին իմանալու համար կարդացեք **Գլուխ 9,** Բաժին G-ն այս *Անդամի ձեռնարկում*:

- բողոքարկումներ ձեր դեղերի վերաբերյալ
  - Բողոքարկումը միջոց է, որով դուք մեզ խնդրում եք փոխել ապահովագրության որոշումը:
  - Ձեր դեղերը բողոքարկելու մասին ավելի իմանալու համար կարդացեք **Գլուխ 9,** Բաժին G-ն ձեր *Անդամի ձեռնարկում*:

- բողոքներ ձեր դեղերի վերաբերյալ
  - Դուք կարող եք բողոք ներկայացնել մեր կամ ցանկացած դեղատան մասին: Սա ներառում է բողոքներ ձեր դեղերի վերաբերյալ:
  - Եթե ձեր բողոքը ձեր դեղերի ապահովագրության որոշման մասին է, ապա կարող եք բողոքարկել: (այցելե՛ք վերոնշյալ բաժինը)
  - Դուք կարող եք Medicare-ին բողոք ուղարկել մեր ծրագրի մասին: Դուք կարող եք օգտագործել առցանց ձևը՝ www.medicare.gov/my/medicare-complaint հղումով: Կամ կարող եք զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով օգնության համար:
Եթե դուք կամավոր մասնակցում եք կլինիկական հետազոտական հետազոտության, որը Medicare-ը հաստատում է, դուք ոչինչ չեք վճարում ուսումնասիրության ներքո ընդգրկված ծառայությունների համար: Medicare-ը վճարում է ուսումնասիրության շրջանակներում ապահովագրված ծառայությունների, ինչպես նաև ձեր խնամքի հետ կապված սովորական ծախսերի համար: Երբ դուք միանում եք Medicare-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտության ուսումնասիրությանը, դուք ապահովագրված եք շատ պարագաների ու ծառայությունների համար, որոնք ստանում եք որպես ուսումնասիրության մասնակից: Սա ներառում է.

- սենյակ և սնունդ հիվանդանոցում, որի համար կվճարեր Medicare-ը, եթե նույնիսկ չմասնակցեիք հետազոտությանը:
- վիրահատություն կամ այլ բժշկական ընթացակարգ, որը հետազոտության մասն է
- նոր խնամքի կողմնակի ազդեցությունների ու բարդացումների բուժում

Եթե դուք մասնակցում եք հետազոտությանը, որը Medicare-ը **չի** հաստատել, դուք պետք է վճարեք հետազոտությանը ձեր մասնակցելու հետ կապված բոլոր ծախսերը:

J3. Ավելին կլինիկական հետազոտության մասին

Դուք կարող եք իմանալ ավելին որևէ կլինիկական հետազոտության ուսումնասիրությանը մասնակցելու մասին՝ ընթերցելով «Medicare և կլինիկական հետազոտության ուսումնասիրություններ» հրապարակումը Medicare-ի կայքում՝ (https://www.medicare.gov/coverage/clinical-research-studies): Դուք կարող եք նաև զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

K. Ինչպես են ձեր բժշկական ծառայությունները ապահովագրվում կրոնական ոչ բժշկական առողջապահական խնամքի հաստատությունում

K1. Կրոնական, ոչ բժշկական առողջապահական խնամքի հաստատության սահմանումը

Կրոնական, ոչ բժշկական առողջապահական խնամքի հաստատությունը վայր է, որն այնպիսի խնամք է տրամադրում, որը դուք սովորաբար կստանայիք հիվանդանոցում կամ հմուտ բուժքույրական հաստատությունում: Եթե հիվանդանոցում կամ որակավորված բուժքույրական հաստատությունում խնամքի ստացումը հակասում է ձեր կրոնական հավատքին, մենք կփոխհատուցենք խնամքը կրոնական, ոչ բժշկական առողջապահական խնամքի հաստատությունում:

Այս նպաստը տրամադրվում է միայն Medicare Part A ստացիոնար ծառայությունների համար (ոչ բժշկական առողջապահական խնամքի ծառայություններ):

K2. Խնամքի ստացում կրոնական, ոչ բժշկական առողջապահական խնամքի հաստատությունում

Կրոնական, ոչ բժշկական առողջապահական խնամքի հաստատությունում խնամք ստանալու համար դուք պետք է իրավական փաստաթուղթ ստորագրեք, որն ասում է, որ դուք դեմ եք «չբացառված» բժշկական բուժում ստանալուն:

- «Չբացառված» բուժումը խնամք կամ բուժում է, որը **կամավոր է և պարտադիր չէ** դաշնային, նահանգային կամ տեղային օրենքով:
- «Բացառված» բուժումը խնամք կամ բուժում է, որը **կամավոր չէ և պարտադիր է** դաշնային, նահանգային կամ տեղային օրենքով:

Մեր ծրագրով ապահովագրվելու համար՝ կրոնական, ոչ բժշկական առողջապահական խնամքի հիմնարկությունում ստացած խնամքը պետք է համապատասխանի հետևյալ պայմաններին.

- Խնամք տրամադրող հաստատությունը պետք է Medicare-ի կողմից հաստատված լինի:
- Մեր ծրագիրը ապահովագրում է միայն բուժսպասարկման ոչ կրոնական ասպեկտները:
- Եթե այս հաստատությունից ծառայություններ եք ստանում, որոնք ձեզ են տրամադրվում հաստատությունում, ապա կիրառվում է հետևյալը՝

- Դուք պետք է հիվանդություն ունենաք, որը ձեզ թույլ է տալիս ապահովագրված ծառայություններ ստանալ ստացիոնար հիվանդանոցային կամ որակավորված բուժքույրական հաստատության խնամքի համար:

- Դուք պետք է հավանություն ստանաք մեզանից, նախքան հաստատություն ընդունվելը, հակառակ դեպքում՝ ձեր այնտեղ մնալը **չի** ապահովագրվի:

Ստացիոնար հիվանդանոցային խնամքի համար գործում է անսահմանափակ ծածկույթ, քանի դեռ բավարարում եք վերը նշված պահանջներին:

L. Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում (DME)

L1. DME-ի ստացումը՝ որպես մեր ծրագրի անդամ

DME-ն ներառում է բժշկական տեսակետից անհրաժեշտ որոշակի պարագաներ, որոնք պատվիրվել են մատակարարի կողմից, ինչպիսիք են՝ անվասայլակները, հենակները, էլեկտրական ներքնակների համակարգերը, շաքարախտի պաարագաները, հիվանդանոցային մահճակալները, որոնք մատակարարը պատվիրել է տանն օգտագործելու համար, ներերակային (IV) ինֆուզիոն պոմպերը, խոսք արտադրող սարքերը, թթվածնային սարքավորումները և պարագաները, նեբուլայզերները և քայլակները:

Որոշակի DME պարագաներ, ինչպես օրինակ՝ պրոթեզները, միշտ պատկանում են ձեզ:

Այս բաժնում մենք քննարկում ենք DME-ը, որը դուք պետք է վարձակալեք: Որպես մեր ծրագրի անդամ՝ դուք կարող եք դառնալ DME-ի սեփականատերը, եթե այն բժշկական տեսակետից անհրաժեշտ է, և դուք ունեք տվյալ պարագայի երկարաժամկետ կիրառման կարիք: Բացի դրանից, պարագան պետք է թույլատրվի, կազմակերպվի և համակարգվի ձեր PCP-ի, բժշկական խմբի և/կամ Wellcare Health Net Dual Align-ի (HMO D-SNP) կողմից: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոնի էջի ներքևում նշված հեռախոսահամարով՝ երկարատև օգտագործման բժշկական սարքավորման վարձակալության կամ սեփականության պահանջների, ինչպես նաև ձեզանից պահանջվող փաստաթղթերի մասին տեղեկանալու համար:

Եթե DME ապրանքը ձեր սեփականությունն է դառնում, քանի դեռ դուք մեր ծրագրի անդամ եք, և սարքավորումը պահանջում է սպասարկում, ապա մատակարարին թույլ է տրվում հաշիվ ներկայացնել պլանին՝ վերականգնման ծախսերի համար: Կան նաև DME-ի որոշակի տեսակներ, որոնց նկատմամբ դուք սեփականություն չեք ստանա: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ DME-ի վարձակալության կամ սեփականության պահանջների և ձեզ անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկանալու համար:

Նույնիսկ եթե դուք ունեցել եք DME մինչև 12 ամիս անընդմեջ Medicare-ի ներքո՝ նախքան մեր պլանին միանալը, դուք **չեք** համարվի սարքի սեփականատերը:

L2. DME-ի սեփականություն, եթե անցնեք Original Medicare-ին

Original Medicare ծրագրում մարդիկ, որոնք վարձակալում են որոշակի DME-ներ, դառնում են այդ սարքավորման սեփականատերը 13 ամիս հետո: Medicare Advantage (MA) ծրագրում, ծրագիրը կարող է սահմանել ամիսների քանակը, որի ընթացքում մարդիկ պետք է վարձակալեն որոշ տեսակի DME, նախքան նրանք կկարողանան դառնալ սեփականատեր:

Եթե այլևս Medi-Cal չունեք, ապա դուք պետք է կատարեք 13 անընդմեջ վճարում Original Medicare-ի ներքո կամ ստիպված կլինեք կատարել MA (Medicare Advantage) ծրագրով սահմանված անընդմեջ վճարումների քանակը՝ տևական օգտագործման բժշկական սարքավորման՝ DME ապրանքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար, եթե՝

- դուք չէիք դարձել DME ապրանքի սեփականատեր, քանի դեռ մեր ծրագրում էիք, **և**
- Դուք հեռանում եք մեր ծրագրից և ստանում եք ձեր Medicare նպաստները Original Medicare-ի կամ MA ծրագրի շրջանակներից դուրս գործող առողջապահական ծրագրից:

Եթե դուք Original Medicare-ում կամ MA ծրագրում վճարումներ եք կատարել DME պարագայի համար նախքան մեր ծրագրին միանալը, **ապա այդ Original Medicare-ին կամ MA-ին արված վճարումները չեն հաշվարկվում որպես վճարումներ, որոնք պետք է անեք մեր ծրագրից հեռանալուց հետո**:

- Դուք պետք է կատարեք 13 նոր անընդմեջ վճարում Original Medicare-ի ներքո կամ պետք է իրականացնեք մի շարք նոր անընդմեջ վճարումներ՝ ըստ MA պլանի, որպեսզի դառնաք DME ապրանքի սեփականատերը:
- Այս դեպքի համար բացառություններ չկան, երբ դուք վերադառնում եք Original Medicare կամ MA պլան:

L3. Թթվածնային սարքավորումների նպաստներ՝ որպես մեր ծրագրի անդամ

Եթե դուք որակավորված եք Medicare-ի կողմից ապահովագրված թթվածնային սարքավորումների համար, մենք կապահովագրենք.

- թթվածնային սարքավորման վարձակալություն
- թթվածնի և թթվածնային բաղադրիչների առաքում
- խողովակներ և համապատասխան պարագաներ՝ թթվածնի և թթվածնային բաղադրիչների առաքման համար
- թթվածնային սարքավորումների վերանորոգումներ և սպասարկում

Թթվածնային սարքավորումները պետք է վերադարձվեն սեփականատիրոջը, եթե այն բժշկական տեսակետից ձեզ այլևս անհրաժեշտ չէ, կամ եթե դուք դուրս եք գալիս մեր ծրագրից:

L4. Թթվածնային սարքավորումներ, երբ դուք փոխում եք Original Medicare-ի կամ Medicare Advantage (MA) մեկ այլ պլանի

Երբ թթվածնային սարքավորումներն անհրաժեշտ են, և **դուք դուրս եք գալիս մեր ծրագրից և տեղափոխվում Original Medicare**, դուք կվարձակալեք այն սեփականատիրոջից 36 ամսով: Ձեր ամսական վարձակալության վճարումները ծածկում են թթվածնային սարքավորումները և վերոնշյալ պարագաներն ու ծառայությունները: Medicare-ը և Medi-Cal-ը ապահովագրում են այս վճարումները, եթե դուք դեռևս գրանցված եք Medicare-ում և Medi-Call-ում.

Եթե թթվածնային սարքավորումներն բժշկական տեսակետից անհրաժեշտ են՝ **ձեր կողմից 36 ամսով վարձակալությունից հետո**, ձեր մատակարարը պետք է տրամադրի.

- թթվածնային սարքավորումներ, պաշարներ և ծառայություններ ևս 24 ամիս
- թթվածնային սարքավորումները և պաշարներն առնվազն հինգ տարի, եթե բժշկական տեսակետից անհրաժեշտ են

Եթե թթվածնային սարքավորումները դեռ բժշկական տեսակետից անհրաժեշտ են **հինգ տարվա ավարտից հետո.**

- Ձեր մատակարարն այլևս չպետք է տրամադրի այն, և դուք կարող եք ընտրել՝ ստանալ փոխարինող սարքավորումներ ցանկացած մատակարարից:
- Սկսվում է նոր հինգ տարվա ժամանակահատված:
- Դուք կվարձակալեք մատակարարից 36 ամսով:
- Ձեր մատակարարն այնուհետև պետք է տրամադրի թթվածնային սարքավորումները, պարագաները և ծառայությունները ևս 24 ամիս:
- Նոր փուլը սկսվում է ամեն հինգ տարին, քանի դեռ թթվածնային սարքավորումները բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

Երբ թթվածնային սարքավորումները բժշկական տեսակետից անհրաժեշտ են, և **դուք դուրս եք գալիս մեր ծրագրից և տեղափոխվում MA մեկ այլ ծրագիր**, ծրագիրը կապահովագրի առնվազն այն, ինչ Original Medicare-ը ապահովագրում է: Դուք կարող եք հարցնել ձեր MA ծրագրին, թե ինչպիսի թթվածնային սարքավորումներ և պաշարներ է այն ապահովագրում, և որքան դրանք կարժենան:

Գլուխ 4. Նպաստների աղյուսակ

Ներածություն

Այս գլուխը տեղեկացնում է մեր ծրագրի կողմից ապահովագրվող ծառայությունների և այդ ծառայությունների ցանկացած սահմանափակման կամ վերահսկման վերաբերյալ: Այն նաև տեղեկացնում է մեր ծրագրով չապահովագրված նպաստների մասին: Հիմնական տերմինները և դրանց բացատրություններն այբբենական կարգով տեղակայված են այս *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի նոր անդամները. ընդհանուր առմամբ դուք կգրանցվեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ում ձեր Medicare-ի նպաստների համար՝ Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ում գրանցվելու դիմումին հաջորդող ամսվա 1-ին օրը: Դուք դեռ կարող եք ստանալ ձեր Medi-Cal ծառայությունները ձեր նախկին Medi-Cal առողջապահական պլանից ևս մեկ ամիս: Այնուհետև, դուք կստանաք ձեր Medi-Cal ծառայությունները Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի միջոցով: Ձեր Medi-Cal ապահովագրության մեջ բաց չի լինի: Հարցերի դեպքում զանգահարեք մեզ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711):

Բովանդակություն

A. Ձեր ապահովագրված ծառայությունները 85

B. Կանոններ մատակարարների դեմ, որոնք հաշիվ են ներկայացնում ձեզ ծառայությունների համար 85

C. Մեր ծրագրի Նպաստների աղյուսակի մասին 85

D. Մեր ծրագրի Նպաստների աղյուսակը 90

E. Համայնքի աջակցություն 166

F. Նպաստներ, որոնք ապահովագրված են մեր պլանից դուրս 172

F1. California-ի համայնքային անցումներ (CCT) 172

F2. Medi-Cal Ատամնաբուժական ծրագիր 173

F3. Տնային աջակցման ծառայություններ (IHSS) 174

F4. 1915(c) Տան և համայնքի վրա հիմնված ծառայություններից (HCBS) հրաժարման ծրագրեր 175

F5. Վարչաշրջանի վարքագծային առողջության ծառայություններ, որոնք տրամադրվում են մեր պլանից դուրս (հոգեկան առողջության և հոգեմետ նյութերի օգտագործման հետ կապված խանգարումների ծառայություններ) 178

G. Նպաստներ, որոնք չեն ապահովագրվում մեր ծրագրով, Medicare-ով կամ Medi-Cal-ով 181

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

A. Ձեր ապահովագրված ծառայությունները

Այս գլուխը պատմում է Ձեր ծառայությունների մասին, որոնք ընդգրկում է մեր ծրագիրը: Դուք կարող եք նաև իմանալ այն ծառայությունների մասին, որոնք չեն ապահովագրվում: Դեղերի նպաստների մասին տեղեկությունը տեղադրված է այս *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 5-ում**: Այս գլխում բացատրվում են նաև որոշ ծառայությունների սահմանափակումները:

Քանի որ դուք օգնություն եք ստանում Medi-Cal-ից, դուք ոչինչ չեք վճարում ձեր ապահովագրված ծառայությունների համար, քանի դեռ հետևում եք պլանի կանոններին: Պլանի կանոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 3**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

Եթե ձեզ օգնություն է հարկավոր ապահովագրված ծառայությունները հասկանալու համար, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից մինչև 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից մինչև 8 p.m.:

B. Կանոններ մատակարարների դեմ, որոնք հաշիվ են ներկայացնում ձեզ ծառայությունների համար

Մենք արգելում ենք մեր ծրագրի մատակարարներին ձեզ հաշիվներ ներկայացնել ապահովագրված ծառայությունների համար: Մենք ուղղակիորեն վճարում ենք մեր մատակարարներին և պաշտպանում ձեր որևէ գանձումներից: Սա կիրառելի է, նույնիսկ եթե մենք վճարում ենք մատակարարին ավելի քիչ, քան մատակարարի գանձումներն են ծառայության համար:

Դուք երբեք չպետք է հաշիվ ստանաք մատակարարից ապահովագրված ծառայությունների համար: Եթե վճարում եք, ապա այցելե՛ք *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 7-ը** կամ զանգահարեք Անդամների սպասարկման ծառայություն:

C. Մեր ծրագրի Նպաստների աղյուսակի մասին

Նպաստների աղյուսակը տեղեկացնում է ձեր, թե որ ծառայությունների համար ենք մենք վճարում: (Դեղերի ծածկույթը **Գլուխ 5-ում** է:) Այն այբբենական կարգով թվարկում է ապահովագրված ծառայությունները և բացատրում դրանք:

Մենք կվճարենք Նպաստների աղյուսակում նշված ծառայությունների համար, եթե պահպանվում են հետևյալ կանոնները: Դուք ոչինչ **չեք** վճարում Նպաստների աղյուսակում նշված ծառայությունների համար, քանի դեռ Դուք համապատասխանում եք ապահովագրության ներքոնշյալ պայմաններին:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Մենք պետք է տրամադրենք ձեր Medicare և Medi-Cal ապահովագրված ծառայությունները՝ համաձայն Medicare-ով և Medi-Cal-ով սահմանված կանոնների:

- Ծառայությունները այդ թվում՝ բուժսպասարկումը, վարքագծային առողջության և թմրանյութերի օգտագործման ծառայությունները, երկարատև ծառայություններն ու աջակցությունը, պաշարները, սարքավորումը և դեղերը պետք է բժշկական տեսակետից անհրաժեշտ լինեն: Բժշկական առումով անհրաժեշտը նկարագրում է ծառայություններ, պաշարներ կամ դեղեր, որոնք հարկավոր են ձեր հիվանդության կանխման, ախտորոշման կամ բուժման համար, կամ ձեր ընթացիկ առողջության պահպանման համար: Սա ներառում է խնամք, որը կանխում է հիվանդանոց կամ բուժքույրական հաստատություն ձեր տեղափոխվելը: Սա նաև նշանակում է ծառայություններ, պաշարներ կամ դեղեր, որոնք համապատասխանում են բժշկական պրակտիկայի ընդունված ստանդարտներին: «Ծառայությունը բժշկական տեսակետից անհրաժեշտ է», երբ այն խելամիտ է և անհրաժեշտ՝ պաշտպանելու կյանքը, կանխելու լուրջ հիվանդությունը կամ հաշմանդամությունը կամ մեղմելու սաստիկ ցավը:

- Նոր անդամագրվածների համար. առաջին 90 օրվա ընթացքում մենք կարող ենք չպահանջել, որ դուք ստանաք նախնական թույլտվություն բուժման որևէ ակտիվ կուրսի համար, նույնիսկ եթե բուժման կուրսը կապված է արտացանցային մատակարարի մոտ սկսված ծառայության ստացման հետ:

- Դուք ստանում եք ձեր խնամքը ցանցի մատակարարից: Ցանցի մատակարարն այն մատակարարն է, որն աշխատում է մեզ հետ: Շատ դեպքերում, այն խնամքը, որը դուք ստանում եք արտացանցային մատակարարից, չի ապահովագրվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արտակարգ իրավիճակ կամ շտապ անհրաժեշտ բուժսպասարկում է, կամ եթե ձեր պլանը կամ ցանցի մատակարարը ձեզ ուղեգիր է տվել: Սա նշանակում է, որ ստիպված կլինեք ամբողջությամբ վճարել մատակարարին տրամադրված արտացանցային ծառայությունների համար: **Գլուխ 3**-ն այս *Անդամի ձեռնարկում* պարունակում է լրացուցիչ տեղեկություններ ցանցային և արտացանցային մատակարարներից օգտվելու մասին*:*

- Դուք ունեք առաջնային բուժաշխատող (PCP) կամ խնամքի թիմ, որը տրամադրում և կառավարում է ձեր խնամքը: Շատ դեպքերում ձեր PCP-ն ձեզ պետք է նախապես հավանություն տա, նախքան կարող եք այցելել մատակարարի, ով ձեր PCP-ն չէ կամ օգտվել պլանի ցանցի այլ մատակարարներից: Սա կոչվում է ուղեգիր: **Գլուխ 3**-ի Բաժին D -ն՝ այս *Անդամի ձեռնարկում* լրացուցիչ տեղեկություններ է պարունակում ուղեգիր ստանալու մասին և այն մասին, թե երբ դրա կարիքը **չունեք:**

- Մենք ապահովարում ենք Նպաստների աղյուսակում թվարկված որոշ ծառայություններ միայն այն դեպքում, եթե ձեր բժիշկը կամ ցանցի այլ մատակարար նախ ստանա մեր հաստատումը: Սա կոչվում է նախնական թույլտվություն (PA): Մենք PA կարիք ունեցող ապահովագրված ծառայությունները նշում ենք Նպաստների աղյուսակում շեղ տառատեսակով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Եթե ձեր պլանը նախատեսում է բուժման կուրսի PA հայտի հաստատում, ապա բուժսպասարկման խափանումներից խուսափելու համար հաստատումը պետք է վավեր լինի այնքան ժամանակ, որքան բժշկական առումով ողջամիտ և անհրաժեշտ է՝ հիմնվելով ապահովագրության չափանիշների, ձեր բժշկական պատմության և բուժող մատակարարի առաջարկությունների վրա:

- Ինչպես Medicare-ի բոլոր առողջապահական ծրագրերը, մենք ծածկում ենք այն ամենը, ինչ ծածկվում է Original Medicare-ի կողմից: (Original Medicare-ի ծածկույթի և ծախսերի մասին ավելին իմանալու համար անյցելեք *Medicare-ը և Դուք 2027 թ.* ձեռնարկը: Դիտեք www.Medicare.gov կայքում կամ խնդրեք պատճենը՝ զանգահարելով 1-633-MEDICARE (1-800-800-4227): TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048:

- Եթե Medicare-ը 2027 թվականի ընթացքում ավելացնի որևէ նոր ծառայության ծածկույթ, ապա կա՛մ Medicare-ը, կա՛մ մեր ծրագիրը կծածկի այդ ծառայությունները:

- Եթե դուք կորցնեք Medi-Cal-ը ենթադրյալ շարունակական իրավասության 3-ամսյա ժամանակահատվածում, մենք կշարունակենք տրամադրել Medicare Advantage ծրագրով ծածկվող Medicare-ի բոլոր նպաստները: Այնուամենայնիվ, Medi-Cal-ի ձեր ծածկույթը կարող է ավարտվել ավելի շուտ, քան մեր միջոցով ձեր Medicare-ի ծածկույթը: Երբ ձեր Medi-Cal-ի ծածկույթն ավարտվի, մենք չենք վճարի ձեր Medi-Cal-ի նպաստների համար: Մենք կվճարենք Medicare-ի ծախսերի ցանկացած համատեղ վճարում, որը Medi-Cal-ը կվճարեր, եթե դուք կորցրած չլինեիք Medi-Cal-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք Անդամների սպասարկման կենտրոնի հետ՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարով:

  Մենք ձեզ կօգնենք վերականգնել Medi-Cal-ի ձեր իրավասությունը: Եթե ձեր Medi-Cal իրավասությունը վերականգնվում է, իսկ դուք դեռ գրանցված եք մեզ հետ ձեր Medicare ծածկույթի համար, մենք կվերսկսենք վճարել ձեր Medi-Cal նպաստների համար և ձեր գրանցումը մեզ հետ կշարունակվի: Եթե Medi-Cal-ի ձեր իրավասությունը վերականգնեք այն բանից հետո, երբ մենք ձեզ ապանդամագրենք մեր Medicare-ի ծածկույթի գրանցումից, ապա ծրագրում վերագրանցվելու համար պետք է կապ հաստատեք մեզ հետ:

Կարևոր նպաստների մասին տեղեկատվություն որոշակի քրոնիկ պայմաններ ունեցող անդամների համար:

- Եթե ձեզ մոտ ախտորոշվել է ստորև նշված քրոնիկական հիվանդություններից որևէ մեկը և համապատասխանում եք որոշակի չափանիշների, ապա կարող եք իրավասու լինել քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց համար հատուկ լրացուցիչ նպաստների.
  - Աուտոիմուն խանգարումներ
  - Քաղցկեղ

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Սրտանոթային խանգարումներ
- Ալկոհոլի և այլ նյութերի օգտագործման հետ կապված քրոնիկ հիվանդություններ (SUDs)
- Քրոնիկ և հաշմանդամություն առաջացնող հոգեկան պայմաններ
- Քրոնիկ հիվանդություններ, որոնք խաթարում են տեսողությունը, լսողությունը (խլություն), համի զգացումը, շոշափումը և հոտառությունը:
- Քրոնիկական ստամոքս-աղիքային հիվանդություն
- Սրտի քրոնիկ անբավարարություն
- Երիկամների քրոնիկ հիվանդություն (CKD)
- Թոքերի քրոնիկ հիվանդություններ
- Ճանաչողական խանգարման հետ կապված վիճակներ
- Վիճակներ, որոնք պահանջում են շարունակական թերապևտիկ ծառայություններ, որպեսզի անհատները պահպանեն կամ վերականգնեն գործառնական ունակությունները
- Ֆունկցիոնալ դժվարություններով պայմանավորված վիճակներ
- Դեմենցիա
- Շաքարային դիաբետ
- Էնդոմետրիոզ
- HIV/AIDS
- Իմունոդեֆիցիտ և իմունոպրեսիվ խանգարումներ
- Նյարդաբանական հիվանդություններ
- Ավելորդ քաշ, ճարպակալում և մետաբոլիկ համախտանիշ
- Վիճակ օրգանների փոխպատվաստումից հետո
- Ծանր արյունաբանական հիվանդություններ
- Կաթված

- Ձեր ծրագիրը ներառում է Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար (SSBCI): Այս նպաստները հասանելի են այն անդամներին, ովքեր ախտորոշվում են մեկ կամ ավելի իրավասու քրոնիկ հիվանդությամբ և համապատասխանում են CMS- ի կողմից սահմանված՝ իրավասության **բոլոր** չափանիշների պահանջներին.
  - Ունի մեկ կամ ավելի ուղեկցող և բժշկական տեսանկյունից բարդ քրոնիկական վիճակներ, որոնք սպառնում են կյանքին կամ զգալիորեն սահմանափակում են ապահովագրված անձի ընդհանուր առողջական վիճակը կամ գործառույթը
  - Ունի հոսպիտալացման կամ առողջության համար այլ անբարենպաստ հետևանքների բարձր ռիսկ
  - Պահանջում է խնամքի ինտենսիվ համակարգում

- Միայն քրոնիկական հիվանդության ախտորոշումը չի երաշխավորում իրավասությունը: **Բացի որակավորվող մեկ կամ ավելի քրոնիկական վիճակներ ունենալուց, SSBCI-ի համար իրավասությունը հաստատվում է անդամի մոտ ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի առկայությամբ.**
  - Հոսպիտալացման կամ ED այցելությունների պատմություն, և/կամ
  - Ամբուլատոր ծառայությունների կամ մասնագիտացված խնամքի հաճախակի օգտագործում, և/կամ
  - Հիվանդության վատ վերահսկողության կամ դեղորայքի ընդունման ռեժիմի չպահպանման վկայություն, և/կամ
  - Ոչ բժշկական սոցիալական կարիքներ (SDOH), որոնք ազդում են առողջապահական հետևանքների վրա
  - Իրավասությունը որոշվում է ծրագրում ձեր գրանցվելուց հետո՝ օգտագործելով օբյեկտիվ, փաստաթղթավորված չափանիշներ, որոնք հիմնված են առկա տեղեկությունների վրա, ինչպիսիք են բժշկական գրանցումները, պահանջները, խնամքի կառավարման գնահատումները, բուժօգնություն տրամադրողի փաստաթղթերը և այլ աջակցող տեղեկություններ:
  - Պահանջների բավարար պատմություն չունեցող նոր անդամների համար կարող է ներկայացվել բուժօգնություն տրամադրողի հավաստում՝ իրավասության վերանայմանը աջակցելու համար: Հավաստման ներկայացումը չի երաշխավորում հաստատումը, քանի որ իրավասությունը որոշվում է նրա հիման վրա, թե արդյոք անդամը համապատասխանում է պահանջվող բոլոր չափանիշներին:
  - Նպաստներից օգտվելու հնարավորություն ստանալուց առաջ պահանջվում է հաստատում առ այն, որ իրավասության բոլոր չափանիշները բավարարված են: Wellcare-ը կծանուցի ձեզ, եթե իրավասու լինեք, և կտրամադրի հրահանգներ SSBCI նպաստներից օգտվելու եղանակի վերաբերյալ: Եթե հարցեր ունեք այս նպաստների կամ ձեր իրավասության վերաբերյալ, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոնի հեռախոսահամարով, որը նշված է ձեր անդամի նույնականացման՝ ID քարտի դարձերեսին:
  - SSBCI իրավասությունը տարածվում է միայն ընթացիկ ծրագրային տարվա վրա և ավարտվում է դեկտեմբերի 31-ին: Որպեսզի անդամները շարունակեն ստանալ այս նպաստները, նրանք պետք է համապատասխանեն իրավասության պահանջներին պլանի յուրաքանչյուր տարում:

- Լրացուցիչ տեղեկությունների համար տես ստորև բերված Նպաստների աղյուսակի «Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար» տողը:

- Կապվեք մեզ հետ՝ իմանալու համար, թե որ նպաստների համար դուք կարող եք իրավասու լինել:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Բոլոր կանխարգելիչ ծառայություններն անվճար են: Այս խնձորը 🍎 ցույց է տալիս կանխարգելիչ ծառայությունները նպաստների աղյուսակում:

D. Մեր ծրագրի Նպաստների աղյուսակը

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
🍎	**Որովայնային աորտայի անևրիզմի զննում** Մենք վճարում ենք մեկանգամյա ուլտրաձայնային հետազոտման համար ռիսկի տակ գտնվող անձանց համար: Մեր plan փոխհատուցում է այս հետազոտությունը (սքրինինգը) միայն այն դեպքում, եթե դուք ունեք ռիսկի որոշակի գործոններ և եթե դրա համար ուղեգիր եք ստանում ձեր բժշկից, բժշկի օգնականից (PA), բուժքույր-պրակտիկից (NP) կամ կլինիկական բուժքույր-մասնագետից (CNS):	$0
	Ասեղնաբուժություն Մենք վճարում ենք երկու ամբուլատոր ասեղնաբուժության ծառայությունների համար մեկ օրացուցային ամսում, կամ ավելի հաճախ, եթե դրանք անհրաժեշտ են բժշկական տեսակետից: Մենք վճարում ենք ասեղնաբուժության մինչև 12 այցելության համար 90 օրվա ընթացքում, եթե դուք ունեք մեջքի ստորին հատվածի քրոնիկ ցավ, որը սահմանվում է որպես՝ • տևում է 12 շաբաթ կամ ավելի երկար, • ոչ որոշակի (առանց համակարգային պատճառի, որը կարող է որոշակիացվել այնպիսին, որ այն կապված չէ մետաստատիկ, բորբոքային կամ վարակիչ հիվանդության հետ), • կապված չէ վիրահատության հետ, • կապված չէ հղիության հետ: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ասեղնաբուժություն (շարունակություն) Ի լրումն, մենք կվճարենք ասեղնաբուժության ութ լրացուցիչ աշխատաշրջանների համար մեջքի ստորին հատվածի քրոնիկ ցավի դեպքում, եթե ձեր մոտ բարելավում նկատվի: Դուք չեք կարող ստանալ տարեկան 20 ասեղնաբուժական բուժումներից ավելի՝ մեջքի ստորին հատվածի քրոնիկ ցավի դեպքում: Ասեղնաբուժական բուժումները պետք է դադարեցվեն, եթե ձեզ մոտ չնկատվի բարելավում կամ եթե ձեր վիճակը վատթարանա: Մատակարարի պահանջները. Բժիշկները կարող են ասեղնաբուժություն տրամադրել՝ համաձայն նահանգի կիրառելի պահանջների: Բժիշկների օգնականները (PAs), բուժքույրերը (NPs)/կլինիկական բուժքույրերի մասնագետները (CNSs) և օժանդակ անձնակազմը կարող են տրամադրել ասեղնաբուժություն, եթե բավարարում են բոլոր կիրառելի պետական պահանջները և ունեն՝ ● ասեղնաբուժության կամ արևելյան բժշկության մագիստրոսի կամ դոկտորի աստիճան ասեղնաբուժության և արևելյան բժշկության հավատարմագրման հանձնաժողովի (ACAOM) կողմից հավատարմագրված դպրոցից, և ● գործող, ամբողջական, ակտիվ և անսահմանափակ լիցենզիա՝ ասեղնաբուժությամբ զբաղվելու United States-ում, տարածքում կամ Համագործակցությունում (այսինքն՝ Puerto Rico) կամ District of Columbia-ում: Ասեղնաբուժություն տրամադրող օժանդակ անձնակազմը պետք է լինի բժշկի, PA կամ NP/CNS համապատասխան մակարդակի հսկողության ներքո, որը պահանջվում է մեր կանոնակարգերով: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ասեղնաբուժություն (շարունակություն) Medicare-ի ձեր նպաստները սպառելուց հետո ծառայությունները սահմանափակվում են ամսական առավելագույնը 2 ծառայությամբ կամ ամսական 2 ծառայության զուգակցմամբ հետևյալ ծառայություններից՝ ասեղնաբուժություն, ողնաշարաբուժություն, ասեղնաբուժություն, էրգոթերապիա, լոգոպեդիա, աուդիոլոգիա կամ ոտնաբուժություն: **Մեր ծրագիրը նաև ընդգրկում է լրացուցիչ (Medicare-ով չապահովագրված) ասեղնաբուժության ծառայությունների տարեկան մինչև 24 այցելություն:** Շատ դեպքերում ապահովագրված ծառայություններ ստանալու համար դուք պետք է օգտագործեք պայմանագրային մատակարար: Խնդրում ենք կապվել մեր ծրագրի հետ, եթե հարցեր ունեք, թե ինչպես օգտագործել այս նպաստը: Ապահովագրված ասեղնաբուժության ծառայությունները ներառում են՝ ● Հիվանդի նոր քննություն կամ հաստատված հիվանդի քննություն՝ նոր առողջական խնդիր ունեցող կամ նոր սրացում ունեցող հիվանդի առաջին գնահատման համար ● Սահմանված հիվանդների քննություններ (նոր քննությունից հետո 3 տարվա ընթացքում) ● Հետբուժական գրասենյակային այցելություններին. կարող են ներառել ասեղնաբուժության ծառայություններ կամ կրկնակի զննում ● Երկրորդ կարծիքը ցանցային այլ մատակարարի կողմից ● Շտապ և արտակարգ ծառայություններ Ցանցային բուժօգնություն տրամադրող գտնելու հարցում աջակցություն ստանալու համար կարող եք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ալկոհոլի չարաշահման զննում և խորհրդատվություն Մենք կվճարենք ալկոհոլի չարաշահման մեկ զննման (SABIRT) համար այն մարդկանց համար, որոնք ալկոհոլը չարաշահում են, սակայն ալկոհոլից կախվածություն չունեն: Սա ընդգրկում է հղի կանանց: Եթե ալկոհոլի չարաշահման ձեր զննումը դրական պատասխան է տալիս, դուք կարող եք ստանալ տարեկան մինչև չորս կարճ, դեմ առ դեմ խորհրդատվության աշխատաշրջաններ (եթե դուք ի վիճակի եք ու զգոն խորհրդատվության ընթացքում), որոնք տրամադրվում են որակավորված առաջնային բուժսպասարկողի (PCP) կողմից կամ առաջնային բուժսպասարկման մասնավոր պրակտիկայով զբաղվող մասնագետի կողմից:	$0
	Շտապ օգնության մեքենայի ծառայություններ Ապահովագրական ծածկույթում ներառված շտապ օգնության ծառայությունները՝ լինեն դրանք արտակարգ, թե ոչ արտակարգ իրավիճակների համար, ներառում են ցամաքային և օդային ծառայություններ (ինքնաթիռ և ուղղաթիռ): Շտապ օգնության մեքենան ձեզ կտեղափոխի մոտակա վայր, որտեղ կարող են ձեզ խնամք տրամադրել: Ձեր վիճակը պետք է այնքան լուրջ լինի, որ խնամք մատուցող վայր հասնելու մյուս միջոցները կարող են վտանգել ձեր առողջությունը կամ կյանքը: Շտապ օգնության մեքենայի ծառայություններն այլ դեպքերի համար (ոչ արտակարգ իրավիճակ) պետք է հաստատվեն մեր կողմից: Որոշ դեպքերում, որոնք արտակարգ իրավիճակներ չեն, մենք, հնարավոր է, կվճարենք շտապ օգնության փոխադրման համար: Ձեր վիճակը պետք է այնքան լուրջ լինի, որ խնամք մատուցող վայր հասնելու մյուս միջոցները կարող են վտանգել ձեր կյանքը կամ առողջությունը:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Տարեկան սովորական ֆիզիկական զննում Ամենամյա ֆիզիկական հետազոտությունը ներառում է սրտի, թոքերի, որովայնի և նյարդաբանական համակարգերի հետազոտություն, ինչպես նաև մարմնի (օրինակ՝ գլխի, պարանոցի և վերջույթների) ձեռքի զննում և մանրամասն բժշկական/ընտանեկան պատմություն՝ ի լրումն ծառայությունների, որոնք մտնում են ընդհանուր առողջական վիճակի զննման տարեկան այցելության մեջ: Ստորև ներկայացված են այն ծառայությունների օրինակները, որոնք կարող են իրականացվել կամ պատվիրվել ձեր հետազոտության ընթացքում. ● Ստանդարտ չափումների կատարում (հասակ, քաշ, զարկերակային ճնշում) ● Կանխարգելելի հիվանդությունների ռիսկի գործոնների գնահատում ● Ռեֆլեքսների և կենսական նշանների ստուգում ● Լաբորատոր հետազոտություն (մեզի և արյան նմուշներ)	$0
	Բարեկեցության տարեկան այցելություն Դուք կարող եք անցնել տարեկան ստուգում: Սա արվում է ձեր ներկա վտանգի գործոնների հիման վրա անհատական կանխարգելիչ ծրագիր մշակելու կամ այն թարմացնելու համար: Մենք կվճարենք դրա համար մեկ անգամ՝ յուրաքանչյուր 12 ամիսը մեկ: **Նշում.** Ձեր ընդհանուր առողջական վիճակի զննման տարեկան այցելությունը չի կարող տեղի ունենալ **«Բարի գալուստ Medicare»** այցելությունից հետո 12 ամսվա ընթացքում: Այնուամենայնիվ, ձեզ հարկավոր չէ ունենալ **Բարի գալուստ Medicare** այցելություն՝ 12 ամիս Մաս B-ն ունենալուց հետո տարեկան բարեկեցության այցելություններ ստանալու համար:	$0
	Ասթմայի կանխարգելիչ ծառայություններ Դուք կարող եք ստանալ ասթմայի կրթություն և տնային միջավայրի գնահատում վատ վերահսկվող ասթմա ունեցող մարդկանց տանը սովորաբար հայտնաբերված խթանիչների համար:	$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ոսկրի զանգվածի չափում Մենք վճարում ենք որոշակի ընթացակարգերի համար որակավորվող անդամների համար (սովորաբար սա նշանակում է նրանք, ովքեր ոսկրի զանգվածի կորստի կամ օստեոպորոզի վտանգի տակ են): Այս ընթացակարգերը պարզում են ոսկրի զանգվածը, հայտնաբերում ոսկրի կորուստը կամ որոշում ոսկրի որակը: Մենք կվճարենք ծառայությունների համար յուրաքանչյուր 24 ամիսը մեկ կամ ավելի հաճախ, եթե դրանք անհրաժեշտ են բժշկական տեսանկյունից: Մենք նաև կվճարենք բժշկի կողմից արդյունքների ուսումնասիրության ու մեկնաբանության համար:	$0
	Կրծքի քաղցկեղի զննում (մամոգրամաներ) Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ ● մեկ ելակետային մամոգրաֆիա 35-ից 39 տարեկան կանանց համար ● մեկ հետազոտական մամոգրաֆիա յուրաքանչյուր 12 ամիսը մեկ 40 և ավելի բարձր տարիքի կանանց համար ● կրծքի կլինիկական ստուգում՝ յուրաքանչյուր 24 ամիսը մեկ	$0
	Սրտային (սրտի) վերականգնողական ծառայություններ Մենք կվճարենք սրտի վերականգնողական ծառայությունների, օրինակ՝ վարժությունների, ուսուցման և խորհրդատվության համար: Անդամները պետք է համապատասխանեն որոշակի պայմաններին և բժշկից ուղեգիր ունենան: Մենք փոխհատուցում ենք այս համապարփակ ծրագրերը, եթե դուք ունեցել եք հետևյալ վիճակներից առնվազն մեկը. ● սրտի կաթված վերջին 12 ամսվա ընթացքում ● պսակաձև զարկերակի շունտավորման վիրահատություն ● կայուն կրծքային հեղձուկ (կրծքավանդակի ցավ)	$0 *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Սրտային (սրտի) վերականգնողական ծառայություններ (շարունակություն) • սրտի փականի վերականգնում կամ փոխարինում • պսակաձև զարկերակի անգիոպլաստիկա (բժշկական միջամտություն, որն օգտագործվում է խցանված զարկերակը բացելու համար) կամ պսակաձև զարկերակի ստենտավորում (միջամտություն, որն օգտագործվում է զարկերակը բաց պահելու համար) • սրտի կամ սրտի և թոքերի փոխպատվաստում • կայուն քրոնիկական սրտային անբավարարություն Ծածկույթի սահմանափակումներ. Դուք կարող եք ստանալ սրտաբանական վերականգնողական մինչև 36 սեանս: Դուք կարող եք ունենալ օրական երկու սեանս (յուրաքանչյուրը՝ մեկ ժամ տևողությամբ), և ծրագիրը կարող է տևել մինչև 36 շաբաթ: Եթե դուք համապատասխանեք չափանիշներին, կարող եք ստանալ ևս 36 սեանս, որոնք կարող են բաշխվել ավելի երկար ժամանակահատվածի վրա:	
	Սրտանոթային (սրտի) հիվանդության վտանգի նվազեցման այց (սրտի հիվանդության թերապիա) Մենք վճարում ենք տարեկան մեկ այցի համար կամ ավելի շատ, եթե բժշկական տեսակետից անհրաժեշտ է, ձեր առաջնային բուժաշխատողի (PCP) մոտ՝ սրտի հիվանդության վտանգը նվազեցնելու օգնության նպատակով: Այցի ընթացքում ձեր բժիշկը կարող է. • քննարկել ասպիրինի օգտագործումը, • ստուգել ձեր արյան ճնշումը, **և/կամ** • ձեզ խորհուրդներ տալ լավ սնվելու մասին:	$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Սրտանոթային (սրտի հիվանդությունների) հիվանդության զննում Մենք վճարում ենք արյան անալիզների համար՝ սրտանոթային հիվանդության հայտնաբերման նպատակով, յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ (60 ամիս): Այս արյան անալիզները նաև ստուգում են թերությունները՝ կապված սրտի հիվանդության ավելի բարձր վտանգի հետ:	$0
	Արգանդի վզիկի և հեշտոցային քաղցկեղի զննում Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ • բոլոր կանանց համար. Պապ թեստեր և կոնքի ստուգումներ յուրաքանչյուր 24 ամիսը մեկ • արգանդի վզիկի կամ հեշտոցի քաղցկեղ ունենալու բարձր վտանգ ունեցող կանանց համար՝ մեկ Պապ թեստ յուրաքանչյուր 12 ամիսը մեկ • վերջին երեք տարիների ընթացքում ոչ նորմալ Պապ թեստ ունեցող և ծննդաբերերության համար ունակ տարիքի կանանց համար՝ մեկ Պապ թեստ յուրաքանչյուր 12 ամիսը մեկ • 30-ից 65 տարեկան կանանց համար. մարդու պապիլոմավիրուսի (HPV) կամ Պապ և HPV թեստ յուրաքանչյուր հինգ տարին մեկ	$0
	Քիրոպրակտիկ ծառայություններ Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ • ողնաշարի մանիպուլյացիաներ ողնաշարն ուղղելու նպատակով Բացառությամբ հղի անդամների կամ մասնագիտացված բուժքույրական խնամքի հաստատությունում կամ երկարատև խնամքի կենտրոնում բնակվողների, ողնաշարի կամ պարանոցի ձգումը, լարվածությունը կամ հոդախախտումը շտկելու համար ողնաշարի ձեռքով մանիպուլյացիայի	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել*:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Քիրոպրակտիկ ծառայություններ (շարունակություն) քիրոպրակտիկ նպաստները Medi-Cal-ի անդամների համար ծածկվում են միայն այն դեպքում, երբ դրանք տրամադրվում են պայմանագրային քիրոպրակտիկայի մասնագետների կողմից: Արտացանցային FQHC-ների RHC-ների և IHCP-ների համար կարող են պահանջվել ուղեգրեր: Քիրոպրակտիկ ծառայությունները. ● Սահմանափակվում են ամսական առավելագույնը երկու ծառայությունով՝ աուդիոլոգիայի, ասեղնաբուժության, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի ծառայությունների հետ միասին: Սահմանափակումները չեն վերաբերում 21 տարեկանից ցածր տարիքի երեխաներին, հղիներին կամ մասնագիտացված խնամքի հաստատություններում կամ .երկարաժամկետ խնամքի հաստատություններում բնակվող անդամներին: ● Սահմանափակվում է ողնաշարի բուժմամբ մանուալ թերապիայի միջոցով (փոխհատուցվում է քիրոպրակտիկ բուժման միայն մեկ թերապիան, եթե վճարման հաշիվը ներկայացվում է նույն մատակարարի կողմից, նույն ստացողի համար, ծառայության տրամադրման նույն ամսաթվի համար): Պահպանողական խնամքը չի համարվում բժշկական տեսանկյունից ողջամիտ և անհրաժեշտ, ուստի այն չի ապահովագրվում: Քիրոպրակտիկ ծառայությունների ապահովագրությունը սահմանափակվում է այն ծառայություններով, որոնք տրամադրվում են California նահանգի կողմից լիցենզավորված քիրոպրակտիկ բժշկի, օստեոպաթի կամ թերապևտի կողմից:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն	Ինչ եք դուք վճարում
Կոլոռեկտալ քաղցկեղի զննում Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ ● Կոլոնոսկոպիան չունի նվազագույն կամ առավելագույն տարիքային սահմանափակում և ապահովագրվում է 120 ամիսը մեկ (տաս տարի)՝ ոչ բարձր ռիսկային հիվանդների համար, կամ նախորդ ճկուն սիգմոիդոսկոպիայից 48 ամիս հետո՝ կոլոռեկտալ քաղցկեղի բարձր ռիսկի տակ չգտնվող հիվանդների համար և 24 ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկային հիվանդների համար՝ նախորդ սքրինինգային կոլոնոսկոպիայից հետո: ● 45 տարեկան և բարձր հիվանդների համար, որոնք չունեն հաստ աղիքի քաղցկեղի զարգացման բարձր ռիսկ, համակարգչային շերտագրության կոլոնոգրաֆիան ապահովագրվում է, եթե վերջին սքրինինգային համակարգչային շերտագրության կոլոնոգրաֆիայի կատարման ամսվանից անցել է առնվազն 59 ամիս, կամ եթե վերջին սքրինինգային ճկուն սիգմոիդոսկոպիայի կամ սկրինինգային կոլոնոսկոպիայի կատարման ամսվանից անցել է 47 ամիս: Հաստ աղիքի քաղցկեղի զարգացման բարձր ռիսկ ունեցող հիվանդների համար վճարում կարող է կատարվել սկրինինգային համակարգչային տոմոգրաֆիայի կոլոնոգրաֆիայի համար, որը կատարվել է վերջին սկրինինգային համակարգչային տոմոգրաֆիայի կոլոնոգրաֆիայի կամ վերջին սկրինինգային կոլոնոսկոպիայի կատարման ամսից առնվազն 23 ամիս հետո: ● Ճկուն սիգմոիդոսկոպիա 45 տարեկան և բարձր հիվանդների համար: Ամեն 120 ամիսը մեկ անգամ՝ ոչ բարձր ռիսկային հիվանդների համար՝ հիվանդի սկրինինգային կոլոնոսկոպիայից հետո: 48 ամիսը մեկ անգամ բարձր ռիսկային հիվանդների համար վերջին ճկուն սիգմոիդոսկոպիայի կամ համակարգչային տոմոգրաֆիա կոլոնոգրաֆիայից հետո: ● 45 տարեկան և բարձր հիվանդների համար կղանքում թաքնված արյան սքրինինգային թեստեր: 12 ամիսը մեկ անգամ: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Կոլոռեկտալ քաղցկեղի զննում (շարունակություն) ● Կղանքի բազմաթիրախային DNA 45-ից 85 տարեկան հիվանդների համար, որոնք չեն համապատասխանում բարձր ռիսկի չափանիշներին: Երեք տարին մեկ անգամ: ● Արյան վրա հիմնված Կենսացուցիչի թեստեր 45-ից 85 տարեկան հիվանդների համար և ովքեր չեն համապատասխանում բարձր ռիսկային չափանիշներին: Երեք տարին մեկ անգամ: ● Կոլոռեկտալ քաղցկեղի սկրինինգային թեստի մեջ մտնում է հետագա սքրինինգային կոլոնոսկոպիան, եթե կղանքի վրա հիմնված կոլոռեկտալ քաղցկեղի ոչ ինվազիվ սքրինինգային թեստը, որի ծախսերը փոխհատուցվում են Medicare-ի կողմից, դրական արդյունք ցույց տա: ● Հաստ աղիքի քաղցկեղի սքրինինգային հետազոտությունները ներառում են պլանային սքրինինգային ճկուն սիգմոիդոսկոպիա կամ սքրինինգային կոլոնոսկոպիա, որը ներառում է հյուսվածք կամ այլ նյութ վերցնելը կամ սքրինինգային հետազոտության հետ կապված, դրա արդյունքում և նույն կլինիկական ընդունելության ընթացքում կատարված այլ բժշկական միջոցառում:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS) CBAS-ը համայնքային ցերեկային առողջապահական ապահովագրության պլան է, որը ծառայություններ է մատուցում տարեցներին և մեծահասակներին, ովքեր ունեն առողջական, կոգնիտիվ կամ հոգեկան քրոնիկ խնդիրներ և/կամ հաշմանդամություն և ստացիոնար խնամքի կարիք ունեն: CBAS ծրագիրը ինստիտուցիոնալ խնամքի այլընտրանք է Medi-Cal-ի շահառուների համար, ովքեր կարող են ապրել տանը՝ համապատասխան առողջապահական, վերականգնողական, անձնական խնամքի և սոցիալական ծառայությունների օգնությամբ: CBAS ծրագիրը շեշտում է գործընկերությունը մասնակցի, ընտանիքի և/կամ խնամողի, առաջնային խնամքի բժշկի և համայնքի հետ՝ անձնական անկախությունը պահպանելու ուղղությամբ աշխատելու համար: Կենտրոնում մատուցվող ծառայությունները ներառում են. ● Պրոֆեսիոնալ բուժքույրական ծառայություններ ● Ֆիզիկական, աշխատանքային և խոսքի թերապիաներ ● Մտավոր առողջության ծառայություններ ● Թերապևտիկ գործունեություն ● Սոցիալական ծառայություններ ● Անձնական խնամք ● Տաք սնունդ և սննդային խորհրդատվություն ● Փոխադրում մասնակցի բնակության վայր և հակառակ ուղղությամբ **Նշում.** եթե CBAS հաստատությունը հասանելի չէ, ապա մենք կարող ենք առանձին տրամադրել այս ծառայությունները:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ատամնաբուժական ծառայություններ Մենք վճարում ենք որոշակի ատամնաբուժական ծառայությունների, այդ թվում, բայց ոչ միայն, մաքրումների, լիցքերի և պրոթեզների համար,: Այն, ինչ մենք չենք ապահովագրում, հասանելի է Medi-Cal Ատամնաբուժական ծրագրի միջոցով, և նկարագրված է **F2 Բաժնում** ստորև: Մենք վճարում ենք որոշ ատամնաբուժական ծառայությունների համար, երբ ծառայությունը հանդիսանում է անձի առաջնային հիվանդության հատուկ բուժման անբաժանելի մասը: Օրինակները ներառում են ծնոտի վերականգնումը՝ կոտրվածքից կամ վնասվածքից հետո, ատամների հեռացումները, որոնք կատարվում են ծնոտի քաղցկեղի ճառագայթային բուժման նախապատրաստման կամ օրգանների փոխպատվաստմանը նախորդող բերանի խոռոչի հետազոտության համար: Որպես Medi-Cal-ի անդամ, շատ ստանդարտ ատամնաբուժական ծառայություններ հասանելի են Medi-Cal Ատամնաբուժական ծրագրի միջոցով: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալ ծառայություններով. • Ստոմատոլոգիական քննություններ (12 ամիսը մեկ) • Ատամների մաքրում (12 ամիսը մեկ) • Քերում և արմատի պլանավորում • Ֆտորիդով պատում (12 ամիսը մեկ) • ռենտգեն • Լցոնում • Պսակներ • Ատամնախողովակներ • Մասնակի և ամբողջական պրոթեզներ • Պրոթեզների հարմարոցում • Ատամի հեռացում • Շտապ օգնության ծառայություններ **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ատամնաբուժական ծառայություններ (շարունակություն) Medi-Cal Ատամնաբուժական ծրագրի միջոցով հասանելի ատամնաբուժական նպաստների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, կամ եթե Medi-Cal ընդունող ատամնաբույժ գտնելու հարցում օգնության կարիք ունեք, կապ հաստատեք Հեռախոսային սպասարկման կենտրոնի հետ 1-800-322-6384 հեռախոսահամարով (TTY օգտատերերը կարող են զանգահարել 1-800-735-2922): Զանգն անվճար է: Medi-Cal Ատամնաբուժական ծրագրի ներկայացուցիչները հասանելի են ձեզ օգնելու համար 8:00 a.m. - 5:00 p.m., երկուշաբթիից ուրբաթ օրերին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նաև այցելել smilecalifornia.org/ կայք: Բացի ձեր Medi-Cal-ի ատամնաբուժական նպաստներից, մեր պլանը ներառում է լրացուցիչ ատամնաբուժական ծառայություններ և պրոցեդուրաներ: Այս ծառայությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով. ● **Համապարփակ ատամնաբուժական ծառայություններ** Ապահովագրվող ծառայությունները ներառում են հետևյալը ○ Վերականգնողական ծառայություններ՝ յուրաքանչյուր 7 պլանային տարին 1 անգամ՝ մեկ ատամի համար ○ Պրոթեզավորում, շարժական՝ 2-3 տարին 1 անգամ՝ մեկ կամարի համար՝ կախված ծառայության տեսակից **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ատամնաբուժական ծառայություններ (շարունակություն) ○ Պրոստոդոնտիկա, ֆիքսված՝ յուրաքանչյուր 7 պլանային տարին 1 անգամ՝ մեկ ատամի համար ○ Լրացուցիչ ընդհանուր ծառայություններ՝ ամեն տարի 1 անգամ **Լրացուցիչ (այսինքն, Medicare-ի կողմից չապահովագրված՝ սովորական) ատամնաբուժական ծառայությունները պետք է ստանալ պլանի մասնակից մատակարարից, որպեսզի դրանք ապահովագրվեն պլանի կողմից: Մատակարար գտնելու, հայց ներկայացնելու վերաբերյալ հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն:** **Դուք կարող եք գտնել ատամնաբուժական ապահովագրության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրված բժշկական գործողությունների մանրամասն ցանկը մեր Ատամնաբուժական նպաստի տվյալներում հետևյալ հղումով՝ go.wellcare.com/dental-ca**	
	Դեպրեսիայի զննում Մենք կվճարենք դեպրեսիայի տարեկան մեկ զննման համար: Զննումը պետք է կատարվի առաջնային խնամքի հաստատությունում, որը կարող է հետբուժական բուժում և/կամ ուղեգրեր տրամադրել:	$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Շաքարախտի զննում Մենք վճարում ենք այս զննման համար (այդ թվում՝ քաղցած ժամանակ արվող գլյուկոզայի թեստեր), եթե Դուք ունեք վտանգի հետևյալ գործոններից որևէ մեկը՝ • արյան բարձր ճնշում (հիպերտենզիա) • խոլեստերինի ու տրիգլիցերիդների ոչ նորմալ մակարդակների պատմություն (դիսլիպիդեմիա) • գիրություն • արյան բարձր շաքարի (գլյուկոզայի) պատմություն Թեստերը կարող են ապահովագրվել որոշ այլ դեպքերում, օրինակ՝ եթե դուք ավելորդ քաշ ունեք կամ շաքարախտի ընտանեկան պատմություն ունեք: Դուք կարող եք իրավասու լինել շաքարախտի մինչև երկու զննման համար, յուրաքանչյուր 12 ամիսը մեկ՝ շաքարախտի ձեր վերջին սքրինինգ թեստի օրվանից հետո:	$0
	Շաքարախտի ինքնավերահսկման ուսուցում, ծառայություններ և պաշարներ Շաքարախտ ունեցող մարդկանց համար (ինսուլին օգտագործողներն ու չօգտագործողները) մենք վճարում ենք հետևյալ ծառայությունների համար. • Ձեր արյան գլյուկոզային հետևելու պաշարներ, ներառյալ հետևյալը՝ ○ արյան գլյուկոզայի մոնիտոր ○ արյան գլյուկոզան ստուգող թիթեղներ ○ նշտար–ծակիչ սարքեր և նշտարներ ○ գլյուկոզայի վերահսկման լուծույթներ՝ ստուգելու համար թեստերի թիթեղների ու մոնիտորների ճշգրտությունը **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում::**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն* *Կարող է ուղեգիր պահանջվել*:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Շաքարախտի ինքնավերահսկման ուսուցում, ծառայություններ և պաշարներ (շարունակություն) ● Շաքարախտ ունեցող մարդկանց համար, ովքեր ունեն ոտքի ծանր հիվանդություն, մենք կվճարենք հետևյալի համար՝ ○ յուրաքանչյուր օրացուցային տարում մեկ զույգ թերապևտիկ հատուկ կոշիկներ (այդ թվում՝ ներդիրներ), ներառյալ հարմարեցումը և ներդիրների երկու լրացուցիչ զույգ, **կամ** ○ մեկ զույգ խորը կոշիկներ, ներառյալ հարմարեցումը և երեք զույգ ներդիրներ յուրաքանչյուր տարի (չի ներառում պատվերով չպատրաստված, հանովի ներդիրներ, որոնք տրվում են նման կոշիկների հետ) ● Որոշ դեպքերում մենք վճարում ենք վերապատրաստման համար՝ օգնելու Ձեր կառավարել ձեր շաքարախտը: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն: Accu-Chek™ Guide-ը և True Metrix™-ը դիաբետիկ թեստավորման մեր նախընտրելի պարագաներն են (գլյուկոզայի մոնիտորներ և թեստային շերտեր): Dexcom-ը և FreeStyle Libre-ն արյան մեջ գլյուկոզայի շարունակական մոնիտորինգի մեր նախընտրելի ապրանքանիշերն են: Շաքարային դիաբետի թեստավորման և մոնիտորինգի նախընտրելի պարագաների ցանկում ընդգրկված Ապրանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք կապ հաստատել Անդամների սպասարկման կենտրոնի հետ: Եթե դուք օգտագործում եք շաքարային դիաբետի թեստավորման և մոնիտորինգի պարագաներ, որոնք ծրագրի կողմից նախընտրելի չեն, զրուցեք ձեր բուժօգնություն տրամադրողի հետ՝ նոր դեղատոմս ստանալու կամ նախընտրելի չհանդիսացող արյան գլյուկոզայի մոնիտորի և թեստ-երիզների համար նախնական թույլտվություն պահանջելու համար: Շաքարախտի թեստավորման պարագաները մանրածախ դեղատներում ձեռք բերելու դեպքում դուք պետք է նաև դեղագործին ներկայացնեք ձեր Medi-Cal BIC քարտը, որպեսզի նա կարողանա պատշաճ կերպով հաշիվ ներկայացնել մեր պլանին, ինչպես նաև Medi-Cal Rx-ին:	:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Դուլայի ծառայություններ Այն անձանց համար, որոնք հղի են, մենք վճարում ենք ինը այցի համար դուլայի հետ նախածննդյան և հետծննդյան շրջանում, ինչպես նաև աջակցության համար ծննդաբերության և ծննդաբերության ժամանակ: Կարող են տրամադրվել նաև մինչև ինը լրացուցիչ այց հետծննդյան շրջանում:	$0
	Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում (DME) և համապատասխան պաշարներ «Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում» (DME) սահմանման համար կարդացեք **Գլուխ 12**-ը այս *Անդամի ձեռնարկում*: Մենք ընդգրկում ենք հետևյալ կետերը. ● անվասայլակներ, ներառյալ էլեկտրական անվասայլակները ● հենակներ ● էլեկտրական ներքնակների համակարգեր ● չոր ճնշումով պահոց ներքնակի համար ● շաքարախտի պարագաներ ● հիվանդանոցային մահճակալներ, որոնք մատակարարը պատվիրել է տանն օգտագործելու համար ● ներերակային (IV) ներարկման մխոցներ և կեռաձողեր ● խոսք գոյացնող սարքեր ● թթվածնային սարքավորում և պաշարներ ● հեղուկացրիչներ ● քայլակներ ● ստանդարտ թեք բռնակ կամ քառաոտ ձեռնափայտ և փոխարինման ● պաշարներ ● պարանոցի ձգում (դռան վրայով) **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում::**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում (DME) և համապատասխան պաշարներ (շարունակություն) ● ոսկրերի խթանիչ ● դիալիզի խնամքի սարքավորումներ Կարող են ապահովագրվել այլ պարագաներ: Մենք կվճարենք բժշկական տեսակետից անհրաժեշտ բոլոր DME-ների համար, որոնց համար սովորաբար վճարում են Medicare-ն ու Medi-Cal-ը: Եթե մեր մատակարարը ձեր տարածքում չունի որոշակի բրենդ կամ արտադրանք, դուք կարող եք հարցնել նրանց՝ կարող են արդյոք այն ձեր համար հատուկ պատվիրել: Խնդրում ենք կապվել Անդամների սպասարկման կենտրոնի հետ՝ աջակցելու ձեզ գտնել մեկ այլ մատակարար, որը կարող է առաջարկել նշված պարագան: Medicare-ի կողմից չապահովագրված Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումը, որն օգտագործվում է տնից դուրս, նույնպես ապահովագրվում է:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Շտապ օգնություն Շտապ օգնության խնամք նշանակում է ծառայություններ, որոնք. ● տրամադրվում են մատակարարի կողմից, որը պատրաստված է շտապ օգնության ծառայություններ մատուցելու համար, ● անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակի գնահատման կամ բուժման համար: Բժշկական արտակարգ իրավիճակ կարող է լինել հիվանդություն, վնասվածք, ուժեղ ցավ կամ հիվանդություն, որն արագորեն վատթարանում է: Վիճակն այնքան լուրջ է, որ եթե այն չստանա անհապաղ բժշկական ուշադրություն, ապա առողջության ու բժշկության միջին գիտելիքներով որևէ մարդ կարող է ակնկալել, որ տեղի կունենա հետևյալը. ● լուրջ վտանգ ձեր կամ ձեր դեռ չծնված երեխայի առողջությանը, **կամ** ● լուրջ վնաս մարմնի գործառույթներին, **կամ** ● մարմնի որևէ օրգանի լուրջ դիսֆունկցիա **կամ** ● վերջույթի կորստի կամ վերջույթի ֆունկցիայի կորստի ● Հղի կնոջ դեպքում՝ ակտիվ երկունք, երբ. ○ Չկա բավարար ժամանակ ձեզ ապահով կերպով մեկ այլ հիվանդանոց տեղափոխելու համար, նախքան ծննդաբերության սկիզբը: ○ Մեկ այլ հիվանդանոց տեղափոխումը կարող է վտանգի տակ դնել անդամի ու չծնված երեխայի առողջությունն ու անվտանգությունը **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**:	$0 Եթե Դուք շտապ օգնություն եք ստանում արտացանցային հիվանդանոցից և ձեզ ստացիոնար խնամք է հարկավոր Ձեր արտակարգ իրավիճակը կայունացնելուց հետո, դուք պետք է տեղափոխվեք ցանցի հիվանդանոց, որպեսզի ձեր խնամքը շարունակվի ապահովագրվել: Դուք կարող եք մնալ արտացանցային հիվանդանոցում ստացիոնար խնամքի համար, միայն եթե ծրագիրը հաստատում է դա:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Շտապ օգնություն (շարունակություն) Միջազգային արտակարգ իրավիճակ/հիրատապ ապահովագրություն: Սահմանվում է որպես հիրատապ, շտապ կամ հետկայունացման խնամք, որը ստացվել է Միացյալ Նահանգներից դուրս: ● Սահմանափակվում է միայն այն ծառայություններով, որոնք կդասակարգվեին որպես շտապ, հիրատապ պահանջվող կամ հետկայունացման խնամք, եթե նրանք տրամադրվեին Միացյալ Նահանգներում: ● Շտապ օգնության մեքենայի ծառայություններն ապահովագրվում են այն իրավիճակներում, երբ շտապ օգնության սենյակ որևէ այլ միջոցով գնալը կարող է վտանգել ձեր առողջությունը: ● Արտասահմանյան հարկերն ու վճարները (այդ թվում, սակայն առանց սահմանափակման՝ դրամի փոխանակում կամ գործարկի վճարներ) ապահովագրված չեն: Միացյալ Նահանգներ նշանակում է 50 նահանգ, District of Columbia, Puerto Rico, the Virgin Islands, Guam, the Northern Mariana Islands, և American Samoa	$115 համավճար Ամբողջ աշխարհում շտապ օգնության բաժանմունքի/ շտապ անհրաժեշտ ծառայությունների այցելության ծախսերի մասնաբաժինը չի հանվում, եթե դուք ընդունվում եք ստացիոնար հիվանդանոցային խնամքի համար: Միջազգային արտակարգ իրավիճակի/ հիրատապ ապահովագրությունն ունի տարեկան $50,000 սահմանափակում:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ընտանիքի պլանավորման ծառայություններ Օրենքը թույլ է տալիս ընտրել ցանկացած մատակարար՝ լինի ցանցային մատակարար, թե արտացանցային մատակարար, ընտանիքի պլանավորման որոշակի ծառայությունների համար: Սա նշանակում է ցանկացած բժիշկ, կլինիկա, հիվանդանոց, դեղատուն կամ ընտանիքի պլանավորման գրասենյակ: Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ ● ընտանիքի պլանավորման ստուգում և բժշկական բուժում ● ընտանիքի պլանավորման լաբորատոր ու ախտորոշիչ անալիզներ ● ընտանիքի պլանավորման մեթոդներ (IUC/IUD, իմպլանտներ, ներարկումներ, հակաբողմնավորիչ դեղահատեր, սպեղանի կամ հեշտոցային օղակ) ● ընտանիքի պլանավորման դեղատոմսով պաշարներ (պահպանակ, սպունգ, փրփուր, ժապավեն, դիաֆրագմա, կափարիչ) ● սահմանափակ պտղաբերության հետ կապված ծառայություններ, օրինակ՝ խորհրդատվություն և ուսուցում՝ պտղաբերության մասին իրազեկվածության տեխնիկայի վերաբերյալ և/կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI-ներ) վերաբերյալ նախածննդյան բժշկական խորհրդատվություն, թեստավորում և բուժում: ● HIV-ի և AIDS-ի, ինչպես նաև HIV-ին առնչվող այլ վիճակների խորհրդատվություն ու ստուգում ● մշտական հակաբեղմնավորում (դուք պետք է լինեք 21 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, որպեսզի ընտրեք ընտանիքի պլանավորման այս մեթոդը: Դուք պետք է ստորագրեք դաշնային ամլացման համաձայնության ձևաթուղթը վիրահատությունից առնվազն 30 օր, սակայն ոչ շուտ, քան 180 օր առաջ): ● ժառանգաբանական խորհրդատվություն Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ընտանիքի պլանավորման ծառայություններ (շարունակություն) Մենք նաև կվճարենք ընտանիքի պլանավորման որոշ այլ ծառայությունների համար: Այնուամենայնիվ, դուք պետք է այցելեք ցանցի մատակարարի հետևյալ ծառայությունների համար. ● անպտղաբերության հիվանդությունների բուժում (այս ծառայությունը չի ներառում հղիանալու արհեստական ձևերը:) ● AIDS-ի և HIV-ի հետ կապված այլ վիճակների բուժում ● գենետիկական թեստավորում	
	Առողջության և բարեկեցության կրթական ծրագրեր Մենք առաջարկում ենք բազմաթիվ ծրագրեր, որոնք կենտրոնանում են որոշակի առողջական վիճակների վրա: Սրանք ներառում են՝ ● առողջապահական կրթության դասընթացներ, ● սննդային կրթության դասընթացներ, ● Ծխելու ու ծխախոտի օգտագործման դադարեցում, **և** ● բուժքույրական թեժ գիծ, **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Առողջության և բարեկեցության կրթական ծրագրեր (շարունակություն) ○ Անվճար հեռախոսային բուժքույրական խորհրդատվական գիծ, որը սպասարկում են որակավորված, լիցենզավորված գրանցված բուժքույրեր, և որը հասանելի է շաբաթական 7 օր, օրը 24 ժամ: Բուժքույրերը խորհրդատվություն են տրամադրում առողջության հետ կապված հարցերի վերաբերյալ, օգնում են անդամներին որոշել բուժման ամենահամապատասխան մակարդակը և օգնություն են ցուցաբերում արտակարգ իրավիճակ չհանդիսացող առողջական խնդիրների դեպքում: Դուք կարող եք կապ հաստատել բուժքույրական խորհրդատվության հեռախոսագծի հետ՝ զանգահարելով Անդամների սպասարկման կենտրոն, և հայցել կվերահասցեագրում բուժքույրական խորհրդատվության հեռախոսագծին: ● ամրակազմության նպաստ ○ Մեր պլանը ներառում է ֆիթնես ծրագիր, որը հնարավորություն է տալիս օգտվելու ֆիթնես սրահներից ամբողջ երկրում: ○ Ակտիվ և առողջ ապրելակերպին աջակցելու համար ձեզ անվճար հասանելիություն է տրվում հետևյալ հնարավորություններին. ■ Ֆիթնես կենտրոնի անդամակցություն. Ընտրեք ֆիթնես ցանցի մասնակից՝ ֆիզիկապես այցելելու մի քանի ֆիթնես կենտրոններից մեկը: Անդամակցությունը ներառում է ֆիթնես ակումբի կամ ֆիթնես ստուդիայի ստանդարտ ծառայություններից օգտվելու, ինչպես նաև առաջարկվող խմբային մարզումների դասընթացներից օգտվելու հնարավորություն: Դուք կարող եք մուտք գործել մեկ կամ ավելի մարզասրահներ ֆիթնես ցանցում: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Առողջության և բարեկեցության կրթական ծրագրեր (շարունակություն) ■ Տնային ֆիթնես փաթեթներ. Դուք կարող եք ընտրել մի քանի տնային ֆիթնես փաթեթներից մեկը: Նպաստի յուրաքանչյուր տարի կարող եք ստանալ մինչև 1 փաթեթ: ■ Թվային ֆիթնես ծրագիր. Ընտրեք պահանջվող մարզումների հազարավոր տեսանյութերից՝ թվային գրադարանի միջոցով, ստացեք վիրտուալ դասերի և բջջային հավելվածի հասանելիություն: Ամրակազմության նպաստի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն:	
	Լսողության ծառայություններ Մենք վճարում ենք լսողության ու հավասարակշռության ստուգումների համար, որոնք կատարվում են ձեր մատակարարի կողմից: Այս ստուգումները որոշում են բժշկական բուժման ձեր անհրաժեշտությունը: Դրանք ապահովագրված են որպես ամբուլատոր խնամք, երբ տրամադրվում են բժշկի, լսողաբանի կամ այլ որակավորված մատակարարի կողմից: Մենք նաև վճարում ենք լսողական սարքերի համար, երբ դրանք նշանակվում են բժշկի կամ այլ որակավորված մատակարարի կողմից, այդ թվում՝ ● կաղապարներ, պաշարներ ու ներդիրներ ● վերանորոգումների համար ● մարտկոցների առաջին տեղադրում ● վեց այց ուսուցման, շտկումների ու հարմարեցումների համար նույն վաճառողի մոտ՝ լսողական օժանդակ սարքը ստանալուց հետո Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Լսողության ծառայություններ (շարունակություն) ● օժանդակ լսողական սարքեր, մակերեսային մաշված ոսկրային հաղորդակցման լսողական սարքեր ● լսողական օժանդակ սարքերի աուդիոլոգիա և հետգնահատման ծառայություններ Մեր ծրագիրը նաև ներառում է հետևյալ լրացուցիչ (այսինքն՝ սովորական) լսողական ծառայությունները. ● Ամեն տարի լսողության 1 պլանային զննում ● Ամեն տարի 1 լսողական սարքի տեղադրում և գնահատում: ● Ամեն տարի 1 չպատվաստվող լսողական սարք մինչև $750 մեկ ականջի համար: Սահմանափակվում է տարեկան 2 չպատվաստվող լսողական սարքով: Նպաստը ներառում է 3 տարվա երաշխիք, այդ թվում՝ կորուստը և վնասը՝ մարտկոցների մատակարարմամբ:	
	HIV-ի զննում Մենք վճարում ենք մեկ HIV զննման համար յուրաքանչյուր 12 ամիսը մեկ այն մարդկանց համար, որոնք. ● խնդրում են HIV զննման ստուգում անցկացնել, **կամ** ● HIV վարակի բարձր վտանգ ունեն: Եթե դուք հղի եք, մենք կվճարենք մինչև երեք HIV զննման համար հղիության ընթացքում: Մենք նաև վճարելու ենք HIV-ի լրացուցիչ զննում(ներ)ի համար, երբ առաջարկվում է Ձեր մատակարարի կողմից:	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Գործակալության կողմից տրամադրվող՝ տնային առողջության խնամք Նախքան տնային առողջության ծառայություններ ստանալը, բժիշկը պետք է վկայագրի, որ ձեզ դրանք հարկավոր են և պետք է տրամադրվեն տնային առողջության գործակալության կողմից: Դուք պետք է տանը կապված լինեք, ինչը նշանակում է, որ տնից հեռանալը մեծ ջանք է: Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար և, հնարավոր է, որոշ այլ ծառայությունների համար, որոնք այստեղ նշված չեն՝ ● կես դրույքով կամ ընդհատումներով որակավորված խնամողի և տնային պայմաններում առողջության օգնականի ծառայություններ (ապահովագրվելու են որպես տնային պայմաններում առողջության խնամքի նպաստ, որակավորված խնամողի և տնային պայմաններում առողջության օգնականի ծառայությունները միասնաբար չպետք է գերազանցեն օրական ութ ժամ և շաբաթական 35 ժամ): ● ֆիզիկական թերապիա, աշխատանքային թերապիա և խոսքի թերապիա ● բժշկական և սոցիալական ծառայություններ ● բժշկական սարքավորումներ և պաշարներ	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել*:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Տնային ներարկման թերապիա Մեր ծրագիրը կվճարի տնային ներարկման թերապիաների համար, որոնք սահմանված են որպես դեղեր կամ կենսաբանական նյութեր՝ կիրառված երակից կամ մաշկի տակ ու տրամադրված Ձեր տանը: Տնային ներարկման համար անհրաժեշտ է հետևյալը՝ ● դեղ կամ կենսաբանական նյութ, օրինակ՝ հակավիրուսային կամ իմունային գլոբուլին, ● սարքավորումներ, ինչպես օրինակ՝ պոմպը, **և** ● պարագաներ, ինչպես օրինակ՝ խողովակ կամ կաթետր: Մեր ծրագիրը ապահովագրում է տնային ներարկման ծառայություններ, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում. ● մասնագիտացված ծառայություններ, ներառյալ բուժքույրական ծառայություններ՝ տրամադրվող համաձայն ձեր խնամքի ծրագրի, ● անդամի վերապատրաստում և կրթություն, որը ներառված չէ DME նպաստում, ● հեռակառավարվող մշտադիտարկում, **և** ● Մշտադիտարկման ծառայություններ տնային ներարկման թերապիայի տրամադրման համար և տնային ներարկման դեղեր՝ տրամադրված որակավորված տնային ներարկման թերապիայի մատակարարի կողմից:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Անբուժելի հիվանդների խնամք Դուք իրավունք ունեք ընտրել անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունը, եթե ձեր մատակարարը և անբուժելի հիվանդների խնամքի հաստատության բժշկական տնօրենը որոշում են, որ դուք անբուժելի կանխատեսում ունեք: Սա նշանակում է, որ դուք ունեք մահացու հիվանդություն, և ակնկալվում է, որ ապրելու եք վեց ամիս կամ ավելի քիչ: Դուք կարող եք խնամք ստանալ Medicare-ով վկայագրված ցանկացած անբուժելի հիվանդների խնամքի հաստատության ծրագրից: Մեր ծրագիրը պետք է օգնի ձեզ գտնել Medicare-ի կողմից հաստատված՝ անբուժելի հիվանդների խնամքի հոսպիս ծրագրեր պլանի սպասարկման տարածքում, այդ թվում այն ծրագրերը, որոնք պատկանում են մեզ, վերահսկվում են մեր կողմից կամ որոնցում մենք ունենք ֆինանսական հետաքրքրություն: Ձեր հոսպիս բժիշկը կարող է լինել ցանցային մատակարար կամ արտացանցային մատակարար: Ապահովագրված ծառայությունները ներառում են՝ ● դեղեր՝ ախտանիշների բուժման ու ցավազրկման համար ● կարճատև խնամք՝ մշտական խնամակալին հանգստանալու հնարավորություն տալու համար ● տնային խնամք **Երբ դուք ընդունվում եք հոսպիս, դուք իրավունք ունեք մնալ մեր պլանում:** **Հոսպիսի ծառայությունների ու ծառայությունների համար, որոնք ապահովագրվում են Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով, որոնք վերաբերում են ձեր կյանքի վերջի մասին կանխատեսմանը, վճարվում են Medicare-ի կողմից:** ● Original Medicare-ը (ոչ թե մեր պլանը) կվճարի անբուժելի հիվանդների խնամքի ձեր հոսպիս մատակարարին՝ ձեզ տրամադրած հոսպիս ծառայությունների և ձեր անբուժելի հիվանդության հետ կապված Մաս A-ի կամ B-ի ծառայությունների համար: Եթե դուք ներառված եք անբուժելի հիվանդների խնամքի ծրագրում, ձեր հոսպիս մատակարարը հաշիվները կներկայացնի Original Medicare-ին այն ծառայությունների համար, որը վճարում է Original Medicare-ը: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Անբուժելի հիվանդների խնամք (շարունակություն) **Մեր ծրագրի կողմից ապահովագրվող, սակայն Medicare Part A-ի կամ Medicare Part B-ի կողմից ապահովագրվող ծառայությունների համար.** ● Մեր ծրագիրն ընդգրկում է ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medicare Part A-ի կամ Medicare Part B-ի ներքո: Մենք ապահովագրում ենք ծառայությունները՝ անկախ նրանից, որ դրանք վերաբերում են Ձեր վերջնական կանխատեսմանը, թե ոչ: Դուք վճարում եք այդ ծառայությունների համար: **Դեղերի համար, որոնք կարող են ապահովագրվել մեր ծրագրի Medicare Part D նպաստով**. ● Դեղերը երբեք չեն ապահովագրվում միաժամանակ և անբուժելի հիվանդների խնամքի հաստատության, և մեր ծրագրի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 5**-ը այս *Անդամի ձեռնարկում*: **Նշում.**Եթե դուք ունեք ծանր հիվանդություն, դուք կարող եք իրավասու լինել պալիատիվ բուժսպասարկման համար, որը ապահովում է թիմային բուժօգնություն՝ ուղղված հիվանդին և նրա ընտանիքին՝ բարելավելու հիվանդի կյանքի որակը: Դուք կարող եք պալիատիվ սպասարկում ստանալ բուժական/սովորական խնամքի հետ միաժամանակ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Պալիատիվ խնամք» բաժինը ստորև: **Նշում.** Եթե ձեզ ոչ հոսպիսային խնամք է հարկավոր, դուք պետք է զանգահարեք ձեր խնամքի համակարգողինև/կամ Անդամների սպասարկման կենտրոն՝ ծառայությունները կազմակերպելու համար: Ոչ հոսպիսային հիվանդների խնամքը անբուժելի հիվանդության կանխատեսմանը **չվերաբերվող** խնամքն է: Մեր պլանն ապահովագրում է անբուժելի հիվանդների խորհրդատվության ծառայություններ (միայն մեկ անգամ) մահացու հիվանդ անդամի համար, որը չի ընտրել անբուժելի հիվանդների նպաստը:	

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Պատվաստումներ Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ ● թոքաբորբի պատվաստումներ ● գրիպի պատվաստումներ, մեկ անգամ յուրաքանչյուր գրիպի սեզոնի ընթացքում՝ աշնանը և ձմռանը, և գրիպի լրացուցիչ պատվաստումներ, եթե բժշկական տեսակետից անհրաժեշտ են ● հեպատիտ B-ի պատվաստանյութեր, եթե դուք երբեք չեք ստացել պատվաստումների ամբողջական շարքը, չգիտեք ձեր պատվաստումների պատմությունը կամ ունեք ցանկացած այլ վիճակ, որը ձեզ դնում է հեպատիտ B-ով վարակվելու բարձր կամ միջին ռիսկի տակ ● COVID-19 պատվաստանյութեր ● մարդու պապիլոմավիրուսի (HPV) պատվաստում ● այլ պատվաստումներ, եթե դուք վտանգված եք, և նրանք համապատասխանում են Medicare Part B ապահովագրության կանոններին Մենք կվճարենք այլ պատվաստումների համար, որոնք համապատասխանում են Medicare Part D ապահովագրության կանոններին: Մանրամասներին ծանոթանալու համար կարդացեք **Գլուխ 6**-ն այս *Անդամի ձեռնարկում*:	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ստացիոնար հիվանդանոցային խնամք Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների և բժշկական տեսակետից անհրաժեշտ այլ ծառայությունների համար, որոնք այստեղ նշված չեն՝ • կիսամասնավոր սենյակ (կամ առանձին սենյակ, եթե բժշկական տեսակետից անհրաժեշտ է) • սնունդներ, այդ թվում՝ հատուկ սննդակարգեր • կանոնավոր բուժքույրական ծառայություններ • հատուկ խնամքի սենյակի ծախսեր, ինչպես օրինակ՝ ինտենսիվ խնամքի կամ կորոնար խնամքի սենյակներ • դեղեր ու դեղորայք • լաբորատոր անալիզներ • ռենտգեն և ճառագայթաբանության այլ ծառայություններ • անհրաժեշտ վիրաբուժական և բժշկական պաշարներ • սարքեր, ինչպես օրինակ՝ անվասայլակներ • վիրաբուժական ու վերականգնման սենյակի ծախսեր • ֆիզիկական, աշխատանքային և խոսքի թերապիա • թմրանյութերի չարաշահման ստացիոնար ծառայություններ • որոշ դեպքերում ապահովագրվում են փոխպատվաստումների հետևյալ տեսակները՝ եղջերաթաղանթի, երիկամի, երիկամի/ենթաստամոքսային գեղձի, սրտի, լյարդի, թոքի, սրտի/թոքի, ոսկրածուծի, ցողունային բջիջների և աղիքային/բազմակի ներքին օրգանները: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	$0 Դուք պետք է հավանություն ստանաք մեր ծրագրի կողմից, որպեսզի շարունակեք ստացիոնար խնամք ստանալ արտացանցային հիվանդանոցում՝ ձեր արտակարգ իրավիճակից հետո: *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ստացիոնար հիվանդանոցային խնամք (շարունակություն) Եթե ձեր փոխպատվաստում է հարկավոր, ձեր գործը կդիտարկվի Medicare-ով հաստատված փոխպատվաստման կենտրոնի կողմից, որը կորոշի՝ արդյոք դուք փոխպատվաստման թեկնածու եք, թե ոչ: Փոխպատվաստման մատակարարները կարող են լինել սպասարկման տարածքում կամ դրանից դուրս: Եթե փոխպատվաստման տեղային մատակարարները համաձայն են ընդունել Medicare-ի դրույքները, ապա կարող եք ստանալ ձեր փոխպատվաստման ծառայությունները տեղում կամ ձեր համայնքի խնամքի ձևաչափից դուրս: Եթե մեր ծրագիրը փոխպատվաստման ծառայություններ է տրամադրում մեր համայնքի խնամքի ձևաչափից դուրս, և դուք որոշում եք ձեր փոխպատվաստումը ստանալ այդտեղ, մենք կկազմակերպենք ու կվճարենք ձեր և մեկ այլ անձի կացարանի և տեղափոխման ծախսերը: ● արյուն, այդ թվում՝ պահեստավորում և կառավարում: Ամբողջական արյան և էրիթրոցիտար զանգվածի ծածկույթ՝ սկսած ձեզ անհրաժեշտ արյան առաջին պինտայից: Արյան բոլոր այլ բաղադրիչները ծածկվում են՝ սկսած առաջին պինտայից: ● բժշկի ծառայություններ **Նշում.** Ստացիոնար հիվանդ լինելու համար ձեր մատակարարը պետք է հրաման գրի ձեզ պաշտոնապես որպես հիվանդանոցի ստացիոնար հիվանդ ընդունելու համար: Նույնիսկ եթե գիշերը մնաք հիվանդանոցում, դուք, միևնույնն է, կարող եք համարվել «ամբուլատոր հիվանդ»: Եթե վստահ չեք, թե արդյոք դուք ստացիոնար կամ ամբուլատոր հիվանդ եք, պետք է հարցնեք հիվանդանոցի անձնակազմին: Ավելի շատ տեղեկություններ կարող եք ստանալ Medicare-ի տեղեկատվական թերթիկից *Medicare հիվանդանոցային նպաստների* վերաբերյալ, որը հասանելի է Medicare.gov/publications/11435-Medicare-Hospital-Benefits.pdf հասցեով, կամ զանգահարելով 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ստացիոնար ծառայություններ հոգեբուժարանում Մենք կվճարենք հոգեկան առողջապահական խնամքի ծառայությունների համար, որոնց համար պահանջվում է հիվանդանոց պառկել: ● Եթե Ձեր ստացիոնար ծառայություններ են անհրաժեշտ առանձին գործող հոգեբուժական հիվանդանոցում, մենք կվճարենք առաջին 190 օրվա համար: Դրանից հետո տեղային վարչաշրջանի հոգեկան առողջության գործակալությունը կվճարի բժշկական տեսակետից անհրաժեշտ ստացիոնար հոգեբուժական ծառայությունների համար: 190 օրվանից ավել տևող խնամքի համար թույլտվությունը կհամակարգվի տեղային վարչաշրջանի հոգեկան առողջության գործակալության հետ: ○ 190 օրվա սահմանափակումը կիրառելի **չէ** հոգեկան առողջության ստացիոնար ծառայությունների համար, որոնք տրամադրվում են ընդհանուր հիվանդանոցի հոգեբուժական միավորումում ● Եթե Դուք 65 կամ ավելի բարձր տարիքի եք, մենք կվճարենք այն ծառայությունների համար, որոնք Դուք ստացել եք Հոգեկան հիվանդության ինստիտուտում (IMD):	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*
	Ստոցիոնար բուժում. Ապահովագրված ծառայություններ հիվանդանոցում կամ որակավորված բուժքույրական հաստատությունում (SNF) չապահովագրված ստացիոնար բուժման ընթացքում Մենք չենք վճարում ձեր ստացիոնար բուժման համար, եթե դուք օգտագործել եք ձեր ստացիոնար բուժման ամբողջ նպաստը կամ եթե մնալը ողջամիտ և բժշկական տեսակետից անհրաժեշտ չէ: Սակայն, որոշ իրավիճակներում, երբ ստացիոնար խնամքն ապահովագրված չէ, մենք դեռ կարող ենք վճարել այն ծառայությունների համար, որոնք դուք ստանում եք՝ գտնվելով հիվանդանոցում կամ բուժքույրական հաստատությունում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ստոցիոնար բուժում. Ապահովագրված ծառայություններ հիվանդանոցում կամ որակավորված բուժքույրական հաստատությունում (SNF) չապահովագրված ստացիոնար բուժման ընթացքում (շարունակություն) Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար և, հնարավոր է, որոշ այլ ծառայությունների համար, որոնք այստեղ նշված չեն՝ ● բժշկի ծառայություններ ● ախտորոշիչ անալիզներ, ինչպես օրինակ՝ լաբորատոր անալիզներ ● ռենտգեն, ռադիում, իզոտոպային թերապիա, այդ թվում՝ մասնագետի նյութեր և ծառայություններ ● վիրաբուժական վիրակապեր ● փայտաձողիկներ, գիպսային վիրակապեր և այլ սարքեր, որոնք օգտագործվում են կոտրվածքների ու տեղախախտումների համար ● Պրոթեզներ և օրթոպեդիկ սարքեր, բացի ատամնաբուժականներից, այդ թվում՝ այդ սարքերի փոխարինում կամ վերանորոգում: Սրանք սարքեր են, որոնք փոխարինում են բոլորը կամ դրանց մի մասը. ○ մարմնի ներքին օրգան (ներառյալ հարակից հյուսվածքը), **կամ** ○ չվիրահատվող կամ վատ գործող մարմնի ներքին օրգանի գործառույթ: ● ոտքի, ձեռքի, մեջքի ու վզի ձգափոկեր, բանդաժներ ու արհեստական ոտքեր, ձեռքեր ու աչքեր: Սա ներառում է ճշգրտումներ, նորոգումներ ու փոխարինումներ, որոնք պահանջվում են կոտրվածքի, մաշվածության, կորստի կամ Ձեր ֆիզիկական վիճակի փոփոխության պատճառով: ● ֆիզիկական թերապիա, խոսքի թերապիա և աշխատանքային թերապիա	

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Երիկամների հիվանդության ծառայություններ և պաշարներ Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ ● Երիկամների հիվանդության մասին կրթական ծառայություններ, որոնք սովորեցնում են երիկամների խնամքի մասին ու օգնում են ձեզ ձեր խնամքի մասին ճիշտ որոշումներ կայացնել: Դուք պետք է IV-րդ փուլում գտնվող քրոնիկ երիկամային հիվանդություն ունենաք և ուղարկվեք ձեր բժշկի կողմից: Մենք կփոխհատուցենք երիկամների հիվանդության մասին կրթական ծառայությունների մինչև վեց դասընթաց: ● Ամբուլատոր դիալիզի բուժումներ, ներառյալ դիալիզի բուժումները, երբ ժամանակավորապես դուրս են գալիս սպասարկման տարածքից, ինչպես բացատրված է **Գլուխ 3**-ում՝ այս *Անդամի ձեռնարկում* կամ երբ այս ծառայության ձեր մատակարարը ժամանակավորապես անհասանելի է: ● Դիալիզի ստացիոնար բուժումներ, եթե դուք հատուկ խնամքի համար հիվանդանոց եք ընդունվում որպես ստացիոնար հիվանդ: ● Ինքնուրույն դիալիզ անելու ուսուցում, ներառյալ ուսուցում ձեր ու ձեզ օգնող որևէ մեկի համար՝ ձեր տանը դիալիզի բուժում անցկացնելու համար: ● Տանը անցկացվող դիալիզի սարքավորում ու պաշարներ ● Տանը մատուցվող աջակցության որոշակի ծառայություններ, ինչպես օրինակ, երբ անհրաժեշտ է, վարժեցված դիալիզի մասնագետների այցեր, որպեսզի նրանք ստուգեն ձեր տան դիալիզը, օգնեն արտակարգ իրավիճակներում, ու ստուգեն Ձեր դիալիզի սարքն ու ջրի մատակարարումը: Դիալիզի համար որոշակի դեղերի համար վճարում է Medicare Part B-ն: Տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ «Medicare Part B-ի դեղեր» հատվածն այս աղյուսակում:	$0 *Կարող է ուղեգիր պահանջվել*:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Թոքերի քաղցկեղի սքրինինք ցածր դոզավորման համակարգչային տոմոգրաֆիայի (LDCT) միջոցով Մեր ծրագիրը վճարում է թոքերի քաղցկեղի զննման համար յուրաքանչյուր 12 ամիսը մեկ, եթե դուք. • 50-77 տարեկան եք, **և** • խորհրդակցում ու միասնաբար որոշում եք կայացնում ձեր բժշկի կամ այլ որակավորված մատակարարի հետ, **և** • ծխել եք օրական առնվազն մեկ տուփ 20 տարի շարունակ՝ առանց թոքերի քաղցկեղի նշանների կամ ախտանիշների կամ ծխում եք հիմա կամ թողել եք ծխելը վերջին 15 տարվա ընթացքում: Առաջին զննումից հետո ծրագիրը կվճարի մեկ այլ զննման համար յուրաքանչյուր տարի՝ ձեր բժշկի կամ այլ որակավորված մատակարար գրավոր ցուցումով: Եթե մատակարարը նշանակում է թոքերի քաղցկեղի սկրինինգային խորհրդատվություն և որոշման կայացման այցելություն՝ թոքերի քաղցկեղի սքրինինգի համար, այդ այցելությունը պետք է համապատասխանի նման այցելությունների համար սահմանված Medicare-ի չափանիշներին:	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Բժշկական սնուցման թերապիա Այս նպաստն այն մարդկանց համար է, ովքեր շաքարախտ կամ երիկամային հիվանդություն ունեն առանց դիալիզի: Այն նաև երիկամի փոխպատվաստումից հետո է գործում, եթե պատվիրվել է Ձեր բժշկի կողմից: Մենք կվճարենք երեք ժամ անհատական խորհրդատվության ծառայությունների համար Medicare-ից բժշկական սնուցման թերապիայի ծառայությունների ստացման առաջին տարվա ընթացքում: Մենք կարող ենք հաստատել հավելյալ ծառայություններ, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Մենք կվճարենք երկու ժամ անհատական խորհրդատվության ծառայությունների համար հետագա յուրաքանչյուր տարվա համար: Եթե ձեր վիճակը, բուժումը կամ ախտորոշումը փոխվում է, հնարավոր է, դուք ավելի շատ ժամեր ստանաք ձեր բժշկի ուղեգրով: Բժիշկը պետք է դեղատոմս դուրս գրի այս ծառայությունների համար ու թարմացնի ուղեգիրը յուրաքանչյուր տարի, եթե ձեր բուժումը պետք է շարունակվի հաջորդ օրացուցային տարում: Մենք կարող ենք հաստատել հավելյալ ծառայություններ, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:	$0
	Medicare-ի շաքարախտի կանխարգելման ծրագիր (MDPP) Մեր ծրագիրը վճարում է MDPP ծառայությունների իրավասություն ունեցող անձանց համար: MDPP-ն մշակված է օգնելու ձեզ ընդլայնել առողջ ապրելակերպը: Այն տրամադրում է գործնական վերապատրաստումներ հետևյալի վերաբերյալ՝ • երկարաժամկետ շաքարախտի փոփոխություն, **և** • ավելացված ֆիզիկական ակտիվություն, **և** • քաշի կորստի կառավարման եղանակներ և առողջ ապրելակերպ:	$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Medicare Part B-ի դեղեր Այս դեղերն ապահովագրվում են Medicare Part B-ի շրջանակներում: Մեր ծրագիրը վճարում է հետևյալ դեղերի համար. ● դեղեր, որոնք սովորաբար ինքնուրույն չեք ընդունում և որոնք ներարկվում կամ թրմվում են, երբ դուք բժշկի, հիվանդանոցի ամբուլատոր կամ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնի ծառայություններ եք ստանում: ● ինսուլին, որը տրամադրվում է երկարատև օգտագործման բժշկական սարքավորումների միջոցով (օրինակ՝ բժշկական տեսակետից անհրաժեշտ ինսուլինի պոմպը) ● այլ դեղեր, որոնք դուք ընդունում եք՝ օգտագործելով երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (օրինակ՝ նեբուլիզատորներ), որոնք մեր ծրագիրը թույլ է տվել ● Alzheimer-ի դեղ՝ Leqembi® (ջեներիկ lecanemab), որը տրվում է ներերակային (IV): Դեղորայքի ծախսերից բացի, բուժումից առաջ և/կամ ընթացքում ձեզ կարող են անհրաժեշտ լինել լրացուցիչ տեսասկանավորումներ և հետազոտություններ: Զրուցեք ձեր բժշկի հետ այն մասին, թե ինպիսի տեսասկանավորումներ և հետազոտություններ կարող են ձեզ անհրաժեշտ լինել որպես ձեր բուժման մաս: ● մակարդման գործոններ, որոնք դուք սրսկում եք ինքներդ ձեզ, եթե հեմոֆիլիա ունեք ● Փոխպատվաստում/իմունոպրեսիվ դեղամիջոցներ. Medicare-ը փախհատուցում է փոխպատվաստման դեղորայքային բուժումը, եթե Medicare-ը վճարել է ձեր օրգանի փոխպատվաստման համար: Դուք պետք է ունենաք Մաս A-ն այն ժամանակ, եթե ստանում եք փոխհատուցվող փոխպատվաստում, և դուք պետք է ունենաք Մաս B-ն, եթե ստանում եք ձեր իմունոպրեսիվ դեղերը: Medicare Part D-ն ընդգրկում է իմունոպրեսիվ դեղեր, եթե Մաս B-ն դրանք չի փոխհատուցում **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Medicare Part B-ի դեղեր (շարունակություն) ● օստեոպորոզի ներարկվող դեղեր: Մենք վճարում ենք այս դեղերի համար, եթե դուք մշտապես տանն եք գտնվում, կոտրված ոսկոր ունեք, որը, բժշկի վկայագրմամբ, առնչվում է հետդաշտանադադարային օստեոպորոզի հետ, և չեք կարող ինքնուրույն դեղ ներարկել ● որոշ հակագեներ. Medicare-ը փոխհատուցում է հակագեները, եթե դրանք պատրաստում է բժիշկը և պատշաճ ցուցումներ ստացած անձը (որը կարող եք լինել դուք՝ հիվանդը) դրանք տալիս է համապատասխան հսկողության ներքո: ● բերանով ընդունվող որոշ հակաքաղցկեղային դեղեր. Medicare-ը փոխհատուցում է բերանով ընդունվող՝ քաղցկեղի դեմ որոշ դեղեր, եթե նույն դեղը հասանելի է ներարկային տարբերակով կամ այն նախադեղ է (դեղի բերանով ընդունվող ձև, որը, երբ ընդունվում է, տրոհվում է նույն ակտիվ բաղադրիչի, որը առկա է ներարկային դեղի մեջ): Բերանով ընդունվող՝ քաղցկեղի նոր դեղամիջոցների հասանելի դառնալուն զուգընթաց՝ Մաս B-ն կարող է փոխհատուցել դրանք: Եթե Մաս B-ն չի ներառում դրանք, Մաս D-ն փոխհատուցում է դրանք ● բերանով ընդունվող՝ սրտխառնոցի դեմ դեղեր. Medicare-ը փոխհատուցում է բերանով ընդունվող՝ սրտխառնոցի դեմ դեղերը, որոնք դուք օգտագործում եք որպես հակաքաղցկեղային քիմիոթերապևտիկ ռեժիմի մաս, եթե դրանք ընդունվում են քիմիաթերապիայից առաջ, դրա ժամանակ կամ դրանից հետո 48 ժամվա ընթացքում կամ օգտագործվում են որպես սրտխառնոցի դեմ ներերակային դեղամիջոցի լիարժեք թերապևտիկ փոխարինող ● Երիկամային հիվանդության վերջին փուլի (ESRD)՝ բերանով ընդունվող որոշ դեղեր, որոնք ընդգրկված են Medicare Part B-ի ծածկույթում **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Medicare Part B-ի դեղեր (շարունակություն) ● որոշ դեղեր տնային դիալիզի համար, այդ թվում հեպարինը, հեպարինի հակաթույնը (եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է) և տեղային անզգայացնող միջոցներ ● Կալցիմիմետիկ և ֆոսֆատակապ դեղեր՝ ESRD վճարային համակարգի ներքո՝ ներառյալ Parsabiv® ներերակային դեղը և բերանով ընդունվող Sensipar դեղը ● Էրիթրոպոեզը խթանող միջոցներ. Medicare-ը ծածկում է էրիթրոպոետինի (erythropoietin) ներարկումը, եթե դուք ունեք երիկամների հիվանդության վերջնական փուլ՝ ESRD կամ այս դեղամիջոցի կարիքն ունեք որոշակի այլ վիճակների հետ կապված անեմիան բուժելու համար (օրինակ՝ Retacrit®) ● Ներերակային IV իմունային գլոբուլին՝ առաջնային իմունային անբավարարության հիվանդության՝ տան պայմաններում բուժման համար: ● պարենտերալ և էնտերալ սնուցում (IV և խողովակային սնուցում) Հետևյալ հղումը կուղղորդի ձեզ դեպի Medicare Part B-ի դեղերի ցանկ, որոնց համար կարող է կիրառվել փուլային բուժում՝ go.wellcare.com/CAStepTherapy: Մենք նաև ապահովագրում ենք որոշ պատվաստումներ մեր Medicare Part B և մեծահասակների պատվաստումների մեծ մասը՝ մեր Medicare Part D դեղատոմսով դեղերի նպաստների ներքո: **Գլուխ 5**-ն այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է մեր դեղերի նպաստը: Այն բացատրում է այն կանոնները, որոնց պետք հետևեք, որպեսզի ձեր դեղատոմսերն ապահովագրվեն: **Գլուխ 6**-ը այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է, թե ինչքան եք վճարում ձեր դեղերի համար մեր պլանի միջոցով:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Բուժքույրական հաստատությունում տրամադրվող խնամք Բուժքույրական հաստատությունը (NF) վայր է, որը խնամք է տրամադրում մարդկանց, որոնք չեն կարող տանը խնամք ստանալ, սակայն իրենց պետք չէ հիվանդանոցում գտնվել: Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար, սակայն չենք սահմանափակվի դրանցով. ● կիսամասնավոր սենյակ (կամ առանձին սենյակ, եթե բժշկական տեսակետից անհրաժեշտ է) ● սնունդներ, այդ թվում՝ հատուկ սննդակարգեր ● բուժքույրական ծառայություններ ● ֆիզիկական թերապիա, աշխատանքային թերապիա և խոսքի թերապիա ● շնչառական թերապիա ● ձեզ տրվող դեղեր՝ որպես ձեր խնամքի ծրագրի մի մաս: (Սա ներառնում է նյութեր, որոնք բնականորեն ներկա են ձեր մարմնում, օրինակ՝ արյան մակարդման գործոններ): ● արյուն, այդ թվում՝ պահեստավորում և կառավարում ● բժշկական ու վիրաբուժական պարագաներ, որոնք սովորաբար տրամադրվում են բուժքույրական հաստատությունների կողմից ● լաբորատոր անալիզներ, որոնք սովորաբար արվում են բուժքույրական հաստատություններում ● Ռենտգեն և ճառագայթաբանության այլ ծառայություններ, որոնք սովորաբար արվում են բուժքույրական հաստատություններում ● սարքերի օգտագործում, օրինակ՝ անվասայլակներ, որոնք սովորաբար տրամադրվում են բուժքույրական հաստատությունների կողմից **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Բուժքույրական հաստատությունում տրամադրվող խնամք (շարունակություն) ● բժշկի/մասնավոր պրակտիկայով զբաղվող մասնագետի ծառայություններ ● երկարատև օգտագործման բժշկական սարքավորում ● ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ՝ ատամնաշարի պրոթեզներ ● տեսողության նպաստներ ● լսողության հետազոտություն ● քիրոպրակտիկ խնամք ● պոդիատրիկ ծառայություններ Դուք սովորաբար խնամք կստանաք ցանցի հաստատություններում: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ կարողանաք խնամք ստանալ ցանցից դուրս հաստատությունում: Դուք կարող եք խնամք ստանալ հետևյալ վայրերում, եթե նրանք ընդունում են մեր ծրագրի սակագները. ● բուժքույրական հաստատություն կամ շարունակական խնամքի թոշակառուների համայնք, որտեղ դուք ապրել եք, անմիջապես հիվանդանոց գնալուց առաջ (եթե այն տրամադրում է բուժքույրական հաստատության խնամք): ● բուժքույրական հաստատություն, որտեղ ապրում է ձեր ամուսինը/կինը կամ ընտանեկան զուգընկերը ձեր հիվանդանոցից դուրս գրվելու պահին:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Գիրության զննում և քաշի կորստին նպաստող թերապիա Եթե ձեր մարմնի զանգվածի ինդեքսը կազմում է 30 կամ ավելին, մենք կվճարենք խորհրդատվության համար, որը կօգնի ձեզ քաշ կորցնել: Դուք պետք է ստանաք այդ խորհրդատվությունն առաջնային խնամքի շրջանակներում: Այս կերպ այն կարող է տնօրինվել ձեր համակողմանի կանխարգելիչ ծրագրի հետ միասին: Զրուցեք ձեր առաջնային խնամքի մատակարարի հետ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:	$0
	Ափիոնների բուժման ծրագրի (OTP) ծառայություններ Մեր ծրագիրը վճարում է հետևյալ ծառայությունների համար՝ օփիոիդային նյութերի օգտագործման հետ կապված հիվանդության (OUD) բուժման համար՝ OTP- ի միջոցով, որը ներառում է հետևյալ ծառայությունները. ● ընդունման գործողություններ ● պարբերական գնահատումներ ● FDA-ի կողմից հաստատված դեղորայքներ և, եթե կիրառել է, այս դեղորայքի կառավարումը և ձեզ տրամադրումը ● հոգեմետ նյութերի օգտագործման խորհրդատվություն ● անհատական և խմբային թերապիա ● ձեր մարմնում առկա դեղերի կամ քիմիական նյութերի թեստավորում (թունաբանական թեստավորում)	*$0* *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ամբուլատոր ախտորոշիչ թեստեր և թերապևտիկ ծառայություններ ու պարագաներ Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների և բժշկական տեսակետից անհրաժեշտ այլ ծառայությունների համար, որոնք այստեղ նշված չեն՝ ● ռենտգեն ● ճառագայթման (ռադիում ու իզոտոպ) թերապիա, այդ թվում՝ մասնագետի նյութեր և պարագաներ ● վիրաբուժական պարագաներ, ինչպես օրինակ՝ վիրակապեր ● փայտաձողիկներ, գիպսային վիրակապեր և այլ սարքեր, որոնք օգտագործվում են կոտրվածքների ու տեղախախտումների համար ● լաբորատոր անալիզներ ● արյուն, այդ թվում՝ պահեստավորում և կառավարում ● Ախտորոշիչ ոչ լաբորատոր հետազոտություններ, օրինակ՝ CT սկաններ, MRI-ներ, EKG-ներ և PET սկաններ, եթե ձեր բժիշկը կամ այլ առողջապահական ծառայություններ այլ մատակարար պատվիրում է դրանք՝ հիվանդությունը բուժելու համար ● այլ ամբուլատոր ախտորոշիչ թեստեր	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հիվանդանոցային ամբուլատոր հետազոտում Մենք վճարում ենք ամբուլատոր հիվանդանոցային հետազոտական ծառայությունների համար՝ որոշելու համար, թե արդյոք դուք պետք է ընդունվեք հիվանդանոց որպես ստացիոնար բուժառու, թե կարող եք դուրս գրվել: Ծառայությունները պետք է համապատասխանեն Medicare-ի չափանիշներին և համարվեն ողջամիտ և անհրաժեշտ: Հետազոտական ծառայությունները ապահովագրվում են միայն այն դեպքում, երբ տրամադրվում են բժշկի կամ նահանգային օրենքով և հիվանդանոցային անձնակազմի կողմից լիազորված այլ անձի նշանակումով՝ բուժառուներին հիվանդանոց ընդունելու կամ ամբուլատոր հետազոտություններ պատվիրելու համար: **Նշում.** եթե մատակարարը չի գրել նշանակում՝ ընդունելու ձեզ հիվանդանոց որպես ստացիոնար բուժառու, ապա դուք հանդիսանում եք ամբուլատոր բուժառու: Նույնիսկ եթե գիշերը մնաք հիվանդանոցում, դուք, միևնույնն է, կարող եք համարվել ամբուլատոր հիվանդ: Եթե վստահ չեք՝ արդյոք դուք ամբուլատոր բուժառու եք, հարցրեք այդ մասին հիվանդանոցի անձնակազմին: Ստացեք ավելի շատ տեղեկություններ *Medicare-ի մասին փաստերի թերթիկից բժշկական նպաստների մասին,* որը հասանելի է այստեղ՝ Medicare.gov/publications/11435-Medicare-Hospital-Benefits.pdf	$0 *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հիվանդանոցային ամբուլատոր ծառայություններ Մենք վճարում ենք բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունների համար, որոնք դուք ստանում եք հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքում հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման կամ բուժման համար, ինչպես օրինակ՝ ● Ծառայություններ արտակարգ իրավիճակի բաժանմունքում կամ ամբուլատոր կլինիկայում, ինչպես օրինակ՝ ամբուլատոր վիրահատություն կամ զննման ծառայություններ ● Լաբորատոր ու ախտորոշիչ անալիզներ, որոնց համար հիվանդանոցը հաշիվ է ուղարկում ● Հոգեկան առողջության խնամք, այդ թվում՝ խնամք մասնակի հոսպիտալացում պահանջող ծրագրում, եթե բժիշկը վկայագրում է, որ առանց դրա՝ կպահանջվեր ստացիոնար բուժում ● Ռենտգեն և ճառագայթաբանության այլ ծառայություններ, որոնց համար հիվանդանոցը հաշիվ է ուղարկում ● Բժշկական պաշարներ, ինչպես օրինակ՝ փայտաձողիկներ ու գիպսային վիրակապեր ● Որոշակի դեղեր և բիոլոգիական միջոցներ, որոնք դուք ինքներդ չեք կարող ընդունել	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հոգեկան առողջության ամբուլատոր խնամք Մենք կվճարենք հոգեկան առողջության ծառայությունների համար, որոնք տրամադրվում են՝ ● նահանգի կողմից վկայագրված հոգեբույժի կամ բժշկի կողմից ● կլինիկական հոգեբանի կողմից ● կլինիկական սոցիալական աշխատողի կողմից (CSW) ● կլինիկական բուժքույր մասնագետի կողմից (CNS) ● վկայագրված մասնագետ-խորհրդատուի (LPC) կողմից ● ամուսնական և ընտանեկան լիցենզավորված թերապևտի (LMFT) կողմից ● մասնավոր պրակտիկայով զբաղվող բուժքրոջ (NP) կողմից ● բժշկի օգնականի (PA) կողմից ● Medicare-ով որակավորված հոգեկան առողջության խնամքի մեկ այլ մասնագետի կողմից՝ ինչպես թույլ է տրված կիրառելի նահանգային օրենքներով Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար և, հնարավոր է, որոշ այլ ծառայությունների համար, որոնք այստեղ նշված չեն՝ ● կլինիկական ծառայություններ ● ցերեկային բուժում ● հոգեբանա-սոցիալական վերականգնողական ծառայություններ ● մասնակի հոսպիտալացում կամ ինտենսիվ ամբուլատոր ծրագրեր ● անհատական ու խմբակային հոգեկան առողջության գնահատումներ և բուժումներ **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հոգեկան առողջության ամբուլատոր խնամք (շարունակություն) ● հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես ցուցված է գնահատել հոգեկան առողջությունը ● ամբուլատոր ծառայություններ դեղերի թերապիային հետևելու նպատակով ● ամբուլատոր լաբորատոր անալիզներ, դեղեր, պաշարներ ու հավելումներ ● հոգեբուժական խորհրդատվություն	
	Ամբուլատոր վերականգնողական ծառայություններ Մենք կվճարենք ֆիզիկական, աշխատանքային ու խոսքի թերապիաների համար: Դուք կարող եք ստանալ ամբուլատոր վերականգնման ծառայություններ հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքից, անկախ թերապևտի գրասենյակներից, Բազմակողմանի ամբուլատոր վերականգնման հաստատություններից (CORFs) և այլ հաստատություններից:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել*:
	Հոգեմետ նյութերի օգտագործման խանգարման հետ կապված ամբուլատոր ծառայություններ Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար և, հնարավոր է, որոշ այլ ծառայությունների համար, որոնք այստեղ նշված չեն՝ ● ալկոհոլի չարաշահման զննում և խորհրդատվություն ● թմրադեղերի չարաշահման բուժում ● խմբակային կամ անհատական խորհրդատվություն որակավորված կլինիկական մասնագետի կողմից ● ենթասուր թունազերծում բնակելի կախվածության ծրագրում ● ալկոհոլի և/կամ թմրանյութերի ծառայություններ ինտենսիվ ամբուլատոր բուժման կենտրոնում ● Naltrexone-ի (vivitrol) երկարացված թողարկմամբ բուժում	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել*:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ամբուլատոր վիրահատություն Մենք կվճարենք ամբուլատոր վիրահատության ու ծառայությունների համար հիվանդանոցի ամբուլատոր հաստատություններում և ամբուլատոր վիրաբուժական կենտրոններում: **Նշում:** Եթե դուք վիրահատության եք ենթարկվում հիվանդանոցային բուժհաստատությունում, ապա պետք է խորհրդակցեք ձեր մատակարարի հետ, թե արդյոք պետք է մնաք հիվանդանոցում որպես ստացիոնար բուժառու, թե պետք է լինեք ամբուլատոր բուժառու: Եթե մատակարարը չի գրում նշանակում՝ ընդունելու ձեզ հիվանդանոց որպես ստացիոնար բուժառու, ապա դուք հանդիսանում եք ամբուլատոր բուժառու: Նույնիսկ եթե գիշերը մնաք հիվանդանոցում, դուք, միևնույնն է, կարող եք համարվել ամբուլատոր հիվանդ:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*
	Պալիատիվ խնամք Պալիատիվ բուժսպասարկումը փոխհատուցվում է մեր պլանի կողմից: Պալիատիվ բուժսպասարկումը ծանր հիվանդություն ունեցող մարդկանց համար է Այն ապահովում է հիվանդին և ընտանիքին ուղղված խնամք, որը բարելավում է կյանքի որակը՝ կանխատեսելով, կանխելով և բուժելովցավը և տառապանքը: Պալիատիվ բուժսպասարկումը հոսպիս **չի,** հետևաբար պարտադիր չէ, որ կյանքի սպասովող տևողությունը լինի վեց ամիս կամ պակաս՝ պալիատիվ բուժսպասարկման համար իրավասու լինելու համար: Պալիատիվ բուժսպասարկումը տրամադրվում է բուժական/սովորական խնամքի հետ միաժամանակ: Պալիատիվ բուժսպասարկումը ներառում է հետևյալը. ● բուժսպասարկման նախնական պլանավորում ● պալիատիվ խնամքի գնահատում և խորհրդատվություն ● խնամքի պլան, որը ներառում է պալիատիվ և բուժիչ խնամքի թույլատրված բոլոր տեսակները՝ ներառյալ հոգեկան առողջության և բժշկական-սոցիալական ծառայությունները **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Պալիատիվ խնամք (շարունակություն) ● ծառայություններ բուժսպասարկման ձեր նշանակված թիմի կողմից ● խնամքի համակարգում ● ցավի և ախտանիշների կառավարում Դուք չեք կարող միաժամանակ ստանալ հոսպիսային և պալիատիվ խնամք, եթե 21 տարեկանից բարձր եք: Եթե դուք ստանում եք պալիատիվ խնամք և իրավասու եք ստանալ հոսպիսային խնամք, կարող եք ցանկացած պահի դիմել՝ հոսպիսային խնամքի անցնելու համար:	$0
	Մասնակի հոսպիտալացման ծառայություններ և ինտենսիվ ամբուլատոր ծառայություններ Մասնակի հոսպիտալացումը հատուկ կառուցված, ակտիվ հոգեբուժական բուժման ծրագիր է: Այն առաջարկվում է որպես հիվանդանոցային ամբուլատոր ծառայություն կամ համայնքային հոգեկան առողջության կենտրոնի կողմից, որն ավելի ինտենսիվ բուժսպասարկում է, քան այն խնամքը, որը դուք ստանում եք ձեր բժշկի, թերապևտի, ամուսնական և ընտանեկան լիցենզավորված թերապևտի (LMFT) կամ լիցենզավորված պրոֆեսիոնալ խորհրդատուի գրասենյակում: Այն կարող է օգնել ձեզ հիվանդանոց չպառկել: Ինտենսիվ ամբուլատոր ծառայությունը վարքագծային (հոգեկան) խնդիրների ակտիվ բուժման կառուցվածքային ծրագիր է, որը մատուցվում է որպես հիվանդանոցային ամբուլատոր ծառայություն՝ համայնքային հոգեկան առողջության պահպանման կենտրոնում, դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոնում կամ գյուղական առողջապահական կլինիկայում: Այն ավելի ինտենսիվ է, քան այն խնամքը, որը ստանում եք ձեր բժշկի, թերապևտի, ամուսնական և ընտանեկան լիցենզավորված թերապևտի, LMFT, կամ լիցենզավորված պրոֆեսիոնալ խորհրդատուի գրասենյակում, բայց պակաս ինտենսիվ, քան մասնակի հոսպիտալացումը: **Նշում**. քանի որ մեր ցանցում համայնքային հոգեկան առողջության կենտրոններ չկան, մենք փոխհատուցում ենք մասնակի հոսպիտալացումը միայն հիվանդանոցի ամբուլատոր բաժնում:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Բժշկի/մատակարարի ծառայություններ, ներառյալ՝ բժշկի գրասենյակի այցեր Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ ● բժշկական տեսակետից անհրաժեշտ առողջապահական խնամք կամ վիրահատություն, որը տրամադրվում է այս վայրերում՝ ○ բժշկի գրասենյակում ○ հավաստագրված ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում ○ հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքում ○ ցանկացած այլ վայրում ● խորհրդատվություն, ախտորոշում և բուժում մասնագետի կողմից ● լսողության և հավասարակշռության ընդհանուր ստուգումներ, որոնք կատարվում են ձեր առաջնային խնամքի մատակարարի կողմից, եթե ձեր բժիշկը պատվիրում է այն, որպեսզի պարզի՝ արդյոք ձեզ հարկավոր է բուժում ● Որոշ հեռաառողջապահական ծառայություններ, ներառյալ շտապ անհրաժեշտ ծառայությունները, տնային առողջության ծառայությունները, առաջնային բուժօգնության բժիշկը, էրգոթերապիան, մասնագետը, հոգեկան առողջության անհատական և խմբային սեանսները, պոդոլոգի ծառայությունները, առողջապահական այլ մասնագետներ, հոգեբուժական, ֆիզիկական թերապիայի և խոսքի պաթոլոգիայի ծառայությունների անհատական և խմբային սեանսներ, անհատական և խմբային սեանսներ ամբուլատոր դեղամիջոցների չարաշահման և շաքարախտի ինքնակառավարման դասընթացների համար **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն	Ինչ եք դուք վճարում
Բժշկի/մատակարարի ծառայություններ, ներառյալ՝ բժշկի գրասենյակի այցեր (շարունակություն) ○ Դուք ունեք տարբերակ՝ ստանալ այս ծառայություններն անձամբ այցելությամբ կամ որպես հեռակա մատուցվող առողջություն: Եթե ընտրում եք այս ծառայություններից մեկը ստանալ հեռահաղորդակցության միջոցով, ապա պետք է օգտագործեք ցանցի մատակարար, որը առաջարկում է հեռաառողջապահական ծառայություններ ● Մեր ծրագիրն առաջարկում է օրական 24 ժամ, շաբաթը 7 օր վիրտուալ այցելության մուտք դեպի խորհրդի հավաստագրված բժիշկներ Teladoc-ի միջոցով՝ օգնելու լուծել առողջական խնդիրների/հարցերի լայն տեսականի: Ապահովագրված ծառայությունները ներառում են ընդհանուր բժշկական, վարքային առողջություն, մաշկաբանություն և այլն: ● Վիրտուալ այցը (նաև հայտնի է որպես հեռաառողջապահական խորհրդատվություն) այց է բժշկի հետ հեռախոսով կամ ինտերնետով՝ սմարթ հեռախոսի, պլանշետի կամ համակարգչի միջոցով: Որոշ տեսակի այցելությունների համար կարող է պահանջվել ինտերնետ և տեսախցիկով միացված սարք: ● Որոշ հեռաառողջապահական ծառայություններ, ներառյալ՝ խորհրդատվությունը, ախտորոշումը և բուժումը բժշկի կամ բուժակի կողմից, որոշ գյուղական վայրերում կամ Medicare-ի կողմից հաստատված այլ վայրերում գտնվող հիվանդների համար: ● հեռաառողջապահական ծառայություններ երիկամային հիվանդության վերջնական փուլի (ESRD) հետ կապված ամսական այցեր տնային դիալիզի անդամների համար հիվանդանոցում կամ կրիտիկական հասանելիության հիվանդանոցում գործող երիկամային դիալիզի կենտրոնում, երիկամային դիալիզի հաստատությունում կամ տանը **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Բժշկի/մատակարարի ծառայություններ, ներառյալ՝ բժշկի գրասենյակի այցեր (շարունակություն) ● հեռաառողջապահական ծառայություններ՝ ախտորոշելու, գնահատելու կամ բուժելու կաթվածի ախտանիշները ● հեռաբժշկության ծառայություններ նյութերի օգտագործման խանգարում կամ ուղեկցող հոգեկան առողջության խանգարում ունեցող անդամների համար՝ անկախ ձեր գտնվելու վայրից ● հեռաառողջապահական ծառայություններ հոգեկան առողջության խանգարումների ախտորոշման, գնահատման և բուժման համար ● հեռաառողջապահական ծառայություններ հոգեկան առողջության այցերի համար, որոնք տրամադրվում են Գյուղական առողջապահական կլինիկաների և Դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոնների կողմից: ● վիրտուալ ստուգումներ (օրինակ՝ հեռախոսով զրույցներ կամ տեսազրույցներ) ձեր բժշկի հետ հինգից տասը րոպեով, **եթե** ○ դուք նոր հիվանդ չեք, **և** ○ ստուգումը կապված չէ բժշկի գրասենյակի այցելության հետ վերջին յոթ օրվա ընթացքում, **և** ○ ստուգումը չի ենթադրում այցելություն բժշկի գրասենյակ 24 ժամվա ընթացքում կամ ավելի շուտ հասանելի այցի համար ● Տեսանյութերի և/կամ պատկերների գնահատում, որոնք ուղարկել եք ձեր բժշկին, բացատրություն և հետևում ձեր բժշկի կողմից 24 ժամվա ընթացքում, **եթե**. ○ դուք նոր հիվանդ չեք, և **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Բժշկի/մատակարարի ծառայություններ, ներառյալ՝ բժշկի գրասենյակի այցեր (շարունակություն) ○ գնահատումը կապված չէ բժշկի գրասենյակի այցելության հետ նախկին յոթ օրվա ընթացքում, **և** ○ գնահատումը չի ենթադրում այցելություն բժշկի գրասենյակ 24 ժամվա ընթացքում կամ շուտափույթ հասանելի այց բժշկին ● Խորհրդակցություն, որը ձեր բժիշկն ունենում է ուրիշ բժիշկների հետ հեռախոսով, համացանցով կամ առողջության էլեկտրոնային արձանագրությունները, եթե դուք նոր հիվանդ չեք ● Երկրորդ կարծիք ցանցի մեկ այլ մատակարարի կողմից վիրահատությունից առաջ	
	Պոդիատրիկ ծառայություններ Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ ● ոտնաթաթերի վնասվածքների ու հիվանդությունների ախտորոշում և բժշկական կամ վիրաբուժական բուժում (ինչպես օրինակ՝ մշտապես ներքև ծալած ոտքի մատ կամ կրունկի ջիլեր) ● ոտնաթաթի սովորական խնամք՝ ոտքերի վրա ազդող որոշակի վիճակներ ունեցող անդամների համար, օրինակ՝ շաքարախտ Medicare-ի նպաստների սպառումից հետո սահմանափակվում է առավելագույնը երկու ծառայությամբ ցանկացած մեկ օրացուցային ամսվա ընթացքում, եթե լրացուցիչ ծառայությունների համար թույլտվություն չի ստացվել:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	HIV-ի կանխարգելման նախակոնտակտային կանխարգելում (PrEP) Եթե դուք HIV չունեք, բայց ձեր բժիշկը կամ այլ բուժաշխատող որոշում է, որ դուք HIV-ով վարակվելու բարձր ռիսկի տակ եք, մենք ապահովագրում ենք նախակոնտակտային կանխարգելման (PrEP) դեղերը և հարակից ծառայությունները: Եթե դուք որակավորվում եք, ապահովագրված ծառայությունները ներառում են. ● FDA-ի կողմից հաստատված բանավոր կամ ներարկվող PrEP դեղորայք, ներառյալ դեղը ներարկելու վճարը, եթե կիրառելի է: ● Մինչև ութ անհատական խորհրդատվություն (ներառյալ HIV-ի ռիսկի գնահատումը, HIV-ով վարակման ռիսկի նվազեցումը և դեղի ընդունման ռեժիմի պահպանումը) յուրաքանչյուր 12 ամիսը մեկ: ● HIV-ի ստուգման մինչև ութ հետազոտություն յուրաքանչյուր 12 ամիսը մեկ: ● Հեպատիտ B-ի վիրուսի ստուգման մեկ հետազոտություն:	$0
	Շագանակագեղձի քաղցկեղի զննումներ 50 տարեկան և ավելի բարձր տարիքի տղամարդկանց համար մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար 12 ամիսը մեկ՝ ● ուղիղ աղիքի թվային ստուգում ● շագանակագեղձի հատուկ հակածինի (PSA) թեստ	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	պրոթեզներ և օրթոպեդիկ սարքեր ու հարակից պարագաներ Պրոթեզային սարքերն՝ ամբողջությամբ կամ մասամբ, փոխարինում են մարմնի մասը կամ գործառույթը: Դրանք ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանով. ● փորձարկում, տեղադրում կամ ուսուցում պրոթեզների և օրթոպեդիկ սարքերի օգտագործման վերաբերյալ ● կոլոստոմիայի պարկեր ու կոլոստոմիայի խնամքին առնչվող պարագաներ ● ստամոքսային և պարստամոքսային սնում, այդ թվում՝ սնման պարագաների հավաքածուներ, ներարկման մխոց, խողովակներ և ադապտեր, լուծույթներ, ինքնուրույն ներարկումների համար պարագաներ ● սրտի ռիթմը կանոնավորող սարքեր ● ձգափոկեր ● պրոթեզային կոշիկներ ● արհեստական ձեռքեր ու ոտքեր ● կրծքի պրոթեզներ (այդ թվում՝ վիրաբուժական կրծքակալ կրծքի հեռացումից հետո) ● պրոթեզ՝ փոխարինելու դեմքի արտաքին մասն ամբողջությամբ կամ մասնակի, որը հեռացվել կամ հաշմվել է հիվանդության, վնասվածքի կամ բնածին արատի հետևանքով ● քսուկներ անզսպության դեմ և տակդիրներ Մենք նաև վճարում ենք պրոթեզներին և օրթոպեդիկ սարքերին առնչվող որոշ պարագաների համար: Մենք նաև վճարում ենք պրոթեզների և օրթոպեդիկ սարքերի վերանորոգման ու փոխարինման համար: Մենք որոշակի ապահովագրություն ենք առաջարկում կատարակտի հեռացումից ու կատարակտի վիրահատությունից հետո: Մանրամասների համար այցելե՛ք ստորև այս աղյուսակում նշված «Տեսողության բուժօգնություն» բաժինը:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Թոքերի վերականգնման ծառայություններ Մենք վճարում ենք թոքերի վերականգնման ծրագրերի համար այն անդամների համար, որոնք ունեն միջինից մինչև շատ ծանր Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն (COPD): Դուք պետք է թոքերի վերականգնման համար ուղեգիր ունենաք COPD բուժող բժշկից կամ մատակարարից:	$0 *Կարող է ուղեգիր պահանջվել*:
	Հեպատիտ C-ի վիրուսի ստուգման հետազոտություն Մենք ապահովագրում ենք հեպատիտի C-ի մեկ սքրինինգ, եթե ձեր ընտանեկան բժիշկը կամ որակավորված առողջապահական ծառայությունների այլ մատակարար պատվիրում է այն, և դուք համապատասխանում եք հետևյալ պայմաններից մեկին. • Դուք բարձր ռիսկի տակ եք, քանի որ օգտագործում կամ օգտագործել եք ապօրինի ներարկային նյութեր • Դուք ունեցել եք արյան փոխներարկում մինչև 1992 թվականը: • Դուք ծնվել եք 1945-1965 թթ: Եթե դուք ծնվել եք 1945-ից 1965 թթ. և չեք համարվում բարձր ռիսկի տակ, մենք վճարում ենք մեկանգամյա հետազոտման համար: Եթե դուք բարձր ռիսկի տակ եք (օրինակ՝ շարունակում եք օգտագործել ներարկվող ապօրինի թմրանյութեր՝ հեպատիտ C-ի ձեր նախորդ բացասական սքրինինգային թեստից հետո), մենք ապահովագրում ենք ամենամյա հետազոտություններ:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI-ներ) զննում և խորհրդատվություն Մենք կվճարենք խլամիդիաների, սուսանակի, սիֆիլիսի ու հեպատիտ Բ-ի զննումների համար: Այս զննումներն ապահովագրվում են հղի կանանց ու որոշ մարդկանց համար, որոնք STI ունենալու բարձր վտանգի տակ են: Առաջնային խնամքի մատակարարը պետք է պատվիրի այս ստուգումները: Մենք ապահովագրում ենք այս թեստերը 12 ամիսը մեկ կամ որոշակի ժամանակ հղիության ընթացքում: Մենք նաև կվճարենք մինչև երկու դեմ առ դեմ, բարձր ինտենսիվության վարքագծային խորհրդատվության համար սեռական ակտիվ չափահասների համար, որոնք STI-ներ ունենալու ավելի բարձր վտանգի տակ են: Յուրաքանչյուր աշխատաշրջանը կարող է տևել 20-ից 30 րոպե: Մենք կվճարենք այս խորհրդատվությունների համար միայն որպես կանխարգելիչ ծառայություն, եթե դրանք տրամադրվում են առաջնային խնամքի մատակարարի կողմից: Այս աշխատաշրջանները պետք է անցկացվեն առաջնային խնամքի պայմաններում, ինչպես օրինակ՝ բժշկի գրասենյակում:	$0
	Որակավորված բուժքույրական հաստատությունում (SNF) տրամադրվող խնամք Որակավորված բուժքույրական հաստատության խնամքի սահմանման համար կարդացեք **Գլուխ 12**-ը: Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար և, հնարավոր է, որոշ այլ ծառայությունների համար, որոնք այստեղ նշված չեն՝ • կիսաառանձին սենյակ կամ առանձին սենյակ, եթե բժշկական տեսակետից անհրաժեշտ է • սնունդներ, այդ թվում՝ հատուկ սննդակարգեր • որակավորված բուժքույրական ծառայություն • ֆիզիկական թերապիա, աշխատանքային թերապիա և խոսքի թերապիա **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Որակավորված բուժքույրական հաստատությունում (SNF) տրամադրվող խնամք (շարունակություն) ● դեղեր, որոնք դուք ստանում եք որպես ձեր խնամքի ծրագրի մի մաս, ներառյալ՝ նյութեր, որոնք բնականորեն ներկա են ձեր մարմնում, օրինակ՝ արյան մակարդման գործոններ ● արյուն, այդ թվում՝ պահեստավորում և կառավարում ● բժշկական ու վիրաբուժական պաշարներ, որոնք տրամադրվում են SNF-ների կողմից ● Լաբորատոր թեստեր՝ տրված SNF-ների միջոցով ● ռենտգեն և ճառագայթաբանության այլ ծառայություններ, որոնք արվում են բուժքույրական հաստատություններում ● սարքեր, օրինակ՝ անվասայլակներ, որոնք սովորաբար տրամադրվում են բուժքույրական հաստատությունների կողմից ● բժշկի/մատակարարի ծառայություններ Դուք սովորաբար խնամք կստանաք SNF ցանցի հաստատություններում: Որոշ հանգամանքներում դուք կարող եք խնամք ստանալ ցանցից դուրս հաստատությունում: Դուք կարող եք խնամք ստանալ հետևյալ վայրերում, եթե նրանք ընդունում են մեր ծրագրի սակագները. ● բուժքույրական հաստատություն կամ շարունակական խնամքի թոշակառուների համայնք, որտեղ դուք ապրել եք անմիջապես հիվանդանոց գնալուց առաջ (եթե այն տրամադրում է բուժքույրական հաստատության խնամք): ● բուժքույրական հաստատություն, որտեղ ապրում է ձեր ամուսինը/կինը կամ ընտանեկան զուգընկերը ձեր հիվանդանոցից դուրս գրվելու պահին	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Ծխելու ու ծխախոտի օգտագործման դադարեցում Ծխախոտի և ծխելու օգտագործումը թողնելու խորհրդատվությունը ծածկվում է ամբուլատոր և հիվանդանոցային հիմունքներով այն անձանց համար, ովքեր համապատասխանում են այս չափանիշներին. • օգտագործում են ծխախոտ՝ անկախ նրանից, թե նրանց մոտ կան ծխախոտի հետ կապված հիվանդության նշաններ կամ ախտանիշներ, թե ոչ • խորհրդատվության ընթացքում կոմպետենտ և ուշադիր են • խորհրդատվությունը տրամադրում է որակավորված բժիշկ կամ Medicare-ի կողմից ճանաչված այլ մասնագետ Յուրաքանչյուր տարի մենք ապահովագրում ենք ծխելը դադարեցնելու երկու փորձ (յուրաքանչյուր փորձ կարող է ներառել առավելագույնը չորս միջանկյալ կամ ինտենսիվ սեսիա, տարեկան մինչև ութ սեսիա):	$0
	Սոցիալական աջակցության հարթակ Մեր պլանը տրամադրում է սոցիալական աջակցության առցանց հարթակ՝ ձեր ընդհանուր բարեկեցությանը աջակցելու համար: Հարթակն առաջարկում է թերապևտիկ վարժություններ/միջոցառումներ, համայնքային ներգրավվածություն և ծրագրի կողմից հովանավորվող ռեսուրսներ՝ սթրեսն ու անհանգստությունը կառավարելուն հայեցողությամբ աջակցելու համար: Հարթակը հեշտացնում է ձեզ մասնակցությունը և ներգրավված մնալը ՝ օգնելով ձեզ կառավարել ձեր վարքագծային առողջության կարիքները: Այն հասանելի է առցանց 24/7, ուստի դուք կարող եք օգտագործել այն, երբ ցանկանաք: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Սոցիալական աջակցության հարթակ (շարունակություն) Սոցիալական աջակցության հարթակը ներառում է. ● Անհատականացված բարեկեցության ծրագրեր. հասանելի դարձրեք անհատականացված 4-շաբաթյա ինքնակառավարվող ծրագրերը, որոնք նախատեսված են ֆիզիկական և էմոցիոնալ բարեկեցությունը բարձրացնելու համար՝ ներառելով առողջ ծերացման մասնագետների գաղափարները՝ անդամներին հատուկ աջակցություն ցուցաբերելու համար: Մասնակցեք ծրագրերին ձեր սեփական ժամանակացույցով և հետևեք ձեր առաջընթացին՝ վերահսկելու ձեր առողջության բարելավումները: ● Ընկերների և մասնագետների աջակցություն. Միացեք առցանց համայնքին մոդերացվող տարածքում, որտեղ կարող եք շփվել ընկերների և որակավորված առողջապահական մասնագետների հետ: Ձեռք բերեք կլինիկապես ստուգված հոդվածների հասանելիություն և ստացեք անհատականացված առաջարկներ Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի լրացուցիչ ծառայությունների համար՝ ձեր փոխազդեցությունների և բացահայտված կարիքների հիման վրա: ● Անհատականացված թվային առողջապահական գործիքներ. կատարեք ինտերակտիվ վարժություններ, մեդիտացիաներ և խաղացեք խաղեր, որոնք հիմնված են ճանաչողական-վարքագծային թերապիայի, գիտակցականության և դրական հոգեբանության վրա: Այս գործիքները օգնում են կառավարել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են առողջ ծերացումը, մեկուսացման կառավարումը, խնամքը, վիշտը, ծերության մեջ նպատակ գտնելը և այլն: Անդամները կարող են մուտք գործել հարթակ ՝ մուտք գործելով Անդամների պորտալ՝ go.wellcare.com/member հղումով կամ զանգահարելով Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի Անդամների սպասարկման կենտրոն՝ էջի ներքևում նշված համարով: Գրանցվելուց հետո ցանկացած պահի կարող եք անմիջականորեն մուտք գործել հարթակ համակարգչից, պլանշետից կամ սմարթֆոնից:	

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար Եթե դուք որակավորվում եք քրոնիկ հիվանդների (SSBCI) հատուկ լրացուցիչ նպաստների համար, մեր պլանը առաջարկում է լրացուցիչ նպաստներ: Դուք պետք է համապատասխանեք որոշակի չափանիշների, այդ թվում՝ ունենաք որակավորման ենթական մեկ կամ մի քանի փաստաթղթավորված և ակտիվ ախտորոշում: Խնդիրը պետք է լինի կյանքին սպառնացող կամ զգալիորեն սահմանափակի ձեր ընդհանուր առողջությունը կամ գործառույթը: Բացի այդ, դուք պետք է ունենաք հոսպիտալացման կամ առողջական այլ անբարենպաստ հետևանքների բարձր ռիսկ և ինտենսիվ խնամքի համակարգման կարիք: Որակավորման ենթակա քրոնիկական հիվանդությունները հետևյալներն են. Աուտոիմունային խանգարումներ, Քաղցկեղ, Սիրտ-անոթային խանգարումներ, Ալկոհոլի քրոնիկական օգտագործման խանգարում և ալկոհոլային/թմրանյութային այլ խանգարումներ (SUDs), Հոգեկան առողջության քրոնիկական և հաշմանդամություն առաջացնող վիճակներ, Քրոնիկական վիճակներ, որոնք վատթարացնում են տեսողությունը, լսողությունը (խլություն), ճաշակելիքը, շոշափելիքը և հոտառությունը, Քրոնիկական ստամոքս-աղիքային հիվանդություն, Քրոնիկական սրտային անբավարարություն, Երիկամների քրոնիկական հիվանդություն (CKD), Թոքերի քրոնիկական խանգարումներ, Ճանաչողական խանգարումների հետ կապված վիճակներ, Վիճակներ, որոնք պահանջում են շարունակական թերապևտիկ ծառայություններ՝ անհատների ֆունկցիոնալությունը պահպանելու կամ վերականգնելու համար, Ֆունկցիոնալ խնդիրներով ուղեկցվող վիճակներ, Դեմենցիա, Շաքարային դիաբետ, HIV/AIDS, Իմունային անբավարարություն և իմունասուպրեսիվ խանգարումներ, Նյարդաբանական խանգարումներ, Ավելորդ քաշ, ճարպակալում և մետաբոլիկ համախտանիշ, Օրգանների փոխպատվաստումից հետո ընկած ժամանակահատված, Արյան ծանր հիվանդություններ, Կաթված: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար (շարունակություն) Կարդացեք **Գլուխ 4. Բաժին C**-ն՝ իրավասության չափանիշների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: Ստորև բերված նպաստների համար իրավասությունը որոշվում է մեր ծրագրում գրանցվելուց հետո: **Եթե իրավասու եք, կարող եք օգտագործել ձեր Wellcare Spendables® գումարը ստորև ներկայացված լրացուցիչ նպաստների համար: Նույն նպաստի գումարն օգտագործվում է ձեր Wellcare Spendables ® առանց դեղատոմսի տրվող (OTC) նպաստների ծառայությունների համար:** **Իրավասու դառնալուց հետո այս երկարաձգված նպաստները հասանելի կլինեն 7-10 աշխատանքային օրվա ընթացքում: Ձեր ամսական նպաստը կտեղափոխվի հաջորդ ամիս, եթե այն չօգտագործվի և ավարտվի պլանային տարվա վերջում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ Wellcare Spendables®-ի նպաստի բաժինն այս աղյուսակում:** • **Պոմպայի մոտ վճարվող մեքենայի վառելիք** Դուք կարող եք օգտագործել ձեր քարտը բենզինի համար վճարելու նպատակով՝ անմիջապես ծրագրում մասնակցող բենզալցակայաններում: Քարտը չի կարող օգտագործվել ՀԴՄ-ով անձամբ վճարելու համար: Ձեր քարտը կարող է օգտագործվել միայն բենզին գնելու համար՝ մինչև հասանելի թույլատրելի գումարը: Էլեկտրական տրանսպորտային միջոցների (EV) լիցքավորումը նույնպես կարող է ծածկվել մասնակից վայրերում, որտեղ ընդունվում է քարտով վճարում: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար (շարունակություն) • **Առողջ սնունդ** Դուք կարող եք օգտագործել ձեր քարտն առողջ սննդի և արտադրանքի համար մասնակից մանրածախ առևտրի կետերում: Կարող են հասանելի լինել առաքման տարբերակներ այն մթերային ապրանքների համար, որոնց համար դուք իրավասու եք: Պատրաստի սննդի և արտադրանքի արկղերը հասանելի են պատվերի համար՝ անդամների առցանց պորտալի միջոցով: Քարտը չի կարող օգտագործվել ծխախոտ կամ ալկոհոլ գնելու համար: Հաստատված ապրանքները ներառում են. ○ Մրգեր և բանջարեղեն ○ Ամբողջական հացահատիկներ և չոր սննդամթերք, ինչպիսիք են ալյուրը, համեմունքները և երկար պահպանվող բաղադրիչները ○ Կաթնամթերք և կաթնամթերքի փոխարինիչներ, կաթ, յոգուրտ, պանիր ○ Սպիտակուցի աղբյուրներ, ինչպիսիք են միսը, թռչնամիսը, ծովամթերքը, ձուն, լոբազգիները, ընկուզեղենը և սերմերը ○ Սննդարար հավելումներ և սալիկներ • **Անձնական խնամքի պարագաներ** Դուք կարող եք օգտագործել ձեր քարտը մասնակից մանրածախ առևտրի կետերում անձնական հիգիենայի պարագաներ և տնտեսական ապրանքներ գնելու համար: Կարող են հասանելի լինել առաքման տարբերակներ այն ապրանքների համար, որոնց համար դուք իրավասու եք: Հաստատված ապրանքները ներառում են. ○ Օճառ, շամպուն և կոնդիցիոներ ○ Ձուգարանի թուղթ և թղթե սրբիչներ ○ Անձնական հիգիենայի պարագաներ, ինչպիսիք են հոտազերծիչը, դեմքի լվացման միջոցը և մարմնի լվացման միջոցը **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար (շարունակություն) ○ Մաքրող միջոցներ և ապրանքներ, որոնք նպաստում են վարակների վերահսկմանը, ինչպիսիք են ախտահանիչ անձեռոցիկները և բազմաֆունկցիոնալ մաքրող ցրիչները Օգտագործեք ձեր ներծրագրային շտրիխ կոդերի սկաները՝ հաստատված ապրանքները մանրածախ առևտրի վայրերում գտնելու կամ անդամի պորտալ մուտք գործելու համար: ● **Վնասատուների դեմ պայքար** Դուք կարող եք օգտագործել ձեր քարտը մասնակից մանրածախ առևտրի կետերում ձեր տանը և տան շուրջ օգտագործման համար վնասատուների դեմ պայքարի ապրանքներ գնելու համար: Կարող են հասանելի լինել առաքման տարբերակներ այն ապրանքների համար, որոնց համար դուք իրավասու եք: Այս նպաստի համար հաստատված ապրանքները ներառում են. ○ Միջատասպան ցրիչներ և վանող միջոցներ ○ Մրջյունների, խավարասերների և կրծողների դեմ պայքարի ապրանքներ ○ Միջատների թակարդներ և խայծի կայաններ ○ Մոծակների դեմ պայքարի ապրանքներ Օգտագործեք ձեր ներծրագրային շտրիխ կոդերի սկաները՝ հաստատված ապրանքները մանրածախ առևտրի վայրերում գտնելու կամ անդամի պորտալ մուտք գործելու համար: ● **Տան վարձավճարի աջակցություն** Դուք կարող եք օգտագործել ձեր քարտն՝ օգնելու ձեր տան վարձավճարի ծախսերին: Մուտք գործեք ձեր վարձակալության/հիփոթեքային մատակարարի վճարման պորտալ կամ վճարեք ձեր վարձավճարը ուղղակիորեն, եթե քարտային վճարումները ընդունվում են: Ձեր քարտը կարող է օգտագործվել միայն մինչև առկա նպաստի չափը: Քարտը չի կարող օգտագործվել ավտոմատ կրկնվող վճարումներ կարգավորելու համար: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հատուկ լրացուցիչ նպաստներ քրոնիկ հիվանդների համար (շարունակություն) • **Ուղեկից ռոբոտ-կենդանի** Դուք կարող եք պատվիրել ռոբոտ-ընկերակից կենդանի մասնակցի պորտալի միջոցով: Հասանելի տարբերակները կարող են ներառել ընկերակից կատու, շուն կամ թռչուն: Այս ընտանի կենդանիները նախագծված են մխիթարություն/հանգստություն և ընկերակցություն ապահովելու համար՝ աջակցելու ընդհանուր բարեկեցությանը: Ձեր քարտը կարող է օգտագործվել միայն մինչև առկա նպաստի չափը: Մուտք գործեք ձեր մասնակցի պորտալ կամ կապ հաստատեք մեզ հետ՝ պատվիրելու եղանակի և հասանելի տարբերակների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար: • **Կոմունալ ծառայությունների աջակցություն** Դուք կարող եք օգտագործել ձեր քարտն՝ օգնելու ձեր տան կոմունալ ծառայությունների ծախսերին: Մուտք գործեք անմիջապես ձեր կոմունալ ծառայությունների մատակարարի պորտալ և վճարեք ձեր քարտով: Քարտը չի կարող օգտագործվել ավտոմատ կրկնվող վճարումներ կարգավորելու համար: Ձեր քարտը կարող է օգտագործվել միայն մինչև առկա նպաստի չափը: Այս նպաստի համար հաստատված ծախսերը ներառում են. ○ Էլեկտրաէներգիայի, գազի, սանիտարական/աղբի և ջրի կոմունալ ծառայություններ ○ Ֆիքսված և բջջային հեռախոսի սպասարկում ○ Ինտերնետ ծառայություն ○ Կաբելային TV ծառայություններ (բացառությամբ հեռարձակվող ծառայությունների) ○ Որոշ նավթային ծախսեր, ինչպիսիք են տան ջեռուցման յուղը Նպաստը չի ներառում առցանց ժամանցային ծառայությունները, այդ թվում՝ խաղային և ստրիմինգային (ինչպիսիք են երաժշտական և ընթերցանության հարթակները) և բաժանորդագրության վրա հիմնված այլ ծառայությունները:	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Վերահսկվող մարզումային թերապիա (SET) Մենք վճարում ենք SET-ի համար այն անդամների դեպքում, որոնք ունեն վերջույթների անոթների ախտանշանային հիվանդություն (PAD) և որոնք ունեն PAD-ի ուղեգիր՝ տրված PAD-ը բուժող բժշկի կողմից: Մեր ծրագիրը վճարում է. • 12 շաբաթվա ընթացքում մինչև 36 **աշխատաշրջան**, եթե SET-ի բոլոր պահանջները բավարարված են • լրացուցիչ 36 աշխատաշրջան ժամանակի ընթացքում, եթե առողջապահական խնամք մատակարարի կողմից համարվի բժշկական տեսակետից անհրաժեշտ SET ծրագիրը պետք է լինի՝ • 30-ից 60 րոպե տևողությամբ PAD-ի ծրագրի թերապևտիկ մարզումային-վարժանքային աշխատաշրջաններ այն անդամների համար, որոնք արյան վատ շրջանառության պատճառով ունեն ոտքի ջղաձգումներ (կաղություն) • պետք է առաջարկվի հիվանդանոցի ամբուլատոր պայմաններում կամ բժշկի գրասենյակում • պետք է իրականացվի որակավորված աշխատակցի կողմից, որը պետք է ապահովի նպաստի առավելությունը վնասի հանդեպ և որը վերապատրաստված է PAD-ի մարզումային թերապիայի համար • բժշկի, բժշկի օգնականի (PA) կամ բուժքույր-պրակտիկանտի (NP)/կլինիկական բուժքույր-մասնագետի (CNS) անմիջական հսկողության ներքո, ովքեր վերապատրաստվել են ինչպես կյանքի հիմնական, այնպես էլ ընդլայնված աջակցման տեխնիկայի ոլորտում	$0 *Կարող է ուղեգիր պահանջվել*:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Փոխադրում. Ոչ հրատապ բժշկական փոխադրում Այս նպաստը հնարավորություն է տալիս բժշկական փոխադրումներ կատարել ձեր պլանի և Medicare-ի կողմից ապահովագրված ծառայության համար: Այն կարող է ներառել՝ շտապ օգնության մեքենա, պատգարակի տեղափոխման ֆուրգոն կամ անվասայլակի ֆուրգոնի բժշկական փոխադրման ծառայություններ, ինչպես նաև համակարգում պարափոխադրման համար: Այս տեսակի փոխադրումը թույլատրվում է. ● Բժշկական ծառայությունների ձեր մատակարարը որոշում է, որ ձեր բժշկական և/կամ ֆիզիկական վիճակը թույլ չի տալիս ձեզ երթևեկել ավտոբուսով, մարդատար մեքենայով, տաքսիով կամ հանրային կամ մասնավոր տրանսպորտի այլ տեսակով, **և** անհրաժեշտ է նախնական թույլտվություն, և դուք պետք է զանգահարեք ձեր պլանին՝ ուղևորությունը կազմակերպելու համար: Մուտքագրեք ձեր հեռախոսահամարը ձեր ID քարտի հետևի մասում, որպեսզի լրացնեք ձեր հեռախոսահամարը:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*
	Փոխադրում. Ոչ բժշկական փոխադրում Այս նպաստը մեքենայով, տաքսիով կամ այլ տեսակի հասարակական/մասնավոր փոխադրամիջոցով փոխադրում է թույլ տալիս բժշկական ծառայություններ ստանալու համար: Պահանջվում է տրանսպորտ՝ Medi-Cal-ի կողմից ապահովագրված անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար, ներառյալ ատամնաբուժական տեսակցությունների ճանապարհորդությունը և դեղեր վերցնելը: Medi-Cal-ի և Medicare-ի կողմից պատշաճ կերպով ապահովագրված ծառայությունների համար փոխադրումը ապահովագրվում է: Մուտքագրեք ձեր հեռախոսահամարը ձեր ID քարտի հետևի մասում, որպեսզի լրացնեք ձեր հեռախոսահամարը:	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:* *Կարող է ուղեգիր պահանջվել:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հրատապ անհրաժեշտ խնամք Շտապ անհրաժեշտ բուժսպասարկումն այն խնամքն է, որը տրամադրվում է բուժման համար՝ ● ոչ արտակարգ իրավիճակ, որն անհապաղ բժշկական խնամք է պահանջում, **կամ** ● անսպասելի հիվանդություն, **կամ** ● վնասվածք կամ վնասվածք ● վիճակ, որի համար անմիջապես խնամք է հարկավոր: Եթե ձեզ շտապ անհրաժեշտ բուժսպասարկում է հարկավոր, դուք պետք է նախ փորձեք ստանալ այն ցանցային մատակարարից: Այնուամենայնիվ, դուք կարող եք օգտվել արտացանցային մատակարարներից, երբ չեք կարող հասնել ցանցային մատակարարի, քանի որ ձեր ժամի, տեղի և հանգամանքների պատճառով հնարավոր չէ կամ անհիմն է այս ծառայությունները ստանալ ցանցային մատակարարներից (օրինակ, երբ ծրագրի սպասարկման տարածքից դուրս եք, և ձեզ անհապաղ բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայություններ են պետք չնախատեսված վիճակի համար, բայց դա բժշկական արտակարգ իրավիճակ չէ): Միջազգային արտակարգ իրավիճակ/հրատապ ապահովագրություն. Սահմանվում է որպես հրատապ, շտապ կամ հետկայունացման խնամք, որը ստացվել է Միացյալ Նահանգներից դուրս: ● Սահմանափակվում է միայն այն ծառայություններով, որոնք կդասակարգվեին որպես շտապ, հրատապ պահանջվող կամ հետկայունացման խնամք, եթե նրանք տրամադրվեին Միացյալ Նահանգներում: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0 $115 համավճար Ամբողջ աշխարհում շտապ օգնության բաժանմունքի/ շտապ անհրաժեշտ ծառայությունների այցելության ծախսերի մասնաբաժինը չի հանվում, եթե դուք ընդունվում եք ստացիոնար հիվանդանոցային խնամքի համար:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Հրատապ անհրաժեշտ խնամք (շարունակություն) • Շտապ օգնության մեքենայի ծառայություններն ապահովագրվում են այն իրավիճակներում, երբ շտապ օգնության սենյակ որևէ այլ միջոցով գնալը կարող է վտանգել ձեր առողջությունը: • Արտասահմանյան հարկերն ու վճարները (այդ թվում, սակայն առանց սահմանափակման՝ դրամի փոխանակում կամ գործարկի վճարներ) ապահովագրված չեն: Միացյալ Նահանգներ նշանակում է 50 նահանգ, District of Columbia, Puerto Rico, the Virgin Islands, Guam, the Northern Mariana Islands, և American Samoa	Միջազգային արտակարգ իրավիճակի/ հրատապ ապահովագրությունն ունի տարեկան $50,000 սահմանափակում:
	Տեսողության խնամք Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝ • աչքի պլանային զննում մեկ անգամ յուրաքանչյուր տարի, **և** • մինչև $100 ակնոցների համար (շրջանակներ և լինզաներ) կամ մինչև $100 կոնտակտային ոսպնյակներ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ Մենք վճարում ենք բժշկի ամբուլատոր ծառայությունների համար աչքի հիվանդությունների ու վնասվածքների ախտորոշման ու բուժման համար: Օրինակ՝ տարիքային մակուլյար դեգեներացիայի բուժումը: Գլաուկոմայի բարձր վտանգ ունեցող մարդկանց համար մենք կվճարենք տարեկան մեկ գլաուկոմայի զննման համար: Գլաուկոմայի բարձր վտանգ ունեցող մարդկանցից են՝ • գլաուկոմայի ընտանեկան պատմություն ունեցող մարդիկ • շաքարախտով հիվանդ մարդիկ • 50 և ավելի բարձր տարիքի աֆրոամերիկացիներ • 65 և ավելի բարձր տարիքի հիսպանիկ ամերիկացիներ **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0 *Կարող է պահանջվել նախնական թույլտվություն:*

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն	Ինչ եք դուք վճարում
Տեսողության խնամք (շարունակություն) Շաքարային դիաբետ ունեցող մարդկանց համար մենք վճարում ենք դիաբետիկ ռետինոպաթիայի համար՝ տարին մեկ անգամ: Մենք վճարում ենք մեկ զույգ ակնոցի կամ հպովի ոսպնյակների համար՝ կատարակտի յուրաքանչյուր վիրահատությունից հետո, որը ներառում է ներակնային ոսպնյակների տեղադրում: Եթե ձեզ արվել են կատարակտի երկու առանձին վիրահատություններ, դուք պետք է ստանաք մեկ զույգ ակնոց յուրաքանչյուր վիրահատությունից հետո: Դուք չեք կարող ստանալ երկու զույգ ակնոց երկրորդ վիրահատությունից հետո, նույնիսկ եթե առաջին վիրահատությունից հետո ակնոց չեք ստացել: **Բացի այդ, մեր ծրագիրը ներառում է հետևյալ լրացուցիչ (այսինքն՝ սովորական) տեսողական ծառայությունները.** ● Աչքի պլանային զննում Ամեն տարի աչքի պլանային 1 զննում: Աչքի պլանային զննումը ներառում է գլաուկոմայի թեստ՝ գլաուկոմայի վտանգի տակ գտնվող մարդկանց համար և ցանցաթաղանթի հետազոտություն՝ դիաբետիկների համար: ● Հարմար է աչքի համար Սահմանափակվում է 1 այցելությամբ ամեն տարի: Ակնոցների/օպտիկական պարագաների հարմարեցման համար այցելությունը աչքի սովորական հետազոտություն չէ: Ծառայությունները ներառում են ակնոցների/օպտիկական պարագաների (կոնտակտային ոսպնյակներ, ակնոցների շրջանակներ/ոսպնյակներ) հարմարեցումը: ● Ակնոցներ/օպտիկական պարագաներ Անսահմանափակ դեղատոմսով ակնոցներ՝ ամեն տարի մինչև $100 առավելագույն նպաստ: Ապահովագրված ակնոցները ներառում են հետևյալներից որևէ մեկը. ● Ակնոցներ (շրջանակ և ոսպնյակներ) կամ ● Միայն ակնոցի ոսպնյակներ կամ **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Տեսողության խնամք (շարունակություն) ● Միայն ակնոցի շրջանակներ կամ ● Կոնտակտային ոսպնյակներ ակնոցի փոխարեն կամ ● Տեսողության ապարատային արդիականացում **Նշում.** Կոնտակտային ոսպնյակների տեղադրման վճարն ապահովագրված է պլանով: Պլանի նպաստի առավելագույն ծածկույթը՝ $100 ամեն տարի, վերաբերում է շրջանակների և/կամ ոսպնյակների մանրածախ արժեքին (ներառյալ ոսպնյակների ցանկացած տարբերակներ, ինչպիսիք են երանգավորումներն ու ծածկույթները): Դուք պատասխանատվություն եք կրում լրացուցիչ (այսինքն՝ սովորական) ակնոցների համար ամեն տարի առավելագույն նպաստից բարձր ցանկացած ծախսերի համար:* Medicare-ով ապահովագրված ակնոցները ներառված չեն լրացուցիչ (այսինքն՝ սովորական) նպաստի առավելագույն չափում: Անդամները չեն կարող օգտագործել իրենց լրացուցիչ ակնոցների նպաստը՝ Medicare-ով ապահովագրված ակնոցների իրենց ծածկույթը մեծացնելու համար. Սովորական տեսողության ծառայությունների ծածկույթը ծրագրի կողմից առաջարկվող լրացուցիչ նպաստն է:	
	«Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այց Մենք ապահովագրում ենք մեկանգամյա «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այց: Այս այցը ներառում է. ● ձեր առողջության ուսումնասիրություն, ● կրթություն ու խորհրդատվություն ձեզ հարկավոր կանխարգելիչ ծառայությունների վերաբերյալ (այդ թվում՝ զննումներ ու սրսկումներ), **և** ● խնամք ստանալու ուղեգրեր, եթե անհրաժեշտ է: **Ծանոթություն.** Մենք ապահովագրում ենք «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցը միայն առաջին 12 ամսվա ընթացքում, երբ դուք Medicare Part B ունեք: Երբ դուք նշանակում եք ձեր այցը, տեղեկացրեք ձեր բժշկի գրասենյակը, որ ցանկանում եք նշանակել ձեր «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցը:	$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Wellcare Spendables® Դուք կստանաք **$113 ամսական** նախապես բեռնված ձեր Wellcare Spendables®- ի վրա՝ OTC ապրանքների, ատամնաբուժական, տեսողության և լսողության ծառայությունների վրա ծախսելու համար և եթե համապատասխանում եք SSBCI-ին: ● Ձեր ամսական նպաստը**կտեղափոխվի հաջորդ ամիս, եթե այն չօգտագործվի և կավարտվի ծրագրային տարվա վերջին:** **Ձեր քարտի նպաստը կարելի է օգտագործել հետևյալի համար.** **Առանց դեղատոմսի (OTC) պարագաներ.** ուք կարող եք օգտագործել ձեր քարտը մասնակից մանրածախ առևտրի կետերում առանց դեղատոմսի տրվող (OTC) ապրանքներ գնելու համար, բջջային հավելվածի միջոցով կամ մուտք գործելով ձեր մասնակցի պորտալ՝ առաքում տուն պատվիրելու համար: Ծածկվող OTC ապրանքները ներառում են՝ ● Ալերգիայի, մրսածության, հազի, գրիպի և հարբուխի դեմ ապրանքներ ● Ցավազրկող, մարսողական առողջության և քնի աջակցման ապրանքներ ● Վիտամիններ և հավելումներ ● Առաջին օգնության պարագաներ և առանց դեղատոմսի բժշկական պարագաներ ● Բերանի խոռոչի, աչքերի և ականջների խնամքի ընդհանուր ապրանքներ ● Անմիզապահության պարագաներ, կանանց հիգիենայի/ առողջության ապրանքներ և ամենօրյա կենցաղային օժանդակ միջոցներ Օգտագործեք հավելվածի շտրիխ-կոդի սկաները՝ մանրածախ առևտրի կետերում հաստատված ապրանքները գտնելու համար, կամ մուտք գործեք ձեր մասնակցի պորտալ **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	$0

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Wellcare Spendables®(շարունակություն) **Նշում**. որոշակի հանգամանքներում ախտորոշիչ սարքավորումները և ծխելը դադարեցնելու օժանդակ միջոցներն ապահովագրված են ծրագրի բժշկական նպաստների ներքո: Դուք պետք է (հնարավորության դեպքում) օգտվեք մեր ծրագրի բժշկական նպաստներից՝ նախքան այս ապրանքների համար ձեր OTC նպաստը ծախսելը: **Ստորև նշված նպաստները SSBCI-ի մաս են կազմում: Ոչ բոլոր անդամները կորակավորվեն: Դուք պետք է համապատասխանեք պլանի հետևյալ նպաստների համար իրավասության չափանիշներին:** **Եթե դուք որակավորվեք, ձեր քարտի ամսական նպաստը կարող է օգտագործվել նաև հետևյալի համար.** • Պոմպայի մոտ վճարվող մեքենայի վառելիք • Առողջ սնունդ • Անձնական խնամքի պարագաներ • Վնասատուների դեմ պայքարի միջոցներ • Տան վարձավճարի աջակցություն • Ուղեկից ռոբոտ-կենդանի • Կոմունալ ծառայությունների աջակցություն Քրոնիկ հիվանդների համար հատուկ լրացուցիչ նպաստների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարդացեք այս աղյուսակում ներկայացված Քրոնիկ հիվանդների համար հատուկ լրացուցիչ նպաստ (SSBCI) բաժինը: **<u>Ինչպես օգտագործել ձեր քարտը</u>.** 1. Ակտիվացրեք ձեր քարտը օգտագործելուց առաջ: 2. Այցելեք մասնակից մանրածախ վաճառողի, մուտք գործեք ստորև նշված պորտալի հղումով կամ ներբեռնեք Wellcare Spendables®-ի բջջային հավելվածը: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Wellcare Spendables®(շարունակություն) 3. Ընտրեք ձեր հաստատված ապրանքները/ծառայությունները: 4. Խանութում անցեք մանրածախ վաճառողի դրամարկղին և վճարեք ձեր Wellcare Spendables® քարտով: Առցանց կամ բջջային հավելվածի միջոցով պատվերների համար մուտք գործեք հասանելիության համար և օգտագործեք ձեր նպաստը: 5. Ձեր քարտը վարկային քարտ չէ, բայց կարող է մուտքագրվել որպես «վարկային» վճարման համար: Եթե պահանջվի, մուտքագրեք ձեր ստեղծած PIN-ը՝ ձեր քարտն ակտիվացնելիս: **Լրացուցիչ տեղեկություններ, որ դուք պետք է իմանաք:** ● Երբ դուք օգտագործեք ձեր ծախսերի նպաստը, դուք պատասխանատու եք ձեր գնումների մնացած արժեքի համար: ● Խանութում գնված ապրանքները կարող են վերադարձվել մանրածախ վաճառողներին՝ վերադարձի և փոխանակման քաղաքականության համաձայն: ● Եթե ձեր քարտը չի գործում, ինչպես հարկն է կամ չի գործում տեխնիկական խնդրի պատճառով, ապա կապ հաստատեք ներքևում նշված հեռախոսահամարով: ● Wellcare-ը պատասխանատվություն չի կրում կորցրված կամ գողացված քարտերի համար: ● Wellcare Spendables® քարտը նախատեսված է միայն ձեր անձնական օգտագործման համար, չի կարող վաճառվել կամ փոխանցվել և չունի կանխիկ արժեք: **Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:**	

Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայություն		Ինչ եք դուք վճարում
	Wellcare Spendables®(շարունակություն) • Որոշակի նպաստներ կարող են ենթակա լինել փոխհատուցման, եթե վճարումն անհաջող է եղել: Կապվեք մեզ հետ կամ անդամների հարթակի միջոցով ուղարկեք փոխհատուցման հարցում՝ վերանայման համար: Փոխհատուցման հայտերը պետք է ներկայացվեն այն ծրագրային տարվա ընթացքում, որում ձեռք է բերվել ապրանքը կամ ծառայությունը: Որակավորվող գնումները հաստատելու համար կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն: • Կարող են կիրառվել սահմանափակումներ և բացառություններ, փոխհատուցվում են միայն հաստատված ապրանքները: • Սա Medicaid նպաստ չէ: **Wellcare Spendables® քարտի մասին լրացուցիչ տեղեկությունների կամ կատալոգ խնդրելու համար զանգահարեք** 1-800-431-9007, TTY օգտատերերը պետք է զանգեն 711: Սպասարկման ժամերն են. Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից մինչև 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից մինչև 8 p.m.: **Դուք կարող եք նաև այցելել առցանց հետևյալ հղումով՝** go.wellcare.com/member	

E. Համայնքի աջակցություն

Դուք կարող եք աջակցություն ստանալ ձեր Անհատականացված խնամքի ծրագրի շրջանակներում: Համայնքային աջակցությունը բժշկական տեսակետից համապատասխան և ծախսարդյունավետ այլընտրանքային ծառայություններ կամ կարգավորումներ են, որոնք փոխհատուցվում են Medi-Cal Նահանգային պլանի միջոցով: Այս ծառայությունները ընտրովի են անդամների համար: Եթե Դուք համապատասխանում եք, այս ծառայությունները կարող են օգնել ձեզ ավելի անկախ ապրել: Դրանք չեն փոխարինում այն նպաստները, որոնք դուք արդեն ստանում եք Medi-Cal.-ի միջոցով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Համայնքի աջակցության օրինակները, որոնք մենք առաջարկում ենք, ներառում են բժշկական աջակցող սնունդ և սնունդ կամ բժշկական հարմարեցված կերակուրներ, օգնություն ձեզ կամ ձեր խնամակալին, կամ ցնցուղի բռնակներ և թեքահարթակներ:

Եթե օգնության կարիք ունեք կամ ցանկանում եք պարզել, թե որ Համայնքի աջակցությունը կարող է հասանելի լինել ձեզ համար, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-800-431-9007 (TTY՝ 711) կամ զանգահարեք ձեր բուժսպասարկման մատակարարին:

Ծառայություններ՝ ուղղված անօթևանների խնդիրները լուծելուն և բնակարանային ապահովություն ստեղծելուն.

Համայնքային աջակցություն	**Ինչ դուք կարող եք ստանալ**
Ժամանակավոր բնակարան Նավիգացիոն ծառայություններ	**Օգնություն բնակարան ձեռք բերելու հարցում**. Սա կարող է ներառել հետևյալ օգնությունը. ● Բնակության վայրի որոնում: ● Ինչպես դիմել բնակարան ստանալու համար: ● Բնակարանային աջակցության ծրագրի կազմում. Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե**. ● Ցուցակագրված եք բնակարանային օգնության համար՝ անօթևանների տեղական Coordinated Entry System համակարգի կամ նմանատիպ այլ համակարգի միջոցով: ● Անօթևան եք ● Անօթևան դառնալու վտանգի առաջ եք
Բնակարանների վարձակալության և պահպանման ծառայություններ	Օգնություն՝ **տուն տեղափոխվելուց հետո ձեր բնակարանը պահելու հարցում**: Սա կարող է ներառել աջակցություն բյուջետավորման, ժամանակին վարձակալության վճարները վճարելու և վարձակալության պայմանագրի ձեր իրավունքների և պարտականությունների հարցերում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Համայնքային աջակցություն	Ինչ դուք կարող եք ստանալ
	Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե**. ● Ժամանակավոր բնակարան/Նավիգացիոն ծառայություններ: ● Ցուցակագրված եք բնակարանային օգնության համար՝ անօթևանների տեղական Coordinated Entry System համակարգի կամ նմանատիպ այլ համակարգի միջոցով: ● Ներկայումս անօթևան եք: ● Անօթևան լինելու վտանգի առաջ եք:
Բնակարանային ավանդներ	**Օգնություն բնակարան ձեռք բերելու հարցում**. Սա ներառում է. ● Վարձակալություն ստանալու համար երաշխիքային ավանդներ ● Կոմունալ ծառայությունների առաջին ամսվա ծախսի փոխհատուցում ● Առաջին և վերջին ամսվա վարձավճարը, եթե դա պահանջվում է տեղափոխվելուց առաջ: Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե**. ● Ժամանակավոր բնակարան/Նավիգացիոն ծառայություններ: ● Ցուցակագրված եք բնակարանային օգնության համար՝ անօթևանների տեղական Համակարգված մուտքի համակարգի կամ նմանատիպ այլ համակարգի միջոցով: ● Անօթևան եք

Վերականգնողական ծառայություններ.

Համայնքային աջակցություն	**Ինչ դուք կարող եք ստանալ**
Վերականգնողական խնամք (ժամանակավոր բժշկական խնամք՝ խնամակալի բացակայության պայմաններում)	**Կարճաժամկետ բնակարանային խնամք նրանց համար, ովքեր այլևս հիվանդանոցում գտնվելու կարիք չունեն, բայց դեռ պետք է ապաքինվեն վնասվածքից կամ հիվանդությունից:** Ծառայությունները հասանելի են բոլոր վարչաշրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե.** ● Հոսպիտալացման վտանգի տակ եք կամ հոսպիտալացումից հետո վերականգնվում եք: ● Ապրում եք մենակ՝ առանց պաշտոնական աջակցության: ● Ձեր բնակարանային պայմանները անվտանգ չեն կամ ունեք բնակարան, որն առանց փոփոխության օգտագործելու դեպքում կվտանգի ձեր առողջությունն ու անվտանգությունը:
Խնամակալի բացակայության պայմաններում իրականացվող ժամանակավոր խնամք	**Կարճաժամկետ օգնություն, որը տրամադրվում է այն անձանց խնամողներին, որոնք կարիք ունեն խնամքի կամ աջակցության՝ կարճաժամկետ հիմքով:** Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե.** ● Ապրում եք այնպիսի վայրում, որը սահմանափակում է ձեր ամենօրյա գործունեությունը: ● Խնամողի կարիք ունեք, որպեսզի Ձեզ աջակցություն տրամադրի: ● Խնամողի օգնություն է անհրաժեշտ՝ բուժքույրական տանը կամ նման վայրում ապրելուց խուսափելու համար:

Համայնքային աջակցություն	Ինչ դուք կարող եք ստանալ
Սթափեցման կենտրոններ	**Վայր, որտեղ դուք կարող եք օգնություն ստանալ ալկոհոլի կամ խմելու հետ կապված խնդիրների վերաբերյալ, այլ ոչ թե տարվեք շտապ օգնության բաժանմունք կամ բերման ենթարկվեք ոստիկանություն:** Ծառայությունները հասանելի են բոլոր վարչաշրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե.** ● 18 տարեկան եք և բարձր, հարբած. ● Տարվել եք շտապ օգնության բաժանմունք կամ բերման եք ենթարկվել ոստիկանություն: ● Ուղարկվել եք շտապ օգնության բաժանմունք և համապատասխանում եք սթափեցնող կենտրոն ուղարկվելու համար:

Երկարաժամկետ ծառայություններ տան նման միջավայրում՝ բարեկեցության ապահովման համար.

Համայնքային աջակցություն	Ինչ դուք կարող եք ստանալ
Ասթմայի բուժում	**Տան փոփոխություններ՝ ասթմային նպաստող վնասակար գործոններից ազատվելու համար:** Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթեcc.** ● Վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել եք վատ վերահսկվող ասթմա, ինչպես սահմանվել է. ○ Շտապօգնության բաժանմունք այցելության ժամանակ: ○ Հիվանդանոց ընդունվելիս: ○ Հիվանդ լինելով կամ հրատապ բուժօգնության համար երկու այցելության ժամանակ: ● Ասթմայի վերահսկման թեստի արդյունքում ունեք 19 կամ ավելի ցածր միավոր:

Համայնքային աջակցություն	**Ինչ դուք կարող եք ստանալ**
Օրվա հաբիլիտացիա	**Ծրագրեր, որոնք տրվում են, որպեսզի օգնեն ձեզ ձեռք բերել տնային միջավայրում ապրելու համար անհրաժեշտ հմտություններ:** Դրանք կարող են ներառել ուսուցում հասարակական տրանսպորտից օգտվելու կամ կերակուր պատրաստելու հմտությունների վերաբերյալ: Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե**. ● Անօթևան եք ● Այլևս անօթևան չեք և վերջին 24 ամիսների ընթացքում տեղափոխվել եք բնակարան: ● Անօթևան դառնալու վտանգի առաջ եք: Կամ ձեր տան պայմանների նման միջավայրը կարող է բարելավվել:
Բնապահպանական Հարմարավետության ադապտացիա	**Ձեր տան պայմանների փոփոխություններ ձեր առողջության և անվտանգության համար**: Նաև փոփոխություններ, որոնք թույլ են տալիս ազատ գործել տանը: Դրանք կարող են ներառել թեքահարթակներ և կողպեքներ: Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե**. ● Բուժքույրական տուն տեղափոխվելու վտանգի առաջ եք:

Համայնքային աջակցություն	Ինչ դուք կարող եք ստանալ
Սնունդ/Բժշկական տեսանկյունից հարմարեցված սնունդ	**Ուտեստներ, որոնք առաքվում են ձեր տուն, որոնք պատրաստվում և եփվում են ձեր առողջության և սննդակարգային կարիքների հիման վրա**: Սա ներառում է հիվանդանոցից դուրս գրվելուց հետո անհրաժեշտ սնունդը: Ծառայությունները հասանելի են բոլոր շրջաններում: **Դուք կարող եք ստանալ ծառայությունները, եթե**. ● Ունեք քրոնիկական հիվանդություններ: ● Դուրս եք գրվել հիվանդանոցից կամ բուժքույրական տնից: ● Հիվանդանոց կամ բուժքույրական տուն տեղափոխվելու բարձր ռիսկ կա: ● Խնամքի հետ կապված հիմնական կարիքներ ունեք: ● Գնահատվում եք գրանցված դիետոլոգի կամ լիցենզավորված սննդաբան-մասնագետի կողմից:

Եթե օգնության կարիք ունեք կամ ցանկանում եք պարզել, թե որ Համայնքի աջակցությունը կարող է հասանելի լինել ձեզ համար, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-800-431-9007 (TTY՝ 711) կամ զանգահարեք ձեր բուժսպասարկման մատակարարին:

F. Նպաստներ, որոնք ապահովագրված են մեր պլանից դուրս

Մենք չենք ապահովագրում հետևյալ ծառայությունները, բայց դրանք հասանելի են Medi-Cal-ի վճարովի ծառայության միջոցով:

F1. California-ի համայնքային անցումներ (CCT)

California-ի համայնքային անցումները (CCT) ծրագիր է, որն օգտագործում է տեղային Առաջատար կազմակերպությունները, որպեսզի օգնի իրավասու Medi-Cal շահառուներին, որոնք առնվազն 60 օր շարունակ բնակվել են ստացիոնար հաստատությունում, հետ վերադառնալ և ապահով կերպով մնալ համայնքային միջավայրում: CCT ծրագիրը ֆինանսավորում է անցումների համակարգման ծառայությունները նախաանցումային շրջանի ընթացքում և անցումից հետո 365 օրվա ընթացքում, որպեսզի օգնի շահառուներին կրկին վերադառնալ համայնքային միջավայր:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Դուք կարող եք ստանալ անցումային ծառայություններ CCT Առաջատար կազմակերպությունների կողմից Ձեր վարչաշրջանում: CCT Առաջատար կազմակերպությունների և վարչաշրջանների ցանկը, որտեղ նրանք սպասարկում են, կարող եք գտնել Առողջապահության դեպարտամենտի վեբ կայքում՝ www.dhcs.ca.gov/services/ltc/Pages/CCT:

CCT անցումների համակարգման ծառայությունների համար.

Medi-Cal-ը վճարում է անցումային համակարգման ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այդ ծառայությունների համար:

Ձեր CCT անցմանը չվերաբերվող ծառայությունների համար.

Մատակարարը վճարում է մեզ ձեր ծառայությունների համար: Մեր ծրագիրը վճարում է ձեր անցումից հետո մատուցվող ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այդ ծառայությունների համար:

CCT-ի նախափոխադրման ծառայություններից օգտվելու ժամանակահատվածում մեր վճարած ծառայությունների մասին լրացուցիչ նշված են Նպաստների աղյուսակի **Բաժին D**-ում:

Դեղերի փոխհատուցման նպաստի փոփոխություն չկա

CCT ծրագիրը **չի** ապահովագրում դեղերը: Դուք շարունակում եք ստանալ ձեր սովորական դեղի նպաստը մեր ծրագրի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 5**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

Նշում. Եթե ձեզ ոչ CCT անցումային խնամք է հարկավոր, զանգահարեք ձեր գործի համակարգողին ծառայությունները կազմակերպելու համար: Ոչ CCT անցումային խնամքը հաստատությունից ձեր անցումին **չվերաբերվող** խնամքն է:

F2. Medi-Cal Ատամնաբուժական ծրագիր

Որոշ ատամնաբուժական ծառայություններ հասանելի Medi-Cal Ատամնաբուժական ծրագրի միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են SmileCalifornia.org կայքում: Medi-Cal Ատամնաբուժական ծրագիրն, ի թիվս այլոց, ներառում է այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝

- նախնական ստուգումներ, ռենտգեն, ատամների մաքրում, սիլանտներ և ֆտորիդով բուժումներ
- վերականգնումներ ու պսակներ
- ատամնախողովակների թերապիա
- մասնակի և ամբողջական պրոթեզներ, շտկումներ, վերանորոգումներ և հենարաններ

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Լրացուցիչ տեղեկությունների համար, կամ եթե ձեզ օգնություն է հարկավոր Medi-Cal ընդունող ատամնաբույժ գտնելու հարցում, դիմեք հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-322-6384 հեռախոսահամարով (TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-735-2922): Զանգն անվճար է: Medi-Cal Ատամնաբուժական ծրագրի ներկայացուցիչները հասանելի են՝ օգնելու ձեզ երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից 5 p.m.-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նաև այցելել smilecalifornia.org/ կայք:

Sacramento և Los Angeles վարչաշրջաններում դուք կարող եք ստանալ Medi-Cal ատամնաբուժական նպաստներ Ատամնաբուժական կառավարվող խնամք (Ատամնաբուժական MCP) ծրագրի միջոցով: Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ Medi-Cal ատամնաբուժական ծրագրերի մասին կամ եթե ցանկանում եք փոփոխություններ անել, դիմեք Առողջապահական խնամքի տարբերակների բաժին՝ 1-800-430-4263 հեռախոսահամարով (TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-430-7077), երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից 6 p.m.-ը: Զանգն անվճար է: DMC կոնտակտները հասանելի են նաև այստեղ՝ www.dhcs.ca.gov/services/Pages/ManagedCarePlanDirectory.aspx:

www.hpsm.org/dental

Նշում. Մեր ծրագիրն առաջարկում է լրացուցիչ ատամնաբուժական ծառայություններ: Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք **Բաժին D**-ի Նպաստների աղյուսակը:

F3. Տնային աջակցման ծառայություններ (IHSS)

- IHSS ծրագիրը կօգնի ձեզ գրանցված խնամքի մատակարարներին վճարել ձեզ մատուցվող ծառայությունների համար, որպեսզի դուք կարողանաք ապահով մնալ ձեր սեփական տանը: IHSS-ը համարվում է տնից դուրս խնամքի այլընտրանք, ինչպիսիք են բուժքույրական տները կամ գիշերօթիկ և խնամքի հաստատությունները:
- Ծառայություններ ստանալու համար կատարվում է գնահատում՝ որոշելու համար, թե ինչ տեսակի ծառայություններ կարող են թույլատրվել յուրաքանչյուր մասնակցի համար՝ նրանց կարիքների հիման վրա: Ծառայությունների տեսակները, որոնք կարող են թույլատրվել IHSS-ի միջոցով՝ տնային մաքրություն, ճաշի պատրաստում, լվացք, մթերային գնումներ, անձնական խնամքի ծառայություններ (օրինակ՝ աղիների և միզապարկի խնամք, լոգանք, խնամք և պարամեդիկական ծառայություններ), բժշկական տեսակցություններին ուղեկցելը և պաշտպանական հսկողությունը մտավոր խնդիրներ ունեցողների համար:
- Ձեր բուժսպասարկման համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել IHSS-ի համար ձեր վարչաշրջանի սոցիալական ծառայության գործակալությունում: Շրջանի սոցիալական ծառայության գործակալության հետ կապ հաստատելու համար տե՛ս **Գլուխ 2**-ի Բաժին J-ն:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

F4. 1915(c) Տան և համայնքի վրա հիմնված ծառայություններից (HCBS) հրաժարման ծրագրեր

Աջակցությամբ ապրելու հրաժարում (ALW)

- Աջակցությամբ ապրելու հրաժարումը (ALW) Medi-Cal-ի իրավասու շահառուներին առաջարկում է աջակցվող միջավայրում բնակվելու ընտրություն՝ որպես բուժքույրական հաստատությունում երկարաժամկետ տեղավորման այլընտրանք: ALW-ի նպատակն է հեշտացնել բուժքույրական հաստատությունից անցումը դեպի տնային և համայնքային միջավայր կամ կանխել հմուտ բուժքույրական հաստատություն ընդունելությունը այն շահառուների համար, ովքեր բուժքույրական հաստատությունում տեղավորվելու անմիջական կարիք ունեն:

- Այն անդամները, որոնք ընդգրկված են ALW-ում, կարող են մնալ գրանցված ALW-ում՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր ALW բուժսպասարկման համակարգող գործակալության հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:

- Այս պահին ALW-ն հասանելի է միայն հետևյալ վարչաշրջանում. Los Angeles:

- Ձեր բուժսպասարկման համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել ALW-ի համար: Մասնակից ALW բուժսպասարկման համակարգող գործակալությունների ընթացիկ ցանկի համար անցեք https://www.dhcs.ca.gov/services/ltc/Pages/AssistedLivingWaiver.aspx կայք:

HCBS հրաժարում Զարգացման հաշմանդամություն (HCBS-DD) ունեցող կալիֆորնիացիների համար

California-ի Ինքնորոշման ծրագրից (SDP) հրաժարում Զարգացման հաշմանդամություն ունեցող անձանց համար

- Գոյություն ունի 1915(c) երկու հրաժարում՝ HCBS-DD հրաժարումը և SDP հրաժարումը, որոնք ծառայություններ են մատուցում այն մարդկանց, ում մոտ ախտորոշվել է զարգացման հաշմանդամություն, որը սկսվում է մինչև անհատի ծննդյան 18-ամյակը և ակնկալվում է, որ կշարունակվի անորոշ ժամանակով: Երկու հրաժարումները որոշակի ծառայություններ ֆինանսավորելու միջոց են, որոնք թույլ են տալիս զարգացման հաշմանդամություն ունեցող անձանց ապրել տանը կամ համայնքում, այլ ոչ թե բնակվել լիցենզավորված առողջապահական հաստատությունում: Այս ծառայությունների ծախսերը համատեղ ֆինանսավորվում են դաշնային կառավարության Medicaid ծրագրի և California-ի նահանգի կողմից: Ձեր բուժսպասարկման համակարգողը կարող է օգնել ձեզ կապվել DD հրաժարման ծառայություններին:

Տան և համայնքի վրա հիմնված այլընտրանքայինից (HCBA) հրաժարում

- HCBA-ի հրաժարումը տրամադրում է խնամքի կառավարման ծառայություններ բուժքույրական տանը կամ հաստատությունում տեղավորման ռիսկի տակ գտնվող անձանց: Խնամքի կառավարման ծառայությունները տրամադրվում են բազմամասնագիտական խնամքի կառավարման թիմի կողմից, որը բաղկացած է բուժքույրից և սոցիալական աշխատողից: Թիմը համակարգում է հրաժարման և նահանգային ծրագրի ծառայությունները (օրինակ՝ բժշկական, վարքագծային առողջություն, Տնային աջակցության ծառայություններ և այլն) և կազմակերպում է տեղական համայնքում հասանելի այլ երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն: Խնամքի կառավարման և հրաժարման ծառայությունները տրամադրվում են մասնակցի համայնքային բնակավայրում: Այս բնակավայրը կարող է լինել մասնավոր սեփականություն, ապահովված լինել վարձակալի վարձակալության պայմանագրով կամ մասնակցի ընտանիքի անդամի բնակության վայրում:

- Անդամները, ովքեր ընդգրկված են HCBA հրաժարման մեջ, կարող են մնալ HCBA հրաժարման մեջ ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր HCBA հրաժարման բուժսպասարկման համակարգող գործակալության հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:

- Ձեր բուժսպասարկման համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել HCBA-ի համար: Հավելյալ տեղեկության համար տես https://libertana.com/services/hcba-waiver/

Medi-Cal Հրաժարման ծրագիր (MCWP)

- Medi-Cal Հրաժարման ծրագիրը (MCWP) տրամադրում է գործերի համապարփակ կառավարում և անմիջական խնամքի ծառայություններ HIV-ով ապրող անձանց՝ որպես բուժքույրական հաստատության խնամքի կամ հոսպիտալացման այլընտրանք: Գործի կառավարումը մասնակցի վրա կենտրոնացած, թիմային մոտեցում է, որը բաղկացած է գրանցված բուժքույրից և սոցիալական աշխատանքի մենեջերից: Գործի կառավարիչներն աշխատում են մասնակցի և առաջնային բուժաշխատող(ներ)ի, ընտանիքի, խնամակալ(ներ)ի և այլ ծառայություններ մատուցողների հետ՝ գնահատելու խնամքի կարիքները, որպեսզի մասնակցին պահեն իրենց տանը և համայնքում:

- MCWP-ի նպատակներն են. (1) տրամադրել տնային և համայնքային ծառայություններ HIV-ով վարակված անձանց համար, ում այլ կերպ կարող են պահանջվել ինստիտուցիոնալ ծառայություններ, (2) աջակցել մասնակիցներին HIV-ի առողջության կառավարման հարցում, (3) բարելավել սոցիալական և վարքային առողջության աջակցության հասանելիությունը և (4) համակարգել ծառայություններ մատուցողներին և վերացնել ծառայությունների կրկնօրինակումը:

- Անդամները, ովքեր ընդգրկված են MCWP հրաժարման մեջ, կարող են մնալ MCWP հրաժարման մեջ ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր MCWP հրաժարման բուժսպասարկման համակարգող գործակալության հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:

- Ձեր բուժսպասարկման համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել MCWP-ի համար: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել https://www.cdph.ca.gov/Programs/CID/DOA/Pages/OA_care_mcwp.aspx կայք:

Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP)

- Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիրը (MSSP) տրամադրում է ինչպես սոցիալական, այնպես էլ առողջապահական խնամքի կառավարման ծառայություններ՝ օգնելու անհատներին մնալ իրենց տներում և համայնքներում:

- Թեև ծրագրի մասնակիցների մեծ մասը ստանում է նաև Տնային աջակցության ծառայություններ, MSSP-ն ապահովում է շարունակական խնամքի համակարգում, մասնակիցներին կապում է այլ անհրաժեշտ համայնքային ծառայությունների և ռեսուրսների հետ, համակարգում է առողջապահական ծառայություններ մատուցողների հետ և գնում է որոշ անհրաժեշտ ծառայություններ, որոնք այլ կերպ հասանելի չեն՝ հաստատություն տեղափոխվելը կանխելու կամ հետաձգելու համար: Խնամքի կառավարման և այլ ծառայությունների ընդհանուր տարեկան համակցված արժեքը պետք է ավելի ցածր լինի, քան որակավորված բուժքույրական հաստատությունում խնամք ստանալու արժեքը:

- Առողջապահության և սոցիալական ծառայությունների մասնագետների թիմը MSSP-ի յուրաքանչյուր մասնակցի տրամադրում է առողջության և հոգեսոցիալական ամբողջական գնահատում՝ անհրաժեշտ ծառայությունները որոշելու համար: Այնուհետև թիմն աշխատում է MSSP-ի մասնակցի, նրա բժշկի, ընտանիքի և այլոց հետ՝ անհատական բուժսպասարկման պլան մշակելու համար: Ծառայությունները ներառում են.

  - խնամքի կառավարում
  - մեծահասակների ցերեկային խնամք
  - տան աննշան վերանորոգում/սպասարկում
  - լրացուցիչ տնային աշխատանք, անձնական խնամք և պաշտպանիչ հսկողության ծառայություններ
  - խնամողի հանգստի ծառայություններ

- տրանսպորտային ծառայություններ
- խորհրդատվական և թերապևտիկ ծառայություններ
- սննդի ծառայություններ
- հաղորդակցման ծառայություններ:

- Անդամները, ովքեր ընդգրկված են MSSP հրաժարման մեջ, կարող են մնալ MSSP հրաժարման մեջ ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր MSSP մատակարարի հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր բուժսպասարկման համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել MSSP-ի համար:

  Գործակալության կոնտակտային տվյալներ

  - Los Angeles վարչաշրջան.
    - Human Services Association, Հեռախոս՝ 1-626-358-1185 (TTY՝ 711)
    - Huntington Hospital, Հեռախոս՝ 1-626-397-3110 (TTY՝ 711)
    - Jewish Family Services of LA, Հեռախոս՝ 1-310-247-0864 (TTY՝ 711)
    - Partners in Care, Հեռախոս՝ 1-818-837-3775 (TTY՝ 711)
    - Scan Independence at Home, Հեռախոս՝ 1-866-421-1964 (TTY՝ 711)

F5. Վարչաշրջանի վարքագծային առողջության ծառայություններ, որոնք տրամադրվում են մեր պլանից դուրս (հոգեկան առողջության և հոգեմետ նյութերի օգտագործման հետ կապված խանգարումների ծառայություններ)

Դուք մուտք ունեք բժշկական առումով անհրաժեշտ վարքագծային առողջության ծառայություններ, որոնք Medicare-ը և Medi-Cal-ը ապահովագրում են: Մենք տրամադրում ենք վարքագծային առողջության ծառայությունների հասանելիություն, որոնք ապահովագրված են Medicare-ի և Medi-Cal-ի կառավարվող խնամքով: Մեր ծրագիրը չի տրամադրում Medi-Cal մասնագիտացված հոգեկան առողջության կամ վարչաշրջանային թմրամիջոցների օգտագործման խանգարման ծառայություններ, սակայն այս ծառայությունները հասանելի են ձեզ ձեր վարչաշրջանի վարքագծային առողջության գործակալությունների միջոցով:

Medi-Cal-ի մասնագիտական հոգեկան առողջության ծառայությունները հասանելի են ձեզ համար վարչաշրջանի մասնագիտական հոգեկան առողջության ծրագրի (MHP) միջոցով, եթե դուք համապատասխանում եք հոգեկան առողջության ծառայությունների բժշկական

անհրաժեշտության չափանիշներին: Medi-Cal մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունները, որոնք տրամադրվում են ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության՝ MHP ծրագրի կողմից, ներառում են՝

- մտավոր առողջության ծառայություններ
- դեղորայքի աջակցության ծառայություններ
- ցերեկային ինտենսիվ բուժման ծառայություն
- ցերեկային վերականգնում
- ճգնաժամային միջամտության ծառայություններ
- ճգնաժամային կայունացման ծառայություններ
- չափահասների բնակավայրում բուժման ծառայություններ
- ճգնաժամային բնակավայրում բուժման ծառայություններ
- հոգեբուժական առողջության հաստատության ծառայություններ
- հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
- թիրախային գործի կառավարում
- հասակակիցների աջակցության ծառայություններ
- համայնքային շարժական ճգնաժամային միջամտության ծառայություններ
- թերապևտիկ վարքագծային ծառայություններ
- թերապևտիկ խնամատարություն
- ինտենսիվ բուժսպասարկման համակարգում
- տանը տրամադրվող ինտենսիվ ծառայություններ
- արդարադատության միջոցով վերագրանցում
- դատաբժշկական համայնքային հաստատուն բուժում (ACT)
- դատաբժշկական համայնքային հաստատուն բուժում (FACT)
- համակարգված մասնագիտացված բուժսպասարկում (CSC) պսիխոզի առաջին նոպայի համար (FEP)

- ակումբային ծառայություններ
- համայնքային առողջապահական աշխատողի (CHW) ընդլայնված ծառայություններ

Դեղերի Medi-Cal (DMC) ծառայությունները հասանելի են ձեզ ձեր վարչաշրջանի վարքագծային առողջության գործակալության միջոցով, եթե դուք համապատասխանում եք այդ ծառայությունները ստանալու չափանիշներին:

- ինտենսիվ ամբուլատոր բուժման ծառայություններ
- հոգեմետ նյութերի օգտագործման հետ կապված խանգարումների պերինատալ բուժում
- ամբուլատոր բուժման ծառայություններ
- թմրամիջոցներից բուժման ծրագիր
- դեղորայք կախվածության բուժման համար (նաև կոչվում է Դեղորայքի օգնությամբ բուժում)
- հասակակիցների աջակցության ծառայություններ
- համայնքային շարժական ճգնաժամային միջամտության ծառայություններ
- վաղ միջամտության ծառայություններ (մինչև 21 տարեկան անդամների համար)
- վաղ պարբերական զննություն, ախտորոշում և բուժում (մինչև 21 տարեկան անդամների համար)

Դեղերի Medi-Cal կազմակերպված առաքման համակարգի (DMC-ODS) ծառայությունները ներառում են՝

- ամբուլատոր բուժման ծառայություններ
- ինտենսիվ ամբուլատոր բուժման ծառայություններ
- մասնակի հոսպիտալացման ծառայություններ
- դեղորայք կախվածության բուժման համար (նաև կոչվում է Դեղորայքի օգնությամբ բուժում)
- բնակելի բուժման ծառայություններ
- թմրամիջոցների օգտագործումը դադարեցնելու հետևանքների կառավարման ծառայություններ

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- թմրամիջոցներից բուժման ծրագիր
- վերականգնման ծառայություններ
- խնամքի համակարգում
- հասակակիցների աջակցության ծառայություններ
- համայնքային շարժական ճգնաժամային միջամտության ծառայություններ
- անկանխատեսելի իրավիճակների կառավարման ծառայություններ
- վաղ միջամտության ծառայություններ (մինչև 21 տարեկան անդամների համար)
- վաղ պարբերական զննություն, ախտորոշում և բուժում (մինչև 21 տարեկան անդամների համար)
- ստացիոնար բուժման ծառայություններ

Բացի վերը թվարկված ծառայություններից, դուք կարող եք օգտվել կամավոր ստացիոնար դետոքսիկացիայի ծառայություններից, եթե համապատասխանում եք չափանիշներին:

Դուք կարող եք ստանալ բժշկական տեսակետից անհրաժեշտ վարքագծային առողջության ծառայություններ, որոնք ապահովագրված են Medicare-ի կողմից և տնօրինվում են Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) Վարքագծային առողջության ծառայությունների միջոցով, որը ներառում, սակայն չի սահմանափակվում հետևյալներով: Տես **Գլուխ 3**-ի Բաժին F-ը՝ վարքագծային առողջության ծառայությունների մասին տեղեկությունների համար, որոնք հասանելի են մեր պլանի միջոցով, ներառյալ այն գործընթացը, որն օգտագործվում է մեր պանի և ձեր վարչաշրջանի MHP-ի միջև բժշկական անհրաժեշտությունը և ուղեգրումը որոշելու համար: Եթե դուք ունեք դժվարություններ՝ կապված վարքագծայի առողջության ծառայությունների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու հետ, անցեք **Գլուխ 9**-ի Բաժին K-ն՝ բողոքներ ներկայացնելու մասին տեղեկություններ ստանալու համար:

G. Նպաստներ, որոնք չեն ապահովագրվում մեր ծրագրով, Medicare-ով կամ Medi-Cal-ով

Այս բաժինը ձեզ պատմում է մեր ծրագրի կողմից բացառված նպաստների մասին: «Բացառված» նշանակում է, որ մենք չենք վճարում այդ նպաստների համար: Medicare-ն ու Medi-Cal-ը նույնպես չեն վճարում դրանց համար:

Ներքոհիշյալ ցուցակը նկարագրում է որոշ ծառայություններ ու պարագաներ, որոնք ոչ մի պայմանով չեն ապահովագրվում մեր կողմից, ինչպես նաև որոշները, որոնք բացառված են մեր կողմից միայն հատուկ դեպքերում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Մենք չենք վճարելու այս հատվածում (կամ այս *Անդամի ձեռնարկի* որևէ այլ մասում) թվարկված բացառված բժշկական նպաստների համար, բացի թվարկված հատուկ պայմաններից: Նույնիսկ եթե Դուք ծառայություններ եք ստանում շտապ օգնության հաստատությունում, պլանը չի վճարի ծառայությունների համար: Եթե կարծում եք, որ մեր պլանը պետք է վճարի չապահովագրված ծառայության համար, ապա կարող եք բողոքարկել: Բողոքարկման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու նպատակով անցե՛ք Ձեր *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 9-ը***:*

Ի հավելումն Նպաստների աղյուսակում նկարագրված ցանկացած բացառումների կամ սահմանափակումների, մեր պլանը չի ներառում հետևյալ կետերը և ծառայությունները.

- ծառայություններ, որոնք համարվում են ոչ «ողջամիտ և բժշկական տեսակետից անհրաժեշտ» ըստ Medicare-ի և Medi-Cal ստանդարտների, եթե դրանք նշված չեն որպես ապահովագրված ծառայություններ:

- փորձարարական բժշկական և վիրաբուժական բուժումներ, պարագաներ և դեղամիջոցներ, բացառությամբ այն դեպքերի, երբ Medicare-ը, Medicare-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտական հետազոտությունը կամ մեր ծրագիրը չի ներառում դրանք: Կլինիկական հետազոտությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար անցե՛ք Ձեր *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 3**-ը: Փորձնական բուժում ու պարագաներ են համարվում նրանք, որոնք, ընդհանուր առմամբ, չեն ընդունվում բժշկական համայնքի կողմից:

- հիվանդագին գիրության վիրաբուժական բուժում, բացի այն դեպքից, երբ դա բժշկական տեսակետից անհրաժեշտ է ու ապահովագրվում է Medicare-ով:

- առանձին սենյակ հիվանդանոցում, բացի այն դեպքից, երբ դա բժշկական տեսակետից անհրաժեշտ է

- անձնական հերթապահ բուժքույրեր

- հիվանդանոցային սենյակում կամ բուժքույրական հաստատությունում առկա անձնական պարագաներն, ինչպես օրինակ՝ հեռախոս կամ հեռուստացույց

- լրիվ դրույքով բուժքույրական խնամք ձեր տանը

- ձեր մոտիկ բարեկամների կամ տան անդամների կողմից գանձված վարձերը

- ձեր տուն առաքված սնունդը

- ընտրովի կամ կամավոր բարելավման ընթացակարգեր կամ ծառայություններ (ներառյալ՝ քաշի կորուստ, մազերի երկարացում, սեռական ունակություններ, մարզական ունակություններ, կոսմետիկ նպատակներ, հակածերացման ու մտավոր ունակություններ), բացի բժշկական տեսակետից անհրաժեշտ դեպքերից

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- կոսմետիկ վիրաբուժություն կամ կոսմետիկ այլ աշխատանք, եթե միայն անհրաժեշտ չեն պատահական վնասվածքի կամ մարմնի որևէ մասի տձևությունն ուղղելու նպատակ: Այնուամենայնիվ, մենք կվճարենք կրծքի հեռացումից հետո կրծքի վերականգնման ու մյուս կրծքի համապատասխանեցման համար
- քիրոպրակտիկ խնամք, բացի ողնաշարի՝ ձեռքով արվող մանիպուլյացիաներից՝ ըստ ապահովագրության ուղեցույցների
- ոտքերի սովորական խնամք, բացառությամբ այն դեպքերի, որոնք նկարագրված են **Բաժին D**-ի Նպաստների աղյուսակում՝ պոդիատրիկ ծառայություններ
- օրթոպեդիկ կոշիկներ, բացի ոտքի տաբատաձիգի մաս կազմող ու տաբատաձիգի գնի մեջ մտնող կոշիկներից, կամ շաքարախտով պայմանավորված ոտքի հիվանդություն ունեցող մարդու կոշիկներից
- ոտքերին աջակցող սարքեր, բացի շաքարախտով պայմանավորված ոտքի հիվանդություն ունեցող մարդկանց օրթոպեդիկ կամ թերապևտիկ կոշիկներից
- ճառագայթային կեռատոտոմիա, LASIK վիրաբուժություն և վատ տեսողության այլ աջակցություններ
- ստերիլիզացման ընթացակարգերի չեղարկում
- նատուրոպատի ծառայություններ (օգտագործվում են բնական կամ այլընտրանքային բուժումներ):
- վետերանների գործերի (VA) հաստատություններում վետերաններին տրամադրված ծառայություններ: Այնուամենայնիվ, երբ վետերանը արտակարգ իրավիճակի ծառայությունները ստանում է VA հիվանդանոցում և VA-ի ծախսերի բաշխումն ավել է, քան մեր պլանի ծախսերի բաշխումն, ապա մենք վետերանին կփոխհատուցենք այդ տարբերությունը: Դուք պատասխանատու եք ձեր ծախսերի բաշխման գումարների համար:

Գլուխ 5. Ինչպես ստանալ ձեր ամբուլատոր դեղերը

Ներածություն

Այս գլուխը բացատրում է ձեր՝ ամբուլատոր դեղերի ստացման կանոնները: Սրանք այն դեղերն են, որոնք նշանակում է ձեր մատակարարը, և դուք ստանում եք դեղատնից կամ փոստով պատվիրելով: Դրանք ներառում են Medicare Part D- ի և Medi-Cal-ի ներքո ապահովագրված դեղեր: **Գլուխ 6**-ը այս *Անդամի ձեռնարկում* ներկայացնում է ձեզ, թե ինչքան պետք է վճարեք այս դեղերի համար: Հիմնական տերմինները և դրանց բացատրություններն այբբենական կարգով տեղակայված են այս *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

Մենք նույնպես ապահովագրում ենք հետևյալ դեղերը, չնայած դրանք չեն քննարկվում այս գլխում.

- **Medicare Part A-ով փոխհատուցվող դեղեր:** Սրանք հիմնականում ներառում են դեղեր, որոնք ստանում եք հիվանդանոցում կամ բուժքույրական տանը գտնվելիս:
- **Medicare Part B-ով փոխհատուցվող դեղեր:** Դրանք ներառում են քիմիաթերապիայի որոշ դեղեր, բժշկի կամ մատակարարի գրասենյակի այցելության ժամանակ ձեզ տրվող որոշ դեղի ներարկումներ և դիալիզի կլինիկայում ձեզ տրվող դեղեր: Տեղեկանալու համար, թե Medicare-ի Part B-ի որ դեղերն են ապահովագրված, տեսեք Նպաստների աղյուսակը **Գլուխ 4** -ում՝ այս *Անդամի ձեռնարկում*:
- Ի հավելումն Medicare Part D-ի և բժշկական նպաստների ապահովագրության պլանի, ձեր դեղերը կարող են ապահովագրվել Original Medicare-ի կողմից, եթե դուք գտնվում եք Medicare հոսպիսում: Լրացուցիչ տեղեկությունների համար անցեք **Գլուխ 5**, **Բաժին F3,** «Եթե դուք Medicare-ի կողմից հավաստագրված հոսպիս ծրագրի մեջ եք»:

Մեր ծրագրի ամբուլատոր դեղերի ապահովագրության կանոնները

Մենք սովորաբար ապահովագրում ենք դեղերը, եթե հետևում եք այս հատվածում բերված կանոններին:

Անհրաժեշտ է, որ մեր ցանցային մատակարարը (բժիշկը, ատամնաբույժը կամ այլ դեղատոմս նշանակող) ձեզ համար դեղատոմս դուրս գրի, որը պետք է վավեր լինի գործող նահանգի օրենսդրության համաձայն: Այդ անձը հաճախ ձեր առաջնային խնամքի մատակարարն (PCP) է: Դա կարող է լինել նաև ցանցի մեկ այլ մատակարար, եթե ձեր PCP-ն ձեզ ուղեգիր է տրամադրել խնամք ստանալու համար:

Ձեր դեղատոմս դուրս գրողը **չպետք է** լինի Medicare-ի Բացառությունների կամ Բացառումների ցուցակներում կամ Medi-Cal որևէ նմանատիպ ցուցակներում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ընդհանուր առմամբ, Դուք պետք է օգտվեք ցանցային դեղատնից՝ Ձեր դեղատոմսը ստանալու համար (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին A1-ը**): Կամ կարող եք լրացնել ձեր դեղատոմսը պլանի՝ փոստով պատվերի ծառայության միջոցով:

Ձեր դեղատոմսով դեղը պետք է լինի մեր ծրագրի *Ապահովագրված դեղերի ցանկում*: Մենք հակիրճ անվանում ենք այն «*Դեղերի ցանկ*»: (Տես այս գլխի **Բաժին B**-ն:)

- Եթե դեղը *Դեղերի ցանկում* չէ, ապա հնարավոր է, որ մենք կարողանանք ապահովագրել այն՝ ձեզ համար բացառություն անելով:
- Բացառության համար դիմելու վերաբերյալ տեղեկություն ստանալու համար այցելե՛ք **Գլուխ 9** :
- Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ ձեր կողմից նշանակված դեղը ապահովագրելու հայտը կգնահատվի և՛ Medicare, և՛ Medi-Cal ստանդարտներով:

Ձեր դեղը պետք է օգտագործվի բժշկական տեսակետից ընդունված ցուցումով: Սա նշանակում է, որ դեղի օգտագործումը կա՛մ հաստատված է Food and Drug Administration-ի (FDA) կողմից, կա՛մ սատարվում է որոշակի բժշկական գրականությամբ: Ձեր դեղատոմս գրողը կարող է օգնել ձեզ բացահայտել բժշկական հրահանգները՝ աջակցելու ձեզ նշանակված դեղամիջոցի պահանջվող օգտագործման հարցում: Medi-Cal-ի ապահովագրված դեղերի համար սա նշանակում է այն դեղերի օգտագործում, որոնք խելամիտ են և անհրաժեշտ՝ կյանքը պաշտպանելու, լուրջ հիվանդություն կամ հաշմանդամություն կանխելու կամ սաստիկ ցավը մեղմելու համար՝ հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման կամ բուժման միջոցով:

Ձեր դեղի համար կարող է պահանջվել հաստատում մեր պլանից՝ որոշակի չափանիշների հիման վրա, նախքան մենք այն կապահովագրոնք: (Տես այս գլխի **Բաժին C**-ն):

Բովանդակություն

A. Ձեր դեղատոմսերի համալրումը 187
A1. Ձեր դեղատոմսի համալրումը ցանցային դեղատանը 187
A2. Ձեր Անդամի ID քարտի օգտագործումը դեղատոմս համալրելիս 187
A3. Ինչ անել, եթե փոխում եք ձեր ցանցային դեղատունը 188
A4. Ինչ անել, եթե ձեր դեղատունը հեռանում է ցանցից 188
A5. Մասնագիտացված դեղատնից օգտվելը 188
A6. Փոստային պատվերով ծառայությունից օգտվելը՝ ձեր դեղը ստանալու համար 189

A7. Դեղերի երկարատև պաշար ստանալը 192
A8. Դեղատան օգտագործումը, որը մեր ծրագրի ցանցում չէ 192
A9. Գումարի հետվերադարձ դեղատոմսի համար 194
B. Մեր պլանի Դեղերի ցանկը 195
B1. Դեղեր, ներառված Դեղերի ցանկում 195
B2. Ինչպես գտնել դեղերը, որոնք ներառված են մեր Դեղերի ցանկում 196
B3. Դեղեր, որոնք մեր Դեղերի ցանկ-ում չեն 196
B4. Դեղերի ցանկ-ի ծախսերի բաշխման կարգերը 198
C. Որոշ դեղերի սահմանափակումներ 198
D. Ինչու կարող է չապահովագրվել ձեր դեղը 200
D1. Ժամանակավոր պաշարի ստացումը 201
D2. Ինչպես խնդրել ժամանակավոր պաշար 202
E. Ձեր դեղերի ապահովագրության փոփոխությունները 203
F. Դեղի ապահովագրություն հատուկ դեպքերում 206
F1. Հիվանդանոցում կամ որակավորված բուժքույրական հաստատությունում մնալու համար, որն ընդգրկում է մեր ծրագիրը 206
F2. Երկարատև խնամքի հաստատությունում 206
F3. Medicare-ի կողմից հավաստագրված հոսպիս ծրագիր 206
G. Դեղերի ապահովության և դեղորայքի տնօրինման ծրագրեր 207
G1. Ծրագրեր, որոնք օգնում են մեզ ապահով կերպով դեղեր օգտագործել 207
G2. Մասնակիցներին իրենց դեղերը կառավարելու աջակցման ծրագրեր 208
G3. Դեղերի կառավարման ծրագիր (DMP)՝ աջակցելու անդամներին անվտանգ կերպով օգտագործել իրենց ափիոնային դեղորայքը 209

A. Ձեր դեղատոմսերի համալրումը

A1. Ձեր դեղատոմսի համալրումը ցանցային դեղատանը

Շատ դեպքերում մենք կվճարենք ձեր դեղատոմսերի համար միայն, եթե դրանք լցվեն մեր ցանցի դեղատներից: Ցանցի դեղատունը դեղերի խանութ է, որը համաձայնել է դեղատոմսեր համալրել մեր ծրագրի անդամների համար: Դուք կարող եք օգտվել մեր ցանցային դեղատներից յուրաքանչյուրից: (Կարդացեք **Բաժին A8**-ը՝ ստանալու համար տեղեկություններ այն մասին, թե երբ ենք մենք ապահովագրում արտացանցային դեղատներում լրացված դեղատոմսերը):

Ցանցային դեղատուն գտնելու համար կարդացեք *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*, այցելեք մեր կայքը կամ դիմեք Անդամների սպասարկման կենտրոն կամ ձեր խնամքի համակարգողին:

A2. Ձեր Անդամի ID քարտի օգտագործումը դեղատոմս համալրելիս

Դեղատոմսը համալրելու համար **ցույց տվեք ձեր Անդամի ID քարտը** ձեր ցանցային դեղատանը: Ցանցային դեղատունը մեզ կուղարկի ձեր ապահովագրված դեղերի ծախսերի մեր բաժնի հաշվարկը: Դուք, հնարավոր է, դեղատանը համավճար վճարեք, երբ վերցնում եք ձեր դեղատոմսը:

Հիշեք, որ Ձեզ անհրաժեշտ է Ձեր Medi-Cal քարտը կամ Նպաստների նույնականացման քարտը (BIC) Medi-Cal Rx-ի ապահովագրված դեղերից օգտվելու համար:

Եթե դեղատոմսը լրացնելիս ձեզ հետ չունեք ձեր Անդամի ID քարտը կամ BIC, խնդրեք դեղատանը զանգահարել մեզ՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար, կամ կարող եք խնդրել դեղատանը փնտրել ձեր ծրագրի գրանցման մասին տեղեկությունները:

Եթե դեղատունը չի կարողանում ստանալ անհրաժեշտ տեղեկությունները, հնարավոր է, որ դուք ստիպված լինեք վճարել դեղատոմսի ամբողջ գինը, երբ վերցնեք այն: Ապա Դուք կարող եք դիմել մեզ, որպեսզի մենք հետ վճարենք ձեզ: **Եթե չեք կարող վճարել դեղի համար, անմիջապես զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն:** Մենք կանենք ամեն ինչ, որպեսզի օգնենք:

- Եթե ցանկանում եք խնդրել մեզ, որ ձեզ հետվճարում կատարենք, անցեք **Գլուխ 7-ը** այս *Անդամի ձեռնարկում*:
- Եթե ձեզ օգնություն է հարկավոր դեղատոմսը համալրելու համար, դիմեք Անդամների սպասարկման կենտրոն կամ ձեր բուժսպասարկման համակարգողին:

A3. Ինչ անել, եթե փոխում եք ձեր ցանցային դեղատունը

Եթե դուք փոխեք դեղատները և դեղատոմսով դեղ ստանալու կարիք ունենաք, կարող եք դիմել, որպեսզի մատակարարի կողմից դուրս գրվի նոր դեղատոմս, ինչպես *նաև* խնդրել, որպեսզի ձեր դեղատունը փոխանցի դեղատոմսը նոր դեղատուն, եթե դեռ համալրումներ են մնացել:

Եթե ձեզ օգնություն է հարկավոր դեղատոմսը համալրելու համար, դիմեք Անդամների սպասարկման կենտրոն կամ ձեր խնամքի համակարգողին:

A4. Ինչ անել, եթե ձեր դեղատունը հեռանում է ցանցից

Եթե այն դեղատունը, որից օգտվում եք, հեռանում է մեր ծրագրի ցանցից, ապա դուք պետք է նոր դեղատուն գտնեք ցանցում:

Ցանցային նոր դեղատուն գտնելու համար կարդացեք *Մատակարարների և Դեղատների տեղեկատուն*, այցելեք մեր կայքը կամ դիմեք Անդամների սպասարկման կենտրոն կամ ձեր խնամքի մատակարարին:

A5. Մասնագիտացված դեղատնից օգտվելը

Երբեմն դեղատոմսով դեղերը հարկավոր է համալրել մասնագիտացված դեղատնից: Մասնագիտացված դեղատները ներառում են.

- Դեղատներ, որոնք դեղեր են մատակարարում տնային ներարկման բուժման համար:
- Դեղատներ, որոնք դեղեր են մատակարարում երկարատև խնամքի հաստատության բնակիչներին, ինչպես օրինակ՝ բուժքույրական հաստատություն:
    - Սովորաբար երկարատև խնամքի հաստատություններն ունեն իրենց սեփական դեղատները: Եթե դուք երկարատև խնամքի հաստատության բնակիչ եք, դուք պետք է ձեր դեղատոմսով դեղերը ստանաք հաստատության դեղատնից:
    - Եթե ձեր երկարատև խնամքի հաստատության դեղատունը մեր ցանցում չէ, կամ եթե դժվարություններ ունեք ձեր դեղերի ստացման հետ երկարատև խնամքի հաստատությունում, ապա դիմեք Անդամների սպասարկման կենտրոն:
- Հնդկացիների առողջապահական ծառայությունների մատակարարման (IHCP) դեղատներ: Ամերիկյան հնդկացիների և Alaska-ի բնիկների համայնքի անդամները հասանելիություն ունեն Հնդկացիների առողջապահական ծառայությունների մատակարարման (IHCP) դեղատներին, եթե ունեն գրանցված մանրածախ դեղատուն: Եթե ամերիկյան հնդկացի կամ Alaska-ի բնիկ չեք, դուք կարող եք ծառայություններ ստանալ IHCP-ի մանրածախ դեղատներից, եթե ձեզ ուղարկել են կլինիկա կամ արտակարգ իրավիճակի դեպքում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Դեղատներ, որոնք դեղեր են տրամադրում, որոնք FDA-ի կողմից սահմանափակված են որոշակի վայրերում կամ որոնք պահանջում են հատուկ մշակում, մատակարարի համակարգում կամ դրանց օգտագործման վերաբերյալ կրթություն: (Նշում՝ Այս սցենարը պետք է տեղի ունենա հազվադեպ):
- Մասնագիտացված դեղատուն գտնելու համար կարդացեք *Մատակարարների և Դեղատների տեղեկատուն*, այցելեք մեր կայքը կամ դիմեք Անդամների սպասարկման կենտրոն կամ ձեր խնամքի մատակարարին:

A6. Փոստային պատվերով ծառայությունից օգտվելը՝ ձեր դեղը ստանալու համար

Որոշ տեսակի դեղերի համար կարող եք օգտվել մեր ծրագրի ցանցի փոստով պատվերի ծառայություններից: Սովորաբար փոստով պատվերի դեղերն այն դեղերն են, որոնք դուք ընդունում եք կանոնավոր կերպով՝ քրոնիկ կամ երկարատև հիվանդության համար: Դեղերը, որոնք հասանելի **չեն** մեր պլանի փոստային պատվերով ծառայության միջոցով,, մեր *Դեղերի ցանկում* նշված են «NM» նշանով:

Մեր պլանի փոստով պատվերների ծառայությունը հնարավորություն է տալիս պատվիրել դեղերի նվազագույնը 35-օրյա պաշար և առավելագույնը 100-օրյա պաշար: 100-օրվա պաշարի համար կիրառվում է նույն համավճարը, ինչպես մեկ ամսվա պաշարի համար:

Դեղատոմսի համալրելը փոստով

Պատվերի ձևերը և դեղատոմսերը փոստով լրացնելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք փոստային պատվերների Express Scripts® Pharmacy՝ 1-833-750-0201 հեռախոսահամարով (TTY՝ 711)՝ օրական 24 ժամ, շաբաթական 7 օր: Կամ մուտք գործեք express-scripts.com/rx: Եթե դուք օգտվում եքեք փոստով պատվերների դեղատնից, որը պլանի ցանցում չէ, ձեր դեղատոմսը չի ապահովագրվի:

Սովորաբար փոստային պատվերի դեղատոմսով դեղը ձեզ կհասնի 14 օրվա ընթացքում: Սակայն, երբեմն ձեր փոստային պատվերը կարող է ուշանալ: Երկարաժամկետ դեղերի համար, որոնք ձեզ հարկավոր են անմիջապես, դիմեք ձեր բժշկին՝ երկու դեղատոմս ստանալու համար. Մեկը 30-օրյա պաշարի համար, որը լրացնում է մասնակից մանրածախ դեղատունը, իսկ մյուսը երկարաժամկետ (35-ից 100-օրյա) պաշարի համար, որը լրացվում է փոստով: Եթե դուք ունեք որևէ խնդիր ստանալու ձեր 30-օրյա պաշարը, որը լրացվել է մասնակից մանրածախ դեղատնում, իսկ ձեր փոստով պատվերի դեղատոմսը ուշանում է, խնդրեք ձեր մանրածախ դեղատանը զանգահարել մեր Մատակարարների սպասարկման կենտրոն՝ 1-866-800-6111 (TTY՝ 1-888-816-5252) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր՝ օգնություն ստանալու համար: Անդամները կարող են զանգահարել Express Scripts® Pharmacy՝ 1-833-750-0201 (TTY՝ 711) հեռախոսահամարով՝ օրական 24 ժամ, շաբաթական 7 օր: Կամ մուտք գործեք express-scripts.com/rx:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Փոստային պատվերի գործընթացները

Փոստային պատվերի ծառայությունն ունի տարբեր ընթացակարգեր ձեզանից ստացված նոր դեղատոմսերի համար, ձեր մատակարարի գրասենյակից ուղղակիորեն ստացված նոր դեղատոմսերի համար և ձեր փոստային պատվերի դեղատոմսերի կրկնության համար.

1. **Նոր դեղատոմսեր, որոնք դեղատունը ստանում է ձեզանից**

   Դեղատունն ավտոմատ կերպով համալրում ու առաքում է նոր դեղատոմսերը, որոնք այն ստանում է ձեզանից:

2. **Նոր դեղատոմսեր, որոնք դեղատունը ստանում է Ձեր մատակարարի գրասենյակից**

   Դեղատունն ավտոմատ համալրում և առաքում է նոր դեղատոմսեր այն առողջապահական ծառայություններ մատուցողներից, առանց նախապես ստուգելու ձեզ, եթե՝

   - Նախկինում այս ծրագրի միջոցով օգտագործել եք փոստային առաքման ծառայություն, **կամ**

   - Դուք գրանցվում եք բոլոր նոր դեղատոմսերի ավտոմատ առաքման համար, որոնք ստանում եք անմիջապես առողջապահական ծառայություններ մատուցողներից: Դուք կարող եք խնդրել բոլոր նոր դեղատոմսերի ավտոմատ առաքում այժմ կամ ցանկացած ժամանակ՝ զանգահարելով Express Scripts® Pharmacy՝ 1-833-750-0201 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրական 24 ժամ, շաբաթական 7 օր: Կամ մուտք գործեք express-scripts.com/rx:

   Եթե դուք ավտոմատ կերպով ստանում եք դեղատոմս փոստով, որը դուք չեք ցանկանում, և առաքվելուց առաջ ձեզ հետ չեն կապվել՝ պարզելու, թե արդյոք դուք ցանկանում եք այն, դուք կարող եք իրավասու լինել փոխհատուցման համար:

   Եթե նախկինում օգտագործել եք փոստով պատվեր և չեք ցանկանում, որ դեղատունը ավտոմատ կերպով համալրի և առաքի յուրաքանչյուր նոր դեղատոմս, ապա դիմեք մեզ՝ զանգահարելով Express Scripts® Pharmacy՝ 1-833-750-0201 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Կամ մուտք գործեք express-scripts.com/rx:

   Եթե դուք երբեք չեք օգտագործել մեր փոստով պատվերի առաքումը և/կամ որոշել դադարեցնել նոր դեղատոմսերի ավտոմատ համալրումը, դեղատունը կապվում է ձեզ հետ ամեն անգամ, երբ այն ստանում է նոր դեղատոմս առողջապահական ծառայություններ մատուցողից՝ պարզելու, թե արդյոք ցանկանում եք, որ դեղը անմիջապես լրացվի և ուղարկվի:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Սա ձեզ հնարավորություն է տալիս հաստատելու, որ դեղատունը ճիշտ դեղ է առաքելու (ներառյալ՝ ուժգնությունը, քանակը ու ձևը), և, անհրաժեշտության դեպքում, ձեզ թույլ է տալիս կանգնեցնել կամ հետաձգել պատվերը, նախքան ձեզանից գումար գանձելը և պատվերն առաքելը:

- Պատասխանեք, երբ դեղատունը կապվում է ձեզ հետ, որպեսզի տեղեկացնեք նրանց, ինչ անել ձեր նոր դեղատոմսի հետ ու կանխեք առաքման ձգձումները:

Ձեր բուժօգնություն տրամադրողի գրասենյակից անմիջապես ստացվող նոր դեղատոմսերի ավտոմատ առաքումներից հրաժարվելու համար կապ հաստատեք մեզ հետ՝ զանգահարելով Express Scripts® Pharmacy՝ 1-833-750-0201 (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Կամ մուտք գործեք express-scripts.com/rx:

3. Փոստային պատվերով ստացած դեղատոմսերի հիման վրա պաշարների համալրումը

Ձեր դեղերը վերահամալրելու համար դուք կարող եք գրանցվել ավտոմատ վերահամալրման ծրագրին: Այս ծրագրի ներքո մենք սկսում ենք իրականացնել ձեր հաջորդ վերալցումն ավտոմատ կերպով, երբ մեր արձանագրություններում ցուցադրվի, որ ձեր դեղը շուտով սպառվում է:

- Նախքան յուրաքանչյուր վերալցված դեղատամոսը ձեզ առաքելը, դեղատունը կապվում է ձեզ հետ՝ համոզվելու, որ այդ դեղորայքը ձեզ անհրաժեշտ է, և դուք կարող եք չեղարկել պլանավորված վերալցումները, եթե ձեզ մոտ դեռ առկա է բավարար դեղորայք կամ եթե դեղորայքը փոխվել է:

- Եթե որոշում եք չօգտվել մեր ավտոմատ վերահամալրման ծրագրից, դիմեք ձեր դեղատանը ձեր ընթացիկ դեղատոմսն ավարտվելուց 21 օր առաջ, որպեսզի ձեր հաջորդ պատվերը ժամանակին ուղարկվի:

Մեր ծրագրից հրաժարվելու համար, որը ավտոմատ կերպով պատրաստում է փոստով պատվերների վերալրացումներ, դիմեք մեզ՝ զանգահարելով փոստով պատվերների Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-833-750-0201, (TTY՝ 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Կամ մուտք գործեք express-scripts.com/rx:

Տեղեկացրեք դեղատանը ձեզ հետ կապվելու լավագույն ուղիները, որպեսզի նրանք կարողանան կապ հաստատել ձեզ հետ՝ առաքելուց առաջ ձեր պատվերը հաստատելու համար: Ամեն անգամ պատվեր տեղակայելիս դուք պետք է հաստատեք ձեր կոնտակտային տեղեկությունները, երբ դուք անդամագրվում եք ավտոմատ վերահամալրման ծրագրին կամ եթե ձեր կոնտակտային տեղեկությունները փոխվել են:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

A7. Դեղերի երկարատև պաշար ստանալը

Դուք կարող եք ստանալ կայունացնող դեղերի երկարատև պաշար մեր պլանի *Դեղերի ցանկից*: Կայունացնող դեղերն այն դեղերն են, որոնք դուք ընդունում եք կանոնավոր կերպով՝ քրոնիկ կամ երկարատև հիվանդություն համար:

Ցանցի որոշ դեղատներ թույլ են տալիս ձեզ ստանալ կայունացնող դեղերի երկարատև պաշար: 100-օրվա պաշարի համար կիրառվում է նույն համավճարը, ինչպես մեկ ամսվա պաշարի համար: Ձեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուն* տեղեկացնում է ձեզ, թե որ դեղատներն են ձեզ տալիս կայունացնող դեղերի երկարատև պաշար: Լրացուցիչ տեղեկությունների համար դուք կարող եք զանգահարել նաև ձեր բուժսպասարկման համակարգողին կամ Անդամների սպասարկման կենտրոն:

Դեղերի որոշակի տեսակների համար դուք կարող եք օգտվել մեր ծրագրի ցանցի փոստային պատվերի ծառայություններից՝ կայունացնող դեղերի երկարաժամկետ պաշար ստանալու համար: Անցեք **Բաժին A6** փոստային պատվերի ծառայությունների մասին տեղեկանալու համար:

A8. Դեղատան օգտագործումը, որը մեր ծրագրի ցանցում չէ

Սովորաբար մենք վճարում ենք արտացանցային դեղատանը ստացված դեղերի համար միայն, երբ դուք ի վիճակի չեք օգտվել ցանցի դեղատնից: Մենք ունենք ցանցի դեղատներ մեր սպասարկման տարածքից դուրս, որտեղ դուք՝ որպես մեր պլանի անդամ, կարող եք համալրել ձեր դեղատոմսը: Այս դեպքերում սկզբից ճշտեք ձեր բուժսպասարկման համակարգողից կամ Անդամների սպասրկման կենտրոնից՝ պարզելով, թե արդյոք մոտակայքում կա որևէ ցանցային դեղատուն:

Մենք վճարում ենք արտացանցային դեղատնից ստացված դեղատոմսային դեղերի համար հետևյալ դեպքերում.

Ճամփորդություն. Ապահովագրական ծածկույթ ստանալը, երբ ճանապարհորդում եք կամ գտնվում եք պլանի սպասարկման տարածքից դուրս:

- Եթե դուք կանոնավոր կերպով դեղատոմսային դեղեր եք ընդունում և մեկնում եք ճամփորդության, նախքան մեկնելը ստուգեք ձեր դեղի պաշարը: Հնարավորության դեպքում ձեզ հետ վերցրեք ձեզ անհրաժեշտ բոլոր դեղերը: Դուք կարող եք նախապես պատվիրել ձեր դեղատոմսով դեղերը՝ փոստով պատվերների դեղատան միջոցով:
- Եթե դուք ճանապարհորդում եք Միացյալ Նահանգներում և նրա տարածքներում և հիվանդանում եք, կորցնում ձեր դեղատոմսով դեղերը կամ դրանք սպառվում են, մենք կապահովագրենք այն դեղատոմսերը, որոնք համալրվում են արտացանցային դեղատներում: Այդ իրավիճակում դուք պետք է վճարեք ամբողջ արժեքը, երբ համալրում եք ձեր դեղատոմսը: Դուք կարող եք դիմել մեզ՝ փոխհատուցելու

համար ծախսերի մեր բաժինը ՝ ուղարկելով փոխհատուցման հայտի ձևը: Եթե դուք այցելում եք արտացանցային դեղատուն, ձեզնից կարող է պահանջվել վճարել տարբերությունը ցանցային դեղատանը դեղատոմսի համար մեր կողմից վճարվող գումարի և արտացանցային դեղատան կողմից ձեր դեղատոմսի համար գանձվող գումարի միջև: Իմանալու համար, թե ինչպես փոխհատուցման հայտ ներկայացնել, կարդացեք **Գլուխ 7**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

- Կարող եք նաև զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն՝ իմանալու համար, թե արդյոք կա ցանցային դեղատուն այն տարածքում, որտեղ դուք ճանապարհորդում եք:

- Մենք չենք կարող վճարել որևէ դեղատոմսի համար, որը համալրված է ԱՄՆ-ից և նրա տարածքներից դուրս գտնվող դեղատներում՝ նույնիսկ բժշկական արտակարգ իրավիճակների դեպքում:

Բժշկական շտապ դեպք. ի՞նչ անել, եթե ինձ դեղատոմսային դեղեր են անհրաժեշտ բժշկական արտակարգ իրավիճակում կամ շտապ բժշկական օգնության անհրաժեշտության դեպքում:

- Մենք կապահովագրենք այն դեղատոմսերը, որոնք համալրված են արտացանցային դեղատներում, եթե այդ դեղատոմսերը կապված են բժշկական արտակարգ իրավիճակի կամ շտապ բժշկական օգնության հետ: Այդ իրավիճակում դուք պետք է վճարեք ամբողջ արժեքը, երբ համալրում եք ձեր դեղատոմսը: Դուք կարող եք դիմել մեզ՝ փոխհատուցելու համար ծախսերի մեր բաժինը ՝ ուղարկելով փոխհատուցման հայտի ձևը: Եթե դուք այցելում եք արտացանցային դեղատուն, ձեզնից կարող է պահանջվել վճարել տարբերությունը ցանցային դեղատանը դեղատոմսի համար մեր կողմից վճարվող գումարի և արտացանցային դեղատան կողմից ձեր դեղատոմսի համար գանձվող գումարի միջև: Իմանալու համար, թե ինչպես փոխհատուցման հայտ ներկայացնել, կարդացեք **Գլուխ 7**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

Այլ իրավիճակներ. այլ դեպքերում ևս դուք կարող եք ստանալ ձեր ապահովագրված դեղատոմսը, եթե այցելում եք արտացանցային դեղատուն:

- Մենք կապահովագրենք արտացանցային դեղատներում համալրված ձեր դեղատոմսը, եթե կիրառելի է հետևյալ պայմաններից առնվազն մեկը:

    - Եթե դուք չեք կարողանում ժամանակին ստանալ ապահովագրված դեղը մեր սպասարկման տարածքում, քանի որ մեքենայով մոտենալու համար ողջամիտ հեռավորության վրա չկա ցանցային դեղատուն, որը մատուցում է 24-ժամյա ծառայություն:

- Եթե դուք փորձում եք համալրել դեղատոմսային դեղ, որը կանոնավոր կերպով չի մատակարարվում հասանելի ցանցային մանրածախ վաճառողներին կամ փոստային պատվերների դեղատներին (ներառյալ թանկարժեք և եզակի դեղերը):
- Եթե դուք ստանում եք պատվաստանյութ, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, բայց չի ապահովագրվում Medicare Part B-ի կողմից և ներարկվում է ձեր բժշկի աշխատասենյակում:
- Եթե ապահովագրված դեղատոմսային դեղը դուք ստանում եք բժշկական հաստատության դեղատնից՝ գտնվելով ամբուլատոր վիրաբուժական կլինիկայում կամ այլ ամբուլատոր հաստատությունում:

Վերը նշված բոլոր իրավիճակներում դուք կարող եք ստանալ դեղատոմսային դեղերի մինչև 30-օրյա պաշար: Բացի այդ, ձեզ, ամենայն հավանականությամբ, անհրաժեշտ կլինի վճարել արտացանցային դեղատան կողմից ներկայացված հաշիվը, որից հետո դուք կարող եք ներկայացնել փաստաթղթեր՝ մեր պլանից փոխհատուցում ստանալու համար: Դուք պետք է պարտադիր կերպով նշեք, թե ինչու եք օգտվել մեր ցանցին չպատկանող դեղատնից: Դա կօգնի մշակել ձեր ներկայացրած փոխհատուցման հայտը: Իմանալու համար, թե ինչպես փոխհատուցման հայտ ներկայացնել, կարդացեք **Գլուխ 7**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

A9. Գումարի հետվերադարձ դեղատոմսի համար

Եթե դուք պետք է օգտվեք արտացանցային դեղատնից, ապա սովորաբար դուք համավճարի փոխարեն պետք է վճարեք դեղատոմսով դեղի լրիվ արժեքը: Դուք կարող եք խնդրել մեզ փոխհատուցել արժեքի մեր բաժինը: Ձեզնից կարող է պահանջվել վճարել տարբերությունը արտացանցային դեղատանը դեղի համար ձեր վճարած գումարի և այն գումարի միջև, որը մենք կվճարեինք ցանցային դեղատանը:

Եթե վճարում եք ձեր դեղատոմսի ամբողջ արժեքը, որը կարող է ծածկվել Medi-Cal Rx-ի կողմից, կարող եք դեղատան կողմից փոխհատուցվել, երբ Medi-Cal Rx-ը վճարի դեղատոմսի համար: Որպես այլընտրանք՝ կարող եք խնդրել Medi-Cal Rx-ին փոխհատուցել ձեզ՝ ներկայացնելով «Medi-Cal-ի գրպանից ծախսերի փոխհատուցում (Conlan)» հայցը: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Medi-Cal Rx կայքում՝ medi-calrx.dhcs.ca.gov/home/:

Սրա վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարդացեք **Գլուխ 7**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

B. Մեր պլանի *Դեղերի ցանկը*

Մենք ունենք *Ապահովագրված Դեղերի ցանկ*: Մենք հակիրճ անվանում ենք այն «*Դեղերի ցանկ*»:

Մենք բժիշկների ու դեղագործների թիմի օգնությամբ ընտրում ենք *Դեղերի ցանկի* դեղերը: *Դեղերի ցանկը* նաև տեղեկացնում է ձեզ՝ կանոնները, որոնց պետք է հետևեք ձեր դեղերը ստանալու համար:

Մենք սովորաբար ապահովագրում ենք մեր *Դեղերի ցանկում* եղած դեղը, եթե դուք հետևում եք այս գլխում բացատրվող կանոններին:

B1. Դեղեր, ներառված *Դեղերի ցանկում*

Մեր *Դեղերի ցանկը* ներառում է դեղեր, որոնք ապահովագրված են Medicare-ի Part D-ով:

Դեղերի մեծ մասը, որոնք դուք ստանում եք դեղատնից, փոխհատուցվում են մեր պլանի կողմից: Այլ դեղամիջոցներ, ինչպիսիք են՝ որոշ առանց դեղատոմսի (OTC) դեղեր և որոշ վիտամիններ, կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Medi-Cal Rx կայք (medi-calrx.dhcs.ca.gov): Կարող եք նաև զանգահարել Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 800-977-2273 հեռախոսահամարով: Խնդրում ենք բերել ձեր Medi-Cal-ի շահառուի նույնականացման քարտը (BIC) Medi-Cal Rx-ի միջոցով ձեր դեղատոմսերը ստանալու ժամանակ:

Մեր *Դեղերի ցանկ*-ը ներառում է բրենդային դեղեր, ջեներիկ դեղեր և կենսաբանական արտադրանք (որոնք կարող են ներառել կենսանման տարբերակներ):

Բրենդային դեղը դուրս գրվող դեղ է, որը վաճառվում է ապրանքային նշանով, որը պատկանում է դեղն արտադրողին: Կենսաբանական արտադրանքները դեղեր են, որոնք ավելի բարդ են, քան սովորական դեղերը: Մեր *Դեղերի ցանկ*-ում, երբ մենք գրում ենք «դեղեր», դա կարող է նշանակել դեղ կամ կենսաբանական արտադրանք:

Անմակնիշ դեղերն ունեն նույն ակտիվ բաղադրությունն, ինչ բրենդային դեղերը: Կենսաբանական արտադրանքներն ունեն այլընտրանքներ, որոնք կոչվում են կենսանման տարբերակներ: Ընդհանրապես, ջեներիկ դեղամիջոցներն ու կենսաբանական նյութերը նույնքան լավ են ներգործում, որքան բրենդային դեղերը կամ բնօրինակ կենսաբանական արտադրանքները և սովորաբար ավելի էժան են: Կան ջեներիկ դեղերի փոխարինիչներ, որոնք հասանելի են բազմաթիվ բրենդային դեղերի համար, և որոշ բնօրինակ կենսաբանական արտադրանքների համար կան կենսանման այլընտրանքներ: Որոշ կենսանման տարբերակներ փոխարինելի անալոգներ են և, կախված նահանգի օրենսդրությունից, կարող են փոխարինվել բնօրինակ կենսաբանական արտադրանքով դեղատանը՝ առանց նոր դեղատոմսի անհրաժեշտության, ինչպես նաև ջեներիկ դեղերը կարող են փոխարինվել բրենդային դեղերով:

Կարդացեք **Գլուխ 12**-ը՝ կամ դեղերի տեսակների սահմանումները, որոնք կարող են նշված լինել *Դեղերի ցանկ*-ում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

B2. Ինչպես գտնել դեղերը, որոնք ներառված են մեր *Դեղերի ցանկում*

Պարզելու համար, թե արդյոք ձեր դեղը կա մեր *Դեղերի ցանկում*, դուք կարող եք.

- Այցելեք մեր պլանի կայքը՝ go.wellcare.com/HealthNetCA: Մեր կայքում զետեղված *Դեղերի ցանկը* ամենաթարմն է.
- Զանգահարեք ձեր բուժօգնության համակարգողին կամ Անդամների սպասարկման կենտրոն՝ պարզելու, թե արդյոք տվյալ դեղը ներառված է մեր պլանի *Դեղերի ցանկում* կամ խնդրել ցանկի օրինակը:
- Դեղամիջոցները, որոնք չեն ապահովագրվում Մաս D-ով, կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Medi-Cal Rx վեբ կայք (medi-calrx.dhcs.ca.gov/):
- Օգտագործելով «Իրական ժամանակում նպաստների գործիքը» go.wellcare.com/HealthNetCA կայքում, կարող եք որոնել դեղեր *Դեղերի ցանկ*-ում, որպեսզի ստանաք ձեր վճարած գումարի գնահատականը, և արդյոք *Դեղերի ցանկ*-ում կան այլընտրանքային դեղեր, որոնք կարող են բուժել նույն հիվանդությունը: Դուք կարող եք զանգահարել նաև ձեր բուժսպասարկման համակարգողին կամ Անդամների սպասարկման կենտրոն:

B3. Դեղեր, որոնք մեր *Դեղերի ցանկ*-ում չեն

Մենք չենք ապահովագրում բոլոր դեղերը:

- Որոշ դեղեր մեր *Դեղերի ցանկում* ներառված չեն, քանի որ օրենքը մեզ թույլ չի տալիս ապահովագրել այդ դեղերը:2:
- Մյուս դեպքերում, մենք որոշել ենք չներառել առանձին դեղեր մեր *Դեղերի ցանկում*:
- Որոշ դեպքերում, դուք կարող եք ստանալ այն դեղը, որը մեր *Դեղերի ցանկում* ներառված չէ: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 9**-ը:

Մեր պլանը չի վճարում այս բաժնում նկարագրված դեղերի տեսակների համար, բացառությամբ մեր ընդլայնված դեղերի ապահովագրության շրջանակներում ընդգրկված որոշակի դեղերի: Դրանք կոչվում են **բացառված դեղեր**: Եթե դեղատոմս եք ստանում բացառված դեղի համար, որը ապահովագրված չէ մեր պլանում, ապա կարող եք վճարել ինքներդ: Եթե կարծում եք, որ մենք պետք է վճարենք բացառված դեղի համար ձեր վիճակի պատճառով, ապա կարող եք բողոքարկել: Բողոքարկումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 9**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ահա բացառված դեղերի երեք ընդհանուր կանոնները.

1. Մեր պլանի ամբուլատոր դեղերի ապահովագրությունը (որը ներառում է Medicare Part D) չի կարող վճարել դեղի համար, որը Medicare Part A կամ Medicare Part B արդեն ապահովագրում է: Մեր պլանն անվճար ապահովագրում է Medicare Part A կամ Medicare Part B ներքո ապահովագրված դեղերը, սակայն այդ դեղերը չեն համարվում ձեր ամբուլատոր դեղերի նպաստների մաս:

2. Մեր պլանը չի կարող ապահովագրել մի դեղ, որը գնվել է Միացյալ Նահանգներից ու դրա տարածքներից դուրս:

3. Դեղի օգտագործումը պետք է հաստատված լինի FDA կողմից, կամ սատարվի որոշակի բժշկական գրականությամբ՝ որպես ձեր վիճակի բուժում: Ձեր բժիշկը կարող է որոշակի դեղ դուրս գրել ձեր հիվանդությունը բուժելու համար, նույնիսկ եթե այն հաստատված չէ այդ հիվանդությունը բուժելու համար: Սա կոչվում է «պիտակից դուրս կիրառում»: Մեր ծրագիրը սովորաբար չի ապահովագրում դեղեր, որոնք դուրս են գրվում պիտակից դուրս կիրառման համար:

Բացի դրանից, ըստ օրենքի, Medicare-ը կամ Medi-Cal-ը վերոնշյալ դեղերի տեսակները չեն կարող ապահովագրել:

- Դեղեր, որոնք օգտագործվում են պտղաբերությանը նպաստելու համար
- Դեղեր, որոնք օգտագործվում են հազի կամ մրսածության ախտանիշները թեթևացնելու համար*
- Դեղեր, որոնք օգտագործվում են կոսմետիկ նպատակներով կամ մազերի աճին նպաստելու համար
- Դեղատոմսով վիտամիններ և հանքանյութեր, բացառությամբ նախածննդյան վիտամինների և ֆտորիդի* պատրաստուկների
- Դեղեր, որոնք օգտագործվում են սեռական կամ էրեկտիլ խանգարման բուժման համար
- Դեղեր, որոնք օգտագործվում են անորեքսիայի, քաշի կորստի կամ քաշի ավելացման համար*
- Ամբուլատոր դեղամիջոցներ, որոնք պատրաստված են ընկերության կողմից, որն ասում է, որ դուք պետք է թեստեր կամ ծառայություններ կատարեք միայն նրանց կողմից

*Որոշ ապրանքներ կարող են ապահովագրվել Medi-Cal-ի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Medi-Cal Rx կայք՝ (www.medi-calrx.dhcs.ca.gov):

B4. *Դեղերի ցանկ*-ի ծախսերի բաշխման կարգերը

Դեղերի ցանկ-ի յուրաքանչյուր դեղ գտնվում է երեք կարգերից մեկում: Կարգն ընդհանուր առմամբ նույն տեսակի դեղերի մի խումբ է (օրինակ՝ բրենդային, ջեներիկ կամ OTC դեղեր): Սովորաբար, որքան բարձր է ծախսերի վճարման կարգը, այնքան բարձր է դեղի ձեր արժեքը:

- Կարգ 1 (ջեներիկ) ներառում է նախընտրելի ջեներիկ դեղեր և կարող է ներառել որոշ ապրանքանիշային դեղեր:
- Կարգ 2-ի (Նախընտրելի ապրանքանիշային դեղեր) դեղերը նարառում են նախընտրելի բրենդային դեղեր և կարող է ներառել որոշ ջեներիկ դեղեր:
- Կարգ 3 (ոչ նախընտրելի դեղ) ներառում է ոչ նախընտրելի ապրանքանիշային և ոչ նախընտրելի ջեներիկ դեղեր:
- Կարգ 4 (ներարկային դեղեր) ներառում է որոշ դեղեր, որոնք կառավարվում են ներարկման միջոցով կամ օգտագործվում են հիվանդության (պատվաստանյութերի) կանխարգելման համար:
- Կարգ 5-ը (մասնագիտական մակարդակի դեղեր) ներառում է բարձր արժեքի ապրանքանիշային և ջեներիկ դեղեր: Այս կարգի դեղերը չեն կարող ավելի ցածր կարգի վճարման համար բացառություններ ունենալ:
- Կարգ 6 (որոշ բուժսպասարկման դեղեր) ներառում է որոշ ջեներիկ և բրենդային դեղեր, որոնք սովորաբար օգտագործվում են որոշակի քրոնիկ հիվանդությունների բուժման համար կամ հիվանդության կանխարգելման համար (պատվաստանյութեր):

Պարզելու համար, թե ձեր դեղը ծախսերի բաշխման որ կարգում է, փնտրեք այն մեր *Դեղերի ցանկում*:

Գլուխ 6-ը այս *Անդամի ձեռնարկում* նկարագրում է յուրաքանչյուր կարգում դեղերի համար վճարվող գումարը:

C. Որոշ դեղերի սահմանափակումներ

Որոշ դեղերի համար կիրառվող հատուկ կանոնները սահմանափակում են, թե ինչպես և երբ է մեր պլանն ապահովագրում դրանք: Ընդհանուր առմամբ, մեր կանոնները հորդորում են ձեզ ստանալ այնպիսի դեղեր, որոնք ազդում են ձեր հիվանդության վրա, և ապահով են ու արդյունավետ: Երբ ապահով, էժան դեղն ազդում է նույնքան արդյունավետ, որքան թանկ դեղը, ապա մենք ակնկալում ենք, որ ձեր մատակարարը կնշանակի էժան դեղը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Նկատի առեք, որ երբեմն դեղը կարող է մեկ անգամից ավելի նշվել մեր *Դեղերի ցանկում*: Դա այն պատճառով է, որ նույն դեղերը կարող են տարբերվել՝ ձեր մատակարարի կողմից նշանակված դեղի ազդեցության ուժի, քանակի կամ ձևի հիման վրա, ինչպես նաև տարբեր սահմանափակումներ կարող են կիրառվել դեղերի տարբեր տարբերակների համար (օրինակ, 10 mg կամ 100 mg, օրը մեկ անգամ կամ օրը երկու անգամ, դեղահաբ կամ հեղուկ):

Եթե ձեր դեղի համար կիրառելի է հատուկ կանոն, դա սովորաբար նշանակում է, որ դուք կամ ձեր մատակարարը պետք է լրացուցիչ քայլեր ձեռնարկեք, որպեսզի մենք ապահովագրենք այդ դեղը: Օրինակ, հնարավոր է, որ ձեր մատակարարը մեզ պետք է տեղեկացնի ձեր ախտորոշման կամ արյան անալիզի արդյունքների մասին: Եթե դուք կամ ձեր մատակարարը կարծում եք, որ տվյալ կանոնը չպետք է կիրառվի ձեր վիճակին, ապա խնդրեք մեզ օգտագործել ապահովագրության որոշման գործընթացը՝ բացառություն անելու համար: Մենք կարող ենք համաձայնվել կամ չհամաձայնվել ձեզ թույլ տալ այդ դեղի օգտագործումն առանց լրացուցիչ քայլերի:

Բացառություն հայցելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարդացեք **Գլուխ 9**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

1. Բրենդային դեղի կամ բնօրինակ կենսաբանական արտադրանքի օգտագործման սահմանափակում, երբ առկա է ընդհանուր կամ փոխարինելի կենսանման տարբերակ

Սովորաբար ջեներիկ դեղը կամ փոխարինելի կենսանման տարբերակը նույն ձևով է ազդում, ինչպես և բրենդային դեղը կամ օրիգինալ կենսաբանական արտադրանքը, և սովորաբար ավելի էժան է: Մեծամասամբ, եթե հասանելի է բրենդային դեղի կամ բնօրինակ կենսաբանական արտադրանքի ջեներիկ կամ փոխարինելի կենսանման տարբերակը, մեր ցանցային դեղատները ձեզ կտան ջեներիկ կամ փոխարինելի կենսանման տարբերակը:

- Մենք սովորաբար չենք վճարում բրենդային դեղի կամ բնօրինակ կենսաբանական արտադրանքի համար, եթե կա դրա ջեներիկ տարբերակը:
- Այնուամենայնիվ, եթե ձեր մատակարարը մեզ հայտնել է բժշկական պատճառն այն մասին, որ ջեներիկ դեղը կամ փոխարինելի կենսանման տարբերակը չի օգմի ձեզ, ***կամ*** ձեր դեղատոմսի վրա գրել է «Ոչ մի փոխարինումներ» բրենդային դեղի կամ բնօրինակ կենսաբանական արտադրանքի համար, ***կամ*** հայտնել է բժշկական պատճառը, որ ո՛չ ջեներիկ դեղը, փոխարինելի կենսանման տարբերակը, ո՛չ էլ ապահովագրված այլ դեղերը, որոնք բուժում են նույն հիվանդությունը, ձեզ չեն օգնի, ապա մենք կապահովագրենք բրենդային դեղը:
- Ձեր համավճարը կարող է ավելի բարձր լինել բրենդային դեղի կամ բնօրինակ կենսաբանական արտադրանքի համար, քան ջեներիկ դեղի կամ փոխարինելի կենսանման տարբերակի համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

2. Ծրագրից նախապես հավանություն ստանալը

Որոշ դեղերի համար դուք կամ ձեր դեղատոմս նշանակողը պետք է ստանաք մեր ծրագրի հավանությունը նախքան ձեր դեղատոմսով դեղը ստանալը: Սա կոչվում է նախնական թույլտվություն: Սա ներդրվել է դեղորայքի անվտանգությունն ապահովելու և որոշակի դեղերի պատշաճ օգտագործումը ուղղորդելու համար: Մենք հնարավոր է չփոխհատուցենք դեղամիջոցի համար, եթե չստանաք հավանություն: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն էջի ներքևի մասում նշված համարով կամ այցելեք մեր կայք go.wellcare.com/enhanced-mapd-pa՝ նախնական թույլտվության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

3. Նախ մեկ այլ դեղ փորձելը

Մենք սովորաբար ցանկանում ենք, որ դուք փորձեք ավելի էժան դեղեր, որոնք նույնքան արդյունավետ են, քան նախքան մենք կփոխհատուցենք ավելի թանկ դեղերը: Օրինակ, եթե Դեղ A-ն և Դեղ B-ն բուժում են նույն հիվանդությունը, և Դեղ A-ն ավելի էժան է, քան Դեղ B-ն, ապա մենք կարող ենք պահանջել, որ դուք սկզբից փորձեք Դեղ A-ն:

Եթե Դեղ A-ն ձեզ **չի** օգնում, ապա մենք այնուհետև կապահովագրենք Դեղ B-ն: Սա կոչվում է փուլային բուժում: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն էջի ներքևի մասում նշված համարով կամ մեր կայքում go.wellcare.com/enhanced-mapd-st՝ փուլային բուժման մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

4. Քանակի սահմանափակումներ

Որոշ դեղերի համար մենք սահմանափակում ենք դեղի քանակը, որը դուք կարող եք ստանալ: Սա կոչվում է քանակի սահմանափակում: Օրինակ, եթե անվտանգ է համարվում որոշակի դեղի համար օրական ընդամենը մեկ հաբ ընդունելը, մենք կարող ենք սահմանափակել, թե ինչ քանակությամբ դեղ կարող եք ստանալ ամեն անգամ, երբ լրացնում եք ձեր դեղատոմսը:

Պարզելու համար, թե արդյոք այս կանոնները կիրառելի են ձեր կողմից ընդունվող կամ ձեր ուզած դեղի համար, ստուգեք *Դեղերի ցանկը*: Ամենաթարմ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն կամ այցելեք մեր կայքը՝ go.wellcare.com/druglist-6: Եթե համաձայն չեք մեր ապահովագրական որոշման հետ՝ հիմնված վերոնշյալ պատճառներից որևէ մեկի վրա կարող եք բողոքարկել: Կարդացեք **Գլուխ 9**-ը՝ այս *Անդամի ձեռնարկում*:

D. Ինչու կարող է չապահովագրվել ձեր դեղը

Մենք փորձում ենք անել այնպես, որ ձեր դեղերի ապահովագրությունը համապատասխանի ձեզ, սակայն երբեմն դեղը կարող է չապահովագրվել այնպես, ինչպես դուք կցանկանայիք: Օրինակ.

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Այն դեղը, որը ցանկանում եք ընդունել, ապահովագրված չէ մեր ծրագրի կողմից: Դեղը կարող է չլինել մեր *Դեղերի ցանկում* : Մենք հնարավոր է փոխհատուցենք դեղի ջեներիկ տարբերակը, սակայն ոչ բրենդային տարբերակը, որը ցանկանում եք ընդունել: Դեղը կարող է նոր լինել, ու մենք դեռևս չենք վերանայել դրա ապահովությունն ու արդյունավետությունը:

- Մեր ծրագիրն ապահովագրում է դեղը, սակայն կան հատուկ կանոններ կամ սահմանափակումներ ապահովագրության վերաբերյալ: Ինչպես արդեն բացատրվել է վերևում՝ **Բաժին C** -ում, մեր պլանով ապահովագրված որոշ դեղեր ունեն կանոններ, որոնք սահմանափակում են դրանց օգտագործումը: Որոշ դեպքերում դուք կամ դեղատոմս դուրս գրողը կարող եք ցանկանաք մեզանից բացառություն խնդրել:

- Այս դեղը ապահովագրված է, բայց ծախսերի բաշխման կարգում այն ձեր ծախսերը դարձնում է ավելի մեծ, քան կարծում էիք, որ դրանք կլինեն:

Կան բաներ, որոնք դուք կարող եք անել, եթե մենք չապահովագրենք դեղը այնպես, ինչպես դուք եք ցանկանում, որ մենք այն ապահովագրենք:

D1. Ժամանակավոր պաշարի ստացումը

Որոշ դեպքերում մենք կարող ենք ձեզ տրամադրել դեղի ժամանակավոր պաշար, երբ ձեր դեղը մեր *Դեղերի ցանկ*-ում չկա կամ որևէ ձևով սահմանափակված է: Սա ձեզ ժամանակ է տալիս խոսել ձեր մատակարարի հետ մեկ այլ դեղ ընդունելու մասին կամ խնդրել մեզ ապահովագրել այդ դեղը:

Դեղի ժամանակավոր պաշար ստանալու համար դուք պետք է համապատասխանեք հետևյալ երկու կանոններին.

1. Ձեր ընդունած դեղը՝
   - այլևս մեր *Դեղերի ցանկում* չէ **կամ**
   - երբեք մեր *Դեղերի ցանկում* չի եղել **կամ**
   - այժմ որևէ կերպ սահմանափակվում է:
2. Դուք պետք է լինեք հետևյալ իրավիճակներից մեկում.
   - Դուք եղել եք մեր ծրագրում անցյալ տարի:
     - Մենք կապահովագրենք ձեր դեղի ժամանակավոր պաշարն օրացուցային տարվա առաջին **90 օրվա ընթացքում**:
     - Այս ժամանակավոր պաշարը նախատեսված է մինչև 30 օրվա համար մանրածախ դեղատանը և մինչև 31 օրվա համար՝ երկարաժամկետ խնամքի դեղատանը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Եթե ձեր դեղատոմսը դուրս է գրված ավելի քիչ օրերի համար, մենք թույլ կտանք դեղատոմսի մի քանի վերահամալրումներ, մինչև առավելագույնը 30 օրվա դեղորայք մանրածախ դեղատանը և մինչև 31 օրվա պաշար երկարատև խնամքի դեղատանը: Դուք պետք է ստանաք դեղատոմսով դեղը ցանցի դեղատնից:
- Երկարատև խնամքի դեղատունը կարող է մեկ անգամվա համար դեղը դուրս գրել փոքր քանակներով՝ վատնումը կանխելու նպատակով:

- Դուք նոր եք միացել մեր պլանին:
  - Մենք ապահովագրում ենք ձեր դեղի ժամանակավոր պաշարը **մեր պլանին ձեր անդամակցության առաջին 90 օրվա ընթացքում**:
  - Այս ժամանակավոր պաշարը նախատեսված է մինչև 30 օրվա համար մանրածախ դեղատանը և մինչև 31 օրվա համար՝ երկարաժամկետ խնամքի դեղատանը:
  - Եթե ձեր դեղատոմսը դուրս է գրված ավելի քիչ օրերի համար, մենք թույլ կտանք դեղատոմսի մի քանի վերահամալրումներ, մինչև առավելագույնը 30 օրվա դեղորայք մանրածախ դեղատանը և մինչև 31 օրվա պաշար երկարատև դեղատանը: Դուք պետք է ստանաք դեղատոմսով դեղը ցանցի դեղատնից:
  - Երկարատև խնամքի դեղատունը կարող է մեկ անգամվա համար դեղը դուրս գրել փոքր քանակներով՝ վատնումը կանխելու նպատակով:
- Եթե դուք եղել եք մեր պլանի ավելի քան 90 օր և բնակվում եք երկարատև խնամքի հաստատությունում ու պաշարի անհապաղ կարիք ունեք:
  - Մենք ապահովագրում ենք մեկ 31-օրյա պաշար կամ ավելի քիչ, եթե ձեր դեղատոմսը դուրս է գրված ավելի քիչ օրերի համար: Սա ի լրումն վերը նշված ժամանակավոր պաշարի:
  - Եթե ձեր բուժսպասարկման մակարդակը փոխվի (օրինակ՝ տեղափոխվեք երկարատև խնամքի հաստատություն կամ հիվանդանոց կամ դուրս գաք այդպիսի հաստատությունից), մենք կփոխհատուցենք մեկ ժամանակավոր 30-օրյա պաշար: Եթե ձեր դեղատոմսը դուրս է գրված ավելի քիչ օրերի համար, մենք թույլ կտանք վերալցումներ՝ տրամադրելու ձեզ մինչև առավելագույնը 30 օրվա պաշար:

D2. Ինչպես խնդրել ժամանակավոր պաշար

Դեղորայքի ժամանակավոր պաշար խնդրելու համար խնդրում ենք դիմել Անդամների սպասարկման կենտրոն:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Երբ ստանում եք դեղի ժամանակավոր պաշար, դուք պետք է խորհրդակցեք ձեր մատակարարի հետ, որպեսզի հնարավորինս շուտ որոշեք՝ ինչ անել, երբ ձեր ժամանակավոր պաշարն ավարտվի: Ահա ձեր տարբերակները.

- Անցեք մեկ այլ դեղի:

  Մեր ծրագիրը կարող է ներառել մեկ այլ դեղամիջոց, որն աշխատում է ձեզ համար: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն ու խնդրեք նույն հիվանդությունը բուժող ապահովագրված դեղերի ցանկը: Այս ցուցակը կարող է օգնել ձեր մատակարարին գտնել ապահովագրված դեղը, որը կարող է ձեզ օգնել:

  ԿԱՄ

- Բացառություն հայցեք:

  Դուք և ձեր մատակարարը կարող եք խնդրել մեզ բացառություն անել: Օրինակ՝ կարող եք խնդրել մեզ ապահովագրել դեղը, որը մեր *Դեղերի ցանկում* չկա կամ խնդրել մեզ ապահովագրել դեղն առանց սահմանափակումների: Եթե ձեր մատակարարն ասի, որ դուք լավ բժշկական հիմնավորում ունեք բացառություն ստանալու համար, ապա նա կարող է օգնել ձեզ՝ խնդրելու նման բացառություն:

  Բացառություն հայցելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարդացեք **Գլուխ 9**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

  Եթե ձեզ օգնություն է հարկավոր բացառություն խնդրելու համար, դիմեք Անդամների սպասարկման բաժին:

E. Ձեր դեղերի ապահովագրության փոփոխությունները

Դեղերի ապահովագրության փոփոխությունների հիմնական մասը տեղի է ունենում հունվարի 1-ին, սակայն մենք կարող ենք ավելացնել կամ հեռացնել դեղերը մեր *Դեղերի ցանկից* տարվա ընթացքում: Մենք նաև կարող ենք փոխել դեղերի վրա կիրառվող մեր կանոնները: Օրինակ, մենք կարող ենք՝

- Որոշել պահանջել, թե չպահանջել դեղի նախօրոք հաստատում (PA) (թույլտվություն մեզանից՝ նախքան կկարողանաք դեղ ձեռք բերել):
- Ավելացնել կամ փոփոխել ձեզ տրամադրվող դեղի քանակը (քանակի սահմանափակումներ):
- Ավելացրեք կամ փոխեք փուլային բուժման սահմանափակումները դեղամիջոցի վրա (դուք պետք է փորձեք մեկ դեղամիջոց, նախքան մենք ապահովագրենք մեկ այլ դեղամիջոց):
- Բնօրինակ կենսաբանական արտադրանքը փոխարինեք կենսաբանական արտադրանքի փոխարինելի կենսանման տարբերակով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Մենք պետք է հետևենք Medicare-ի պահանջներին, նախքան մեր պլանի *Դեղերի ցանկը* փոխելը: Դեղամիջոցների այս կանոնների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք **Բաժին C**-ն:

Եթե ընդունում եք դեղ, որը ապահովագրված էր տարվա **սկզբին**, մենք սովորաբար չենք հեռացնի կամ փոփոխի այդ դեղի ապահովագրությունը **տարվա ընթացքում,** քանի դեռ.

- շուկայում հայտնվում է նոր, ավելի էժան դեղ, որը գործում է նույնքան լավ, որքան *Դեղերի ցանկում* եղածը, **կամ**
- մենք տեղեկանում ենք, որ դեղն անվտանգ չէ, **կամ**
- դեղը հեռացված է շուկայից:

Ի՞նչ տեղի կունենա, եթե ձեր կողմից ընդունվող դեղի ապահովագրական ծածկույթը փոխվի:

Տեղեկանալու համար, թե ինչ է տեղի ունենում, երբ մեր *Դեղերի ցանկը* փոխվում է, դուք միշտ կարող եք՝

- Ստուգեք մեր ընթացիկ *Դեղերի ցանկ*-ն առցանց՝ go.wellcare.com/druglist-6 **կամ**
- Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն էջի ներքևի համարով՝ մեր ընթացիկ *Դեղերի ցանկը* ստուգելու համար:

Փոփոխություններ, որ մենք կարող ենք կատարել *Դեղերի ցանկում*, որոնք կազդեն ձեզ վրա պլանի ընթացիկ տարվա ընթացքում

Որոշ փոփոխություններ *Դեղերի ցանկում* տեղի կունենան անմիջապես: Օրինակ.

Նոր ջեներիկ դեղ է հասանելի դառնում: Երբեմն նոր, ջեներիկ դեղ կամ կենսանման է ի հայտ գալիս շուկայում, որը նույն արդյունավետությունն ունի, ինչ *Դեղերի ցանկի* բրենդային դեղը կամ բնօրինակ կենսաբանական արտադրանքը: Սա տեղի ունենալու դեպքում մենք կարող ենք հեռացնել բրենդային դեղը և ավելացնել նոր անմակնիշ դեղ, սակայն նոր դեղի համար արժեքը կմնա նույնը կամ կլինի ավելի էժան ձեզ համար: Նոր ջեներիկ դեղն ավելացնելուց հետո մենք կարող ենք նաև որոշել պահել բրենդային դեղը ցանկում, սակայն փոփոխել դրա ապահովագրության կանոնները կամ սահմանափակումները:

- Մենք կարող ենք չտեղեկացնել ձեզ, նախքան փոփոխություն կատարելը, սակայն ձեզ կծանուցենք այն փոփոխության մասին, որն իրականացրել ենք, երբ դա տեղի ունենա:
- Դուք կամ ձեր մատակարարը կարող եք «բացառություն» խնդրել այս կանոններից: Ձեզ կուղարկենք ծանուցագիր, որը պարունակում է բացառություն խնդրելու քայլերը: Բացառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարդացեք **Գլուխ 9**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Հեռացնել ոչ անվտանգ դեղերը և այլ դեղեր, որոնք հանվել են շուկայից: Երբեմն կարող է հայտնաբերվել, որ դեղը անվտանգ չէ կամ այն կարող է հանվել շուկայից այլ պատճառով: Եթե դա տեղի ունենա, մենք կարող ենք անմիջապես հանել այն մեր *Դեղերի ցանկից*: Եթե դուք ընդունում եք դեղը, մենք ձեզ ծանուցում կուղարկենք փոփոխությունը կատարելուց հետո: Խնդրում ենք խոսել ձեր բժշկի կամ այլ դեղատոմս դուրս գրողի հետ, որը կօգնի ձեզ որոշել, թե արդյոք *Դեղերի ցանկում* կա նմանատիպ դեղ, որը կարող եք փոխարենն ընդունել:

Մենք կարող ենք իրականացնել այլ փոփոխություններ, որոնք ազդում են ձեր կողմից ընդունվող դեղերի վրա: Մենք նախօրոք կտեղեկացնենք մեր *Դեղերի ցանկի* այլ փոփոխությունների մասին: Այս փոփոխությունները կարող են տեղի ունենալ, եթե.

- FDA-ը տրամադրում է նոր ուղեցույցներ կամ դեղի մասին առկա են նոր կլինիկական ուղեցույցներ:

Այս փոփոխությունների դեպքում, մենք՝

- Կտեղեկացնենք ձեզ առնվազն 30 օր առաջ, նախքան մեր *Դեղերի ցուցակում* փոփոխություն կանենք, **կամ**
- Կտեղեկացնենք ձեզ և կտրամադրենք դեղի 30 օրվա պաշար, երբ դուք կրկին դուրսգրում խնդրեք:

Սա ձեզ ժամանակ է տալիս խոսելու ձեր բժշկի կամ այլ դեղատոմս դուրս գրողի հետ: Նրանք կարող են օգնել Ձեզ որոշել հետևյալ հարցերը՝

- Արդյոք կա նմանատիպ դեղ մեր *Դեղերի ցանկում*, որը դուք կարող եք ընդունել դրա փոխարեն, **կամ**
- Եթե դուք պետք է բացառություն խնդրեք այդ փոփոխություններից, որպեսզի շարունակեք ստանալ այդ ապահովագրված դեղը կամ դեղի տարբերակը, որը դուք ընդունում եք: Բացառություն հայցելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարդացեք **Գլուխ 9**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

Փոփոխություններ *Դեղերի ցանկում*, որոնք կազդեն ձեզ վրա պլանի ընթացիկ տարվա ընթացքում

Դուք կարող եք փոփոխություններ անել ձեր կողմից ընդունվող դեղերում, որոնք նկարագրված չեն վերևում և այս պահին ձեր վրա ազդեցություն չեն թողնում: Նման փոփոխությունների դեպքում, եթե դուք ընդունում եք դեղ, որն ապահովագրված էր տարվա **սկզբին**, մենք սովորաբար չենք հեռացնի կամ փոփոխի այդ դեղի ապահովագրությունը **մնացած տարվա ընթացքում**:

Օրինակ, եթե մենք հեռացնենք ձեր կողմից ընդունվող դեղը, ավելացնենք ձեր կողմից դեղի համար վճարվող գումարը կամ սահմանափակենք դրա օգտագործումը, ապա փոփոխությունը չի ազդի ձեր կողմից դեղի օգտագործման վրա կամ թե դուք որքան եք վճարում դեղի համար տարվա մնացած ժամանակի ընթացքում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Եթե այս փոփոխություններից որևէ մեկը տեղի է ունենում ձեր կողմից ընդունվող դեղի համար (բացառությամբ վերը նշված բաժնում նշված փոփոխությունների), փոփոխությունը չի ազդի ձեր օգտագործման վրա մինչև հաջորդ տարվա հունվարի 1-ը:

Մենք ձեզ ուղղակիորեն չենք հայտնի այս տեսակի փոփոխությունների մասին ընթացիկ տարվա ընթացքում: Դուք պետք է ստուգեք *Դեղերի ցանկ*-ը պլանի հաջորդ տարվա համար (երբ ցանկը հասանելի է՝ գրանցման համար բաց ժամանակաշրջանում), որպեսզի տեսնեք, թե արդյոք կան փոփոխություններ, որոնք կազդեն ձեզ վրա պլանի հաջորդ տարվա ընթացքում:

F. Դեղի ապահովագրություն հատուկ դեպքերում

F1. Հիվանդանոցում կամ որակավորված բուժքույրական հաստատությունում մնալու համար, որն ընդգրկում է մեր ծրագիրը

Եթե դուք հիվանդանոց կամ որակավորված բուժքույրական հաստատություն եք պառկում, երբ դա ապահովագրված է մեր պլանով, մենք սովորաբար կապահովագրենք ձեր դեղերի արժեքն այդ ընթացքում: Դուք համավճար չեք վճարի: Երբ դուրս եք գրվում հիվանդանոցից կամ հմուտ բուժքույրական հաստատությունից, մենք կփոխհատուցենք ձեր դեղերը, եթե դրանք համապատասխանում են ապահովագրության մեր բոլոր կանոններին:

Դեղերի ապահովագրության և Ձեր վճարվելիք գումարների մասին մանրամասների համար կարդացեք **Գլուխ 6**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

F2. Երկարատև խնամքի հաստատությունում

Սովորաբար երկարատև խնամքի հաստատությունը, ինչպես օրինակ՝ բուժքույրական հաստատությունն, ունի իր սեփական դեղատունը, կամ դեղատուն, որը դեղեր է հատկացնում իր բոլոր բնակիչներին: Եթե բնակվում եք երկարատև խնամքի հաստատությունում, դուք կարող եք ձեր դեղերը ստանալ հաստատության դեղատնից, եթե այն մեր ցանցի մասն է:

Տես *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*՝ պարզելու արդյոք ձեր երկարատև խնամքի հաստատության դեղատունը մեր ցանցի մասն է կազմում: Հակառակ դեպքում կամ եթե ձեզ տեղեկություն է հարկավոր, դիմեք Անդամների սպասարկման ծառայություն:

F3. Medicare-ի կողմից հավաստագրված հոսպիս ծրագիր

Դեղերը երբեք չեն ապահովագրվում միաժամանակ և անբուժելի հիվանդների խնամքի հաստատության, և մեր ծրագրի կողմից:

- Կարող եք անդամագրվել Medicare-ի անբուժելի հիվանդների խնամքի հաստատությանը և ձեզ դեղեր են հարկավոր, որոնք չեն ապահովագրվում ձեր անբուժելի հիվանդների խնամքի հաստատության կողմից (օրինակ՝ ցավի, սրտխառնոցի, լուծողական կամ անհանգստության համար դեղեր), քանի որ այն կապված չէ Ձեր մահացու կանխատեսման կամ դրան առնչվող վիճակների հետ: Որոշ դեպքերում մեր ծրագիրը պետք է տեղեկացում ստանա կա՛մ դեղատոմս դուրս գրողից, կա՛մ ձեր անբուժելի հիվանդների խնամքի մատակարարից, որ այդ դեղը չի վերաբերվում ձեր վիճակին, նախքան մենք կկարողանանք ապահովագրել այդ դեղը:
- Մեր ծրագրի կողմից ապահովագրվող չառնչվող դեղերի ստացումը չհետաձգելու համար, դուք կարող եք խնդրել ձեր անբուժելի հիվանդների խնամքի մատակարարին կամ դեղատոմս դուրս գրողին, որ նրանք մեզ տեղեկացնեն, որ դեղը չի առնչվում, նախքան դուք դեղատնից կստանաք այդ դեղը:

Եթե հեռանում եք անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունից, ապա մեր ծրագիրը ապահովագրում է ձեր բոլոր դեղերը: Ձեր Medicare անբուժելի հիվանդների խնամքի նպաստի ավարտից հետո դեղատանը հետաձգումներից խուսափելու համար՝ դեղատուն բերեք այն փաստաթղթերը, որոնք հաստատում են, որ դուք հեռացել եք անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունից:

Կարդացեք այս գլխի ավելի վաղ հատվածները, որոնք պատմում են մեր ծրագրում ընդգրկած դեղերի մասին: Անբուժելի հիվանդների նպաստի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 4**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

G. Դեղերի ապահովության և դեղորայքի տնօրինման ծրագրեր

G1. Ծրագրեր, որոնք օգնում են մեզ ապահով կերպով դեղեր օգտագործել

Ամեն անգամ, երբ դեղատոմս եք համալրում, մենք փնտրում ենք հնարավոր խնդիրներ, ինչպես օրինակ՝ դեղերի սխալներ կամ դեղեր, որոնք.

- կարող է անհրաժեշտ չլինել, քանի որ դուք ընդունում եք մեկ այլ նմանատիպ դեղ, որն անում է նույնը
- կարող են ապահով չլինել ձեր տարիքի կամ սեռի համար
- կարող են վնասել ձեզ, եթե միաժամանակ ընդունեք դրանք
- ունեն բաղադրիչներ, որոնց նկատմամբ դուք ունեք կամ կարող եք ունենալ ալերգիա
- կարող է սխալ լինել քանակի (դեղաչափի) մեջ
- ունեն ափիոնի անապահով բաժիններ ցավազրկող դեղորայքներում

Եթե մենք տեսնենք ձեր կողմից դեղերի օգտագործման հնարավոր խնդիր, մենք կհամագործակցենք ձեր մատակարարի հետ խնդիրը շտկելու ուղղությամբ:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

G2. Մասնակիցներին իրենց դեղերը կառավարելու աջակցման ծրագրեր

Մեր ծրագիրն ունի առողջապահական բարդ կարիքներ ունեցող անդամներին օգնելու ծրագիր: Որոշ դեպքերում դուք կարող եք իրավասու լինել անվճար ծառայություններ ստանալու համար medication therapy management (MTM) ծրագրի միջոցով: Այս ծրագիրը կամավոր է և անվճար: Այս ծրագիրը կարող է օգնել ձեզ ու ձեր մատակարարին համոզվել, որ ձեր դեղերը աշխատում են ձեր առողջությունը բարելավելու համար: Եթե որակավորվեք ծրագրի համար, դեղագործը կամ այլ առողջապահական մասնագետը ձեզ ձեր դեղերի համակողմանի վերանայում կտրամադրի ու կխոսի ձեզ հետ հետևյալի մասին.

- ինչպես առավելագույն օգուտը ստանալ ձեր դեղերից
- ձեր ունեցած մտահոգությունների մասին, օրինակ՝ դեղերի արժեքի ու ազդեցության մասին
- ինչպես լավագույն ձևով ընդունել ձեր դեղերը
- որևէ հարցերի կամ խնդիրների մասին, որոնք ունեք ձեր դեղատոմսերով կամ առանց դեղատոմսի դեղերի հետ կապված

Այնուհետև նրանք ձեզ կտան.

- Այս քննարկման գրավոր ամփոփագիրը. Ամփոփագիրը պարունակում է դեղորայքի գործողության ծրագիր, որը խորհուրդ է տալիս՝ ինչ կարող եք անել ձեր դեղերը լավագույն ձևով օգտագործելու համար:
- Անձնական դեղերի ցանկ, որը ներառում է ձեր ընդունած բոլոր դեղերը, որքան եք ընդունում և երբ և ինչու եք դրանք ընդունում:
- Տեղեկատվություն դեղատոմսով դուրս գրվող դեղերի անվտանգ հեռացման մասին, որոնք վերահսկվող նյութեր են:

Լավ գաղափար է ձեր դեղատոմս գրողի բժշկի հետ խոսել ձեր գործողությունների ծրագրի և դեղերի ցանկի մասին:

- Բերեք ձեր գործողության ծրագիրն ու ձեր դեղորայքի ցուցակը ձեզ հետ այցելության կամ ձեր բժիշկների, դեղագործների ու առողջապահական խնամքի այլ մատակարարների հետ զրուցելիս:
- Վերցրեք ձեր դեղորայքի ցուցակը, երբ հիվանդանոց կամ շտապ օգնության սենյակ եք գնում:

MTM ծրագրերը կամավոր են և անվճար որակավորվող անդամների համար: Եթե մենք ձեր կարիքներին համապատասխանող ծրագիր ունեք, մենք ձեզ կանդամագրենք այդ ծրագրին ու ձեզ տեղեկություններ կուղարկենք: Եթե չեք ցանկանում մասնակցել այդ ծրագրին, խնդրում ենք ասացեք մեզ, որպեսզի մենք հեռացնենք ձեզ:

Եթե հարցեր ունեք այս ծրագրերի վերաբերյալ, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն կամ ձեր գործի համակարգողին:

G3. Դեղերի կառավարման ծրագիր (DMP)՝ աջակցելու անդամներին անվտանգ կերպով օգտագործել իրենց ափիոնային դեղորայքը

Մենք ունենք ծրագիր, որն օգնում է համոզվել, որ անդամներն ապահով կերպով օգտագործում են դեղատոմսով տրվող ափիոնատիպ նյութեր և հաճախակի չարաշահվող այլ դեղամիջոցներ: Այս ծրագիրը կոչվում է Դեղերի կառավարման ծրագիր (DMP):

Եթե դուք օգտագործում եք ափիոնային դեղորայք, որը ստանում եք մի քանի բժիշկներից կամ դեղատներից, կամ եթե դուք վերջերս ունեցել եք ափիոնային գերդոզավորում, մենք կարող ենք խոսել ձեր բժիշկների հետ՝ համոզվելու, որ ձեր կողմից ձեր կողմից ափիոնային դեղորայքների օգտագործումը ճիշտ է և բժշկական տեսակետից անհրաժեշտ: Եթե մենք ձեր դեղատոմսը գրող բժիշկների հետ աշխատանքի արդյունքում որոշենք, որ ափիոնի կամ բենզոդիազեպինի պարունակությամբ նշանակված դեղերի ընդունումը վտանգավոր է ձեզ համար, ապա մենք կարող ենք սահմանափակել ձեր դեղամիջոցները ստանալու գործընթացը: Եթե մենք ձեզ տեղադրենք մեր DMP-ում, սահմանափակումները կարող են ներառել.

- Պահանջվում է, որ դուք ստանաք այդ դեղերի բոլոր դեղատոմսերը որոշ դեղատնից(ներից)
- Պահանջ, որ դուք ստանաք ձեր բոլոր օփիոիդային կամ բենզոդիազեպինային դեղերի դեղատոմսերը որոշակի դեղատոմս դուրս գրող(ներ)ից:
- Սահմանափակելով ափիոնի կամ բենզոդիազեպինի պարունակությամբ դեղերի քանակը՝ մենք ապահովագրում ենք ձեզ

Եթե որոշենք սահմանափակել, թե ինչպես եք ստանալու այդ դեղերը կամ ինր քանակությամբ կարող եք այն ստանալ, մենք ձեզ նախապեսնամակ կուղարկենք: Նամակը կտեղեկացնի ձեզ, թե արդյոք մենք կսահմանափակենք այս դեղերի ապահովագրությունը ձեզ համար, կամ արդյոք ձեզանից կպահանջվի ստանալ այդ դեղերի դեղատոմսերը միայն կոնկրետ մատակարարից կամ դեղատնից:

Դուք կունենաք հնարավորություն՝ տեղեկացնել մեզ, թե որ բժիշկներին և դեղատներն եք նախընտրում և ցանկացած տեղեկություններ, որոնք դուք կ արծում եք, որ կարևոր է մեզ համար իմանալ: Եթե մենք որոշենք սահմանափակել այդ դեղերի ձեր ապահովագրությունը այն բանից հետո,երբ դուք մեզ պատասխան ուղարկեք, մենք կուղարկենք ձեզ ևս մեկ նամակ, որը հաստատում է սահմանափակումները:

Եթե կարծում եք, որ մենք սխալ ենք կատարել և համաձայն չեք մեր որոշման կամ սահմանափակման հետ, դուք և ձեր դեղատոմս գրող բժիշկը կարող եք բողոքարկել այն: Եթե դուք բողոքարկում ներկայացնեք, մենք կվերանայենք ձեր գործը և ձեզ նոր որոշում կտանք: Եթե մենք շարունակենք մերժել ձեր բողոքարկման որևէ մասը՝ կապված այս դեղի հետ ձեր հասանելիության սահմանափակումների վերաբերյալ, մենք ավտոմատ կուղարկենք ձեր հայտը Անկախ վերանայման կազմակերպություն (IRO): (Բողոքարկումների և IRO-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 9**-ը այս *Անդամի ձեռնարկում*:)

DMP-ն կարող է չկիրառվել ձեզ համար, եթե դուք.

- ունեք որոշակի հիվանդություն, օրինակ՝ քաղցկեղ կամ մանգաղային բջիջների հիվանդություն,
- ստանում եք անբուժելի հիվանդների խնամք, պալիատիվ կամ կյանքի ավարտի խնամք, **կամ**
- բնակվում եք երկարատև խնամքի հաստատությունում:

Գլուխ 6. Ինչ եք վճարում ձեր Medicare-ով և Medi-Cal-ով դուրս գրվող դեղերի համար

Ներածություն

Այս գլուխը տեղեկացնում է, թե ինչ եք դուք վճարում ձեր ամբուլատոր դեղերի համար: «Դեղեր» ասելով՝ մենք ի նկատի ունենք.

- Medicare Part D-ի դեղեր, **և**
- Medi-Cal Rx-ի կողմից ապահովագրված դեղեր ու պարագաներ, **և**
- Մեր ծրագրի կողմից ապահովագրված դեղեր ու պարագաներ՝ որպես լրացուցիչ նպաստներ.

Քանի որ դուք իրավասու եք Medi-Cal-ի համար, դուք Լրացուցիչ օգնություն եք ստանում Medicare-ից՝ ձեր Medicare Part D-ի դեղերի համար վճարելու նպատակով: Մենք ձեզ ուղարկեցինք առանձին ներդիր, որը կոչվում է *«Ապահովագրության ապացույցներ լրացում այն մարդկանց համար, ովքեր Լրացուցիչ օգնություն են ստանում դեղատոմսով դեղերի համար վճարելու համար»* (նաև հայտնի է որպես «Ցածր եկամուտների սուբսիդավորման լրացում» կամ «LIS լրացում»), որը պատմում է ձեր դեղերի ապահովագրության մասին: Եթե դուք չունեք այս ներդիրը, խնդրում ենք զանգահարել Անդամի սպասարկման կենտրոն և խնդրել «LIS Ռայդեր»-ը:

> **Լրացուցիչ օգնությունը** Medicare-ի ծրագիր է, որն օգնում է սահմանափակ եկամուտ ու միջոցներ ունեցող անձանց նվազեցնել Medicare Part D-ի դեղերի արժեքները, օրինակ՝ ապահովագինը, հանելիները և համավճարները: Լրացուցիչ օգնությունը նաև կոչվում է «Ցածր եկամտի սուբսիդավորում» կամ «LIS»:

Այլ հիմնական տերմիններ և դրանց բացատրություններն այբբենական կարգով տեղակայված են այս *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

Դեղերի վերաբերյալ մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևյալում.

- Մեր *Ապահովագրված դեղերի ցանկը*:
  - Մենք այն անվանում ենք «*Դեղերի ցանկ*»: Այն տեղեկացնում է ձեզ՝
    - որ դեղերի համար ենք մենք վճարում
    - վեց կարգերից որ մեկում է գտնվում յուրաքանչյուր դեղը:
    - կան արդյոք դեղերի որևէ սահմանափակումներ
  - Եթե ձեզ *Դեղերի ցանկի* պատճեն է հարկավոր, զանգահարեք Անդամների

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

սպասարկման կենտրոն: Դուք կարող եք նաև գտնել մեր *Դեղերի ցանկի* ամենաթարմ օրինակը մեր կայքում՝ go.wellcare.com/druglist-6:

- Դեղերի մեծ մասը, որոնք դուք ստանում եք դեղատնից, ապահովագրված են Wellcare Health Net Dual Align-ի (HMO D-SNP) կողմից: Այլ դեղամիջոցներ, ինչպիսիք են՝ որոշ առանց դեղատոմսի (OTC) դեղեր և որոշ վիտամիններ, կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Medi-Cal Rx վեբ կայք (medi-calrx.dhcs.ca.gov/): Կարող եք նաև զանգահարել Medi-Cal Rx Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 800-977-2273 հեռախոսահամարով: Խնդրում ենք բերել ձեր Medi-Cal-ի շահառուի նույնականացման քարտը (BIC) Medi-Cal Rx-ի միջոցով դեղատոմսեր ստանալու ժամանակ:

- Այս *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 5-ը**:
  - Այն բացատրում է, թե ինչպես ստանալ ամբուլատոր դեղեր մեր պլանի միջոցով:
  - Այն ներառում է կանոնները, որոնց դուք պետք է հետևեք: Այն նաև ներկայացնում է, թե դեղերի որ տեսակները մեր պլանը չի ապահովագրում:
  - Երբ դուք օգտագործում եք ծրագրի «Իրական ժամանակում նպաստների գործիքը»՝ դեղերի ապահովագրություն փնտրելու համար (կարդացեք **Գլուխ 5**-ի **Բաժին B2**-ը), գործիքում ցուցադրվող արժեքն արտացոլում է ձեր գրպանից ակնկալվող ծախսերի նախահաշիվը: Կարող եք նաև զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն լրացուցիչ տեղեկության համար:

- Մեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*:
  - Շատ դեպքերում դուք պետք է օգտվեք ցանցի դեղատնից ձեր ապահովագրված դեղերը ստանալու համար: Ցանցի դեղատներն այն դեղատներն են, որոնք համաձայնվել են աշխատել մեզ հետ:
  - *Մատակարարների և դեղատների տեղեկատուն* պարունակում է մեր ցանցի դեղատների ցուցակ: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 5**-ը այս *Անդամի ձեռնարկում*:

Բովանդակություն

A. *Նպաստների բացատրություն* (EOB) 213

B. Ինչպես հետևել ձեր դեղերի ծախսերին 215

B1. Ի՞նչ անել, եթե այս ամփոփագրում սխալներ գտնեք: 216

B2. Ի՞նչ անել հնարավոր խարդախության դեպքում: 216

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

C. Medicare Part D-ի դեղերի վճարման փուլեր....217
D. Փուլ 1. Սկզբնական ապահովագրության փուլ....218
D1. Դեղատան ձեր ընտրությունները....218
D2. Դեղի երկարաժամկետ պաշար ստանալը....219
D3. Ինչ եք դուք վճարում....219
D4. Սկզբնական ապահովագրության փուլի ավարտը....221
E. Փուլ 2. Ճգնաժամային ապահովագրության փուլ....222
F. Ձեր դեղերի արժեքը, եթե ձեր բժիշկը դուրս է գրում մեկ ամսվանից պակաս պաշար....222
G. Ինչ եք դուք վճարում Մաս D-ի պատվաստանյութերի համար....223
G1. Ինչ է պետք իմանալ նախքան պատվաստանյութ ստանալը....223
G2. Ինչքան եք դուք վճարում Medicare Part D-ի կողմից ապահովագրված պատվաստանյութի համար....223

A. *Նպաստների բացատրություն* (EOB)

Մեր պլանը հետևում է ձեր դեղերի ծախսերին և վճարումներին, որոնք դուք կատարում եք, երբ դեղատոմսեր եք ստանում դեղատնում: Մենք հետևում ենք երկու տեսակի ծախսերին.

- Ձեր **գրպանից վճարվող ծախսեր**: Սա դրամի այն քանակն է, որը դուք կամ ձեր անունից որևէ մեկը վճարում է ձեր դեղատոմսային դեղերի համար: Սա ներառում է այն, ինչ դուք վճարում եք, երբ ստանում եք Մաս D-ի ապահովագրված դեղը, ընտանիքի կամ ընկերների կողմից ձեր դեղերի համար կատարված ցանկացած վճարում Medicare-ի Լրացուցիչ օգնություն ծրագրով, գործատուի կամ արհմիության առողջապահական ապահովագրության պլաններով, Հնդկացիների առողջապահական ծառայության ծրագրերով, AIDS-ի դեմ դեղերի աջակցության ծրագրերով, բարեգործական կազմակերպությունների և Պետական դեղագործական աջակցության ծրագրերով (SPAP-ներ):

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Ձեր **դեղերի ընդհանուր ծախսերը**: Սա ձեր Մաս D-ի ապահովագրված դեղերի համար կատարված բոլոր վճարումների ընդհանուր գումարն է: Սա ներառում է այն, ինչ վճարել է մեր պլանը, և այն, ինչ վճարել են այլ ծրագրեր կամ կազմակերպություններ՝ ձեր Մաս D-ի ապահովագրված դեղերի համար:

Երբ դուք մեր պլանի միջոցով ստանում եք դեղեր, մենք ուղարկում ենք հաշվետվություն, որը կոչվում է *Նպաստների բացատրություն (EOB)*: Մենք այն հակիրճ անվանում ենք EOB: EOB-ն հաշիվ չէ: EOB-ում ավելի շատ տեղեկություններ են պարունակվում ձեր կողմից ընդունվող դեղերի մասին, օրինակ՝ գների աճի և այլ դեղերի մասին, որոնք կարող են հասանելի լինել ավելի ցածր ծախսերի բաշխմամբ: Դուք կարող եք ձեր դեղատոմս դուրս գրողի հետ զրուցել այս ավելի էժան տարբերակների մասին: EOB-ին ներառում է.

- **Ամսվա տեղեկությունները**: Ամփոփագիրը պատմում է, թե ինչ դեղեր եք ստացել նախորդ ամսվա ընթացքում: Այն ցույց է տալիս դեղերի ընդհանուր ծախսերը, ինչ ենք մենք վճարել, և ինչ եք վճարել դուք կամ ուրիշները ձեր համար:
- **Ընդհանուր գումարները՝ հունվարի 1-ից բոլոր տարիների համար:** Սա ցույց է տալիս դեղերի ընդհանուր ծախսերը և ձեր դեղերի համար կատարված ընդհանուր վճարումները՝ տարվա սկզբից սկսած:
- **Դեղերի գների վերաբերյալ տեղեկատվություն**: Սա դեղերի ընդհանուր գինն է և դեղերի գնի փոփոխությունները դեղատոմսի՝ նույն քանակի յուրաքանչյուր հայտի առաջին համալրումից սկսած:
- **Ավելի ցածր գնով այլընտրանքներ**: Առկայության դեպքում, տեղեկություններ այլ հասանելի դեղերի մասին՝ ավելի ցածր ծախսերի բաշխմամբ յուրաքանչյուր դեղատոմսի համար:

Մենք առաջարկում ենք դեղերի ապահովագրություն, որոնք ապահովագրված չեն Medicare-ի կողմից:

- Այս դեղերի համար արվող վճարումները չեն հաշվվում որպես ձեր գրպանից վճարվող ընդհանուր ծախսեր:
- Դեղերի մեծ մասը, որոնք դուք ստանում եք դեղատնից, փոխհատուցվում են պլանի կողմից: Այլ դեղամիջոցներ, ինչպիսիք են՝ որոշ առանց դեղատոմսի (OTC) դեղեր և որոշ վիտամիններ, կարող են ապահովագրվել Medi-Cal Rx-ով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Medi-Cal Rx կայք՝ (www.medi-calrx.dhcs.ca.gov): Կարող եք նաև զանգահարել Medi-Cal Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 800-977-2273 հեռախոսահամարով: Խնդրում ենք բերել ձեր Medi-Cal-ի շահառուի նույնականացման քարտը (BIC) Medi-Cal Rx-ի միջոցով դեղատոմսեր ստանալու ժամանակ:
- Պարզելու համար, որ դեղերն են ապահովագրվում մեր ծրագրով, տեսեք մեր *Դեղերի ցուցակը*:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

B. Ինչպես հետևել ձեր դեղերի ծախսերին

Ձեր դեղերի արժեքներին ու ձեր վճարումներին հետևելու համար մենք օգտագործում ենք ձեզանից ու ձեր դեղատնից ստացված արձանագրությունները: Ահա թե ինչպես կարող եք օգնել մեզ.

1. **Օգտագործեք ձեր Անդամի ID քարտը:**

   Ցույց տվեք ձեր Անդամի ID քարտն ամեն անգամ, երբ դեղատոմս եք համալրում: Սա օգնում է մեզ տեղեկանալ, թե ինչ դեղատոմսով դեղեր եք ստանում ու ինչքան եք վճարում:

2. **Համոզվեք, որ մենք ունենք մեզ անհրաժեշտ տեղեկությունները:**

   Դուք կարող եք խնդրել մեզ փոխհատուցել ձեզ դեղի արժեքի մեր բաժինը: Ուղարկեք վճարման ձեր հայցը՝ որևէ հաշիվների կամ անդորրագրերի հետ միասին հետևյալ հասցեով՝

   Դեղատան հայցերի հասցե՝

   Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)

   Wellcare Medicare Part D Claims

   Attn: Member Reimbursement Department

   P.O. Box 31577

   Tampa, FL 33631-3577

   Ահա այն դեպքերը, երբ պետք է մեզ ներկայացնեք ձեր անդորրագրերի պատճենները.

   - Երբ դուք ցանցի դեղատնից ապահովագրված դեղ եք գնում հատուկ գնով կամ օգտագործում եք զեղչային քարտ, որը մեր պլանի նպաստի մասը չէ:
   - Երբ դուք համավճար եք վճարում դեղերի համար, որոնք ստանում եք դեղի արտադրողի հիվանդին օգնելու ծրագրի շրջանակներում:
   - Երբ դուք ապահովագրված դեղեր եք ստանում արտացանցային դեղատնից:
   - Երբ դուք ապահովագրված դեղի անբողջական գինն եք վճարում հատուկ իրավիճակներում:

   Դեղի արժեքի մեր բաժինը ձեզ փոխհատուցելու խնդրանքով մեզ դիմելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք **Գլուխ 7**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

3. Մեզ տեղեկություններ ուղարկեք ձեր փոխարեն որևէ մեկի կողմից արված վճարումների մասին:

Որոշ այլ մարդկանց կամ կազմակերպությունների կողմից արված վճարումները նույնպես հաշվարկվում են որպես ձեր գրպանից վճարվող գումարներ: Օրինակ՝ Դեղերի ծախսերի հետ կապված նահանգային աջակցության ծրագրի, AIDS-ի Դեղերի աջակցության ծրագրի (ADAP), Հնդկացիների առողջապահական ծառայությունների ու շատ բարեգործական կազմակերպությունների կողմից արված վճարումները հաշվարկվում են որպես ձեր գրպանից վճարվող արժեք: Սա կարող է օգնել ձեզ որակավորվել ճգնաժամային ապահովագրության համար: Երբ դուք հասնում եք Ճգնաժամային ապահովագրության փուլին, մեր պլանը վճարում է ձեր Medicare-ի Part D-ով ապահովագրված դեղերի բոլոր արժեքները մինչև տարվա վերջ:

4. Ստուգեք ձեզ ուղարկված EOB-ները:

Երբ դուք փոստով ստանում եք EOB, խնդրում ենք համոզվել, որ այն ամբողջական է և ճշգրիտ:

- **Դուք ճանաչո՞ւմ եք յուրաքանչյուր դեղատան անունը:** Ստուգեք ամսաթվերը: Դուք այդ օրը դեղ ստացե՞լ եք:
- **Դուք ստացե՞լ եք նշված դեղերը:** Արդյո՞ք դրանք համապատասխանում են ձեր անդորրագրերում նշվածներին: Արդյո՞ք դեղերը համապատասխանում են ձեր բժշկի նշանակածին:

B1. Ի՞նչ անել, եթե այս ամփոփագրում սխալներ գտնեք:

Եթե ինչ-որ բան շփոթեցնող է կամ ճիշտ չի թվում այս EOB-ում, խնդրում ենք զանգահարել Wellcare Health Net Dual Align-ի (HMO D-SNP) Անդամների սպասարկման կենտրոն:

B2. Ի՞նչ անել հնարավոր խարդախության դեպքում:

Եթե այս ամփոփագիրը ցույց է տալիս դեղեր, որոնք դուք չեք ընդունում կամ որևէ այլ բան, որը ձեզ կասկածելի է թվում, խնդրում ենք կապվել մեզ հետ:

- Զանգահարեք մեզ՝ Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի Անդամների սպասարկման կենտրոն:
- Կամ զանգահարեք Medicare-ին 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Կարող եք զանգահարել այս համարներին անվճար:

- Եթե կասկածում եք, որ Medi-Cal ստացող մատակարարը կատարել է խարդախություն, վատնում կամ չարաշահում, ապա ձեր իրավունքն է հայտնել այդ մասին՝ զանգահարելով 1-800-822-6222 գաղտնի անվճար հեռախոսահամարով: Medi-Cal-ի խարդախության մասին հայտնելու այլ մեթոդներ կարող եք գտնել հետևյալ հասցեում՝ www.dhcs.ca.gov/individuals/Pages/StopMedi-CalFraud.aspx:

Եթե կարծում եք, որ հաշվետվության մեջ ինչ-որ բան սխալ է կամ բաց է թողնված կամ ունեք հարցեր, խնդրում ենք զանգահարել Անդամի սպասարկման կենտրոն: **Փոստով Մաս D-ի «Նպաստների բացատրության» (Մաս D EOB) թղթային տարբերակը ստանալու փոխարեն՝ այժմ ունեք դրա էլեկտրոնային տարբերակը ստանալու ընտրության (հնարավորության) իրավունք:** Կարող եք հայցել դա՝ այցելելով express-scripts.com/rx կայք: Եթե ընտրեք մասնակցությունը, ապա երբ ձեր Մաս D-ի էլեկտրոնային EOB-ն պատրաստ լինի դիտելու կստանաք նամակ այն տպելու կամ ներբեռնելու համար: Մաս D-ի էլեկտրոնային EOB-ները կոչվում են նաև Մաս D-ի անթուղթ EOB-ներ: Ոչ թղթային Մաս D EOB-ները տպագիր Մաս D EOB-ների ճշգրիտ պատճեններն են (պատկերները): Պահեք այս EOB-ները: Դրանք ձեր դեղերի ծախսերի մասին կարևոր արձանագրություններ են:

C. Medicare Part D-ի դեղերի վճարման փուլեր

Մեր պլանի ներքո գոյություն ունեն ձեր Medicare Part D դեղերի ապահովագրության վճարման երկու փուլեր: Թե որքան կվճարեք յուրաքանչյուր դեղատոմսի համար, կախված է Լրացուցիչ օգնություն ծրագրի ձեր մակարդակից և այն փուլից, որում գտնվում եք դեղատոմսը լրացնելիս կամ կրկնակի լրացնելիս: Ահա այդ երկու փուլերը՝

Փուլ 1. Սկզբնական ապահովագրության փուլ	**Փուլ 2. Ճգնաժամային ապահովագրության փուլ**
Այս փուլում մենք վճարում ենք ձեր դեղերի արժեքների մի մասը, իսկ դուք վճարում ենք ձեր բաժինը: Ձեր բաժինը կոչվում է համավճար: Դուք սկսում եք այս փուլում, երբ ստանում եք տարվա ձեր առաջին դեղատոմսը:	Այս փուլում մենք վճարում ենք Ձեր դեղերի ամբողջ արժեքը մինչև 2027 թ. դեկտեմբերի 31-ը: Դուք սկսում եք այս փուլը, երբ վճարել եք գրպանից կատարվող անձնական ծախսերի որոշակի գումար:

D. Փուլ 1. Սկզբնական ապահովագրության փուլ

Սկզբնական ապահովագրության փուլի ընթացքում մենք վճարում ենք ձեր ապահովագրված դեղերի արժեքի մի բաժինը, իսկ դուք վճարում ենք ձեր բաժինը: Ձեր բաժինը կոչվում է համավճար: Համավճարը կախված է նրանից, թե ծախսերի բաշխման որ կարգում է գտնվում դեղն ու որտեղից եք Դուք այն ստանում:

Ծախսերի բաշխման կարգերը դեղերի խմբեր են, որոնք ունեն նույն համավճարը: Մեր *Դեղերի ցանկի* յուրաքանչյուր դեղ գտնվում է ծախսերի բաշխման վեց կարգերից մեկում: Սովորաբար, որքան բարձր է կարգի համարը, այնքան բարձր է համավճարը: Ձեր դեղամիջոցների համար ծախսերի բաշխման համար դիմեք մեր *Դեղերի ցցանկին*:

- Կարգ 1 (ջեներիկ) ներառում է նախընտրելի ջեներիկ դեղեր և կարող է ներառել որոշ ապրանքանիշային դեղեր:
- Կարգ 2-ի (Նախընտրելի ապրանքանիշային դեղեր) դեղերը նարառում են նախընտրելի բրենդային դեղեր և կարող է ներառել որոշ ջեներիկ դեղեր:
- Կարգ 3 (ոչ նախընտրելի դեղ) ներառում է ոչ նախընտրելի ապրանքանիշային և ոչ նախընտրելի ջեներիկ դեղեր:
- Կարգ 4 (ներարկային դեղեր) ներառում է որոշ դեղեր, որոնք կառավարվում են ներարկման միջոցով կամ օգտագործվում են հիվանդության (պատվաստանյութերի) կանխարգելման համար:
- Կարգ 5-ը (մասնագիտական մակարդակի դեղեր) ներառում է բարձր արժեքի ապրանքանիշային և ջեներիկ դեղեր: Այս կարգի դեղերը չեն կարող ավելի ցածր կարգի վճարման համար բացառություններ ունենալ:
- Կարգ 6 (որոշ բուժսպասարկման դեղեր) ներառում է որոշ ջեներիկ և բրենդային դեղեր, որոնք սովորաբար օգտագործվում են որոշակի քրոնիկ հիվանդությունների բուժման համար կամ հիվանդության կանխարգելման համար (պատվաստանյութեր):

D1. Դեղատան ձեր ընտրությունները

Թե որքան եք դուք վճարելու դեղի համար, կախված է նրանից, թե արդյոք դուք ստացել եք դեղը՝

- Ցանցային մանրածախ դեղատուն **կամ**
- ցանցային մանրածախ դեղատուն, որն առաջարկում է ծախսերի նախընտրելի բաշխում: Ծախսերը կարող են ավելի քիչ լինել դեղատներում, որոնք առաջարկում են ծախսերի նախընտրելի բաշխում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Արտացանցային դեղատնից: Սահմանափակ դեպքերում մենք կփոխհատուցենք արտացանցային դեղատներից դեղատոմսի համալրումը: Կարդացեք **Գլուխ 5-ը** այս *Անդամի ձեռնարկում*՝ տեսնելու համար, թե երբ ենք մենք դա անում:
- Մեր պլանի փոստով պատվիրելու դեղատատունը:

Դեղատան ընտրությունների մասին մանրամասների համար կարդացեք **Գլուխ 5-ը** այս *Անդամի ձեռնարկում* և մեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուում:*

D2. Դեղի երկարաժամկետ պաշար ստանալը

Որոշ դեղերի համար դուք կարող եք ստանալ երկարատև պաշար (նաև կոչվում է «ընդլայնված պաշար»)՝ ձեր դեղատոմսը համալրելիս: Երկարատև պաշարը 100 օրվա համար պաշար է: Այն արժե նույնքան, որքան մեկ ամսվա պաշարը:

Մանրամասների համար, թե որտեղ և ինչպես կարելի է ձեռք բերել դեղի երկարաժամկետ պաշար, կարդացեք **Գլուխ 5-ը** այս *Անդամի ձեռնարկում* կամ մեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուում*:

D3. Ինչ եք դուք վճարում

Սկզբնական ապահովագրության փուլում դուք, հնարավոր է, պետք է համավճար վճարեք ամեն անգամ դեղատոմսը համալրելիս: Եթե Ձեր ապահովագրված դեղի արժեքը համավճարից քիչ է, ապա Դուք կվճարեք ավելի ցածր գին:

Դիմեք Անդամների սպասարկման կենտրոն՝ իմանալու համար, թե որքան է ձեր համավճարը ցանկացած ապահովագրված դեղի համար:

Արժեքի ձեր մասնաբաժինը, երբ դուք ապահովագրված դեղատոմսով դեղի մեկ ամսվա կամ երկարաժամկետ պաշար եք ստանում.

	Ստանդարտ կամ նախընտրելի ցանցային դեղատուն **Մեկ ամսվա կամ մինչև 30 օրվա պաշար**	**Ցանցի երկարատև խնամքի դեղատնից** **Մինչև 31 օրվա պաշար**	**Արտացանցային դեղատնից** **Մինչև 30 օրվա պաշար:** **Ապահովագրությունը սահմանափակվում է որոշ դեպքերում: Լրացուցիչ տեղեկությունների համար անցեք Գլուխ 5-ը այս Անդամի ձեռնարկում:**	**Մեր պլանի ստանդարտ կամ նախընտրելի փոստով պատվերի ծառայություն** **Մեկ ամսվա կամ մինչև 34 օրվա պաշար:**
Ծախսերի բաշխման Կարգ 1 (Ձեներիկ) **Ծախսերի բաշխման Կարգ 2** (Նախընտրելի բրենդային) **Ծախսերի բաշխման Կարգ 3** (Ոչ նախընտրելի դեղ) **Ծախսերի բաշխման Կարգ 4** (Ներարկային դեղեր) **Ծախսերի բաշխման Կարգ 5** (Մասնագիտական մակարդակի դեղեր) Սահմանափակվում է 30-օրյա պաշարով մեկ համալրման համար:	**Ծախսերի բաշխման 1-5-րդ մակարդակների համար.** Բոլոր դեղերի մեկամսյա պաշարի համար ձեր համավճարը կարող է տարբեր լինել՝ կախված ձեր Լրացուցիչ օգնության մակարդակից: Ձեներիկ դեղերի համար (այդ թվում՝ բրենդային դեղերի, որոնք համարվում են ձեներիկ) դուք վճարում եք. • $0 համավճար կամ • $1.65 համավճար կամ • $5.80 համավճար՝ մեկ ամսվա պաշարի համար Բոլոր այլ ապահովագրված դեղերի համար դուք վճարում եք. • $0 համավճար կամ • $5 համավճար կամ • $14.40 համավաճար՝ մեկ ամսվա պաշարի համար Լրացուցիչ օգնությունը ծրագիր է, որն օգնում է վճարել ձեր դեղերի համար: Մենք ձեզ առանձին նյութ ենք ուղարկել, որը կոչվում է Ապահովագրության ապացույցի հավելված դեղատոմսային դեղերի վճարման համար Լրացուցիչ օգնություն ստացող անձանց համար, որը պատմում է ձեր դեղերի ծախսերի մասին: Եթե դուք ստանում եք Լրացուցիչ օգնություն և չեք ստացել այդ նյութը, զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ էջի ներքևում նշված համարով և խնդրեք LIS Ռայդերը:		**Բոլորի համար ծախսերի բաշխման մակարդակներ.** Փոստով պատվերը հասանելի չէ բոլոր կարգերի դեղերի մեկամսյա (34 օր կամ պակաս) պաշարի համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

	Ստանդարտ կամ նախընտրելի ցանցային դեղատուն Մեկ ամսվա կամ մինչև 30 օրվա պաշար	Ցանցի երկարատև խնամքի դեղատնից Մինչև 31 օրվա պաշար	Արտացանցային դեղատնից Մինչև 30 օրվա պաշար: Ապահովագրությունը սահմանափակվում է որոշ դեպքերում: Լրացուցիչ տեղեկությունների համար անցեք Գլուխ 5-ը այս Անդամի ձեռնարկում:	Մեր պլանի ստանդարտ կամ նախընտրելի փոստով պատվերի ծառայություն Մեկ ամսվա կամ մինչև 34 օրվա պաշար:
Ծախսերի բաշխման Կարգ 6 (Ընտրել բուժսպասարկման դեղեր)	$0 համավճար	$0 համավճար	$0 համավճար	Փոստով պատվերը հասանելի չէ մեկամսյա (34 օր կամ պակաս) պաշարի համար:

Ձեզ երկարատև պաշար տրամադրող դեղատների մասին մանրամասների համար կարդացեք մեր *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*:

D4. Սկզբնական ապահովագրության փուլի ավարտը

Սկզբնական ապահովագրության փուլն ավարտվում է, երբ ձեր գրպանից վճարվող ընդհանուր ծախսերը հասնում են $2,400-ի: Այդ պահից սկսվում է Ճգնաժամային ապահովագրության փուլը: Այդ պահից մենք ապահովագրում ենք ձեր դեղերի ամբողջ արժեքը մինչև տարվա վերջ:

Մենք առաջարկում ենք լրացուցիչ դեղեր, որոնք սովորաբար չեն ապահովագվում Medicare-ի դեղերի պլանում: Այս դեղերի համար արվող վճարումները չեն հաշվվում որպես ձեր գրպանից վճարվող ծախսեր:

Ձեր EOB-ը կօգնեն Ձեզ հետևել դեղերի համար Ձեր ծախսերին տարվա ընթացքում: Մենք կտեղեկացնենք ձեզ, եթե դուք հասնեք $2,400-ի սահմանին: Շատ մարդիկ չեն հասնում դրան տարվա ընթացքում:

E. Փուլ 2. Ճգնաժամային ապահովագրության փուլ

Երբ դուք հասնում եք ձեր դեղերի համար գրպանից վճարվող $2,400-ի սահմանին, սկսվում է Ճգնաժամային ապահովագրության փուլը: Դուք մնում եք Ճգնաժամային ապահովագրության փուլում մինչև տարվա վերջ: Այս փուլում դուք ոչինչ չեք վճարում ձեր Մաս D-ի ապահովագրված դեղերի համար:

F. Ձեր դեղերի արժեքը, եթե ձեր բժիշկը դուրս է գրում մեկ ամսվանից պակաս պաշար

- Եթե մենք կիրառում ենք ստանդարտ վերջնաժամկետները, պետք է տրամադրենք մեր պատասխանը ձեր հայցը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Եթե դուք բացառում խնդրեք, մենք պետք է պատասխանենք ձեր բժշկի աջակցող հայտարարությունը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Մենք պատասխանում ենք ձեզ ավելի շուտ, եթե ձեր առողջական վիճակը պահանջի:

- Եթե մենք բաց ենք թողնում այս վերջնաժամկետը, ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման՝ IRO-ի կողմից վերանայման համար:

- Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Այո**, ապահովագրական ծածկույթը ձեզ տրամադրում ենք բացառման ձեր դիմումը կամ ձեր բժշկի աջակցող հայտարարությունն ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

- Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Ոչ**, ձեզ նամակ ենք ուղարկում՝ նշելով պատճառները: Նամակում նաև ասվում է, թե ինչպես պետք է բողոքարկել:

«Ստանդարտ ապահովագրության որոշման» վերջնաժամկետները դեղի համար, որն արդեն գնել եք

- Մենք պետք է պատասխանենք ձեզ ձեր հայցը ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում:

- Եթե մենք բաց ենք թողնում այս վերջնաժամկետը, ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման՝ IRO-ի կողմից վերանայման համար:

- Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Այո**, ձեզ հետ ենք վճարում 14 օրացուցային օրվա ընթացքում:

- **Եթե** ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Ոչ** , ձեզ նամակ ենք ուղարկում՝ նշելով պատճառները: Նամակում նաև ասվում է, թե ինչպես պետք է բողոքարկել:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

G5. Ինչպես ներկայացնել 1-ին մակարդակի բողոքարկում

> Medicare Part D-ի դեղի ապահովագրության որոշման վերաբերյալ պլանին արվող բողոքարկումը կոչվում է պլանի **«կրկնակի եզրակացություն»**:

- Սկսեք ձեր **ստանդարտ** կամ **արագ բողոքարկումը**՝ զանգահարելով 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝711), գրելով կամ ֆաքս ուղարկելով մեզ: Դուք, ձեր ներկայացուցիչը կամ ձեր բժիշկը (կամ մեկ այլ դեղատոմս դուրս գրող) կարող են անել սա: Ներառեք ձեր անունը, կոնտակտային տվյալները և ձեր բողոքարկման վերաբերյալ տեղեկությունները:

- Դուք պետք է բողոքարկում ներկայացնեք մեր որոշման մասին տեղեկացնող նամակի վրա նշված ամսաթվից հետո **65 օրացուցային օրվա** ընթացքում:

- Եթե բաց թողնեք այս վերջնաժամկետը և դրա համար հարգելի պատճառ ունենաք, ապա մենք, հնարավոր է, ձեզ տրամադրենք հավելյալ ժամանակ բողոքարկում ներկայացնելու համար: Լավ պատճառների օրինակներ են այնպիսի բաներ, ինչպիսիք են, օրինակ, դուք լուրջ հիվանդություն եք ունեցել կամ մենք ձեզ սխալ տեղեկատվություն ենք տվել վերջնաժամկետի վերաբերյալ: Բացատրեք, թե ինչու է ձեր բողոքարկումն ուշանում, երբ բողոքարկում եք:

- Դուք իրավունք ունեք պահանջել ձեր բողոքարկմանը վերաբերող տեղեկության պատճենը: Դուք և ձեր բժիշկը կարող եք նաև մեզ տրամադրել հավելյալ տեղեկություններ՝ ձեր բողոքարկումը հիմնավորելու համար:

Եթե ձեր առողջությունը պահանջում է, ապա խնդրեք «արագ բողոքարկում»:

> Արագ բողոքարկումը կոչվում է նաև «**արագացված կրկնակի եզրակացություն**»:

- Եթե դուք բողոքարկում եք մեր կողմից կայացրած որոշումը դեռ չստացված դեղի համար, ապա դուք և ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս դուրս գրողը պետք է որոշեք, թե արդյոք ունեք «արագ բողոքարկման» կարիք:

- Արագ բողոքարկման պահանջները նույնն են, ինչ ապահովագրական արագ որոշման պահանջները: Լրացուցիչ տեղեկության համար տե՛ս **Բաժին G4**-ը:

Մենք դիտարկում ենք ձեր բողոքարկումը և տալիս ենք մեր պատասխանը:

- Մենք վերանայում ենք ձեր բողոքարկումը ևս մեկ անգամ ավելի ուշադիր ուսումնասիրում ենք ապահովագրության ձեր հայցի վերաբերյալ տեղեկությունները:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Մենք ստուգում ենք, թե արդյոք հետևել ենք կանոններին, երբ ձեր հայցին ասել ենք **Ոչ**:
- Մենք կարող ենք կապ հաստատել ձեր, ձեր բժշկի կամ այլ դեղատոմս դուրս գրողի հետ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

1-ին մակարդակում արագ բողոքարկման վերջնաժամկետները

- Եթե մենք կիրառում ենք արագ վերջնաժամկետները, պետք է տրամադրենք մեր պատասխանը ձեր հայցը ստանալուց հետո **72 ժամվա** ընթացքում:
  - Մենք պատասխանում ենք ձեզ ավելի շուտ, եթե ձեր առողջական վիճակը պահանջի:
  - Եթե մենք չենք պատասխանում 72 ժամվա ընթացքում, մենք ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթաց: Որից հետո IRO-ն կուսումնասիրի այն: Ստուգող կազմակերպության և 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկություններին ծանոթացեք **Բաժին G6**-ում:
- Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Այո**, մենք պետք է տրամադրենք այն ծածկույթը, որը մենք համաձայնել ենք տրամադրել ձեր բողոքարկումն ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:
- Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Ոչ**, ուղարկում ենք նամակ, որում բացատրվում են պատճառները, և ներկայացվում է, թե ինչպես կարող եք բողոքարկել:

1-ին մակարդակում ստանդարտ բողոքարկման վերջնաժամկետները

- Եթե մենք օգտագործում ենք ստանդարտ ժամկետները, մենք պետք է պատասխանենք ձեզ ձեր չստացած դեղի համար ձեր բողոքարկումն ստանալուց հետո **յոթ օրացուցային օրվա ընթացքում**:
- Մենք ձեզ ավելի շուտ ենք տալիս մեր որոշումը, եթե դուք չեք ստացել դեղը, և ձեր առողջական վիճակը պահանջում է դա: Եթե վստահ եք, որ ձեր առողջությունը պահանջում է, ապա խնդրեք արագ բողոքարկում:
  - Եթե յոթ օրացուցային օրվա ընթացքում մենք որոշում չենք ներկայացնում, մենք ձեր դիմումը պետք է ուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման: Որից հետո IRO-ն կուսումնասիրի այն: Ստուգող կազմակերպության և 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկություններին ծանոթացեք **Բաժին G6**-ում:

Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Այո**.

- Մենք պետք է մեր համաձայնեցրած **ծածկույթը տրամադրենք** հնարավորինս շուտ՝ ըստ ձեր առողջական վիճակի, բայց ձեր բողոքարկումն ստանալուց հետո **ոչ ուշ, քան յոթ օրացուցային օրվա ընթացքում**:
- Մենք պետք է **ուղարկենք ձեզ վճարում** ձեր գնած դեղամիջոցի համար **30 օրացուցային օրվա ընթացքում** ձեր բողոքարկումը ստանալուց հետո:

Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Ոչ**.

- Մենք ձեզ նամակ ենք ուղարկում, որը բացատրում է պատճառները և պատմում, թե ինչպես կարող եք բողոքարկել:
- Մենք պետք է ձեզ պատասխան տանք ձեր գնած դեղամիջոցի համար ձեզ փոխհատուցելու վերաբերյալ **14 օրացուցային օրվա ընթացքում՝** ձեր բողոքարկումը ստանալուց հետո:
    - Եթե մենք որոշում չենք ներկայացնում 14 օրացուցային օրվա ընթացքում, մենք ձեր խնդրանքը պետք է կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման: Որից հետո IRO-ն կուսումնասիրի այն: Ստուգող կազմակերպության և 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկություններին ծանոթացեք **Բաժին G6**-ում:
- Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Այո**, մենք պետք է ձեզ վճարենք ձեր դիմումն ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե ձեր դիմումին մենք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում ենք **Ոչ**, ուղարկում ենք նամակ, որում բացատրվում են պատճառները, և ներկայացվում է, թե ինչպես կարող եք բողոքարկել:

G6. Ինչպես ներկայացնել 2-րդ մակարդակի բողոքարկում

Եթե մենք 1-ին մակարդակի ձեր բողոքարկմանն ասում ենք **Ոչ**, դուք կարող եք ընդունել մեր որոշումը կամ մեկ այլ բողոքարկում ներկայացնել: Եթե որոշեք մեկ այլ բողոքարկում ներկայացնել, դուք օգտագործում եք 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացը: Ձեր առաջին բողոքարկմանը **Ոչ** ասելուց հետո **IRO**-ը վերանայում է մեր որոշումը: Այս կազմակերպությունն է որոշում, թե արդյոք մենք պետք է փոխենք մեր որոշումը:

> «Անկախ վերանայման կազմակերպության» (IRO) պաշտոնական անվանումը **«Անկախ վերանայման հաստատություն»** է, որը երբեմն կոչվում է **«IRE»**:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելու համար դուք, ձեր ներկայացուցիչը կամ ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս դուրս գրող պետք է **գրավոր** դիմեք IRO-ին և խնդրեք վերանայել ձեր գործը:

- Եթե մենք 1-ին մակարդակի ձեր բողոքարկմանն ասում ենք **Ոչ,** ձեզ ուղարկվող նամակում մենք ներառում ենք **հրահանգներ, թե ինչպես կարելի է 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել** IRO-ին: Հրահանգները ցույց են տալիս, թե ով կարող է 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել, ինչ ժամկետներ պետք է հետևեք և ինչպես հասնել կազմակերպությանը:

- Երբ դուք բողոքարկում եք IRO-ին, մենք ձեր բողոքարկման մասին մեր ունեցած տեղեկություններն ուղարկում ենք կազմակերպությանը: Այս տեղեկությունները կոչվում են ձեր «գործի ֆայլը»: **Դուք ունեք ձեր գործի նյութերի անվճար պատճենի իրավունք**: Եթե ձեր գործի անվճար պատճենը խնդրելու հարցում ձեզ օգնություն է անհրաժեշտ, զանգահարեք Անդամների սպասարկման ծառայություն 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝711):

- Դուք իրավունք ունեք IRO-ին տրամադրել հավելյալ տեղեկություններ ձեր բողոքարկումը հիմնավորելու համար:

IRO-ը վերանայում է ձեր Medicare Part D-ի 2-րդ մակարդակի բողոքարկումը և գրավոր պատասխան է տալիս ձեզ: IRO-ի մասին լրացուցիչ տեղեկություններին ծանոթացեք **Բաժին F4**-ում:

2-րդ մակարդակում արագ բողոքարկման վերջնաժամկետները

Եթե ձեր առողջությունը պահանջում է, ապա IRO-ից խնդրեք արագ բողոքարկում:

- Եթե նրանք համաձայնում են արագ բողոքարկմանը, նրանք պետք է պատասխան տան ձեր բողոքարկման հարցումը ստանալուց հետո **72 ժամվա ընթացքում**:

- Եթե ձեր դիմումին նրանք մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում են **Այո**, մենք պետք է տրամադրենք հաստատված դեղի ծածկույթը **24 ժամվա ընթացքում** IRO-ի որոշումն ստանալուց հետո:

2-րդ մակարդակում ստանդարտ բողոքարկման վերջնաժամկետները

Եթե դուք ունեք ստանդարտ բողոքարկում 2-րդ մակարդակում, IRO-ը պետք է ձեզ պատասխան տա.

- **7 օրացուցային օրվա ընթացքում**, երբ նրանք ստանան ձեր բողոքարկումը այն դեղի համար, որը չեք ստացել:

- **14 օրացուցային օրվա ընթացքում**, երբ նրանք ստանան ձեր բողոքարկումը ձեր գնած դեղի դիմաց փոխհատուցման համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Եթե ձեր դիմումին IRO-ն մասնակիորեն կամ ամբողջությամբ ասում է **Այո**.

- Դեղի հաստատված ծածկույթը մենք պետք է տրամադրենք IRO-ի որոշումն ստանալուց հետո **72 ժամվա ընթացքում**:
- Մենք պետք է փոխհատուցենք ձեզ դեղի համար, որը դուք գնել եք IRO-ի որոշումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե IRO-ը ձեր բողոքարկմանն ասում է **Ոչ**, նշանակում է, որ նրանք համաձայն են ձեր դիմումը չհաստատելու վերաբերյալ մեր որոշման հետ: Սա կոչվում է «որոշումը ուժի մեջ թողնել» կամ «բողոքարկումը մերժել»:

Եթե IRO-ը ձեր 2-րդ մակարդակի բողոքարկմանն ասում է **Ոչ**, դուք ունեք 3-րդ մակարդակի բողոքարկման իրավունք, եթե ձեր հայցած դեղի ապահովագրական ծածկույթի դոլարային արժեքը համապատասխանում է որևէ նվազագույն դոլարային արժեքի: Եթե ձեր կողմից պահանջվող դեղերի ապահովագրության դոլարային արժեքը պակաս է պահանջվող նվազագույնից, դուք չեք կարող այլ բողոքարկում ներկայացնել: Այդ դեպքում 2-րդ մակարդակի բողոքարկման որոշումը վերջնական է: IRO-ը ձեզ նամակ է ուղարկում, որը հայտնում է ձեզ 3-րդ մակարդակի բողոքարկումը շարունակելու համար անհրաժեշտ դոլարի նվազագույն արժեքը:

Եթե ձեր հարցման դոլարային արժեքը համապատասխանում է պահանջին, ապա դուք ընտրում եք, թե արդյոք ցանկանում եք շարունակել ձեր բողոքարկումը:

- Բողոքարկման գործընթացում 2-րդ մակարդակից հետո կա երեք լրացուցիչ մակարդակ:
- Եթե IRO-ը 2-րդ մակարդակի ձեր բողոքարկմանն ասում է **Ոչ**, և դուք բավարարում եք բողոքարկման գործընթացը շարունակելու պահանջը, դուք.
    - Որոշում եք, թե արդյոք ցանկանում եք 3-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել:
    - 3-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելու վերաբերյալ մանրամասների համար տեսեք 2-րդ մակարդակի բողոքարկումից հետո IRO-ի կողմից ուղարկված նամակը:

ALJ-ը կամ փաստաբան դատավորը վարում է 3-րդ մակարդակի բողոքարկումները: 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակների բողոքարկումների մասին տեղեկությունները տե՛ս **Բաժին J**-ում:

Հ. Հիվանդանոցում ավելի երկար մնալու ապահովագրական ծածկույթի հայց

Երբ ընդունվում եք հիվանդանոց, դուք իրավունք ունեք ստանալ ձեր բոլոր ապահովագրված հիվանդանոցային ծառայությունները, որոնք անհրաժեշտ են ձեր հիվանդությունը կամ վնասվածքը ախտորոշելու կամ բուժելու համար: Մեր պլանի հիվանդանոցային ծածկույթի մասին մանրամասն տեղեկություններին ծանոթացեք Անդամի ձեռնարկի **Գլուխ 4**-ն այս *Անդամի ձեռնարկ*.-ում:

Հիվանդանոցում ապահովագրության գտնվելու ընթացքում ձեր բժիշկը և հիվանդանոցի անձնակազմն աշխատելու է ձեզ հետ՝ ձեզ հիվանդանոցից դուրս գրելու օրվան նախապատրաստելու ուղղությամբ: Նրանք նաև օգնում են ձեզ կազմակերպել ձեր խնամքը, որի կարիքը դուք կարող եք ունենալ դուրս գրվելուց հետո:

- Հիվանդանոցից դուրս գրման օրը կոչվում է «դուրսգրման ամսաթիվ»:
- Ձեր բժիշկը կամ հիվանդանոցի անձնակազմը կտեղեկացնի՝ որն է ձեր դուրսգրման օրը:

Եթե կարծում եք, որ ձեզ շատ շուտ են խնդրում հեռանալ հիվանդանոցից կամ մտահոգված եք հիվանդանոցից դուրս գալուց հետո ձեր խնամքի համար, կարող եք խնդրել ավելի երկար մնալ հիվանդանոցում: Այս բաժինը նկարագրում է խնդրանք ներկայացնելու եղանակները:

Չնայած այս **Բաժին Հ-ում** քննարկված բողոքարկումներին, հնարավոր է, որ դուք նաև կարողանաք բողոք ներկայացնել և DMHC-ից խնդրել Անկախ բժշկական վերանայում՝ ձեր հիվանդանոցային բուժումը շարունակելու համար: Ուսումնասիրեք **Բաժին F4**-ը՝ իմանալու, թե ինչպես բողոք ներկայացնել DMHC-ին կամ ինչպես DMHC-ին դիմել Անկախ բժշկական ստուգում անցկացնելու համար: Դուք կարող եք Անկախ բժշկական վերանայում խնդրել՝ ի լրացում 3-րդ մակարդակի բողոքարկմանը կամ դրա փոխարեն:

Հ1. Ձեր Medicare իրավունքների մասին տեղեկանալը

Ձեր հիվանդանոց ընդունվելուց հետո երկու օրվա ընթացքում հիվանդանոցի անձնակազմից որևէ մեկը, օրինակ՝ բուժքույրը կամ գործը վարողը, ձեզ գրավոր ծանուցում կտա, որը կոչվում է «Կարևոր հաղորդագրություն Medicare-ից՝ ձեր իրավունքների մասին»: Medicare ունեցող յուրաքանչյուր ոք ստանում է այս ծանուցման պատճենը, երբ ընդունվում է հիվանդանոց:

Եթե չեք ստանում ծանուցագիրը, խնդրեք այն հիվանդանոցի աշխատակիցներից որևէ մեկից: Եթե օգնության կարիք ունեք, զանգահարեք Անդամների սպասարկում էջի ներքևում գտնվող համարներով: Կարող եք նաև զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Ուշադիր **կարդացեք ծանուցումը** և տվեք հարցեր, եթե չեք հասկանում: Կարևոր հաղորդագրությունը տեղեկացնում է ձեր՝ որպես հիվանդանոցային հիվանդի իրավունքների մասին, ներառյալ ձեր իրավունքները.
    - Ստանալու Medicare-ի կողմից ապահովագրված ծառայություններ հիվանդանոցում գտնվելու ընթացքում և դրանից հետո: Դուք իրավունք ունեք տեղեկացված լինել այն մասին, թե որոնք են այդ ծառայությունները, ով է վճարելու դրանց համար, և որտեղ կարող եք ստանալ դրանք:
    - Մասնակցելու որոշումներին՝ ձեր հիվանդանոցում մնալու տևողության վերաբերյալ:
    - Իմանալու, ուր ներկայացնել հիվանդանոցային խնամքի որակի վերաբերյալ ձեր մտահոգությունները:
    - Բողոքարկելու, եթե կարծում եք, որ ձեզ հիվանդանոցից դուրս են գրում ժամանակից շուտ:
- **Ստորագրեք ծանուցագիրը**՝ ցույց տալու, որ ստացել եք այն և հասկանում եք ձեր իրավունքները:
    - Դուք կամ ձեր անունից գործող որևէ մեկը կարող եք ստորագրել ծանուցումը:
    - Ծանուցման ստորագրումը ցույց է տալիս **միայն**, որ դուք ստացել եք ձեր իրավունքների մասին տեղեկությունը: Ստորագրելը **չի** նշանակում, որ համաձայն եք ձեր բժշկի կամ հիվանդանոցի անձնակազմի հայտնած դուրսգրման օրվա հետ:
- **Պահեք ստորագրված ծանուցման ձեր պատճենը**, որպեսզի անհրաժեշտության դեպքում ունենաք տեղեկությունները:

Եթե դուք ստորագրեք ծանուցումը հիվանդանոցից դուրս գալու օրվանից ավելի քան երկու օր առաջ, դուք կստանաք ևս մեկ օրինակ՝ նախքան դուրս գրվելը:

Կարող եք նախօրոք դիտել ծանուցման պատճենը, եթե՝

- Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն էջի ներքևում գտնվող համարներով:
- Զանգահարեք Medicare-ին 1-800 MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Այցելեք www.cms.gov/medicare/forms-notices/beneficiary-notices-initiative/ffs-ma-im:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

H2. Ինչպես ներկայացնել 1-ին մակարդակի բողոքարկում

Եթե ցանկանում եք, որ մենք ապահովագրենք ձեր ստացիոնար հիվանդանոցային ծառայություններն ավելի երկար ժամանակով, ապա պետք է բողոքարկում խնդրեք: Որակի բարելավման կազմակերպությունը (QIO) կիրականացնի 1-ին մակարդակի բողոքարկման ուսումնասիրություն՝ պարզելու, թե արդյոք ձեր նախատեսված դուրսգրման ամսաթիվը համապատասխանում է ձեզ բժշկական տեսանկյունից:

QIO-ը բժիշկների և առողջապահության այլ մասնագետների խումբ է, որը վճարվում է դաշնային կառավարության կողմից: Այս փորձագետները ստուգում և օգնում են բարելավել Medicare-ով մարդկանց որակը: Նրանք մեր պլանի մաս չեն կազմում:

California-ում QIO-ն կոչվում է «Սկսեք հոգ տանել ձեր առողջության մասին»: Զանգահարեք նրանց 1-877-588-1123 հեռախոսահամարով (TTY՝ 711): Կոնտակտային տվյալները նշված են նաև «Կարևոր հաղորդագրություն Medicare-ից՝ ձեր իրավունքների մասին» ծանուցման մեջ և **Գլուխ 2**-ում:

Զանգահարեք QIO-ին նախքան հիվանդանոցը լքելը և ոչ ուշ, քան ձեր պլանավորված դուրսգրման ամսաթիվը:

- **Եթե զանգահարեք նախքան հեռանալը**, կարող եք մնալ հիվանդանոցում ձեր պլանավորած դուրսգրման ամսաթվից հետո՝ առանց դրա համար վճարելու, մինչ սպասում եք ձեր բողոքարկման վերաբերյալ QIO-ի որոշմանը:

- **Եթե չեք զանգահարում բողոքարկելու համար,** և որոշում եք մնալ հիվանդանոցում ձեր պլանավորված դուրս գրման ամսաթվից հետո, հնարավոր է, որ դուք ստիպված լինեք վճարել ձեր պլանավորված դուրս գրման ամսաթվից հետո ստացված հիվանդանոցային խնամքի բոլոր ծախսերը:

- Քանի որ հիվանդանոցում մնալն ապահովագրվում է թե Medicare-ի, թե Medi-Cal-ի կողմից, եթե Որակի բարելավման կազմակերպությունը չուսումնասիրի հիվանդանոցում մնալու ձեր խնդրանքը, կամ եթե կարծում եք, որ ձեր իրավիճակը հրատապ է, պարունակում է անհապաղ և լուրջ վտանգ ձեր առողջությանը, կամ դուք գտնվում եք սաստիկ ցավերի մեջ, դուք կարող եք նաև բողոք ներկայացնել կամ California-ի Կառավարվող առողջապահական խնամքի բաժնից (DMHC) խնդրել Անկախ բժշկական վերանայում: Ուսումնասիրեք **Բաժին F4**-ը՝ իմանալու, թե ինչպես բողոք ներկայացնել և ինչպես DMHC-ին դիմել Անկախ բժշկական ստուգում անցկացնելու համար:

Անհրաժեշտության դեպքում օգնություն խնդրեք: Եթե ցանկացած պահի ունեք հարցեր կամ օգնության կարիք ունեք.

- Զանգահարեք Անդամների սպասարկում էջի ներքևում գտնվող համարներով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Զանգահարեք California-ի Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (HICAP) 1-800-434-0222 հեռախոսահամարով:

Արագ վերանայում խնդրեք: Գործեք արագ և կապվեք QIO-ի հետ՝ խնդրելու արագ վերանայել ձեր հիվանդանոցից դուրսգրումը:

> **«Արագ ստուգման»** իրավական տերմինն է «**անհապաղ ստուգում**» կամ «**արագացված ստուգում**»:

Ի՞նչ է կատարվում արագ վերանայման ընթացքում:

- QIO-ի վերանայողները կհարցնեն ձեզ կամ ձեր ներկայացուցչին, թե ինչու եք կարծում, որ ապահովագրությունը պետք է շարունակվի պլանավորված դուրսգրման ամսաթվից հետո: Ձեզանից չի պահանջվում հայտարարություն գրել, բայց կարող եք:
- Վերանայողները ուսումնասիրում են ձեր բժշկական տեղեկատվությունը, զրուցում ձեր բժշկի հետ և վերանայում հիվանդանոցի և մեր ծրագրի տրամադրած տեղեկությունները:
- Դուք կստանաք ձեր պլանավորված դուրսգրման ամսաթիվը նշող նամակ մինչև վերանայողների կողմից մեզ ձեր բողոքարկման մասին տեղեկացմանը հաջորդող օրվա կեսօրը: Նամակը նաև պատճառաբանություն է ներկայացնում, թե ինչու ձեր բժիշկը, հիվանդանոցը և մենք կարծում ենք, որ դա ճիշտ դուրսգրման ամսաթիվն է, որը բժշկական առումով ձեզ համար հարմար է:

> Այս գրավոր բացատրության իրավական տերմինն է «**Դուրսգրման մանրամասն ծանուցում**»: Կարող եք ստանալ նմուշ՝ զանգահարելով Անդամներին տրամադրվող ծառայությունների բաժին էջի ներքևում տրված համարներով կամ 1-800-MEDICARE (1-800-633-4227): (TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով): Կարող եք նաև դիտարկել առցանց անուցագիր օնլիայն՝ www.cms.gov/medicare/forms-notices/beneficiary-notices-initiative/ffs-ma-im:

QIO-ն իրեն անհրաժեշտ բոլոր տեղեկությունները ստանալուց հետո մեկ ամբողջ օրվա ընթացքում տալիս է ձեր բողոքարկման պատասխանը:

Եթե QIO-ն ասում է **Այո** ձեր բողոքարկմանը.

- Մենք կտրամադրենք ձեր ապահովագրված ստացիոնար հիվանդանոցային ծառայությունները այնքան ժամանակ, քանի դեռ ծառայություններն անհրաժեշտ են բժշկական տեսանկյունից:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Եթե QIO-ն ասում է **Ոչ** ձեր բողոքարկմանը.

- Նրանք կարծում են, որ ձեր պլանավորված դուրսգրման ամսաթիվը բժշկական տեսանկյունից համապատասխան է:
- Ձեր ստացիոնար հիվանդանոցային ծառայությունների մեր ապահովագրությունն ավարտվում է QIO-ի կողմից ձեր բողոքարկմանը տրված իրենց պատասխանին հաջորդող օրվա կեսօրին:
- Հնարավոր է, որ դուք ստիպված լինեք վճարել հիվանդանոցային խնամքի ամբողջ արժեքը, որը դուք ստանում եք կեսօրից հետո, այն օրվանից, երբ QIO-ը ձեզ կպատասխանի ձեր բողոքարկմանը:
- Կարող եք 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել, եթե QIO-ն մերժի 1-ին մակարդակի ձեր բողոքարկումը, **և** ձեր դուրսգրման պլանավորած ամսաթվից հետո մնաք հիվանդանոցում:

H3. Ինչպես ներկայացնել 2-րդ մակարդակի բողոքարկում

2-րդ մակարդակի բողոքարկման համար դուք խնդրում եք QIO-ին ևս մեկ անգամ ուսումնասիրել 1-ին մակարդակի ձեր բողոքարկման վերաբերյալ իրենց որոշումը: Զանգահարեք նրանց 1-877-588-1123 հեռախոսահամարով (TTY՝ 711):

Այս ստուգման համար պետք է դիմեք QIO-ի կողմից 1-ին մակարդակի ձեր բողոքարկմանը **Ոչ** ասելուց հետո **60 օրացուցային օրվա ընթացքում**: Այս ստուգման համար կարող եք դիմել **միայն** այն դեպքում, եթե ձեր բուժխնամքի ապահովագրական ծածկույթի ավարտի ամսաթվից հետո մնում եք հիվանդանոցում:

QIO վերանայողները կանեն հետևյալը.

- Եվս մեկ անգամ ուշադիր կուսումնասիրեն ձեր բողոքարկմանը վերաբերող բոլոր տեղեկությունները:
- Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկման մասին իրենց որոշումը կհայտնեն ձեզ երկրորդ վերանայման հարցումն ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե QIO-ն ասում է **Այո** ձեր բողոքարկմանը.

- Մենք պետք է ձեզ փոխհատուցենք հիվանդանոցային խնամքի ծախսերի մեր բաժինն այն օրվան աջորդ օրվա կեսօրից, երբ QIO-ը մերժեց ձեր 1-ին մակարդակի բողոքարկումը:
- Մենք կտրամադրենք ձեր ապահովագրված ստացիոնար հիվանդանոցային ծառայությունները այնքան ժամանակ, քանի դեռ ծառայություններն անհրաժեշտ են բժշկական տեսանկյունից:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Եթե QIO-ն ասում է **Ոչ** ձեր բողոքարկմանը.

- Նրանք համաձայն են ձեր 1-ին մակարդակի բողոքարկման վերաբերյալ իրենց որոշման հետ և չեն փոխի այն:
- Նրանք ձեզ նամակ են տալիս, որտեղ ասվում է, թե ինչ կարող եք անել, եթե ցանկանում եք շարունակել բողոքարկման գործընթացը և կատարել 3-րդ մակարդակի բողոքարկում:
- Հնարավոր է, որ դուք նաև կարողանաք բողոք ներկայացնել կամ DMHC-ից խնդրել Անկախ բժշկական վերանայում՝ ձեր հիվանդանոցային այցը շարունակելու համար: Ուսումնասիրեք **Բաժին F4**-ը՝ իմանալու, թե ինչպես բողոք ներկայացնել DMHC-ին կամ ինչպես DMHC-ին դիմել Անկախ բժշկական ստուգում անցկացնելու համար:

ALJ-ը կամ փաստաբան դատավորը վարում է 3-րդ մակարդակի բողոքարկումները: 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակների բողոքարկումների մասին տեղեկությունները տե՛ս **Բաժին J**-ում:

I. Ինչպես դիմել մեզ՝ շարունակելու ապահովագրել որոշակի բժշկական ծառայություններ

Այս բաժինը միայն երեք տեսակի ծառայությունների մասին է, որոնք դուք կարող եք ստանալ.

- Տնային առողջության խնամքի ծառայություններ
- Որակավորված բուժքույրական խնամք որակավորված բուժքույրական հաստատությունում **և**
- Վերականգնողական խնամք որպես ամբուլատոր հիվանդ Medicare-ի կողմից հաստատված CORF-ում: Սովորաբար սա նշանակում է, որ դուք բուժում եք ստանում հիվանդության կամ որևէ պատահարի համար, կամ վերականգնվում եք որևէ լուրջ վիրահատությունից հետո:

Խնամքի այս երեք տեսակներից որևէ մեկը ստանալիս՝ դուք իրավունք ունեք պահպանել ձեր ապահովագրված ծառայություններն այնքան ժամանակ, քանի դեռ բժիշկն ասում է, որ այն ձեզ հարկավոր է:

Երբ որոշենք դադարեցնել սրանցից ցանկացածի ապահովագրական ծածկույթը, մենք պետք է տեղեկացնենք ձեզ **նախքան** ձեր ծառայությունների ավարտը: Երբ տվյալ խնամքի համար ձեր ծառայությունն ավարտվի, մենք կդադարենք վճարել դրա համար:

Եթե կարծում եք, որ մենք ձեր խնամքի ապահովագրությունն ավարտում ենք ժամանակից շուտ, **ապա կարող եք բողոքարկել մեր որոշումը:** Այս բաժնում նկարագրվում է բողոքարկում ներկայացնելու ձևը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

I1. Նախնական ծանուցում նախքան ձեր ծածկույթի ավարտը

Մենք ձեզ գրավոր ծանուցում ենք ուղարկում, որ դուք կստանաք առնվազն երկու օր առաջ, երբ կդադարեցնենք ձեր խնամքի համար վճարելը: Սա կոչվում է «Medicare-ի ծածկույթում չներառելու ծանուցում»: Ծանուցմամբ դուք կտեղեկացվեք, թե որ ամսաթվին ենք մենք դադարեցնելու ձեր բուժսպասարկման ապահովագրական ծածկույթը, և ինչպես բողոքարկել մեր որոշումը:

Դուք կամ ձեր ներկայացուցիչը պետք է ստորագրեք գրավոր ծանուցագիրը՝ ցույց տալու համար, որ ստացել եք այն: Ծանուցման ստորագրումը **միայն** ցույց է տալիս, որ դուք ստացել եք տեղեկությունը: Ստորագրելը **չի** նշանակում, որ դուք համաձայն եք մեր որոշման հետ:

I2. Ինչպես ներկայացնել 1-ին մակարդակի բողոքարկում

Եթե կարծում եք, որ մենք ձեր խնամքի ապահովագրությունն ավարտում ենք ժամանակից շուտ, ապա կարող եք բողոքարկել մեր որոշումը: Այս բաժինը ձեզ պատմում է 1-ին մակարդակի բողոքարկման գործընթացի և անելիքների մասին:

- **Պահպանեք վերջնաժամկետները:** Վերջնաժամկետները շատ կարևոր են: Հասկացեք և հետևեք այն վերջնաժամկետներին, որոնք կիրառելի են ձեր անելիքների համար: Մեր ծրագիրը նույնպես պետք է հետևի վերջնաժամկետներին: Եթե կարծում եք, որ մենք չենք պահպանում մեր վերջնաժամկետները, ապա կարող եք բողոք ներկայացնել: Բողոքների վերաբերյալ մանրամասն տեղեկության համար ուսումնասիրեք **Բաժին K**-ը:

- **Անհրաժեշտության դեպքում օգնություն խնդրեք:** Եթե ցանկացած պահի ունեք հարցեր կամ օգնության կարիք ունեք.

  - Զանգահարեք Անդամների սպասարկում էջի ներքևում գտնվող համարներով:

  - Զանգահարեք HICAP 1-800-434-0222 հեռախոսահամարով:

- **Կապվեք QIO-ի հետ:**

  - Կարդացեք **Բաժին H2**-ը կամ **Գլուխ 2**-ը այս *Անդամի ձեռնարկի* QIO-ի և նրանց հետ կապվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար:

  - Խնդրեք նրանց վերանայել ձեր բողոքարկումը և որոշել՝ արդյոք արժի փոխել մեր ծրագրի որոշումը:

- **Գործեք արագ և խնդրեք «արագ ուսումնասիրվող բողոքարկում»:** Հարցրեք QIO-ին, թե արդյոք բժշկական տեսակետից համապատասխանող է մեր կողմից ձեր բժշկական ծառայությունների ապահովագրությունը դադարեցնելը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Այս կազմակերպության հետ կապ հաստատելու ձեր վերջնաժամկետը:

- Դուք պետք է դիմեք QIO-ին, որպեսզի սկսեք ձեր բողոքարկումը մինչև մեր կողմից ուղարկված Medicare-ի ծածկույթում չներառելու ծանուցման ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրվա կեսօրը:

- Եթե Որակի բարելավման կազմակերպությունը չուսումնասիրի առողջապահական խնամքի ծառայությունների տրամադրման ձեր խնդրանքը, կամ եթե կարծում եք, որ ձեր իրավիճակը հրատապ է, կամ պարունակում է անհապաղ և լուրջ վտանգ ձեր առողջությանը, կամ եթե դուք գտնվում եք սաստիկ ցավերի մեջ, դուք կարող եք նաև բողոք ներկայացնել և California-ի Կառավարվող առողջապահական խնամքի բաժնից (DMHC) խնդրել Անկախ բժշկական վերանայում: Ուսումնասիրեք **Բաժին F4**-ը՝ իմանալու, թե ինչպես բողոք ներկայացնել DMHC-ին կամ ինչպես DMHC-ին դիմել Անկախ բժշկական ստուգում անցկացնելու համար:

> Գրավոր ծանուցման իրավական տերմինն է «**Medicare-ի ծածկույթում չներառելու ծանուցում**»: Նմուշի պատճեն ստանալու համար զանգահարեք Անդամների սպասարկում էջի ներքևի համարներով կամ զանգահարեք Medicare 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով: Կամ ստացեք առացանց օրինակն այստեղ՝ www.cms.gov/Medicare/Medicare-General-Information/BNI/FFS-Expedited-Determination-Notices:

Ինչ է տեղի ունենում արագ ուսումնասիրվող բողոքարկման ժամանակ

- QIO-ի վերանայողները կհարցնեն ձեզ կամ ձեր ներկայացուցչին, թե ինչու եք կարծում, որ ապահովագրությունը պետք է շարունակվի: Ձեզանից չի պահանջվում հայտարարություն գրել, բայց կարող եք:

- Վերանայողները նայում են ձեր բժշկական տեղեկությունները, խոսում են ձեր բժշկի հետ և վերանայում հիվանդանոցի և մեր կողմից նրանց տրված տեղեկությունները:

- Մեր ծրագիրը նաև ձեզ գրավոր ծանուցում է ուղարկում, որը բացատրում է ձեր ծառայությունների ծածկույթը դադարեցնելու մեր պատճառները: Դուք ծանուցումը ստանում եք մինչև օրվա վերջ, երբ վերանայողները տեղեկացնի մեզ ձեր բողոքարկման մասին:

> Ծանուցման բացատրության իրավական տերմինն է «**Չապահովագրելու մանրամասն բացատրություն**»:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Ստուգողները իրենց որոշումը տրամադրում են մեկ ամբողջ օրվա ընթացքում՝ իրենց անհրաժեշտ բոլոր տեղեկությունները ստանալուց հետո:

Եթե QIO-ն ասում է **Այո** ձեր բողոքարկմանը.

- Մենք կշարունակենք ապահովագրել ձեր ծառայությունները այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է բժշկական տեսակետից:

Եթե QIO-ն ասում է **Ոչ** ձեր բողոքարկմանը.

- Ձեր ծածկույթն ավարտվում է այն ամսաթվով, որը մենք ձեզ ասել ենք:
- Մենք դադարում ենք վճարել այս բուժխնամքի ծախսերը ծանուցման ամսաթվի օրը:
- Դուք ինքներդ եք վճարում այս խնամքի ամբողջ արժեքը, եթե որոշեք շարունակել տնային առողջության խնամքը, Որակավորված բուժքույրական հաստատության խնամքը կամ CORF ծառայությունները ձեր ապահովագրության ավարտից հետո:
- Դուք որոշում եք, թե արդյոք ցանկանում եք շարունակել այս ծառայությունները և 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել:

I3. Ինչպես ներկայացնել 2-րդ մակարդակի բողոքարկում

2-րդ մակարդակի բողոքարկման համար դուք խնդրում եք QIO-ին ևս մեկ անգամ ուսումնասիրել 1-ին մակարդակի ձեր բողոքարկման վերաբերյալ իրենց որոշումը: Զանգահարեք նրանց 1-877-588-1123 հեռախոսահամարով (TTY՝ 1-866-868-2289):

Այս ստուգման համար պետք է դիմեք QIO-ի կողմից 1-ին մակարդակի ձեր բողոքարկմանը **Ոչ** ասելուց հետո **60 օրացուցային օրվա ընթացքում**: Դուք կարող եք դիմել այս ստուգումն անցկացնելու համար **միայն** այն դեպքում, եթե շարունակում եք բուժխնամք ստանալ ձեր ծածկույթի ավարտի ամսաթվից հետո:

QIO վերանայողները կանեն հետևյալը.

- Եվս մեկ անգամ ուշադիր կուսումնասիրեն ձեր բողոքարկմանը վերաբերող բոլոր տեղեկությունները:
- Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկման մասին իրենց որոշումը կհայտնեն ձեզ երկրորդ վերանայման հարցումն ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե QIO-ն ասում է **Այո** ձեր բողոքարկմանը.

- Մենք պետք է փոխհատուցենք ձեր ստացված բուժխնամքի ծախսերը՝ սկսած այն ամսաթվից, որը մենք նշել էինք որպես ձեր ապահովագրական ծածկույթի ավարտ:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Մենք կշարունակենք ձեզ ապահովագրական ծածկույթ տրամադրել բուժխնամքի համար այնքան ժամանակ, քանի դեռ այն բժշկական տեսակետից անհրաժեշտ է:

Եթե QIO-ն ասում է **Ոչ** ձեր բողոքարկմանը.

- Նրանք համաձայն են ձեր խնամքը դադարեցնելու մեր որոշման հետ և չեն փոխի այն:
- Նրանք ձեզ նամակ են տալիս, որտեղ ասվում է, թե ինչ կարող եք անել, եթե ցանկանում եք շարունակել բողոքարկման գործընթացը և կատարել 3-րդ մակարդակի բողոքարկում:
- Դուք կարող եք բողոք ներկայացնել և DMHC-ից խնդրել Անկախ բժշկական վերանայում առողջապահական խնամքի ծառայությունների ապահովագրությունը շարունակելու համար: Ուսումնասիրեք **Section F4**-ը՝ իմանալու, թե ինչպես դիմել DMHC-ին Անկախ բժշկական ստուգում անցկացնելու համար: Դուք կարող եք բողոք ներկայացնել և Անկախ բժշկական վերանայում խնդրել DMHC-ից՝ ի լրումն 3-րդ մակարդակի բողոքարկմանը կամ դրա փոխարեն:

ALJ-ը կամ փաստաբան դատավորը վարում է 3-րդ մակարդակի բողոքարկումները: 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակների բողոքարկումների մասին տեղեկությունները տե՛ս **Բաժին J**-ում:

J. Ձեր բողոքարկումը 2-րդ մակարդակից վեր տեղափոխելը

J1. Medicare ծառայությունների և պարագաների համար հաջորդ քայլերը

Եթե դուք Medicare ծառայությունների և պարագաների համար անցել եք բողոքարկման 1-ին ու 2-րդ մակարդակները, և ձեր երկու բողոքարկումները մերժվել են, ապա հնարավոր է՝ դուք իրավունք ունենաք բողոքարկման լրացուցիչ մակարդակների մասնակցել:

Եթե ձեր բողոքարկած Medicare ծառայության կամ ապրանքի դոլարային արժեքը չի համապատասխանում որոշակի նվազագույն դոլարի գումարին, ապա այլևս չեք կարող բողոքարկել: Եթե դոլարի արժեքը բավականաչափ բարձր է, ապա կարող եք շարունակել բողոքարկման գործընթացը: Նամակը, որը դուք ստանում եք IRO-ից ձեր 2-րդ մակարդակի բողոքարկման վերաբերյալ բացատրում է, թե ում հետ կապվել և ինչ անել 3-րդ մակարդակի բողոքարկում խնդրելու համար:

3-րդ մակարդակի բողոքարկում

3-րդ մակարդակի բողոքարկումների գործընթացը ALJ լսվում է: Որոշում կայացնողը ALJ կամ փաստաբան դատավոր է, ով աշխատում է դաշնային կառավարությունում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Եթե ALJ-ը կամ փաստաբան դատավորն պատասխանում է **Այո** ձեր բողոքարկմանը, մենք իրավունք ունենք բողոքարկել 3-րդ մակարդակի որոշումը, որը բարենպաստ է ձեզ համար:

- Եթե մենք որոշենք **բողոքարկել** որոշումը, մենք ձեզ կուղարկենք 4-րդ մակարդակի բողոքարկման հայտի օրինակը՝ բոլոր ուղեկցող փաստաթղթերով: Մենք կարող ենք սպասել 4-րդ մակարդակի բողոքարկման որոշմանը, նախքան վիճելի ծառայությունը լիազորելը կամ տրամադրելը:
- Եթե մենք որոշենք **չբողոքարկել** որոշումը, մենք պետք է թույլատրենք կամ տրամադրենք ձեզ ծառայությունը ALJ-ի կամ լիազորված դատավորի որոշումն ստանալուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:
  - Եթե ALJ-ը կամ լիազորված դատավորն ասեն **Ոչ** ձեր բողոքարկմանը, ապա բողոքարկման գործընթացը կարող է չավարտվել:
- Եթե որոշեք **ընդունել**ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, բողոքարկման գործընթացը կավարտվի:
- Եթե որոշեք **չընդունել** ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, կարող եք անցնել ստուգման գործընթացի հաջորդ մակարդակ: Ձեր ստացած ծանուցումը ձեզ կասի, թե ինչ անել 4-րդ մակարդակի բողոքարկման համար:

4-րդ մակարդակի բողոքարկում

Medicare-ի Վերաքննիչ խորհուրդը (Խորհուրդ) վերանայում է ձեր բողոքարկումը և տալիս է ձեզ պատասխան: Խորհուրդը դաշնային կառավարության մի մասն է:

Եթե Խորհուրդն ասում է **Այո** 4-րդ մակարդակի ձեր բողոքարկմանը կամ մերժում է 3-րդ մակարդակի բողոքարկման ձեզ համար բարենպաստ որոշումը վերանայելու մեր դիմումը, մենք իրավունք ունենք բողոքարկել 5-րդ մակարդակում:

- Եթե մենք որոշենք **բողոքարկել** որոշումը, մենք ձեզ գրավոր կտեղեկացնենք այդ մասին:
- Եթե մենք որոշենք **չբողոքարկել** որոշումը, մենք պետք է թույլատրենք կամ տրամադրենք ձեզ ծառայությունը Խորհրդի որոշումն ստանալուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե Խորհուրդն ասում է **Ոչ** կամ մերժում է վերանայման ձեր դիմումը, բողոքարկման գործընթացը կարող է չավարտվել:

- Եթե որոշեք **ընդունել**ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, բողոքարկման գործընթացը կավարտվի:

- Եթե որոշեք **չընդունել** ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, կարող եք շարունակել՝ անցնելով վերանայման գործընթացի հաջորդ մակարդակ: Ձեր ստացած ծանուցումը ձեզ կասի, թե արդյոք կարող եք շարունակել 5-րդ մակարդակի բողոքարկումը և ինչ անել:

5-րդ մակարդակի բողոքարկում

- Դաշնային շրջանային դատարանի դատավորը կուսումնասիրի ձեր բողոքարկումը և բոլոր տեղեկությունները և կորոշի **Այո** կամ **Ոչ**: Սա վերջնական որոշումն է: Դաշնային շրջանային դատարանից դուրս բողոքարկման այլ մակարդակներ չկան:

J2. Medi-Cal-ի լրացուցիչ բողոքարկումներ

Դուք նաև ունեք բողոքարկման այլ իրավունքներ, եթե ձեր բողոքարկումը Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայությունների կամ պարագաների մասին է, որոնք Medi-Cal-ը սովորաբար փոխհատուցում է: Բողոքարկումների և լսումների բաժնից ստացված նամակում նշված կլինի, թե ինչ պետք է անեք, եթե ցանկանում եք շարունակել բողոքարկման գործընթացը:

Նահանգային լսումների գրասենյակից ստացված նամակը ձեզ կտեղեկացնի, թե ինչ կարող եք անել, եթե ցանկանում եք շարունակել բողոքարկման գործընթացը:

J3. 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակների բողոքարկում Medicare Part D-ի դեղ խնդրելու համար

Այս բաժինը կարող է հարմար լինել ձեզ համար, եթե դուք կատարել եք 1-ին և 2-րդ մակարդակների բողոքարկումներ, և ձեր երկու բողոքարկումները մերժվել են:

Եթե ձեր բողոքարկած դեղամիջոցի արժեքը համապատասխանում է որոշակի դոլարի չափին, դուք կարող եք անցնել բողոքարկման լրացուցիչ մակարդակների: Ձեր 2-րդ մակարդակի բողոքարկման գրավոր պատասխանը բացատրում է, թե ում հետ կապվել և ինչ անել 3-րդ մակարդակի բողոքարկում խնդրելու համար:

3-րդ մակարդակի բողոքարկում

3-րդ մակարդակի բողոքարկումների գործընթացը ALJ լսվում է: Որոշում կայացնողը ALJ կամ փաստաբան դատավոր է, ով աշխատում է դաշնային կառավարությունում:

Եթե ALJ-ը կամ լիազորված դատավորն ասում են **Այո** ձեր բողոքարկմանը**.**

- Բողոքարկման գործընթացն ավարտված է.
- Մենք պետք է թույլատրենք կամ տրամադրենք դեղի հաստատված ծածկույթը 72 ժամվա ընթացքում (կամ 24 ժամ արագացված բողոքարկման համար) կամ վճարում կատարենք ոչ ուշ, քան որոշումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե ALJ-ը կամ լիազորված դատավորն ասեն **Ոչ** ձեր բողոքարկմանը, ապա բողոքարկման գործընթացը կարող է չավարտվել:

- Եթե որոշեք **ընդունել** ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, բողոքարկման գործընթացը կավարտվի:
- Եթե որոշեք **չընդունել** ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, կարող եք անցնել ստուգման գործընթացի հաջորդ մակարդակ: Ձեր ստացած ծանուցումը ձեզ կասի, թե ինչ անել 4-րդ մակարդակի բողոքարկման համար:

4-րդ մակարդակի բողոքարկում

Խորհուրդը վերանայում է ձեր բողոքարկումը և տալիս է ձեզ պատասխան: Խորհուրդը դաշնային կառավարության մի մասն է:

Եթե Խորհուրդն ասում է **Այո** ձեր բողոքարկմանը.

- Բողոքարկման գործընթացն ավարտված է.
- Մենք պետք է թույլատրենք կամ տրամադրենք դեղի հաստատված ծածկույթը 72 ժամվա ընթացքում (կամ 24 ժամ արագացված բողոքարկման համար) կամ վճարում կատարենք ոչ ուշ, քան որոշումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե Խորհուրդն ասում է **Ոչ** ձեր բողոքարկմանը կամ մերժում է վերանայման ձեր խնդրանքը, ապա բողոքարկման գործընթացը կարող է ավարտված չլինել:

- Եթե որոշեք **ընդունել** ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, ապա բողոքարկման գործընթացը կավարտվի:
- Եթե որոշեք **չընդունել** ձեր բողոքարկումը մերժող այս որոշումը, կարող եք շարունակել՝ անցնելով վերանայման գործընթացի հաջորդ մակարդակ: Ձեր ստացած ծանուցումը ձեզ կասի, թե արդյոք կարող եք շարունակել 5-րդ մակարդակի բողոքարկումը և ինչ անել:

5-րդ մակարդակի բողոքարկում

- Դաշնային շրջանային դատարանի դատավորը կուսումնասիրի ձեր բողոքարկումը և բոլոր տեղեկությունները և կորոշի **Այո** կամ **Ոչ**: Սա վերջնական որոշումն է: Դաշնային շրջանային դատարանից դուրս բողոքարկման այլ մակարդակներ չկան:

K. Ինչպես բողոք ներկայացնել

K1. Ինչպիսի խնդիրների համար է բողոք ներկայացվում

Բողոքի գործընթացն օգտագործվում է միայն որոշակի տեսակի, օրինակ՝ բուժխնամքի որակի, սպասելու ժամանակի, բուժխնամքի համակարգման և հաճախորդների սպասարկման հետ կապված խնդիրների դեպքում: Ահա բողոքի գործընթացի միջոցով լուծվող խնդիրների օրինակներ:

Բողոք	Օրինակ
Ձեր բժշկական օգնության որակը	• Դուք դժգոհ եք խնամքի որակից, օրինակ՝ հիվանդանոցում ստացված խնամքից:
Հարգելով ձեր գաղտնիությունը	• Դուք կարծում եք, ինչ-որ մեկը չի պահպանել ձեր գաղտնիության իրավունքը կամ տարածել է ձեր մասին գաղտնի տեղեկություն:
Անհարգալից վերաբերմունք, հաճախորդների վատ սպասարկում կամ այլ բացասական վարքագիծ	• առողջապահական խնամքի մատակարարը կամ անձնակազմը ձեզ հետ կոպիտ է վարվել կամ ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք: • Մեր անձնակազմը ձեզ վատ է վերաբերվել: • Ձեզ թվում է, որ ձեզ դրդում են լքել ծրագիրը:
Հասանելիություն և լեզվական օգնություն	• Դուք ֆիզիկապես չեք կարողանում մատչել առողջապահական խնամքի ծառայությունները և հաստատությունները բժշկի կամ մատակարարի գրասենյակում: • Ձեր բժիշկը կամ մատակարարը թարգմանիչ չի տրամադրում այն ոչ անգլերեն լեզվի համար, որը դուք խոսում եք (օրինակ՝ ամերիկյան ժեստերի լեզուն կամ իսպաներենը): • Ձեր մատակարարը ձեզ չի տալիս այլ ողջամիտ հարմարեցումներ, որոնց կարիքն ունեք և խնդրում եք:

Բողոք	Օրինակ
Սպասման ժամանակ	• Դուք խնդիրներ ունեք այց նշանակելու կամ շատ երկար եք սպասել այն ստանալու համար: • Բժիշկները, դեղագործները կամ առողջապահական այլ մասնագետները, Անդամների սպասարկումը կամ ծրագրի այլ աշխատակիցները ձեզ շատ երկար են սպասում:
Մաքրություն	• Դուք կարծում եք, որ կլինիկան, հիվանդանոցը կամ բժշկի սենյակը մաքուր չեն:
Մեզանից ստացվող տեղեկություններ	• Կարծում եք, որ մենք ձեզ չենք ուղարկել ծանուցագիր կամ նամակ, որը դուք պետք է ստանայիք: • Կարծում եք, որ ձեզ ուղարկված գրավոր տեղեկությունը դժվար է հասկանալ:
Ծածկույթի վերաբերյալ որոշումների կամ բողոքարկումների հետ կապված ժամանակացույց	• Դուք կարծում եք, որ մենք ժամանակին չենք պատասխանում ապահովագրության որոշումների հայցերին կամ ձեր բողոքարկումներին: • Կարծում եք, որ ապահովագրություն կամ ձեր օգտին ապահովագրության որոշում ստանալուց հետո, մենք ժամանակին չենք տրամադրում ձեզ ծառայությունը կամ փոխհատուցումը որոշ բժշկական ծառայությունների համար: • Դուք չեք կարծում, որ մենք ձեր գործը ժամանակին ուղարկել ենք IRO-ին:

Կան տարբեր տեսակի բողոքներ: Դուք կարող եք ներքին և/կամ արտաքին բողոք ներկայացնել: Ներքին բողոքը ներկայացվում է մեր ծրագրին և վերանայվում է մեր ծրագրի կողմից: Արտաքին բողոքը ներկայացվում և վերանայվում է մեր ծրագրին չառնչվող կազմակերպության կողմից: Եթե ներքին և/կամ արտաքին բողոք ներկայացնելու համար ձեզ օգնություն է անհրաժեշտ, կարող եք զանգահարել Անդամների սպասարկման ծառայություն այս էջի ներքևում տպված հեռախոսահամարներով:

> «Բողոքի» իրավական տերմինն է **«բողոք»:**
>
> «Բողոք ներկայացնելու» իրավական տերմինն է **«բողոքի ներկայացում»:**

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

K2. Ներքին բողոքներ

Ներքին բողոք ներկայացնելու համար զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով, (TTY՝ 711): Կարող եք բողոք ներկայացնել ցանկացած ժամանակ, եթե այն Medicare Part D-ի դեղի վերաբերյալ չէ: Եթե բողոքը վերաբերում է Medicare Part D-ի դեղին, այն պետք է ներկայացնեք ձեզ մոտ խնդիրը, որի համար ցանկանում եք բողոք ներկայացնել, ծագելուց հետո **60 օրացուցային օրվա ընթացքում**:

- Եթե կան այլ բաներ, որոնք պետք է անեք, Անդամների սպասարկման կենտրոնը ձեզ կտեղեկացնի այդ մասին:
- Կարող եք նաև գրի առնել ձեզ բողոքը և ուղարկել մեզ: Եթե դուք ներկայացնեք գրավոր բողոք, մենք կպատասխանենք ձեր բողոքին գրավոր կերպով:
- Եթե գրավոր պատասխան խնդրեք, մենք գրավոր կպատասխանենք: Եթե դուք գրավոր բողոք (դժգոհություն) եք ներկայացնում, կամ եթե ձեր բողոքը կապված է բուժսպասարկման որակի հետ, մենք ձեզ կպատասխանենք գրավոր:
- Մենք ձեզ նամակ կուղարկենք ձեր բողոքը ստանալուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում՝ տեղեկացնելով, որ մենք ստացել ենք այն:

Մենք պետք է ծանուցենք ձեր բողոքի մասին մեր որոշումն այնքան արագ, որքան որ պահանջում է ձեր գործը՝ ելնելով ձեր առողջական վիճակից, սակայն ձեր գրավոր բողոքը ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 օրացուցային օրվա ընթացքում: Որոշ դեպքերում դուք իրավունք ունեք խնդրել ձեր բողոքի արագ վերանայում: Սա կոչվում է «արագ բողոքի» գործընթաց: Դուք ձեր բողոքի արագ վերանայման իրավունք ունեք, եթե չեք համաձայնվում մեր որոշման հետ հետևյալ իրավիճակներում.

- Մենք մերժում ենք բժշկական խնամքի կամ Medicare Part D դեղերի մասին հայցի արագ վերանայման ձեր խնդրանքը:
- Մենք մերժում ենք մերժված ծառայությունների կամ Medicare Part D դեղերի բողոքարկման արագ վերանայման ձեր խնդրանքը:
- Մենք որոշում ենք, որ անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ բժշկական խնամքի ձեր խնդրանքը վերանայելու համար:
- Մենք որոշում ենք, որ անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ վերանայելու համար մերժված բժշկական խնամքի ձեր բողոքարկումը:
- Medicare Part D-ին վերաբերվող բողոքները պետք է ներկայացվեն ձեր խնդրից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում: Բոլոր այլ բողոքները պետք է ներկայացնեք մեզ կամ մատակարարին ձեզ չբավարարող միջադեպի կամ գործողության ամսաթվից հետո ցանկացած պահի:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

- Եթե բողոք եք ներկայացնում այն պատճառով, որ մերժել ենք «ապահովագրական արագ որոշման» կամ «արագ բողոքարկման» ձեր խնդրանքը, կարող եք «արագ բողոք» ներկայացնել և մենք կպատասխանենք ձեր բողոքին 24 ժամվա ընթացքում:

> «Արագ բողոքի» **իրավական տերմինն է «արագացված բողոք»:**

Հնարավորության դեպքում, մենք անմիջապես կպատասխանենք ձեզ: Եթե դուք զանգահարում եք մեզ և ներկայացնում բողոքը, հնարավոր է, որ մենք կարողանանք պատասխանել ձեզ հենց հեռախոսազանգի ընթացքում: Եթե ձեր առողջական վիճակը մեզանից պահանջում է արագ պատասխան, մենք կանենք դա:

- Մենք պատասխանում ենք բողոքների մեծ մասին 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե մենք որոշում չենք կայացնում 30 օրացուցային օրվա ընթացքում, քանի որ մեզ լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր, մենք ձեզ գրավոր կտեղեկացնենք այդ մասին: Նաև կտրամադրենք ձեր հայցի կարգավիճակի մասին տեղեկություն և պատասխանի ակնկալվող ժամանակը:

- Եթե բողոք եք ներկայացնում այն պատճառով, որ մերժել ենք «ապահովագրական արագ որոշման» կամ «արագ բողոքարկման» ձեր խնդրանքը, մենք ավտոմատ կերպով ձեզ «արագ բողոք» կտանք ու կպատասխանենք ձեր բողոքին 24 ժամվա ընթացքում:

ինչպես, օրինակ՝ բնական աղետ, պատերազմ, խռովություն, քաղաքացիական ապստամբություն, համաճարակ, օբյեկտների ամբողջական կամ մասնակի ոչնչացում, ատոմային պայթյուն կամ միջուկային էներգիայի այլ արտանետում, նշանակալի բժշկական խմբի անձնակազմի հաշմանդամություն, արտակարգ դրություն կամ այլ նմանատիպ իրադարձություններ, որոնք մեր պլանի վերահսկողության մեջ չեն, հանգեցնում են նրան, որ Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի միջոցները կամ անձնակազմը հասանելի չեն լինում այս *Անդամի ձեռնարկի* ներքո ծառայություններ կամ նպաստներ տրամադրելու կամ կազմակերպելու համար, Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի՝ նման ծառայություններ կամ նպաստներ տրամադրելու պարտավորությունը

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

պետք է սահմանափակվի այն պահանջով, որ Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ը բարեխղճորեն ջանք գործադրի՝ տրամադրելու կամ կազմակերպելու նման ծառայությունների կամ նպաստների տրամադրումը իր հարմարությունների կամ անձնակազմի ներկայիս առկայության պայմաններում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Գլուխ 12. Կարևոր բառերի սահմանումներ

Ներածություն

Այս գլուխը ներառում է հիմնական տերմինները և դրանց սահմանումները, որոնք օգտագործվել են ձեր *Անդամի ձեռնարկում*: Տերմինները նշված են այբբենական կարգով: Եթե չեք կարողանում գտնել ձեզ անհրաժեշտ տերմինը կամ եթե սահմանումից բացի լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք, կապվեք Անդամների սպասարկման կենտրոնի հետ:

Առօրյա կյանքի գործունեություն (ADL). Այն, ինչ մարդիկ անում են առօրյայում, օրինակ՝ ուտել, պետքարան գնալ, հագնվել, լողանալ կամ խոզանակել ատամները:

Վարչական իրավունքի դատավոր. Վարչական իրավունքի դատավորը (ALJ) այն դատավորն է, որը լսում է պետական մարմինների հետ կապված գործերը և որոշում է կայացնում: Դատավոր, որն ուսումնասիրում է 3-րդ մակարդակի բողոքարկումը:

AIDS-ի դեղերի աջակցության ծրագիր (ADAP). Ծրագիր, որն օգնում է HIV/AIDS-ով ապրող իրավասու անհատներին օգտվել HIV-ի կենսարար դեղամիջոցներից:

Ամբուլատոր վիրաբուժական կենտրոն. հաստատություն որն ամբուլատոր վիրաբուժական ծառայություններ է մատուցում այն հիվանդներին, որոնք հիվանդանոցային խնամքի կարիք չունեն, և որոնք 24 ժամից ավել խնամքի կարիք չեն ունենա:

Բողոքարկում. Եղանակ, որով կարող եք վիճարկել մեր գործողությունները, եթե կարծում եք, որ մենք սխալ ենք թույլ տվել: Դուք կարող եք խնդրել մեզ փոխել ապահովագրության որոշումը՝ ներկայացնելով բողոքարկում: **Գլուխ 9**-ն այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է բողոքարկումները՝ ներառյալ, թե ինչպես բողոքարկել:

Լրավճարի հաշվեգրում. պրակտիկա, երբ բուժօգնություն տրամադրողը պացիենտին հաշիվ է ներկայացնում իր լրիվ սահմանված գնի և պացիենտի առողջապահական պլանի կողմից վճարված գումարի տարբերության չափով:

Վարքագծային առողջություն. նշանակում է մեր էմոցիոնալ, հոգեբանական և սոցիալական բարեկեցությանը: Պարզ բառերով՝ դա այն է, թե ինչպես ենք մենք մտածում, զգում և փոխգործակցում մարդկանց հետ: Վարքագծային առողջություն. Ընդհանուր տերմին, որը վերաբերում է հոգեկան առողջությանն ու թմրանյութերի օգտագործման խանգարումների ծառայություններին:

Կենսաբանական ապրանք. դեղատոմսով դեղ, որը պատրաստված է բնական և կենդանի աղբյուրներից, ինչպիսիք են կենդանական բջիջները, բույսերի բջիջները, բակտերիաները կամ սնկերը: Կենսաբանական արտադրանքները ավելի բարդ են, քան մյուս դեղամիջոցները և չեն կարող ճշգրիտ պատճենվել, ուստի այլընտրանքային ձևերը կոչվում են կենսասմաններ: (Տե՛ս նաև «Բնօրինակ կենսաբանական արտադրանք» և «Կենսասման»):

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Կենսանման. Կենսաբանական դեղամիջոց, որը շատ նման է, բայց ոչ նույնական բնօրինակ կենսաբանական արտադրանքին: Կենսանմանները նույնքան անվտանգ և արդյունավետ են, որքան բնօրինակ կենսաբանական արտադրանքը: Որոշ կենսանմաններ կարող են փոխարինվել բնօրինակ կենսաբանական արտադրանքով դեղատանը՝ առանց նոր դեղատոմսի անհրաժեշտության: (Անցեք «փոխարինելի կենսանման» եզրին):

Բրենդային դեղ. դեղատոմսային դեղ, որն արտադրվում և վաճառվում է ընկերության կողմից, որն ի սկզբանե մշակել է տվյալ դեղերը: Բրենդային դեղերն ունեն նույն ակտիվ բաղադրիչները, որոնք ունեն նաև դեղի անմակնիշ տարբերակը: Ջեներիկ դեղերը սովորաբար պատրաստվում և վաճառվում են այլ դեղագործական ընկերությունների կողմից և ընդհանուր դեպքում հասանելի են մինչև բրենդային դեղի արտոնագրի ավարտը:

Բուժսպասարկման համակարգող. Մեկ հիմնական անձ, ով աշխատում է ձեզ հետ, առողջապահական պլանի և ձեր խնամքի պատասխանատուների հետ՝ համոզվելու համար, որ դուք ստանում եք ձեր համար անհրաժեշտ խնամքը:

Խնամքի պլան. տե՛ս «Անհատականացված խնամքի պլան»:

Խնամքի թիմ. տե՛ս «Միջառարկայական խնամքի թիմ»:

Ճգնաժամային ապահովագրության փուլ. Medicare Part D-ի դեղերի նպաստի փուլ է, երբ մեր ծրագիրը վճարում է ձեր Մաս D-ի դեղերի բոլոր ծախսերը մինչև տարվա վերջ: Ձեզ համար այս փուլը սկսվում է, եթե դուք (կամ այլ որակավորված անձինք ձեր անունից) ծախսել եք $ 2,400 Մաս D-ի ապահովագրված դեղերի համար տարվա ընթացքում: Դուք ոչինչ չեք վճարում:

Medicare և Medicaid ծառայությունների (CMS) կենտրոններ. Medicare-ի համար պատասխանատու դաշնային գործակալությունը: **Գլուխ 2**-ն այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է, թե ինչպես կապվել CMS-ի հետ:

Համայնքահեն ծառայություններ չափահասների համար (CBAS). ամբուլատոր, հաստատության վրա հիմնված սպասարկման ծրագիր, որն առաջարկում է հմուտ բուժքույրական խնամք, սոցիալական ծառայություններ, մասնագիտական և խոսքի թերապիաներ, անձնական խնամք, ընտանիքի/խնամակալի վերապատրաստում և աջակցություն, սննդի ծառայություններ, տրանսպորտ և այլ ծառայություններ այն իրավասու անդամներին, ովքեր համապատասխանում են իրավասության չափանիշներին:

Բողոք. գրավոր կամ բանավոր հայտարարություն, որում ասվում է, որ դուք խնդիր կամ մտահոգություն ունեք ձեր ապահովագրված ծառայությունների կամ խնամքի վերաբերյալ: Սա ներառում է մտահոգություններ ծառայության որակի, ձեր խնամքի որակի, մեր ցանցի մատակարարների կամ մեր ցանցի դեղատների մասին: «Բողոք ներկայացնելը» պաշտոնապես կոչվում է «բողոք հարուցել»:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Համապարփակ ամբուլատոր վերականգնողական հաստատություն (CORF). Հաստատություն, որը հիմնականում տրամադրում է վերականգնողական ծառայություններ հիվանդությունից, դժբախտ պատահարից կամ լուրջ վիրահատությունից հետո: Այն տրամադրում է մի շարք ծառայություններ, այդ թվում՝ ֆիզիկական թերապիա, սոցիալական կամ հոգեբանական ծառայություններ, շնչառական թերապիա, աշխատանքային թերապիա, խոսքի թերապիա, և տան միջավայրի գնահատման ծառայություններ:

Համավճար. ֆիքսված գումար, որը դուք վճարում եք որպես ծախսերի ձեր բաժին՝ որոշ դեղատոմսային դեղեր ստանալու համար: Օրինակ՝ դուք կարող եք վճարել $2 կամ $5 ծառայության կամ դեղի համար:

Ծախսերի համավճարում. գումարներ, որոնք Դուք պետք է վճարեք որոշակի ծառայություններ կամ դեղեր ստանալիս: Ծախսերի համավճարումը ներառում է համավճարները:

Ծախսերի բաշխման կարգեր. խմբեր են, որոնք ունեն նույն համավճարը: *Ապահովագրված դեղերի ցանկի* (նաև հայտնի է որպես *Դեղերի ցանկ*) բոլոր դեղերը գտնվում են ծախսերի բաշխման վեց կարգերից մեկում: Սովորաբար, որքան բարձր է ծախսերի վճարման կարգը, այնքան բարձր է դեղի ձեր արժեքը:

Ծածկույթի որոշում. Որոշում այն մասին, թե ինչ նպաստներ ենք մենք տալիս: Սա ներառում է որոշումներ ապահովագրված դեղերի ու ծառայությունների մասին, կամ ձեր առողջապահական ծառայությունների համար մեր վճարված գումարի մասին: **Գլուխ 9**-ն այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է, թե ինչպես մեզանից ապահովագրության ծածկույթի որոշում խնդրել:

Ծածկույթով տրամադրվող դեղեր. Եզրույթն օգտագործում ենք, երբ նկատի ունենք բոլոր դեղատոմսով և առանց դեղատոմսի (OTC) դեղերը, որոնք ապահովագրված են մեր պլանի կողմից:

Ապահովագրված ծառայություններ. մենք օգտագործում ենք այս ընդհանուր տերմինը՝ նկատի ունենալով մեր պլանով ապահովագրված առողջապահական խնամքը, երկարատև ծառայություններն ու աջակցությունը, պաշարները, դեղատոմսային և առանց դեղատոմսի դեղերը, սարքավորումները և այլ ծառայություններ, որոնք ապահովագրվում են մեր պլանի կողմից:

Մշակութային իրավասությունների ուսուցում. Դասընթաց, որը լրացուցիչ ուսուցում է տրամադրում մեր առողջապահական ծառայություններ մատուցողներին, որն օգնում է նրանց ավելի լավ հասկանալ ձեր անցած ուղին, արժեքները և համոզմունքները, որպեսզի այնպես հարմարեցվեն ծառայությունները, որ համապատասխանեն ձեր սոցիալական, մշակութային և լեզվական կարիքներին:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Ծախսերի բաշխման օրական դրույքը. դրույքը կարող է կիրառվել, երբ ձեր բժիշկը դուրս է գրում լրիվ ամսվա պաշարից պակաս քանակի որոշակի դեղ ձեզ համար, և դուք պետք է համավճար վճարեք: Ծախսերի բաշխման օրական դրույքը համավճարն է՝ բաժանված ամսվա պաշարի օրերի քանակի:

Օրինակ՝ ենթադրենք, ձեր դեղի համավճարն ամբողջ ամսվա (30 օրվա պաշար) համար կազմում է $1.65: Սա նշանակում է՝ գումարը, որը վճարում եք դեղի համար մի փոքր ավելին է, քան $0.06 օրական: Եթե դուք ստանում եք դեղի յոթ օրվա պաշար, ձեր վճարումը կկազմի օրական $0.06-ից մի փոքր ավելին՝ բազմապատկված յոթ օրով, իսկ ընդհանուր վճարումը կկազմի $0.39-ից պակաս:

Առողջապահական ծառայությունների դեպարտամենտ (DHCS). California-ի նահանգային վարչությունը, որը ղեկավարում է Medicaid ծրագիրը (հայտնի է որպես Medi-Cal):

Կառավարվող առողջապահական խնամքի բաժին (DMHC). նահանգային դեպարտամենտ California-ում, որը պատասխանատու է առողջապահական ծրագրերը կարգավորելու համար: DMHC-ն օգնում է մարդկանց Medi-Cal ծառայությունների հետ կապված բողոքարկումների ու բողոքների հարցում: DMHC-ը նաև անցկացնում է Անկախ բժշկական վերանայումներ (IMR):

Ապաանդամագրություն Մեր պլանին ձեր անդամակցության դադարեցման գործընթացը: Անդամակցության դադարեցումը կարող է լինել կամավոր (ձեր ընտրությամբ) կամ հարկադրված (ոչ ձեր ընտրությամբ):

Թմրամիջոցների կառավարման ծրագիր (DMP). ծրագիր, որն օգնում է համոզվել, որ անդամներն ապահով կերպով օգտագործում են դեղատոմսով տրվող ափիոնատիպ նյութեր և հաճախակի չարաշահվող այլ դեղամիջոցներ:

Դեղերի կարգեր. դեղերի խմբեր մեր *Դեղերի ցանկում*: Դեղերի կարգերի օրինակներ են անմակնիշ, բրենդային կամ առանց դեղատոմսի (OTC) դեղերը: *Դեղերի ցանկի* յուրաքանչյուր դեղ գտնվում է վեց կարգերից մեկում:

Կրկնակի իրավասու հատուկ կարիքներ ունեցող անձանց համար նախատեսված պլան (D-SNP). Առողջապահական պլան, որը սպասարկում է այն անհատներին, ովքեր իրավասու են և՛ Medicare-ի, և՛ Medicaid-ի համար: Մեր ծրագիրը D-SNP է:

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (DME). Որոշ իրեր ձեր բժիշկը պատվիրում է ձեր տանը սեփական օգտագործման համար: Այս պարագաների օրինակներն են՝անվասայլակները, հենակները, էլեկտրական ներքնակների համակարգերը, պաարագաները, հիվանդանոցային մահճակալներ, որոնք մատակարարը պատվիրել է տանը օգտագործելու համար, IV ինֆուզիոն պոմպեր, խոսք արտադրող սարքեր, թթվածնային սարքավորում և պարագաներ, նեբուլայզերներ և քայլակներ:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Արտակարգ իրավիճակ. բժշկական արտակարգ իրավիճակը այն իրավիճակն է, երբ դուք կամ որևէ այլ անձ, որն առողջապահության և բժշկության մասին միջին գիտելիքներ ունի, կարծում է, որ առկա են բժշկական ախտանշաններ, որոնք անհապաղ բժշկական ուշադրության կարիք ունեն՝ կանխելու մահը, մարմնի մասի կորուստը կամ մարմնի գործառույթի կորուստը կամ լուրջ խանգարումը (և եթե հղի եք, ապա չծնված երեխայի կորուստ): Բժշկական ախտանշանները կարող են լինել հիվանդություն, վնասվածք, ուժեղ ցավ կամ հիվանդություն, որն արագորեն վատթարանում է:

Շտապ օգնություն. ապահովագրված ծառայություններ, որոնք տրվել են պատասխանատու անձի կողմից, որը վերապատրաստվել է շտապ օգնության ծառայություններ մատուցելու համար և պատրաստ է աշխատել բժշկական կամ վարքագծային առողջության արտակարգ իրավիճակներում:

Բացառություն. թույլտվություն ապահովագրություն ստանալ որևէ սովորաբար չապահովագրված դեղի համար կամ օգտագործել դեղն առանց որոշակի կանոնների ու սահմանափակումների:

Բացառված ծառայություններ. ծառայություններ, որոնք ապահովագրված չեն այս առողջապահական պլանով:

Լրացուցիչ օգնություն. Medicare-ի ծրագիր է, որն օգնում է սահմանափակ եկամուտ ու միջոցներ ունեցող անձանց նվազեցնել Medicare Part D-ի դեղերի արժեքները, օրինակ՝ ապահովագինը, հանելիները և համավճարները: Լրացուցիչ օգնություն նաև կոչվում է «Ցածր եկամտի լրավճար» կամ «LIS»:

Ձեներիկ դեղեր. Դեղատոմսով դեղամիջոց, որը հաստատվել է FDA-ի կողմից՝ բրենդային դեղի փոխարեն օգտագործելու համար: Անմակնիշ դեղն ունի նույն բաղադրիչները, որոնք ունի բրենդային դեղը: Սովորաբար այն ավելի էժան է ու նույն ձևով է ազդում, ինչպես և բրենդային դեղը:

Բողոք. Ձեր բողոքը մեր կամ մեր ցանցի մատակարարներից կամ դեղատներից մեկի վերաբերյալ: Սա ներառում է բողոք ձեր խնամքի որակի մասին կամ ձեր առողջապահական ծրագրի կողմից տրամադրված ծառայության որակի մասին:

Առողջապահական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (HICAP). Ծրագիր, որը տրամադրում է անվճար և օբյեկտիվ տեղեկատվություն և խորհրդատվություն Medicare-ի մասին: **Գլուխ 2**-ն այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է, թե ինչպես կապվել HICAP-ի հետ:

Առողջապահական ծրագիր. բժիշկներից, հիվանդանոցներից, դեղատներից, երկարատև ծառայությունների մատակարարներից ու այլ մատակարարներից բաղկացած կազմակերպություն: Այն նաև ունի բուժսպասարկման համակարգողներ, որոնք կօգնեն ձեզ կառավարել ձեր ծառայություններն ու ծառայություններ մատուցողներին: Նրանք բոլորն աշխատում են բոլորը միասին՝ տրամադրելու ձեզ անհրաժեշտ խնամքը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Առողջության ռիսկի գնահատում (HRA): Ձեր բժշկական պատմության և ընթացիկ վիճակի վերանայում: Այն օգտագործվում է իմանալու ձեր առողջության մասին և ինչպես այն կարող է փոխվել ապագայում:

Տնային առողջության օգնական. Անձ, ով մատուցում է այնպիսի ծառայություններ, որոնք կարիք չունեն լիցենզավորված բուժքրոջ կամ թերապևտի հմտությունների, ինչպիսիք են անձնական խնամքի հետ կապված օգնությունը (օրինակ՝ լողանալը, զուգարանից օգտվելը, հագնվելը կամ սահմանված վարժությունների կատարումը): Տնային առողջության օգնականները չունեն բուժքույրական վկայագիր և թերապիա չեն տրամադրում:

Հոսփիս. Խնամքի և աջակցության ծրագիր՝ օգնելու այն մարդկանց, ում վերջնական բժշկական լանխատեսումը հարմարավետ ապրելն է: Մահացու կանխատեսումը նշանակում է, որ անձը բժշկական վկայական է ստացել որպես անբուժելի հիվանդ, ինչը նշանակում է, որ կյանքի տևողությունը վեց ամիս է կամ ավելի քիչ:

- Այն անդամագրված անձը, ով ունի մահացու կանխատեսում, իրավունք ունի ընտրել անբուժելի հիվանդների խնամքի հաստատություն:
- Մասնագետների և խնամակալների հատուկ պատրաստված թիմը խնամք է տրամադրում մարդու ֆիզիկական, հուզական, սոցիալական ու հոգևոր կարիքների համար:
- Մեզանից պահանջվում է տրամադրել ձեզ նման հիվանդանոցների ամբողջական ցուցակը, որոնք գործում են ձեր տարածաշրջանում:

Ոչ ճշգրիտ/անպատշաճ հաշիվ. Իրավիճակ, երբ ծառայություն մատուցողը (օրինակ՝ բժիշկը կամ հիվանդանոցը) ձեզ ավելի շատ հաշիվ է վճարում, քան ծառայությունների համար ծախսերի բաշխման մեր գումարը: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն, եթե ստանում եք ձեզ անհասկանալի հաշիվներ:

Քանի որ մենք վճարում ենք ձեր ծառայությունների ողջ արժեքը, դուք պարտավոր **չեք** ծախսաբաշխման համար: Մատակարարները չպետք է հաշիվ ներկայացնեն ձեզ այս ծառայությունների համար:

Տնային աջակցության ծառայություններ (IHSS). IHSS ծրագիրը կօգնի վճարել ձեզ մատուցվող ծառայությունների համար, որպեսզի կարողանաք ապահով մնալ ձեր սեփական տանը: IHSS-ը տնից դուրս խնամքի այլընտրանք է, ինչպիսիք են բուժքույրական խնամքի տունը կամ գիշերօթիկ և խնամքի հաստատությունները: Ծառայություններ ստանալու համար կատարվում է գնահատում՝ որոշելու համար, թե ինչ տեսակի ծառայություններ կարող են թույլատրվել յուրաքանչյուր մասնակցի համար՝ նրանց կարիքների հիման վրա: Ծառայությունների տեսակները, որոնք կարող են թույլատրվել IHSS-ի միջոցով՝ տնային մաքրություն, ճաշի պատրաստում, լվացք, մթերային գնումներ,

անձնական խնամքի ծառայություններ (օրինակ՝ աղիների և միզապարկի խնամք, լոգանք, խնամք և պարամեդիկական ծառայություններ), բժշկական տեսակցություններին ուղեկցելը և պաշտպանական հսկողությունը մտավոր խնդիրներ ունեցողների համար: Վարչաշրջանի սոցիալական ծառայության գործակալությունները ղեկավարում են IHSS-ը:

Անկախ բժշկական վերանայում (IMR). Եթե մենք մերժում ենք բժշկական ծառայությունների կամ բուժման ձեր խնդրանքը, դուք կարող եք բողոքարկել: Եթե դուք համաձայն չեք մեր որոշման հետ, և ձեր խնդիրը վերաբերում է Medi-Cal ծառայությանը՝ ներառյալ DME-ի պարագաներին ու դեղերին, ապա կարող եք IMR խնդրել California-ի Կառավարվող առողջապահության վարչությունից: IMR-ը ձեր գործի վերանայումն է փորձագետների կողմից, որոնք մեր պլանի մաս չեն կազմում: Եթե IMR որոշումը ձեր օգտին է, ապա մենք պետք է տրամադրենք ձեզ պահանջվող ծառայությունը կամ բուժումը: Դուք IMR-ի համար ոչինչ չեք վճարում:

Անկախ վերանայման կազմակերպություն (IRO). Medicare-ի կողմից վարձված անկախ կազմակերպություն, որը վերանայում է 2-րդ մակարդակի բողոքարկումը: Այն կապված չէ մեզ հետ և պետական գործակալություն չէ: Այս կազմակերպությունն է որոշում՝ արդյոք մեր կողմից ընդունված որոշումը ենթակա է փոփոխման, թե ոչ: Medicare-ը վերահսկում է նրա աշխատանքը: Պաշտոնական անունն է **Անկախ վերանայման մարմին:**

Անհատականացված բուժսպասարկման պլան (ICP կամ Բուժսպասարկման պլան). ծրագիր, թե ինչ ծառայություններ կստանաք և ինչպես կստանաք դրանք: Ձեր ծրագիրը կարող է ներառել բժշկական ծառայություններ, վարքագծային առողջության ծառայություններ և երկարատև ծառայություններ ու աջակցություն:

Ստացիոնար. Եզրույթ, որն օգտագործվում է, երբ դուք պաշտոնապես ընդունվում եք հիվանդանոց՝ հիմուտ բժշկական ծառայությունների համար: Եթե դուք պաշտոնապես չեք ընդունվել, դուք կարող եք համարվել ամբուլատոր հիվանդ, այլ ոչ թե ստացիոնար, նույնիսկ եթե մեկ գիշեր մնում եք հիվանդանոցում:

Ինտեգրված D-SNP. Երկակի իրավասու հատուկ կարիքների պլան, որն ընդգրկում է Medicare-ը և Medicaid-ի մեծ մասը կամ բոլոր ծառայությունները մեկ առողջապահական պլանի շրջանակներում անհատների որոշակի խմբերի համար, որոնք իրավասու են և՛ Medicare, և՛ Medicaid-ի համար: Այս անհատները հայտնի են որպես լիարժեք նպաստներով երկակի իրավասությամբ անձինք:

Փոխարինելի կենսանման. կենսանման, որը կարող է փոխարինվել դեղատանը առանց նոր դեղատոմսի անհրաժեշտության, քանի որ այն համապատասխանում է լրացուցիչ պահանջներին՝ կապված ավտոմատ փոխարինման հնարավորության հետ: Ավտոմատ փոխարինումը դեղատանը ենթակա է պետության օրենքին:

Միջառարկայական խնամքի թիմ (ICT կամ Խնամքի թիմ). Խնամքի թիմը կարող է ներառել բժիշկներ, բուժքույրեր, խորհրդատուներ կամ այլ առողջապահական մասնագետներ, ովքեր ձեզ կօգնեն ստանալ ձեր անհրաժեշտ խնամքը: Ձեր խնամքի թիմը նաև օգնում է ձեզ կազմել խնամքի ծրագիր:

Ապահովագրված դեղերի ցանկ (Դեղերի ցանկ). դեղատոմսով և առանց դեղատոմսի (OTC) դեղերի ցանկ, որոնք մենք ապահովագրում ենք: Մենք բժիշկների ու դեղագործների օգնությամբ ընտրում ենք այս ցուցակի դեղերը: *Սեղերի ցանկը* տեղեկացնում է ձեզ՝ արդյոք կան որևէ կանոններ, որոնց դուք պետք է հետևեք ձեր դեղերը ստանալու համար: *Դեղերի ցանկը* երբեմն կոչվում է «Տեղեկամատյան»:

Երկարատև ծառայություններ ու աջակցություն (LTSS). երկարատև ծառայություններն ու աջակցությունն օգնում են բարելավել երկարատև բժշկական վիճակը: Այս ծառայությունների մեծ մասն օգնում է ձեզ տանը մնալ, որպեսզի դուք չգնաք բուժքույրական հաստատություն կամ հիվանդանոց: LTSS-ը, որն ընդգրկված է մեր պլանի մեջ, ներառում է Համայնքահեն ծառայություններ մեծահասակների համար (CBAS), որը նաև հայտնի է որպես մեծահասակների ցերեկային առողջապահություն, Բուժքույրական հաստատություններ (NF) և Համայնքային աջակցություն:. IHSS և 1915(c) հրաժարման ծրագրերը Medi-Cal LTSS են, որոնք տրամադրվում են մեր ծրագրից դուրս:

Ցածր եկամուտների սուբսիդիա (LIS). Տե՛ս «Լրացուցիչ օգնություն»

Փոստով պատվիրելու ծրագիր. որոշ պլաններ կարող են առաջարկել փոստով պատվերների ծրագիր, որը թույլ է տալիս ստանալ ձեր ապահովագրված դեղատոմսով դեղերի մինչև երեք ամսվա մատակարարում, որոնք ուղարկվում են անմիջապես ձեր տուն: Սա կարող է լինել ծախսարդյունավետ և հարմար միջոց՝ ձեր կանոնավոր ընդունած դեղատոմսերը համալրելու համար:

Medicaid (կամ Medical Assistance). դաշնային կառավարության և նահանգի կողմից իրականացվող ծրագիր, որն օգնում է սահմանափակ եկամուտներով և ռեսուրսներով մարդկանց վճարել երկարաժամկետ ծառայությունների ու աջակցության և բժշկական ծախսերի համար: Medi-Cal-ը Medicaid ծրագիր է California նահանգի համար:

Medi-Cal. Սա California-ի Medicaid ծրագրի անվանումն է: Medi-Cal-ը ղեկավարվում է նահանգի կողմից և վճարվում նահանգային ու դաշնային կառավարության կողմից:

- Այն օգնում է սահմանափակ եկամուտ ու միջոցներ ունեցող անձանց՝ վճարել երկարաժամկետ ծառայությունների ու աջակցության և բժշկական ծախսերի համար:
- Այն ապահովագրում է լրացուցիչ ծառայություններ և որոշ դեղեր, որոնք ապահովագրված չեն Medicare-ի կողմից:

- Medicaid ծրագրերը տարբերվում են նահանգից նահանգ, այնուամենայնիվ առողջապահական խնամքի ծախսերի մեծ մասն ապահովագրվում է, եթե դուք որակավորվում եք և Medicare-ի, և Medi-Cal-ի համար:

Medi-Cal ծրագրի. ծրագրեր, որոնք ապահովագրում են միայն Medi-Cal նպաստներ, ինչպես օրինակ՝ երկարատև ծառայություններ ու աջակցություն, բժշկական սարքավորում ու փոխադրում: Medicare-ի նպաստներն առանձին են:

Բժշկական առումով անհրաժեշտ. սա նկարագրում է ծառայություններ, պարագաներ կամ դեղեր, որոնք անհրաժեշտ են՝ կանխարգելելու, ախտորոշելու կամ բուժելու կամ ձեր ընթացիկ առողջական վիճակը պահպանելու համար: Սա ներառում է խնամք, որը կանխում է հիվանդանոց կամ բուժքույրական հաստատություն ձեր տեղափոխվելը: Սա նաև նշանակում է ծառայություններ, պաշարներ կամ դեղեր, որոնք համապատասխանում են բժշկական պրակտիկայի ընդունված ստանդարտներին: Բժշկական տեսակետից անհրաժեշտ վերաբերում է ապահովագրված բոլոր ծառայություններին, որոնք խելամիտ են և անհրաժեշտ՝ կյանքը պաշտպանելու, լուրջ հիվանդություն կամ հաշմանդամություն կանխելու կամ ուժեղ ցավը թեթևացնելու համար՝ հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման կամ բուժման միջոցով:

Medicare. Առողջության ապահովագրության դաշնային ծրագիրը 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար, որոշակի հաշմանդամություն ունեցող 65 տարեկանից ցածր մարդկանց և երիկամների վերջին փուլի ախտորոշմամբ հիվանդների համար (ընդհանուր առմամբ նրանք, ովքեր ունեն մշտական երիկամային անբավարարություն, ովքեր դիալիզի կամ երիկամի փոխպատվաստման կարիք ունեն): Medicare-ի մասնակիցները կարող են ստանալ իրենց Medicare-ի բժշկական ապահովագրությունը Original Medicare-ի կամ կառավարվող խնամքի ծրագրի միջոցով (տեսեք «Առողջապահական ապահովագրության պլան»):

Medicare Advantage Medicare ծրագիր, որը նաև հայտնի է որպես «Medicare Part C» կամ «MA», որն առաջարկում է MA պլաններ մասնավոր ընկերությունների միջոցով: Medicare-ը վճարում է այս ընկերություններին, որպեսզի ապահովագրի ձեր Medicare նպաստները:

Medicare-ի վերաքննիչ խորհուրդ (Council): Խորհուրդ, որը վերանայում է 4-րդ մակարդակի բողոքարկումը: Խորհուրդը դաշնային կառավարության մի մասն է:

Medicare-ի կողմից ապահովագրված ծառայություններ. Ծառայություններ, որոնք ապահովագրված են Medicare Part A-ով և Medicare Part B-ով: Medicare-ի բոլոր առողջապահական ապահովագրության պլանները՝ ներառյալ մեր ծրագիրը, պետք է ապահովագրեն Medicare Part A-ով և Medicare Part B-ով փոխհատուցվող բոլոր ծառայությունները:

Medicare շաքարախտի կանխարգելման ծրագիր (MDPP). առողջության վարքագծի փոփոխության կառուցվածքային ծրագիր, որն ապահովում է երկարաժամկետ սննդակարգի փոփոխության, ֆիզիկական ակտիվության բարձրացման և քաշի կորստի և առողջ ապրելակերպի պահպանման մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ:

Medicare-Medi-Cal գրանցված անձ Անձ, ով որակապես համապատասխանում է Medicare-ի և Medicaid-ի ապահովագրական ծածկույթին: Medicare-Medicaid գրանցված անձը կոչվում է նաև «Երկակի իրավասու անհատ»:

Medicare Part A. Medicare ծրագիր, որն ընդգրկում է բժշկական տեսանկյունից ամենաանհրաժեշտ հիվանդանոցը, հմուտ բուժքույրական հաստատությունը, տնային առողջությունը և հոսպիսային խնամքը:

Medicare Part B. Medicare ծրագիր, որն ընդգրկում է ծառայություններ (օրինակ՝ լաբորատոր թեստեր, վիրահատություններ և բժշկի այցելություններ) և պարագաներ (օրինակ՝ հաշմանդամության սայլակներ և քայլակներ), որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են հիվանդության կամ վիճակի բուժման համար: Medicare Part B-ն նաև ապահովագրում է շատ կանխարգելիչ ու զննման ծառայություններ:

Medicare Part C. Medicare ծրագիր, որը նաև հայտնի է որպես «Medicare Advantage» կամ «MA», որը թույլ է տալիս մասնավոր առողջապահական ապահովագրական ընկերություններին տրամադրել Medicare-ի նպաստներ MA Plan-ի միջոցով:

Medicare Part D. Medicare դեղատոմսով դեղերի նպաստի պլան: Մենք այս ծրագիրը հակիրճ անվանում ենք «Մաս D»: Medicare Part D-ն ապահովագրում է ամբուլատոր դեղատոմսով դեղեր, պատվաստումներ և որոշ պաշարներ, որոնք ապահովագրված չեն Medicare Part A-ով կամ Medicare Part B-ով կամ Medicaid-ով: Medicare Part D-ն մտնում է մեր պլանի մեջ:

Medicare Part D դեղեր. դեղեր, որոնք ապահովագրված են Medicare Part D-ով: Կոնգրեսը մասնավորապես բացառում է դեղերի որոշ կատեգորիաներ Medicare Part D-ի ապահովագրական ծածկույթից: Medicaid-ը կարող է տրամադրել այդ դեղերից մի քանիսը:

Դեղորայքային թերապիայի կառավարում (MTM). Medicare Part D-ի ծրագիր, որը նախատեսված է բարդ ի գաղտագողի կարիքների համար, որոնք նախատեսված են որոշակի պահանջներին համապատասխանող կամ գտնվում են դեղերի կառավարման ծրագրում: MTM ծառայությունները սովորաբար ներառում են քննարկում դեղագործի կամ առողջապահական ծառայությունների մատակարարի հետ՝ դեղերը վերանայելու համար: Կարդացեք **Գլուխ 5**-ը այս *Անդամի ձեռնարկում*՝ լրացուցիչ տեղեկատվության համար:

Medi-Medi պլան. Medi-Medi պլանը Medicare Advantage-ի տեսակ է: Այն նախատեսված է այն մարդկանց համար, որոնք ունեն ինչպես Medicare, այնպես էլ Medi-Cal և մեկ պլանում են համատեղում Medicare-ի ու Medi-Cal-ի նպաստները: Medi-Medi ծրագրերը համակարգում են երկու ծրագրի բոլոր նպաստներն ու ծառայությունները, այդ թվում՝ Medicare-ի և Medi-Cal-ի ապահովագրված ծառայությունները:

Անդամ (մեր պլանի անդամ կամ պլանի անդամ). Medicare և Medi-Cal ունեցող անձ, ով իրավասու է ստանալ ապահովագրված ծառայություններ, ով գրանցվել է մեր ծրագրի մեջ և ում գրանցումը հաստատվել է Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնների (CMS) և նահանգի կողմից:

***Անդամի ձեռնարկ* և բացահայտման տեղեկություններ.** այս փաստաթուղթը՝ ձեր անդամագրման ձևաթղթի ու այլ կցորդների կամ այլ հավելվածների հետ միասին, որոնք բացատրում են ձեր ապահովագրությունը, տեղեկացնում է՝ մենք ինչ պետք է անենք, ձեր իրավունքները և դուք ինչ պետք է անեք՝ որպես մեր պլանի անդամ:

Անդամների սպասարկման կենտրոն. մեր պլանի բաժանմունք, որը պատասխանատու է անդամակցության, նպաստների, բողոքների և բողոքարկումների վերաբերյալ ձեր հարցերին պատասխանելու համար: Կարդացեք **Գլուխ 2**-ն այս *Անդամի ձեռնարկում*՝ Անդամների սպասարկման մասին ավելին իմանալու համար:

Ցանցային դեղատուն. Դեղատուն (դեղերի խանութ), որը համաձայնել է դեղատոմսեր լրացնել մեր պլանի անդամների համար: Մենք անվանում ենք դրանք «ցանցի դեղատներ», որովհետև դրանք պայմանագիր ունեն մեր ծրագրի հետ: Շատ դեպքերում մենք վճարում ենք ձեր դեղատոմսերի համար միայն, եթե դրանք լցվեն մեր ցանցի դեղատներից որևէ մեկում:

Ցանցային մատակարարներ. այն մատակարարներն են, որոնք աշխատում են առողջապահական ապահովագրության պլանի հետ: Այս մատակարարները համաձայնել են ընդունել մեր վճարումը՝ որպես լրիվ վճարում: Մենք կազմակերպում ենք ձեզ ապահովագրված ծառայությունների տրամադրումը մատակարարների կողմից: Ցանցային մատակարարները ձեզ տրամադրած խնամքի համար հաշիվներն ուղարկում են անմիջապես մեզ: Երբ դուք ցանցային մատակարարի եք այցելում, դուք սովորաբար ոչինչ չեք վճարում ապահովագրված ծառայությունների համար: «մատակարարը» ընդհանուր տերմին է, որը մենք օգտագործում ենք բժիշկների, բուժքույրերի ու այլ մարդկանց համար, որոնք ձեզ ծառայություններ ու խնամք են տրամադրում: Տերմինը ներառում է նաև հիվանդանոցներ, տնային առողջության գործակալություններ, կլինիկաներ ու այլ վայրեր, որոնք ձեզ տրամադրում են առողջապահական խնամքի ծառայություններ, բժշկական սարքավորում և երկարատև ծառայություններ ու աջակցություն:

Խնամքի կենտրոն կամ հաստատություն. Հաստատություն, որը խնամում այն մարդկանց, ովքեր չեն կարող իրենց խնամքը ստանալ տանը, բայց հիվանդանոցում բուժվելու կարիք չունեն:

Օմբուդսմեն. գրասենյակ ձեր նահանգում, որն աշխատում է որպես փաստաբան՝ հանդես գալով ձեր անունից: Նրանք կարող են պատասխանել հարցերին, եթե դուք խնդիր կամ բողոք ունեք, և կարող են օգնել ձեզ հասկանալ, թե ինչ անել: Օմբուդսմենի ծառայություններն անվճար են: Դուք կարող եք գտնել լրացուցիչ տեղեկություն ձեր *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 2-ում և 9-ում**:

Կազմակերպության որոշում. Մեր պլանը կազմում է կազմակերպությունը, երբ մենք կամ մեր ծառայություն մատուցողներից մեկը որոշում է, թե արդյոք ծառայություններն ապահովագրված են կամ որքան եք վճարում ապահովագրված ծառայությունների համար: Կազմակերպության եզրակացությունը կոչվում են «ապահովագրության որոշումներ»: **Գլուխ 9**-ն այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է ապահովագրության որոշումները:

Բնօրինակ կենսաբանական արտադրանք. կենսաբանական արտադրանք, որը հավանության է արժանացել FDA-ի կողմից և ծառայում է որպես համեմատություն այն արտադրողների համար, որոնք պատրաստում են կենսանման տարբերակ: Այն նաև կոչվում է տեղեկատու արտադրանք:

Original Medicare (ավանդական Medicare վճար ծառայության դիմաց Medicare). Կառավարությունն առաջարկում է Original Medicare: Original Medicare-ի շրջանակներում Medicare-ի ծառայություններն ապահովագրվում են՝ բժիշկներին, հիվանդանոցներին և առողջապահական խնամքի այլ մատակարարներին Կոնգրեսի կողմից հաստատված գումարներ վճարելով:

- Դուք կարող եք այցելել ցանկացած բժշկի, հիվանդանոց կամ առողջապահական ծառայությունների այլ մատակարարի, որն ընդունում է Medicare-ը: Original Medicare-ը բաղկացած է երկու մասից. Medicare Part A (հիվանդանոցային ապահովագրություն) և Medicare Part B (բժշկական ապահովագրություն):
- Original Medicare-ը հասանելի է ամենուրեք Միացյալ Նահանգներում:
- Եթե չեք ցանկանում մեր ծրագրում լինել, ապա կարող եք ընտրել Original Medicare:

Արտացանցային դեղատուն. դեղատուն, որը չի համաձայնել աշխատել մեր պլանի հետ՝ մեր պլանի անդամներին ապահովագրված դեղեր տրամադրելու կամ համակարգելու համար: Մեր պլանը չի ներառում դեղերի մեծ մասը, որոնք դուք ստանում եք արտացանցային դեղատներից, եթե որոշակի պայմաններ չեն կիրառվում:

Արտացանցային մատակարար կամ Արտացանցային հաստատություն. մատակարար կամ հաստատություն, որը չի աշխատում, պատկանում կամ գործարկվում մեր պլանի կողմից, և որի հետ մենք պայմանագիր չունենք մեր պլանի անդամներին ապահովագրված ծառայություններ տրամադրելու համար: **Գլուխ 3**-ն այս *Անդամի ձեռնարկում* բացատրում է արտացանցային մատակարարները կամ հաստատությունները:

Առանց դեղատոմսի (OTC) դեղեր. Առանց դեղատոմսի դեղերը դեղեր կամ դեղամիջոցներ են, որոնք կարելի է գնել առանց բժշկի դեղատոմսի:

Մաս A. Տե՛ս «Medicare Part A»:

Մաս B. Տե՛ս «Medicare Part B»:

Մաս C. Տե՛ս «Medicare Part C»:

Մաս D. Տե՛ս «Medicare Part D»:

Մաս D դեղեր. Տե՛ս «Medicare Part D դեղեր»:

Անձնական առողջության մասին տեղեկատվություն (նաև կոչվում է Պաշտպանված առողջության տեղեկատվություն) (PHI). Տեղեկատվություն ձեր և ձեր առողջության մասին, ինչպիսիք են ձեր անունը, հասցեն, սոցիալական ապահովության համարը, բժշկի այցելությունները և բժշկական պատմությունը: Կարդացեք մեր Գաղտնիության գործելակերպերի ծանուցագիրը լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչպես ենք մենք պաշտպանում, օգտագործում և բացահայտում ձեր PHI-ը, ինչպես նաև PHI-ի վերաբերյալ ձեր իրավունքները:

Կանխարգելիչ ծառայություններ. հիվանդությունը կանխելու կամ վաղ փուլում հայտնաբերելու համար, երբ բուժումը, ամենայն հավանականությամբ, առավելագույն ազդեցությունը կունենա (օրինակ՝ կանխարգելիչ ծառայությունները ներառում են Pap թեստերը, գրիպի դեմ պատվաստումները և սքրինինգային մամոգրաֆիան):

Առաջնային խնամքի մատակարար (PCP). Բժիշկը կամ այլ մատակարար, ում առաջինն եք դիմում եք առողջական խնդիրների մեծ մասի դեպքում: Նրանք համոզվում են, որ դուք ստանում եք այն խնամքը, որն անհրաժեշտ է առողջ մնալու համար:

- Նրանք նաև կարող են բուժօգնության վերաբերյալ խորհրդակցել այլ բժիշկների կամ առողջապահական ծառայությունների մատակարարների հետ և ուղղորդել ձեզ նրանց մոտ:
- Medicare-ի շատ առողջապահական ապահովագրության պլաններում դուք պետք է նախ այցելեք ձեր առաջնային խնամքի մատակարարին, նախքան դուք կարող եք այցելել այլ առողջապահական խնամքի մատակարարների:
- Կարդացեք **Գլուխ 3**-ն այս *Անդամի ձեռնարկում*՝ առաջնային խնամքի մատակարարներից խնամք ստանալու մասին տեղեկանալու համար:

Նախնական թույլտվություն (PA). Հավանություն, որը պետք է ստանաք մեզնից՝ նախքան որոշակի ծառայություն կամ դեղ ստանալը կամ արտացանցային մատակարարին դիմելը: Մեր ծրագիրը չի կարող ծածկել ծառայությունը կամ դեղը, եթե նախ հաստատում չստանաք:

Մեր ծրագիրն ապահովագրում է որոշ ցանցային բժշկական ծառայություններ միայն այն դեպքում, եթե ձեր բժիշկը կամ ցանցի այլ մատակարարը PA ստանա մեզանից:

- Ապահովագրական ծածկույթով տրամադրվող ծառայությունները, որոնց անհրաժեշտ է մեր պլանի PA-ն, նշված են **Գլուխ 4** -ում՝ այս *Անդամի ձեռնարկում*:

Մեր ծրագիրն ապահովագրում է որոշ դեղեր միայն այն դեպքում, եթե դուք մեզանից PA ստանաք:

- Ապահովագրական ծածկույթով տրամադրվող դեղերը, որոնց անհրաժեշտ է մեր պլանի PA-ն, նշված են *Ապահովագրված դեղերի ցանկ*-ում, իսկ կանոնները հրապարակված են մեր կայքում:

Տարեցների համապարփակ խնամքի ծրագիր (PACE). ծրագիր, որը ներառում է Medicare-ի և Medicaid-ի նպաստները միասին 55 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար, որոնք կարիք ունեն ավելի բարձր մակարդակի խնամքի՝ տանը ապրելու համար:

Պրոթեզներ և օրթոպեդիկ սարքեր. ձեր բժշկի կամ այլ առողջապահական ծառայություններ մատուցողի կողմից պատվիրված բժշկական սարքեր, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ ձեռքի, մեջքի ու պարանոցի տաբատակալներ, արհեստական վերջույթներ, արհեստական աչքեր, ինչպես նաև այն սարքերը, որոնք հարկավոր են մարմնի ներքին մաս կամ գործառույթ փոխարինելու համար, ներառյալ՝ օստոմիայի պաշարներ և էնտերալ ու պարէնտերալ սնուցման թերապիա:

Մատակարարներ. բժիշկներ, բուժքույրեր և այլ անձինք են, որոնք ձեզ ծառայություններ ու խնամք են տրամադրում և հավաստագրված են նահանգի կողմից: Մատակարարները ներառում են նաև հիվանդանոցներ, տնային առողջության գործակալություններ, կլինիկաներ և այլ վայրեր, որոնք ձեզ տրամադրում են բուժսպասարկում, վարքագծային առողջության ծառայություններ, բժշկական սարքավորում և որոշակի LTSS:

Որակի բարելավման կազմակերպություն (QIO). Բժիշկների և առողջապահության ոլորտի այլ փորձագետների խումբ, որն օգնում է բարելավել Medicare-ով մարդկանց խնամքի որակը: Դաշնային կառավարությունը վճարում է QIO-ին՝ հիվանդներին տրվող խնամքը ստուգելու և բարելավելու համար: Կարդացեք **Գլուխ 2**-ը այս *Անդամի ձեռնարկում*՝ QIO-ի մասին ավելին իմանալու համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Քանակի սահմանափակումներ Դեղի քանակի սահմանափակում, որը թույլատրելի է ձեր համար: Մենք կարող է սահմանափակենք ապահովագրված դեղի քանակն՝ ըստ դեղատոմսի:

Իրական ժամանակում նպաստների գործիք. Պորտալ կամ համակարգչային հավելված, որտեղ գրանցվածները կարող են փնտրել ամբողջական, ճշգրիտ, ժամանակին, կլինիկորեն համապատասխան, գրանցվածներին հատուկ ապահովագրված դեղեր և նպաստների մասին տեղեկատվություն: Սա ներառում է ծախսերի բաշխման գումարները, այլընտրանքային դեղերը, որոնք կարող են օգտագործվել նույն առողջական վիճակի համար, ինչ տվյալ դեղամիջոցը, և ապահովագրության սահմանափակումները (նախնական թույլտվություն, փուլային բուժում, քանակի սահմանափակումներ), որոնք կիրառվում են այլընտրանքային դեղերի նկատմամբ:

Ուղեգիր. Ուղեգիրը ձեր առաջնային խնամք տրամադրողի (PCP) կամ մեր հաստատումն է՝ ձեր PCP-ից բացի այլ խնամք տրամադրողին դիմելու համար: Եթե նախ հաստատում չստանաք, մենք կարող ենք չապահովագրել ծառայությունները: Որոշ մասնագետների, ինչպիսիք են օրինակ՝ կանանց առողջական հարցերով զբաղվող մասնագետները, այցելելու համար, ձեզ անհրաժեշտ չէ ուղեգիր: Դուք կարող եք գտնել լրացուցիչ տեղեկություն ուղորդումների մասին *Անդամի ձեռնարկի* **Գլուխներ 3-ում և 4-ում**:

Վերականգնողական ծառայություններ. Բուժում, որը ստանում եք և կօգնի ձեզ վերականգնվել հիվանդությունից, դժբախտ պատահարից կամ լուրջ վիրահատությունից հետո: Այս ծառայությունները ներառում են ստացիոնար վերականգնողական խնամք, ֆիզիկական թերապիա (ամբուլատոր), խոսքի և լեզվական թերապիա և մասնագիտական թերապիա: Վերականգնողական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկատվության համար կարդացեք **Գլուխ 4**-ն այս *Անդամի ձեռնարկում*:

Զգայուն ծառայություններ. Ծառայություններ, որոնք կապված են հոգեկան կամ վարքային առողջության, սեռական և վերարտադրողական առողջության, ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI-ներ), HIV/AIDS-ի, սեռական ոտնձգությունների և աբորտների, նյութերի օգտագործման խանգարման, սեռը հաստատող խնամքի և զուգընկերոջ բռնության հետ:

Սպասարկման տարածք. աշխարհագրական տարածք, որտեղ առողջապահական պլանն ընդունում է անդամներ, եթե այն սահմանափակում է անդամակցությունը՝ հիմնվելով մարդկանց բնակության վայրի վրա: Ծրագրերի համար այն սահմանափակում է բժիշկներին ու հիվանդանոցները, որոնցից դուք կարող եք օգտվել, և սա սովորաբար այն տարածքն է, որտեղ կարող եք ստանալ սովորական (ոչ արտակարգ իրավիճակների) ծառայություններ: Միայն մեր սպասարկման տարածքում բնակվող մարդիկ կարող են անդամակցել մեր ծրագրին:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Հմուտ բուժքույրական հաստատություն (SNF). Բուժքույրական հաստատություն անձնակազմով և սարքավորումներով, որը տրամադրում է հմուտ բուժքույրական խնամք ու շատ դեպքերում հմուտ վերականգնողական ծառայություններ և այլ հարակից առողջապահական ծառայություններ:

Հմուտ բուժքույրական հաստատության (SNF) խնամք. Հմուտ բուժքույրական խնամք և վերականգնողական ծառայություններ մատուցվում են շարունակական կերպով, ամենօրյա հիմունքներով և մասնագիտացած բուժքույրական հաստատությունում: Որակավորված բուժքույրական հաստատությունում տրամադրվող խնամքի օրինակներն ընդգրկում են ֆիզիկական թերապիա կամ ներերակային (IV) սրսկումներ, որոնք կարող է անել միայն գրանցված բուժքույրը կամ բժիշկը:

Մասնագետ. բժիշկ, որը բուժում է որոշակի տեսակի առողջական խնդիրներ: Օրինակ՝ օրթոպեդիկ վիրաբույժը բուժում է կոտրված ոսկորները, Ալերգոլոգը բուժում է ալերգիաները, իսկ սրտաբանը՝ սրտի հետ կապված խնդիրները: Շատ դեպքերում, անդամը պետք է ուղեգիր ունենա իր PCP-ից՝ մասնագետին դիմելու համար:

Մասնագիտացված դեղատուն. կարդացեք **Գլուխ 5**-ը այս *Անդամի ձեռնարկում*՝ մասնագիտացված դեղատների մասին ավելին իմանալու համար:

Հանրային լսում. եթե ձեր բժիշկը կամ այլ մատակարար խնդրում է Medi-Cal ծառայություն, որը մենք չենք հաստատի, կամ մենք չենք շարունակի վճարել Medi-Cal ծառայության համար, որը դուք արդեն ունեք, դուք կարող եք հանրային լսումների հարցում անել: Եթե Նահանգային լսման որոշումը ձեր օգտին է, ապա մենք պետք է ձեզ տրամադրենք ձեր կողմից պահանջվող ծառայությունը:

Փուլային բուժում. Ապահովագրության կանոն, համաձայն որի, դուք փորձեք մեկ այլ դեղամիջոց, նախքան մենք կապահովագրենք ձեր խնդրած դեղը:

Լրացուցիչ ապահովության եկամուտ (SSI): Սոցիալական ապահովության ամսական նպաստը վճարում է սահմանափակ եկամուտներ և ռեսուրսներ ունեցող մարդկանց, ովքեր հաշմանդամ են, կույր կամ 65 և ավելի տարեկան են: SSI նպաստները և սոցիալական ապահովության նպաստները տարբեր են:

Շտապ անհրաժեշտ բուժսպասարկում. խնամքը ստանում եք անկանխատեսելի հիվանդության, վնասվածքի կամ վիճակի դեպքում, որը չի համարվում արտակարգ իրավիճակ, բայց անհապաղ խնամքի կարիք ունի: Դուք կարող եք շտապ անհրաժեշտ բուժսպասարկում ստանալ արտացանցային մատակարարներից, երբ չեք կարող դիմել նրանց՝ ելնելով ձեր ժամանակից, տեղից կամ հանգամանքներից, հնարավոր չէ կամ անիիմն է ծառայություններ ստանալ ցանցի մատակարարներից (օրինակ՝ երբ դուք պլանի սպասարկման տարածքից դուրս եք, և անհապաղ բժշկական ծառայությունների կարիք ունեք թաքնված վիճակի համար, բայց դա բժշկական արտակարգ իրավիճակ չէ):

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)-ի Անդամների սպասարկման կենտրոն

ԶԱՆԳԱՀԱՐԵՔ	1-800-431-9007 Այս հեռախոսահամարին զանգերն անվճար են: Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը 8 a.m.-ից 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8 a.m.-ից 8 p.m.: Նկատի ունեցեք, որ ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը աշխատանքային ժամերից հետո, հանգստյան և տոն օրերին ձեր զանգին կարող է պատասխանել մեր ավտոմատ հեռախոսային համակարգը: Եթե դուք թողնում եք ձայնային հաղորդագրություն, խնդրում ենք ներառել ձեր անունը և հեռախոսահամարը. թիմի անդամը հետ կզանգի ձեզ մեկ (1) աշխատանքային օրվա ընթացքում: Անդամների սպասարկման կենտրոնն ունի նաև անվճար թարգմանչական ծառայություններ, որոնք հասանելի են անգլերեն չխոսողների համար:
TTY	711 Այս հեռախոսահամարին զանգերն անվճար են: Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից մինչև 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, 8 a.m.-ից մինչև 8 p.m.:
ԳՐԵՔ	Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP) PO Box 10420 Van Nuys, CA 91410-0420
ԿԱՅՔ	go.wellcare.com/HealthNetCA

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Health Net Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m.-ից 8 p.m: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m.-ից 8 p.m: Զանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք go.wellcare.com/HealthNetCA կայքը:

PRA Տեղեկությունների բացահայտման մասին հայտարարություն.

Թղթային շրջանառության կրճատման մասին 1995 թ. օրենքի համաձայն, ոչ ոք պարտավորված չէ արձագանքել տեղեկատվության հավաքմանը, եթե նշված չէ OMB կառավարման վավեր համար: Այս տեղեկատվության հավաքման OMB կառավարման վավեր համարն է 0938-1444: Եթե ունեք մեկնաբանություններ կամ առաջարկներ այս ձևը բարելավելու վերաբերյալ, կարող եք գրել հետևյալ հասցեով. CMS, 7500 Security Boulevard, Attn: PRA Reports Clearance Officer, Mail Stop C4-26-05, Baltimore, Maryland 21244-1850:

Այս էջը միտումնավոր է դատարկ թողնվել: